24. Matuzov, Nikolaj i Aleksandr Mal'ko. Teorija gosudarstva i prava. Kurs lekcij, str. 308 [Theory of State and Law, Saratov] (In Russian) .

25. Muhitdinov, Nazhmitdin. Osnovy gornogo prava, str. 110 [Fundamentals of Land Law, Alma-Ata] 1983. (In Russian) .

26. ---. Zakon Respubliki Kazahstan ob ohrane okruzhajushhej prirodnoj sredy: problemy i osobennosti ih reshenija. Gosudarstvo i pravo. № 8, str. 90 [The Law of the Republic of Kazakhstan on Environmental Protection: Problems and Features of their Solution] 1992 (In Russian).

27. Naletov, Kirill. Licenzionnye i dogovorno-pravovye formy pol'zovanija nedrami v Rossijskoj Federacii i za rubezhom: diss. kand. jurid. nauk. 12.00.06. M. 2006, str. 12 [Licensing and Contractual Legal Forms of Subsoil Use in the Russian Federation and abroad] 2006 (In Russian).

28. Proskurina, Anastasija. Problemy sovershenstvovanija zakonodatel'stva v sfere nedropol'zovanija. Sankt-Peterburg, Sankt-Peterburgskij gosudarstvennyj universitet, Kafedra pravovoj ohrany okruzhajushhej sredy, 2018, str. 12, 55 [Problems of Improving Legislation in the Field of Subsoil Use, St. Petersburg] 2018 (In Russian).

29. Sorokina, Julija. Prirodoresursnoe zakonodatel'stvo Rossijskoj Federacii i subektov Rossijskoj Federacii (sravnitel'no-pravovoj analiz): Avtoref. dis. kand. jurid. nauk. str. 9,11,12 [Natural Resource Legislation of the Russian Federation and the Subjects of the Russian Federation (comparative legal analysis, Saratov] 2000 (In Russian).

SOME FEATURES OF LEGAL REGULATION OF SUBSOIL USE

MANE MARKOSYAN

Yerevan State University, Adviser to the Rector;

YSU Faculty of Law, Chamber of Civil Law,

Ph.D. Student

Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to study and analyze the place of subsoil use law in the legal system of the Republic of Armenia, the features of legal regulation of subsoil use relations and the composition of main subjects of subsoil use relations.

The relevance of the study is due to the fact that the legislation regulating the sphere of subsoil use law in the Republic of Armenia needs systemic reforms, as evidenced by the adoption by the Government of The Mineral Sector Development Strategy of Armenia. Despite this, a systematic and comprehensive study of the legal nature of relations in the field of subsoil use has not been conducted in the domestic literature to date: only certain issues of a private nature in this area have been studied.

In the course of the study, the task was set to study and analyze the history of the development of subsoil use law in various legal systems, the place of subsoil use law in the legal system of the Republic of Armenia, the specifics of regulation and the composition of subjects involved in subsoil use relations.

This work's methodological basis consists of general scientific (analysis, synthesis, deduction) and special (dogmatic, comparative legal) methods.

Based on the research conducted within the framework of this work, the author concluded that the subsoil use law is an independent branch of the RA legal system, and the RA Subsoil Code is subject to reforms in terms of sectoral principles guaranteeing the protection of the interests of the subsoil user and legal norms ensuring their application. Additionally, the community should be considered as a subject of subsoil use law.

Keywords: *Branch of law, subsoil use law, The Mineral Sector Development Strategy of Armenia, subsoil ownership, subject of subsoil use law, principles, method of legal regulation.*

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ

МАНЕ МАРКОСЯН

*советник ректора Ереванского государственного университета,
аспирант кафедры гражданского права юридического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение и анализ места права недропользования в правовой системе Республики Армения, особенностей правового регулирования отношений недропользования, состава основных субъектов отношений недропользования.

Актуальность исследования обусловлена тем, что законодательство, регулирующее сферу права недропользования в Республике Армения, нуждается в системных реформах, о чем свидетельствует принятие Правительством РА Стратегии развития минерально-сырьевого сектора Армении. Несмотря на этот факт, систематического и всестороннего изучения правовой природы отношений в сфере недропользования в отечественной литературе до настоящего времени не проводилось: изучены лишь отдельные вопросы частного характера в этой области.

В ходе исследования была поставлена задача изучить и проанализировать историю развития права недропользования в различных правовых системах, место права недропользования в правовой системе Республики Армения, специфику регулирования, состав субъектов, вовлеченных в отношения недропользования.

Методологическую основу данной работы составляют общенаучные (анализ, синтез, дедукция) и специальные (догматический, сравнительно-правовой) методы.

На основании исследования, проведенного в рамках данной работы, автор пришел к выводу о том, что право пользования недрами является самостоятельной отраслью правовой системы РА, а Кодекс РА о недрах подлежит реформированию с точки зрения отраслевых принципов, гарантирующих защиту интересов недропользователя, и правовых норм, обеспечивающих их применение, а также то, что и общины должны рассматриваться как субъект права о недропользовании.

Ключевые слова: *отрасль права, право недропользования, Стратегия развития минерально-сырьевого сектора Армении, право собственности на недра, предмет права недропользования, принципы, метод правового регулирования.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

19-ՐԴ ԴԱՐԻ ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՐՄԻՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԿԱՆԴԱՆ ՇՈՒՐՋ *¹

ՀՏԴ 930.85

DOI: 10.52063/25792652-2024.2.21-35

ԹԵՐԵԶԱ ԱՄՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
իրանագիտության ամբիոնի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
amryantereza@ysu.am
ORCID: 0000-0002-9298-0047

Հոդվածի նպատակն է քննության առնել 19-րդ դարում Շուշիի հայկական դպրոցներում պարսկերենի դասավանդման փաստը: Հետազոտությունն արդիական է նրանով, որ արծարծում է հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկում հայկական դպրոցներում տարածաշրջանի կարևոր լեզուներից մեկի դասավանդումը և դրա հայեցակարգը: Բացի այդ, կրթական և մշակութային այս շերտերի հետազոտումը նորովի է բացահայտում Շուշին որպես բազմազգ, ոչ միատարր ազգաբնակչություն, բարձր հանդուրժողականություն և գունդ մշակութային ներկայական ունեցող հայկական մշակութային օջախ:

Նշված ժամանակահատվածում Շուշիի հայկական դպրոցներում պարսից լեզվի դասավանդման հարցը քննելու համար հաշվի են առնվել հայ-իրանական բազմադարյա պատմական շփումները, պատմամշակութային առնչություններն ու փոխազդեցությունները, ինչպես նաև Շուշիում պարսից լեզվի և իրանական մշակույթի տարածվածությունը:

Շուշիի դպրոցներում պարսկերենի դասավանդումը դիտարկվել է տարածաշրջանի այլ հայկական դպրոցներում պարսկերենի դասավանդման համատեքստում. թեման քննվել է՝ հաշվի առնելով Արցախի և Իրանի պատմական առնչությունները, ինչպես նաև նշված ժամանակահատվածում տարածաշրջանում և երկրամասում տիրող հասարակական-քաղաքական, մշակութային գործընթացները:

Հետազոտության ժամանակ իրականացվել է տարբեր աղբյուրներից ստացած նյութերի և տեղեկության համադրում և վերլուծություն, կիրառվել են պատմական, պատմահամեմատական մեթոդները:

Հետազոտության արդյունքում կարելի է եզրակացնել, որ 19-րդ դարում պարսկերենը Շուշիի որոշ հայկական դպրոցներում դասավանդվել է ոչ միայն որպես գերակայություն և ազդեցություն ունեցող լեզու, այլև որպես միջերեսիկ հաղորդակցության լեզու: Հետագայում ռուսերենի ազդեցությամբ պարսից լեզվի դասաժամերը դուրս են մղվել այդ դպրոցներից:

* Հոդվածը ներկայացվել է 02.06.2024թ., գրախոսվել՝ 20.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 21Т-6В125 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Հիմնաբառեր՝ Ղարաբաղ, Շուշի, դպրոց, լեզու, թեմական, պարսկերեն, դասավանդում, մշակութային:

Նախաբան

Հոդվածի շրջանակներում քննության է առնվել 19-րդ դարում Շուշիի հայկական դպրոցներում պարսից լեզվի դասավանդման հարցը: Վկադիմիր Սևյանը հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ Շուշիի դերը համեմատել է հայեցի մշակույթի կյանքում Թիֆլիսի և Կոստանդնուպոլսի կառավարած դերի հետ (Սևյան 95):

Պատմական առնչությունների արդյունքում իրանական մշակույթը իր յուրօրինակ հետքն է թողել և նաև Արցախի մշակույթի վրա: դրա վառ վկայություններն են Արցախի բարբառի վրա պարսկերենի ազդեցությունը (Հովհաննիսյան 65-66), Շուշիում պարսից լեզվի ու իրանական մշակույթի տարածվածության փաստը (Ամրյան 51-65), պարսկերենի գերակայության փուլն անցած Շիրվանի հայկական բնակավայրերի պարսկերեն բարբառի գոյությունը (Կիրակոսյան, Պարսկախոսությունը Շիրվանում 90): Հայ-իրանական մշակութային շփումների հետաքրքիր օրինակ է Շուշիում ստեղծված պարսկական ձեռագրական ժառանգությունը (Kostikyan 67, 103, 285): Տարածաշրջանում և երկրամասում պարսից լեզվի տարածվածության մասին վկայող մի դրվագ առնչվում է Դավիթ Շահնազարյանի անվանը. «Ֆրանսիայի հետ առևտրական կապեր ունեցող Մեյիք Աստվածատուրի որդի Դավիթ Շահնազարյանը 1800 թ. ուսանել է Փարիզում: Կար անհրաժեշտություն, որ գտնվեր արևելյան լեզուներին տիրապետող անձնավորություն, որի միջոցով դիվանագիտական կապեր հաստատվեին Պարսկաստանի հետ: Կայսր Նապոլեոնը 1801 թ. դիմում է Ցակոբ Շահան Ջրպետին, որը կայսերական ճեմարանում հայերենի դասախոս էր, որպեսզի նա Պարսկաստանին լավ ծանոթ ու բանիմաց մեկին ներկայացնի: Ներկայացվում է Միր Դավթի թեկնածությունը, որը Մեյիք Շահնազարյանների գերդաստանի սերունդներից էր: Միր Դավթի թեկնածությունը, որը 1804-1830 թթ. որոշ ընդմիջումներով եղել է Ֆրանսիայի բանագնացն ու դեսպանը Պարսկաստանում: Տիրապետում էր ֆրանսերենին, ռուսերենին, պարսկերենին ու արաբերենին: 1817 թ. կայսերական ճեմարանի դասախոս Հակոբ Շահան Ջրպետյանի և Լյուդովիկոս Լանգլեսի հետ Միր Դավթի Փարիզում հայերեն, պարսկերեն ու ֆրանսերեն լեզուներով հրատարակել է գիրք, որի հայերեն խորագիրն է «Տեղեկություններ ի վերայ այժմեան վիճակին Պարսկաստանի, պարսկերենի, հայ եւ գաղիացի ի Միր Տավուտ Ծատուրե, Լանկլեսի եւ Ջրպետե» Միր Դավթի թեկնածությունը 1824 թ. Թիֆլիսում հանդիպում է Կովկասի կառավարչապետ, գեներալ Երմոլովին և թույլտվություն խնդրում, որպեսզի Աբաս Միրզայի որոշմամբ առանձնաշնորհներից զրկված ու վտարված հայ մեյիքները, որ ապաստանել էին Ռուսաստանում, վերադառնան հայրենի Գեղարքունիք: Նա եղել է Գեղարքունիքի մեյիքների լիազորը ռուսական դատարաններում: Մահացել է 1853 թ. ապրիլի 30-ին, 83 տարեկանում: Թաղվել է Թեհրանի Սուրբ Թադևոս Բարդուղիմեոս եկեղեցու բակում, որի տապանաքարին գրված է. «Ասպետ Մեյիք Շահնազարեան հանգեալ 1853, ապրիլի 30» (Հարությունյան Հ., 38-39):

Հայ հոգևորական և ազգագրագետ Մակար Բարխուդարյանը երկրամասի մի շարք շրջանների Էթնոլեզվական պատկերը ներկայացնելիս նշել է. «Իւրաքանչիւր Աղուանից երկիրն արշաւող օտար տերութիւն թողած է այստեղ իւր ցեղից մնացորդ: Պարսիկներն թողած են պարսիկ ժողովուրդ, որք բնակում են թէ՛ բոլոր քաղաքներում եւ թէ՛ դաշտային գաւառներում» (Բարխուդարեան 149-150): 17-18-րդ դարերում Արցախի և Իրանի միջև տեղի էին ունեցել բնակչության տեղաշարժեր: 17-րդ դարում Իրանում բարենպաստ պայմաններ կային առևտրի զարգացման համար, և Իրան ներգաղթում էին «խաղաղ աշխատանքի և քաղաքական հանգստության կարոտ անհատներ և խմբեր»: Արցախից Իրան հայերի գաղթի մասին Լեոն նշել է. «Բացի

բազմաթիվ անհատներից, գաղթեցին նաև չորս գյուղ Ղարաբաղի Դիզակ գավառից: Բայց Շահ-Աբբասի համար արժեքավորն այն էր, վոր նա ձեռք էր բերում գոկական կապիտալի մի նշանավոր մասը: Դաշտ գյուղի (Ներքին Ագուլիսի) բնակչության յերեք մասը նույնպես գաղթեց և բնակություն ստացավ դարձյալ Սպահանում» (Լեո, Խոջայական կապիտալը 62): Հետագայում Իրանից են հայեր ներգաղթել Արցախ: Այսպես, Խաչենի Լուսաձոր (Մեհտիշեն) գյուղի բնակչությունը Ղարաբաղ է տեղափոխվել 1828-1829 թթ. գաղթից շատ առաջ (Տեր-Գասպարյան, Շուշու բնակչությունը 67): Երբ 1639 թ. Իրանին անցան Սյունիքն ու Արցախը, Շահ Աբբասը օրինականացրեց հայ մեյիքների իրավունքները: 1726 թ. ռուս-թուրքական պայմանագրով ռուսները ճանաչեցին թուրքերի իրավունքները Իրանի այսրկովկասյան տիրույթների, այդ թվում՝ Արցախի նկատմամբ: Թուրքական կարճատև տիրապետության շրջանում այստեղ ծանր էր հայերի ու մյուս քրիստոնյաների դրությունը: Թուրքիան հրահրում էր Դադստանի ավարառու լեռնականներին, որոնց հարձակումներից հայությունը տուժում էր (Բալայան, Արցախի պատմությունը 139-144, 145, 147, 151-157; Բեկնազարեանց 44-45, 58-60; Կոստիկյան 32): Ռուսական կողմի և Արցախի հայերի հնարավոր մերձեցումը կանխելու համար Նադիրը շահը կարգավիճակ շնորհեց մեյիքներին², ինչի արդյունքում ծնվեց վարչաքաղաքական միավոր՝ Խամսայի մեյիքությունները (Բալայան, Արցախի պատմությունը 165-167): Սեֆյաններից հետո Արևելյան Այսրկովկասը դարձավ ռուսների, օսմանցիների, լեզգիների և իրանցիների՝ փոփոխվող ուժային ազդեցության գոտի, սակայն երկրամասում անջնջելի էին պարսկական մշակույթի ու պարսկերենի, պարսկական ներկայության հետքերը (Կիրակոսյան, Պարսկախոսությունը Շիրվանում 85): Շուտով Փանահ Ալին³ իրեն հռչակեց խան, և հայ մեյիքներին ստիպեց ընդունել իր գերիշխանությունը. առաջացավ Ղարաբաղի խանությունը (Հարությունյան Հ., 12; Լեո, Երեւանի Թեմական 77; Բալայան, Արցախի պատմությունը 171-176): 1822թ. վերացավ Ղարաբաղի խանությունը և վերակազմավորվեց Ղարաբաղի պրովինցիայի (Բալայան, Արցախի պատմությունը 198-206)

Այսպիսով, 19-րդ դարում Շուշիի հայկական դպրոցներում պարսկերենի դասավանդման հարցը քննության է առնվել՝ հաշվի առնելով ոչ միայն տարբեր դարաշրջանների ընթացքում տարածաշրջանում իրանական մշակույթի, պարսից լեզվի դերն ու նշանակությունը, այլև նախորդ դարերի հայ-իրանական պատմամշակութային առնչությունները:

² Խոստելով տեղի հայ ազգաբնակչության համար մեյիքների դերի մասին՝ Լեոն գրել է. «Յերեք պարսից կառավարութեան համար մեյիքը մի մասնավոր գավառի կամ գավառակի կառավարիչ էր և մասնավոր կալվածատեր, այն ել վոչ խոշորներից, հայ ժողովրդի համար նույն այդ անձը պարսկական պաշտոնյա լինելուց շատ ավել էր» (Լեո, Խոջայական կապիտալը 159):

³ Փանահ Ալին ծառայել էր Նադիր Շահի բանակում: Խորհրդային Ադրբեջանի հեղինակները նրան ներկայացնում են որպես ազնվական այր, որ այժի էր ընկել իր քաջագործություններով (Шыяхонский 4): Հայ հեղինակ Ապրեսի Բեկնազարյանցը գրել է. «Նատիր-Շահն, որն ստուգիւ գիտեր թէ Փանահն Սարուջալլուեցի թափառական ցեղից մի աղքատ հովուի որդի էր, որի բարձր ձայնին պատճառաւ անուանեց իւր մունետիկը...» (Բեկնազարեանց 39): Ղարաբաղի մեյիքներից Շահնազարը, որը հակամարտություններ ուներ մյուս մեյիքների հետ, Փանահին նվիրաբերեց Շոշի անմատչելի բերդը: Լեոն այս կապակցությամբ գրել է. «Յայտնի է այս բերդի կատարած դերը Ղարաբաղի մեյիքութիւնների պատմութեան մէջ: Նրա օգնութեամբ է որ թուրք տարրը հաստատուում է հինգ մեյիքութիւնների շղթան պատռող դիրքի վրայ: Նրա հիմնարկութիւնը կամ, գուցէ, վերանորոգութիւնը Փանահ-խանի ձեռքով տեղի է ունեցել 1750-1752 թուականներին: Այդ ժամանակից արդէն Ղարաբաղի մեյիքութիւնների ջնջման հարցը ժամանակի հարց էր» (Լեո, Ղարաբաղի Թեմական 60):

Կրթական գործն Արցախում 19-րդ դարում

Արցախում կրթական գործը հետևողական հիմքերի վրա դրվեց 19-րդ դարի կեսերին, երբ Ռուսաստանը բաժանվեց ռուսոմանական օկրուգների, դպրոցական գործի ղեկավարումը ստացավ կենտրոնացված բնույթ: Ռուսական կայսրությունը սկսեց վարել ռուսաց լեզուն և ռուսական մշակույթը տարածելու քաղաքականություն, ինչը չէր կարող չազդել հայկական դպրոցի վրա (Սանթրոսյան 4, 24, 103, 108-110, 141): 1836 թ. Ռուսաստանում ընդունվեց Հայ Առաքելական եկեղեցու գործերի կառավարման կանոնադրությունը (Պոլոժենիե), որով կայսրության տիրապետության տակ գտնվող հայկական եկեղեցին բաժանվեց վեց թեմի՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, Աստրախանի, Երևանի, Վրաստանի, Դարաբադի և Շիրվանի: Ամեն թեմ կարող էր ունենալ մայրենի լեզվով գործող թեմական դպրոց (Բալայան, Արցախի պատմությունը 245; Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը 13; Սանթրոսյան 110): Թեմական դպրոցներ բացվեցին Երևանում (1837 թ.), Շուշիում (1838), Աստրախանում (1838), Շամախիում (1844), Նոր Նախիջևանում (1811): Բացի այդ, գործել են նաև ռեալական դպրոցներ և գիմնազիաներ (Խուդոյան 4, 13, 15): Հայ եկեղեցին 1870-1884 թթ. մի շարք կարգավորումներ կատարեց դպրոցական գործի կազմակերպման մեջ, և արդյունքում ծխական, հոգևոր, թեմական դպրոցները դարձան հայ կրթության կարևոր օջախները (Երկանյան 35-38, 45-59, 118, 167-173): 19-րդ դարի կեսերից Արցախի մշակութային կյանքում վճռորոշ դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ Արցախի երիտասարդությունը կրթություն էր ստանում Ռուսաստանում, Եվրոպայում, յուրացնում այդ երկրների մշակույթը՝ դրանից առանձնացնելով այն արժեքավորը, որը կարող էր առաջ մղել հայրենի երկրամասի բազմադարյան մշակույթը (Հարությունյան, Արցախի մշակույթի զարգացում 92):

1880 թ. օգոստոսին հրատարակվեց «Անդրկովկասի ռուսոմանական կանոնադրությունը», որի համաձայն ռեալական ռուսոմանականները իրենց կրթական համակարգով, կազմակերպական հիմունքներով և բովանդակությամբ պետք է մոտենային համառուսականին: Կանոնադրության համաձայն Անդրկովկասում գտնվող ռեալական ռուսոմանականները ենթարկվելու էին Թիֆլիսի գիմնազիայի տնօրինությանը (Գրիգորյան և Հարությունյան 21): Ռուսական պատկան մարմիններն ուզում էին հայկական դպրոցներում կառավարությանը ցանկալի ուղղություն հաստատելու համար դրանք ենթարկել ռուսոմանական վարչությանը, և շուտով սահմանվեց «ռուսացական ցենզ» ձեռք բերելու սկզբունքը (Երկանյան 193-207):

1897-1898 թթ. ցարական իշխանությունները մի շարք որոշումներ ընդունեցին. հայկական դպրոցներում հայերենով դասավանդվելու էին միայն կրոնն ու հայոց լեզուն, դասավանդվելու թույլտվություն ունենալու էին «ցենզ» ունեցող ուսուցիչները: Արգելվեց հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության դասավանդումը: Ի հավելումն այդ ամենի՝ 1903 թվականին ցարական հրովարտակով փակվեցին հայկական դպրոցները, մի շարք ուսուցիչներ ձերբակալվեցին (Երկանյան 216-271; Խուդոյան 14; Բալայան, Դպրոցական կյանքը 33):

Պարսից լեզվի դասերը Շուշիի հայկական դպրոցներում

19-րդ դարում Շուշին զարգանում էր որպես առևտրական քաղաք, որով իրար էին կապվում Մերձավոր Արևելքի, Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի մի շարք քաղաքներ: Շուշիի բնակչությունը բազմազան էր. այդտեղ բնակվում էին նաև Փանահի որդի Իբրահիմ խանի և պարսից գահաժառանգների հետևորդներ, որոնք Արցախ էին գաղթել Ֆաթի Ալի շահի օրոք (Шушинский 30-31, 55, 77): Չնայած այն հանգամանքին, որ Խամսայի մելիքության անկումից հետո Դարաբադի առաջին խաներն ամեն կերպ աշխատել են ավելացնել քաղաքի թուրքալեզու բնակչությունը՝ ի հաշիվ քոչվորական ցեղերի, այնուամենայնիվ, 19-րդ դարի 30-ական թթ. սկսած մինչև

70-ական թթ. Շուշիի հայ ազգաբնակչության թիվը զգալիորեն աճեց: 1895 թ. քաղաքի բնակչությունը Շուշիի սարահարթում հասնում էր 34 հազարի, որից 21 հազարը հայեր էին (Բակուր 148-163, 187; Տեր-Պասպարյան, Շուշու բնակչությունը 68-69; Սարգսյան 533-537; Ավագիմյան 81-82; Шухинский 17-25):

1830-ական թվականներին Արցախի թեմում գործում էր 25 հայկական դպրոց: Միայն Շուշի քաղաքում 1835 թ. կար 3 հայկական դպրոց (Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը 15-17, 19-21; Բալայան, Արցախի պատմությունը 280): 19-րդ դարում Արցախի մշակութային կյանքի աշխուժացմանը նաև նպաստեցին երկրամասի մշակութային կենտրոնների սերտ կապերը հայկական խոշոր մշակութային կենտրոնների հետ (Հարությունյան, Արցախի մշակույթի զարգացումը 92):

Ռուսաց լեզուն տեղական բնակչության մեջ արմատավորելու նպատակով 1830 թ. կառավարության որոշումով Անդրկովկասում բացվեցին 20 գավառական ուսումնարաններ, որոնցից մեկը Շուշիում: Այս դպրոցում դասավանդումը տարվում էր ռուսերենով, որոշ ժամաքսնակ հատկացված էր նաև հայերենի ու թաթարերենի դասավանդմանը: Տեր-Պասպարյանի ներկայացրած ուսումնական ծրագրում պարսկերենի դասավանդման մասին որևէ հիշատակում չկա (Տեր-Պասպարյան, Շուշի 98-99; Բալայան, Դպրոցական կյանքը 29-30; Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը 11-12):

1823թ Շուշի եկան ու հաստատվեցին Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» ներկայացուցիչները: Նրանք 1827 թ. հիմնեցին հայկական ուսումնարանը (Լեմսի շկոլը), որը տարիների ընթացքում պատրաստեց մեծ թվով ուսուցիչներ և քարոզիչներ (Բալայան, Արցախի պատմությունը 280; Ավագյան, Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանք 5-6; Լեռ, Ղարաբաղի Թեմական 87-89): Հետաքրքրական է, որ այդ դպրոցում նաև հայ հոգևորականներ են դասավանդել: Բողոքականների հրավերով դպրոցում աշխատել են Հովսեփ վարդապետ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին, Միրզա Ֆարուխը (Հարությունյան Ամիրխանյանը)⁴, սարկավազներ Բարսեղը և Մովսեսը: Դպրոցում աշակերտները սովորում էին հայերեն կարդալ և գրել, թվաբանություն և աշխարհագրություն, սերտում էին Հին և Նոր կտակարան, վարժվում էին թարգմանության մեջ գրաբարից աշխարհաբար և հակառակը: Որոշ աշակերտների ուսուցանում էին նաև ռուսաց լեզու (Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը 10; Բալայան, Դպրոցական կյանքը 29): Բազելի Ավետարանական քարոզչական ընկերության գործունեության հիմքում հասարակ ժողովրդին հասանալի և մատչելի լեզվով սուրբգրային գրականության մատուցումն էր (Կիրակոսյան, Նորահայտ մի փաստաթուղթ 296, 300-301): Բողոքական քարոզիչների նպատակներից էր Աստվածաշունը, ինչպես նաև ուսումնական, քարոզչական

⁴ 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիում լայն գործունեություն ծավալեց Միրզա Ֆարուխը (Հարությունյան Ներսեսի Ղարաբաղցի), որը ծնվել էր 1798թ. Թաղուտ գյուղում: 1805 թ. ռուսների կողմից Ղարաբաղի խանությունը գրավելուց հետո պարսիկները ներխուժեցին և բազմաթիվ գերիներ տարան, որոնց թվում էր նաև մանկահասակ Հարությունը: Նրան որպես նվեր ուղարկեցին Ֆաթի Ալի շահի դստերը. նա դաստիարակվեց պալատում շահի որդիների հետ և ստացավ Ֆարուխ անունը: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ նրան հաջողվեց փախչել գերությունից և բնակություն հաստատել Շուշիում: Ֆարուխը նորից քրիստոնեություն ընդունեց (բայց չդարձավ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ, այլ համալրեց բողոքականների շարքերը): Հետագայում նա աջակցեց բազմաթիվ միսիոներներին թարգմանության գործում, քանի որ լավ տիրապետում էր պարսից լեզվին ու արաբերենին: Տարիներ անց Եվրոպայում կրթություն ստանալուց հետո նա 1865 թ. դպրոց բացեց Շուշիում: Միրզա Ֆարուխը հեղինակեց «Թարիխ-Սաֆի» աշխատանքը, որում շարադրված է Արցախի պատմությունը մինչև 1820-ական թվականների իրադարձությունները (Ղուկասեանց 12-15; Լեռ, Ղարաբաղի Թեմական 94; Բալայան, Արցախի պատմությունը 285):

գրականությունը տպագրել աշխարհաբարով և տարածել ժողովրդի մեջ (Պետոյան 46-48, 52-53): 1828 թ. Բագելի բողոքականները Շուշիում նաև տպարան հիմնեցին (Պետոյան 47-48; Բալայան, Արցախի պատմությունը 282; Տեր-Պասապարյան, Շուշի 85-86): Շուշիում կրթական գործի և գրատպության զարգացման շնորհիվ աշխարհաբարը տարածվեց և սկսեց կիրառվել դպրոցներում (Բաբայան 138-139, 143-144): Չնայած բողոքականների հիմնած դպրոցում պարսկերեն չէր դասավանդվում, բայց նրանց տպարանում լույս էին ընծայում նաև պարսկերենով կյութեր. այդ մասին Լեոն Նշել Է. «Միայն այս տպարանը, ինքնըստիներեն, մի գեղեցիկ երևոյթ էր Շուշու խաւար իրականութեան մէջ, որին կարող էր նախանձել նոյնիսկ Էջմիածինը իր անկատար տպարանով: Միսիօներների տպարանական գործունեութեան արդիւնքներն էին (թէ Շուշում և թէ Մոսկվայում) 11.679 օրինակ հայերէն, 728 օրինակ պարսկերէն, 147 օրինակ թուրքերէն և 100 օրինակ եբրայերէն գրքերը» (Լեո, Ղարաբաղի թեմական 93):

Լեոն նաև Նշել Է. «Աւելի մանրամասն տեղեկութիւններ միսիօներների դպրոցական գործունեութեան մասին, բացի այն, ինչ նրանք տուել են իրենց պաշտօնական բացատրութիւնների մէջ, մենք չունենք: Սակայն այս համառօտ տեղեկութիւններն էլ բաւական են, որ մենք տեսնենք թէ լոկ կրօնական նպատակ ունեցող եւրոպացի բողոքականները տալիս էին հայ մատաղ սերնդին մի կրթութիւն, որ կրօնական լինելով հանդերձ՝ ներկայացնում էր դաստիարակչական շատ գեղեցիկ նորոյթ: Իսկապէս ժողովրդական դաստիարակութեան գործն էր սկսուում Ղարաբաղում և այս կողմից Շուշու «լէսին շկօլը» (գերմանական դպրոցը) նման էր Թիֆլիսի Ներսիսիան դպրոցին, որի հիմնադիրը դրանից առաջ էր զգացել ժողովրդական կրթութեան ահագին խորհուրդը և բաց էր արել դպրոցը հասարակութեան բոլոր խաւերի առաջ»: «Նոյն այս միսիօներական դպրոցն էլ պատճառ դարձաւ որ ռուս կառավարութիւնը նոյնպէս մտածէ ժողովրդական կրթութեան մասին» (Լեո, Ղարաբաղի թեմական 90-91):

Արցախի դպրոցական համակարգում որոշակի փոփոխություն կատարեց 1836 թ. հայկական դպրոցների վերաբերյալ պաշտոնական կանոնադրության (Պոլոժենիե) ընդունումը (Գրիգորյան 5): Ղարաբաղի թեմական դպրոցի⁵ 75-ամյակին նվիրված ձեռնարկում նշվում է. «Հայ ժողովրդի ամբողջութիւնը ներկայացնող միակ իրաւական մարմինը ճանաչելով հայ եկեղեցուն, ռուս կառավարութիւնը յատուկ կանոնադրութիւն տուեց եկեղեցուն Պոլոժենիա անունով: Այդ նոյն կանոնադրութեան մէջ օրէնքով որոշուած է ռուսահայ թեմերից իւրաքանչիւրում բանալ թեմական հոգևոր Դպրանոց Հայ եկեղեցու համար կրթութեան պաշտօնեաներ պատրաստելու և հայ ժողովրդի մտաւորը բարձրացնելու» (Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեակը 10-11):

1838 թվականին հիմնվեց Շուշիի թեմական դպրոցը, որն անուրանալի դերակատարություն ունեցավ հայության կրթական կյանքում: Դպրոցի ուսուցչական կազմում ընդգրկվեցին հայտնի մանկավարժներ և մտավորականներ (Բալայան, Դպրոցական կյանքը 30; Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեակը 4): 1838 թ. դպրոցում դասավանդած ուսուցիչներին ներկայացնելիս Լեոն Նշել Է պարսկերենի ուսուցման և պարսից լեզվի ուսուցիչ նշանակելու մասին. «...**Իսկ պարսկերէն լեզուի ուսուցիչ միւսնոյն ժամանակ նշանակուեց նոյն գաւառական ուսումնարանում ուսուցչութիւն անող Մոլլա-Մահմադ Մօլլա-Ալլահվերտիւիլը...** Սակայն մի տարրուց յետոյ Բաղդասար մետրոպոլիտը, կամենալով ունենալ մի քրիստոնեայ ուսուցիչ, որ աւանդէր պարսկերէնը, արձակեց Մոլլա-Ալլահվերտիւին,

⁵ Ղարաբաղի թեմական դպրոցը 19-րդ դարի երկրորդ կեսում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում ռուսահայերի չորս հայկական թեմական դպրոցներից էր (Թիֆլիսի Ներսիսյան դպրոց, Երևանի թեմական դպրոց, Նոր Նախիջևանի դպրոց, Շուշիի թեմական դպրոց) (Տեր-Պասապարյան, Շուշի 102):

տալով նրան մի տարուայ ռոճիկ 60 թուրլի, իսկ նրա տեղ ուսուցիչ հրակիրեց Միրզա-Ֆարրուխ Ամիրխանեանին, որին մենք ճանաչեցինք միսիօնարների գործունեության ժամանակից» (Լեօ, Ղարաբաղի Թեմական 183): Ըստ 1840-ական թթ. ուսումնական ծրագրերի Շուշիի թեմական դպրոցում ավանդվում էին հետևյալ առարկաները 1) Աստվածային օրենք: 2) Սրբազան պատմություն: 3) Հայոց քերականություն: 4) Ռուսաց լեզու (ընթերցանություն և քերականություն): 5) **Պարսկերեն լեզու:** 6) Թվաբանություն: 7) Երգեցողություն (Տեր-Գասպարյան, Շուշի 103):

1843 թ. Բաղդասար մետրապոլիտի՝ Սիմոնին ուղղված նամակում նշվել է. «Ի հոգևոր Սեմինարիիս Ղարաբաղու վիճակի գտանին այժմ չորս ուսուցիչք: Ուսուցչին ռուսաց լեզուի նշանակեալ է 120 թուրլի արծաթի ի տարին, ուսուցչին հայոց լեզուի ծառայէ ծրիաբար ի 23-էն ապրիլի 1841 ամի մինչև ցայժմ, ուսուցչին եկեղեցական երգեցողութեանց ի 18-էն մայիսի 1840 ամի մինչև ցայժմ ստացեալ է միայն 440 թուրլիս արծաթեայ ի վարձատրութիւն և ուսուցչին **պարսից** և թուրքաց լեզուի, որ ծառայէ 1-էն սեպտեմբերի 1839 ամի, ստացեալ է յանցեալ ամս ի վարձատրութիւն վասն մէն մի ամի 200 թուրլիս արծաթեայ, այլ յայսմ 1843 ամի միայն 25 թուրլիս արծաթեայ» (Լեօ, Ղարաբաղի Թեմական 186): «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեակը» աշխատանքում ևս կա հիշատակություն Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչների ռոճիկների մասին, և նշված է նաև պարսից լեզվի ուսուցչի աշխատավարձը (200 թուրլի) (12):

Թեմական դպրոցի ուսուցիչների որակավորման մասին խոսելիս Լեոն նշել է. «Եվ իրաւ, Ղարաբաղի Թեմական դպրոցը մինչև 1860-ական թուականները ներկայացնում էր շարունակական Յովսէփ վարդապետ Արցախեցու դպրոցի, որ մի ժամանակ գոյութիւն ունէր Գանձասարի, ապա Յակոբայ վանքերում: Բաւական է տեղեկանալ թէ ինչ ուսում էին ստացել այն հոգևորականները, որոնք տարիների ընթացքում ուսուցիչներ էին Սեմինարիայի մէջ» (Լեօ, Ղարաբաղի Թեմական 198): Թեմական դպրոցի շրջանավարտների և ուսուցիչների կրթության և գործունեության վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերից մեկում նշվում է. «Կարապետ քահանայ Հախիտեանց, արդէն սան էր Ղարաբաղի հայոց Սեմինարիայի, «ի վիճակային Հայոց Սեմինարիի Ղարաբաղու ի 23-էն Յունվարի 1839 ամի ց2 մարտի 1843 ամի ուսեալ է զԱստուածային օրէնս, զՍրբազան պատմութիւն ի Հայ լեզու, զլեզու Ռուսաց, զպատմութիւն, զաշխարհագրութիւն, զթուաբանութիւն և զքերականութիւն Ռուսաց լեզուի, զլեզուս Հայոց և **Պարսից վայելագորութիւն** և ունի զվկայական ի 5 մարտի 1843 ամի ընդ № 5: Եւ առ ուսուցիչ Յարութիւն քահանային Սեւրնեանց ի 10-էն յունիսի 1842 ամի ց4 մարտի 1845 ամի ուսեալ է զՍրբազան պատմութիւն, զճարտասանութիւն և զերս մասունս փոքր Տրամաբանութեան և ունի զվկայական» (Լեօ, Ղարաբաղի Թեմական 199):

Լեոն իր աշխատանքում ներկայացրել է «Յուցակ յաղագս դրութեան Ղարաբաղու վիճակային Սեմինարիան», և 1845 թ. դասավանդված առարկաների շարքում «Առարկայք ուսման» բաժնում տարբեր առարկաների մեջ հիշատակել **«Ի պարսից լեզուի լողաթ»** (Լեօ, Ղարաբաղի Թեմական 204-205): 1856 թ. թեմական դպրոցում դասավանդած ուսուցիչների աշխատավարձերի մասին խոսելիս Լեոն կրկին հիշատակել է **«ուսուցիչ պարսից և թուրքաց լեզուաց»** (Լեօ, Ղարաբաղի Թեմական 216):

1857 թ. Ղարաբաղի թեմի առաջնորդ նշանակվեց Գևորգ Եպիսկոպոս Վեհապետյանը, որի կառավարման ժամանակ դպրոցում մի շարք բարեփոխումներ կատարվեցին: Այդ վերանորոգումներից հետո էլ դպրոցում շարունակեցին դասավանդել պարսից լեզու. դա ակնհայտ է Լեոյի ներկայացրած ուսումնական պլաններից և դասավանդող անձանց անունների ցուցակներից (Լեօ, Ղարաբաղի Թեմական 218-221, 275-277):

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Շուշին դառնում է Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը, ուր լայն ծավալ են ստանում ազգային ինքնագիտակցության

վերելքը պայմանավորող տպագրության, մամուլի, հրատարակչական գործի, մանկավարժության և դպրոցի զարգացման մղումները: (Գրիգորյան և Հարությունյան 20-21): 19-րդ դարի 60-ական թթ. Արցախի մշակութային կյանքի զարթոնքի վրա շարունակում էր որոշակի ազդեցություն ունենալ արևելահայ իրականությունում ծավալվող հասարակական-քաղաքական-մանկավարժական շարժումը, որի գործիչներն էին հյուսիսափայլականները: Լուսավորական շարժման գործիչների մշակած ծրագրերում դրված էր նաև դպրոցական ցանցի ընդլայնման հարցը (Հարությունյան, Արցախի մշակույթի զարգացում 93; Գրիգորյան և Հարությունյան 26):

Արցախահայության կյանքում կարևոր երևույթ էր նաև 1881 թ. սեպտեմբերին Շուշի քաղաքի ռեալական ուսումնարանի բացումը: Դպրոցում ուսուցումը ձուլեցնում էր: Քննարկվող ժամանակաշրջանում Կովկասում գործող ռեալական 9 դպրոցները նպատակ ունեին ազգային փոքրամասնությունների շրջանում տարածելու ռուսաց լեզուն (Գրիգորյան և Հարությունյան 21; Բալայան, Արցախի պատմությունը 282; Տեր-Պասպարյան, Շուշի 109-110; Բալայան, Դպրոցական կյանքը 36):

Հայ հոգևորական, մանկավարժ և պատմաբան Եղիշե ավագ քահանա Գեղամյանը նկարագրել է Շուշիում իր հանդիպումը այդ ժամանակ ռեալական դպրոցում պարսից լեզվի ուսուցիչ, պարսիկ հոգևորականի հետ. *«Չնայելով, որ հիւանդ էր և անկողնում պառկած, Գագի Միրզա Հասանը բարեհաճեց ընդունել ինձ: Այս մարդը, ինչպես յայտնի է, անդրկովկասեան բոլոր շիիներին շէյխ-իւ-իսլամ է նշանակուած և Թիֆլիս տեղափոխուելու համար սպասում է թագաւոր կայսեր հաստատութեանը: Գագի Միրզա Հասանը տակաւին ջաիիլ տղամարդ է: Բաւական լաւ է խօսում ռուբէն: Եւ խօսելիս ընտիր և առողջ մտքեր շատ է յայտնում: Նրա նիստուկացն իմ աչքին թոււաց շատ պարզ ու հասարակ, որ, իհարկէ, շատ և շատ գովելի է և Միրզա Հասանի համար պատուաբեր: Ապագայ շէյխ-իւ-իսլամը միմիայն մի կին ունի: Մինչ ցարդ նա պարսկերէնի և մահմէդական կրօնի ուսուցիչ է եղել տեղոյս ռեալական դպրոցում ստանալով 600 ռուբլի ռոճիկ ի տարին»* (Գեղամյան 20): Շուշիի ռեալական ուսումնարանը ավելի լայն ասպարեզ էր խոստանում իր շրջանավարտներին հետագայում ուսումը շարունակելու և լավ պաշտոններ գրավելու համար (այն ապահովում էր ձուլեցնելիս տիրապետելը): Շուշիի ռեալականը ավարտելուց հետո աշակերտները մեծ մասամբ իրենց ուսումը շարունակում էին Ռուսաստանի տեխնիկական բուհերում: Այն պետական ուսումնական հաստատություն էր, որի նպատակն էր տարածել ռուսաց լեզուն տեղական ռուսահպատակ բնակչության մեջ (Գրիգորյան և Հարությունյան 22, 25): 1908-1909 թթ. Շուշիի ռեալական դպրոցի ուսումնական պլանում պարսկերենի դասավանդման մասին այլևս հիշատակություն չկա (Գրիգորյան և Հարությունյան 43-44):

19-րդ դարի 50-60-ական թվականներից նոր դպրոցներ բացվեցին Արցախի մի շարք գյուղերում և Շուշիում: 1875 թ. տվյալներով Արցախի թեմում կար 52 հայկական դպրոց, որից 18-ը իգական էր (Բալայան, Դպրոցական կյանքը 34-36; Բալայան, Արցախի պատմությունը 281; Մարգարյան 130-131; Ամրյան 57):

1863 թվականին հայ մանկավարժ և հասարակական գործիչ Պետրոս Շանշյանի նախաձեռնությամբ Շուշիում հիմնվեց իգական դպրոց: Շուշիում հայտնի ժամհարյանց գերդաստանի ներկայացուցիչ, մեծահարուստ Համբարձում Հախումյանի կնոջ՝ Մարիամ Հախումյանի նախաձեռնությամբ 1864 թ. բացվեց Մարիամյան օրիորդաց դպրոցը, որը գործեց մինչև 1920 թ. (Տեր-Պասպարյան, Շուշի 108-109; Հարությունյան, Շուշի: Նորահայտ կյուրեր 20-22): 19-րդ դարի վերջերին Շուշիում բացվեց ռուսական Մարինսկու իգական դպրոցը, որի աշակերտների մեծ մասը հայուհիներ էին (Բալայան, Արցախի պատմությունը 282; Բալայան, Դպրոցական կյանքը 36):

19-րդ դարի կեսերին Շուշիում եղել է մեկ թեմական, մեկ միսոինոներական դպրոց, ինչպես նաև տարբեր մասնավոր ուսումնարաններ (Սանթրոսյան 279-281; Խուրդյան 343-391): 1895-1896 թթ. ուսումնական տարում Շուշիում գործում էր 10 հայկական դպրոց, որտեղ սովորում էին 981 աշակերտ (Գրիգորյան և Հարությունյան 29): Ղարաբաղի տարբեր գավառների և գյուղերի ծխական, վանական և օրիորդաց դպրոցներում պարսկերեն դասավանդելու մասին հիշատակություն չկա:

1881 թ. Շուշիում բացվեց Միրզաջան Մահմեդի Յակոբյանցի (Հակոբյան) տպարանը, որը գործեց շուրջ 25 տարի: Հայ բազմաթիվ անվանի մտավորականների գործեր տպելուց զատ, 1893 թ. տպարանը պարսկերենից թարգմանությամբ լույս ընծայեց «Ռոստոմ և Չոիրաբը», հատվածներ Շահնամեից, իսկ 1894 թ. Սամուել Գյուլզադեանցի⁶ թարգմանությամբ լույս ընծայեց «Չոհակ-Բիւրասայի Աժդահակը» (Սկյան 97; Բալայան, Արցախի պատմությունը 283; Ավագյան, Լեռնային Ղարաբաղի կոլտուր-կրթական կյանք 12-13; Տեր-Գասպարյան, Շուշի 91, 93): Հատկանշական է, որ կարդալով Գյուլզադեանի ստեղծագործությունները՝ Գեղամյանցը նրան անվանել է «հայ Ֆիրդուսի»: Արցախում շրջագայելու ժամանակ Գեղամյանցը հանդիպել է նաև Գյուլզադեանին և այդ առթիվ գրել է հետևյալը. «Այցելեցի պ. Սամուել Գիւլզադեանին: Սա «Մեղուկ» թղթակիցն էր Թաւրիզում: Այժմ հայոց լեզուի ուսուցիչ է Շուշուայ հոգևոր դպրոցում: Պարոնի մօտ երեք ձեռագիր ինքնուրոյն աշխատութիւն տեսայ և թերթեցի: Թերթեցի, հաւանեցի և նորից, ծայրէ ի ծայր, կարդացի ձեռագրաց երկուքը: Երրորդը դեռ կարդացած չեմ, թէև բովանդակութեան մասին, թերթացիծս մի թեթև գաղափար ունիմ» (Գեղամյանց 22, 32): Գեղամյանցն իր աշխատանքում ներկայացրել է այնպիսի ազգագրական տվյալներ, որոնք վկայում են Շուշիում ապրող պարսիկների և հայերի բարիդրացիական առնչությունների մասին. «Խիստ շատերը Շուշուայ հայերից հաւատացնելով հաւատացնում էին ինձ, որ իրանց հարսանիքներին, հրաւեր և կերուխումներին շատ անգամ մասնակից են լինում տեղւոյն պարսիկները: Եվ փոխադարձաբար» (Գեղամյանց 21): Շուշիի քաղաքային կյանքը և բնակիչների առօրյան նկարագրելիս Գեղամյանցը նշել է. «Գրեթէ իւրաքանչիւր տան պատից մի-մի թառ է կախած: Ածում և երգում են պարսկերէն» (Գեղամյանց 14):

Նշված ժամանակահատվածում Իրանի հայկական դպրոցներում պարսկերենը դասավանդվում էր որպես գիտության և գրականության, նաև որպես պետության լեզու: Այն նպաստելու էր, որ աշակերտները հետագայում հեշտ ներգրավվեն երկրի տնտեսական և հասարակական կյանքի մեջ (Amryan 114-125):

Պարսից լեզվի դասավանդումն առկա է եղել նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (Սանթրոսյան 73, 166): 1843 թ. Երևանի թեմական⁷ դպրոցի երկրորդ և երրորդ դասարաններում առկա էր պարսից լեզվի դասավանդում (Լեօ, Երեւանի Թեմական 149; 153-154): Նշված դպրոցում պարսկերենը ուսուցանվել է որպես տարածաշրջանում կարևորություն ունեցող գիտության և գրականության լեզու: Ի տարբերություն սրա՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում պարսից լեզուն

⁶ Գյուլզադեանը Շուշիի թեմական դպրոցում հայոց լեզվի, ֆրանսերենի, գծագրության և վայելչագրության ուսուցիչ էր (Ավագյան, Ղարաբաղի նախատվետական շրջանի մամուլ 37):

⁷ Լեոն իր աշխատանքում հիշատակել է Երևանի թեմական դպրոցում պարսկերեն դասավանդող ուսուցչի անունը (Միրզա-Նուր-Ալի Դաւիշ Գեանջալի օղլի) (Լեօ, Երեւանի Թեմական 136): Նա նշել է, որ ռուսական կառավարությունը ամեն գնով, անգամ հայերին հակառուս լինելու մեջ մեղադրելով, թեմական ու մյուս դպրոցներում ներդնում էր այն առարկաները, որոնք առնչվում էին ռուսերենին, ռուս գրականությանն ու ռուս մշակույթին (Լեօ, Երեւանի Թեմական 139-148): Արդյունքում, Երևանի թեմական դպրոցի 1861 և 1865 թվականների ուսումնական պլաններում պարսից լեզվի դասավանդման մասին այլևս հիշատակություն չկա (Լեօ, Երեւանի Թեմական 179, 185, 187, 203-205):

դասավանդվում էր այլ արևելյան լեզուների շարքում (Меликян и Хромов 188-197; Թադեոսեան 354-355; 369-370): Կարելի է ասել, որ պարսկերենը ուսուցանվել է այնպիսի հայկական դպրոցներում, որոնք որոշակի դեր են ունեցել հայ կրթական կյանքում և ընթրիհանգանակային աղբյուր համարվել հայկական այլ ուսումնական հաստատությունների համար:

Այսպիսով կաստում պարսկախոսության տարածվածությունը պայմանավորված էր նաև պարսկերենի իշխանական լեզու լինելու հանգամանքով (Կիրակոսյան, Գանձակյան ձեռագիր Ավետարանը 288): Այդ լեզվին տիրապետելը բարձրահամբավ է համարվել, և այն տարածված է եղել ոչ միայն հայերի շրջանում: Օրինակ՝ Նուխիի հայկական դպրոցներում պարսկերենի դասավանդման մասին հիշատակություն չկա, բայց 19-րդ դարում Նուխիում մզկիթներին կից գործող դպրոցներում ուսուցումը տարվում էր պարսկերենով և արաբերենով (Հարությունյան, Ժողովրդական կրթության զարգացումը 9):

Այսպիսով, կարելի է ասել, որ Շուշիի հայկական դպրոցներում պարսկերենը դասավանդվում էր սովորույթի ուժով՝ որպես տարածաշրջանի և երկրամասի համար կարևորություն ունեցող, ինչպես նաև գրականության և գիտության լեզու, որի դերը աստիճանաբար քայքայվում էր ռուսերենի ազդեցությամբ:

Այս հետազոտությունը ցույց է տալիս, թե 19-րդ դարում Արցախում ինչպես են քաղաքական և սոցիալական տեղաշարժերը ազդել լեզուների դասավանդման առաջնահերթությունների, լեզվական քաղաքականության և կրթական համակարգում որոշակի լեզուների կարևորության վրա: Հետազոտությունը նաև լույս է սփռում պատմական այն բարդ գործընթացների վրա, որոնք ձևավորել են Շուշիի մշակութային և լեզվական պատկերը:

Եզրահանգումներ

Կատարված հետազոտության արդյունքում կարելի է եզրակացնել.

1. Շուշիի հայկական դպրոցներում պարսկերենի ուսուցման առկայությունը ոչ միայն լույս է սփռում հայ-իրանական պատմական, մշակութային և լեզվական հարաբերությունների՝ նախկինում քիչ ուսումնասիրված կողմերի վրա, այլև բացահայտում է Շուշիի մշակութային ներկայակալի հարստությունը. կենսունակ ու բազմազգ համայնք, որտեղ գոյակցում էին տարբեր լեզուներ և ավանդույթներ:

2. Եթե Շուշիի հայկական դպրոցներում պարսից լեզվի դասավանդումը դիտարկենք Իրանի, Ռուսաստանի և Այսրկովկասի այլ հայկական դպրոցներում պարսկերենը դասավանդելու համատեքստում, ապա կարելի է ասել, որ Շուշիի հայկական դպրոցներում պարսկերենը դասավանդվել է ոչ միայն որպես գիտության և գրականության լեզու, այլև որպես մի լեզու, որին տիրապետելն անհրաժեշտ է եղել հարևանների հետ շփվելու համար:

3. 19-րդ դարի երկրորդ կեսին արևելահայ դպրոցների, այդ թվում՝ Շուշիի դպրոցների ուսումնական ծրագրերը զգալի փոփոխություններ են կրել: Դրա արդյունքում աստիճանաբար առաջնային է սկսել համարվել ռուսաց լեզվի ուսուցումը, որի հետևանքով պարսկերենը զիջել է իր դիրքերը: Ռուսերենի կարևորումը պայմանավորված էր այդ լեզվի աճող դերով՝ որպես ռուսական կայսրության կրթության և մշակութային ազդեցության լեզու: Արդյունքում, ռուսաց լեզվի դասաժամերը հայկական դպրոցներում ավելացան, և պարսկերենն աստիճանաբար դուրս մղվեց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամրյան, Թերեզա. «Իրանական մշակույթի և պարսից լեզվի տարածվածությունը Շուշիում՝ ըստ եղիշե ավագ քահանա Գեղամյանցի ուղեգնացական ակնարկների». *Արևելագիտության հարցեր*, հատոր 23, համար 1, 2023, էջ 51-65, DOI:10.46991/jos.2023.23.1.051.

2. Ավագիմյան, Նարինե. «Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1813-1917 թթ.». *Գիտական Արցախ*, №1, 2018, էջ 81-84:
3. Ավագյան, Սմբատ. *Նյութեր Ղարաբաղի Նախասովետական շրջանի մամուլի պատմությունից*. Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1969:
4. Ավագյան, Սմբատ. *Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից*. «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982:
5. Բաբայան, Օֆելյա. «Լեզվավիճակը Շուշիում XIX դարի առաջին կեսին». *Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ («Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք)*. «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, Շուշի, 2014, էջ 138-144:
6. Բալայան, Վահրամ. «Դպրոցական կյանքը և ազգային դաստիարակության հարցը Շուշիում 1813-1917 թթ.». *Հայագիտական ուսումնասիրություններ*, № 7, 2016, էջ 28-41:
7. Բալայան, Վահրամ. *Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*. Ամարաս տպարան, Երևան, 2002:
8. Բակուր (Կարապետյան, Բակուր). *Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920 թ.)*. ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2000:
9. Բաղդասարյան, Նելլի. «Շուշին 19-րդ դարի առաջին կեսի Ղարաբաղի վարչատարածքային և առևտրական կենտրոն». *Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)*. Արցախի պետական համալսարանի հրատարակչություն, Ստեփանակերտ, 2018, էջ 31-37:
10. Բարխուտարեանց, Մակար. *Աղուանից երկիր և դրացիք*. Գանձասար Աստուծաբանական կենտրոն, Երևան, 1999:
11. Բեկնազարեանց, Ապրեսի. *Գաղտնիք Ղարաբաղի*. Տպարան Ի. Ն. Սկորոխոդովի, Ս. Պետերբուրգ, 1886:
12. Գեղամյանց, Եղիշե. *Ուղեգնացական ակնարկներ*. Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, Երևան, 2010:
13. Գրիգորյան, Համլետ. «Արցախի հայագիր դպրոցի զարգացման պատմությունից». *Գիտական տեղեկագիր*, 1 (10), 2005, էջ 3-6:
14. Գրիգորյան, Համլետ և Գրիգոր Հարությունյան. *Շուշիի ռեալականը*. Ամարաս հրատարակչություն, Երևան, 2001:
15. Երկանյան, Վահե. *Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905)*. Հայկական ՍՍՀ հրատարակչություն, Երևան, 1970:
16. Թադևոսեան, Յովսեփ. *Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց*. Մխիթարեան տպարան, Վիեննա, 1953:
17. Լեո. *Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ*, հատոր առաջին. Պետական հրատարակչություն, Երևան, 1934:
18. Լեո. *Պատմութիւն Երեւանի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի (1837-1912)*. Տպարան Ն. Աղանեանի, Թիֆլիս, 1914:
19. Լեո. *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական դպրոցի (1838-1913)*. Տպարան Ն. Աղանեանի, Թիֆլիզ, 1914:
20. Խուդոյան, Սուրեն. *Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ.: Ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով*. «Լույս» հրատարակչություն, Երևան, 1987:
21. Կիրակոսյան, Հասմիկ. «Գանձակյան հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանը վիճաբանական թարգմանությունների համատեքստում». *Բանբեր Մատենադարանի*, № 29, 2020, էջ 287-297:
22. Կիրակոսյան, Հասմիկ. «Պարսկախոսությունը Շիրվանի հայ բնակչության շրջանում (ԺԸ դար)». *Գիտական Արցախ*, № 4(7), 2020, էջ 83-92:

23. Կիրակոսյան, Հասմիկ. «Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական քարոզիչների գործունեության մասին». *Բանբեր Մատենադարանի*, № 34, 2022, էջ 295-304, DOI:10.57155/VWPW6295:

24. Կոստիկյան, Զրիստինե. «Զրիստոնյաները Շաքիի շրջանում և մահմեդականացած ուղի հայերի խնդրագիրը (IX–XIX դդ.)». *Պատմաբանասիրական հանդես*, 3 (224), 2023, էջ 30-45, DOI:10.54503/0135-0536-2023.3-30

25. Հարությունյան, Գրիշա. *Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում*. «Լույս» հրատարակչություն, Երևան, 1985:

26. Հարությունյան, Հրաչիկ. *Շուշի: Նորահայտ կյուրեր քաղաքի պատմության մասին*. Նոյյան տապան, Ստեփանակերտ, 2002:

27. Հարությունյան, Մարինե. «XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի Արցախի մշակույթի զարգացման առանձնահատկությունները». *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը ներկան և ապագան*, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2007, էջ 88-95:

28. Հովհաննիսյան, Լավրենտի. «Ղարաբաղի բարբառում իրանական մի քանի փոխառությունների մասին». *Լրաբեր հասարակական գիտությունների*, հատոր 11, 1990, էջ 65-70:

29. *Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը*. Տպարան Բ. Տեր-Սահակեանի, Շուշի, 1913:

30. Ղուկասեանց, Հայրապետ. *Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ*. Ս. Ռօսինեանցի տպարան Գոլով, Թիֆլիս, 1886:

31. Մարգարյան, Նիկոլ. «Ժամանցը և ժամանցի հանրային վայրերը Շուշիում XIX դարի վերջին - XX դարի սկզբին». *Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ («Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք)*. «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, Շուշի, 2014, էջ 130-136:

32. Պետոյան, Ստյոպա. «Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.)». *Հայագիտության հարցեր*, № 1, 2021, էջ 45-65:

33. Սանթրոսյան, Մուշեղ. *Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին*. Հայպետոսմանկիրատ, Երևան, 1964:

34. Սարգսյան, Համլետ. «Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում». *Արցախի ժողովրդագիտությունը. ազգագրություն*, հտ. 4(4), Ստեփանակերտ, 2020, էջ 530-538:

35. Սևյան, Վլադիմիր. *Շուշի (Պատմական ակնարկ)*. Հայաստան հրատ., Երևան, 1991.

36. Տեր-Գասպարյան, Ռուբեն. «Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը». *ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների*, № 9, 1963, էջ 67-76:

37. Տեր-Գասպարյան, Ռուբեն. *Շուշի*. Հայաստանի ԳԱ հրատարակչություն, Երևան, 1993:

38. Шушинский, Фиридун. *Шуша*. Азербайджанское Государственное Издательство, Баку, 1968.

39. Меликян, Гурген и Хромов, Альберт «История преподавания персидского языка в Лазаревском институте восточных языков». *Вестник Ереванского университета*, № 1 (67), Ереван, 1989, стр. 188-197.

40. Amryan, Tereza. "On teaching of Persian language in Armenian schools of Iran in the second half of the 19th century and the first half of the 20th century". *Bulletin of The Institute of Oriental Studies*, Vol. III. Issue 1, Yerevan, 2023, pp. 114-125, DOI: 10.52837/27382702-2023.3-114.

41. Kostikyan, Kristine. *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran*. "Nairi" Publishing House, Yerevan, 2017.

WORKS CITED

1. Amryan, T'ereza. "Iranakan mshakuyt'i yev parsic lezvi tarac'vac'ut'yuny' Shushium` y'st Yeghishe avag qahana Geghamyanci ughegnacakan aknarkneri". [The Prevalence of Iranian Culture and the Persian Language in Shushi According to Travelling Notes of Archpriest Yeghishe (Hovakim) Geghamiants] Arevelagitut'yan harcer, hator 23, hamar 1, 2023, e'j 51-65. (In Armenian)
2. Avagimyan, Narine. "Jhoghovrdagrakan iravitwaky' Shushium 1813-1917 t't". [The Demographic Situation in Shoushi in 1813-1917] Gitakan Arcax, №1, 2018, e'j 81-84. (In Armenian)
3. Avagyan, Smbat. Nyut'er Gharabaghi naxasovetakan shrjani mamuli patmut'yunic. [Materials from the History of the Pre-Soviet Period Press in Karabakh] Yerevani hamalsarani hratarakchut'yun, Yerevan, 1969. (In Armenian)
4. Avagyan, Smbat. E'jer Ler'nayin Gharabaghi kultur-krt'akan kyanqi patmut'yunic. [Pages from the History of the Cultural and Educational Life of Nagorno-Karabakh] "Hayastan" hratarakchut'yun, Yerevan, 1982. (In Armenian)
5. Babayan, O'felya. "Lezvavitwaky' Shushium XIX dari ar'ajin kesin". [Linguistic Status of Shoushi in the First Half of the XIX Century] Shushin haykakan mshakuyt'i o'jax: Haykakan gratput'yan 500-amyakin nvirvac' mijazgayin gitakan konferansi zekucumner ("Katwar" gitakan kentroni taregirq). "Katwar" gitakan kentroni hratarakchut'yun, Shushi, 2014, e'j 138-144. (In Armenian)
6. Balayan, Vahram. "Dprocakan kyanqy' yev azgayin dastiarakut'yan harcy' Shushium 1813-1917 t't". [The School Life and the Issue of National Education in Shushi in 1813-1917] Hayagitakan usumnasirut'yunner, № 7, 2016, e'j 28-41. (In Armenian)
7. Balayan, Vahram. Arcaxi patmut'yuny' hnadaric minchev mer o'rery'. [History of Artsakh from Ancient times to Our Days] Amaras tparan, Yerevan, 2002. (In Armenian)
8. Bakur (Karapetyan, Bakur). Shushi berdaqaghaqy' (Patmut'yuny' minchev 1920 t'.). [Fortress city Shushi (History until 1920)] EPH hratarakchut'yun, Yerevan, 2000. (In Armenian)
9. Baghdasaryan, Nelli. «Shushin 19-rd dari ar'ajin kesi Gharabaghi varchatarac'qayin yev ar'evtrakan kentron». [Shushi - the Administrative-territorial and the Trade Center in Karabakh in the first half of the 19th century] Gitakan y'nt'ercumner (hodvac'neri jhoghovac'u), Arcaxi petakan hamalsarani hratarakchut'yun, 2018, Step'anakert, e'j 31-37. (In Armenian)
10. Barxudareanc, Makar. Aghuanic yerkir yev draciq. [The Land of Aluank and the Neighbours] Gand'asar Astuac'abanakan kentron, Yerevan, 1999. (In Armenian)
11. Beknazareanc, Apresi. Gaghtniq Gharabaghi. [The Secret of Karabakh] Tparan I. N. Skoroxodovi, S. Peterburg, 1886. (In Armenian)
12. Geghamyanc, Yeghishe. Ughegnacakan aknarkner. [Travelling Notes] Haykakan twartarapetut'yunn usumnasirogh himnadram, Yerevan, 2010. (In Armenian)
13. Grigoryan, Hamlet. "Arcaxi hayagir dproci zargacman patmut'yunic". [From the History of the Development of the Armenian School in Artsakh] Gitakan teghekagir, 1 (10), 2005, e'j 3-6. (In Armenian)
14. Grigoryan, Hamlet yev Grigor Harut'yunyan. Shushii r'ealakany' [Shushi Technical High School]. Amaras hratarakchut'yun, Yerevan, 2001. (In Armenian)
15. Yerkanyan, Vahe. Payqar haykakan nor dproci hamar Andrkovkasum (1870-1905) [Struggle for the New Armenian School in Transcaucasia (1870-1905)] Haykakan SSH hratarakchut'yun, Yerevan, 1970. (In Armenian)
16. T'ade'osean, Yovsep'. Patmut'iwn Lazarean tohmi ew Lazarean twemarani arewelean lezuac. [The History of Lazarian family and Lazarian Seminary of Eastern Languages] Mxit'arean tparan, Vienna, 1953. (In Armenian)

17. Leo. Xojayakan kapitay' yev nra qaghaqakan-hasarakakan dery' hayeri mej, hator ar'ajin. [The Capital of Merchants and its Political-Social Role among Armenians, Volume 1] Petakan hratarakchut'yun, Yerevan, 1934. (In Armenian)
18. Le'o'. Patmut'yun Yerevani Hayoc T'emakan Hogeavor dproci (1837-1912) [The History of Armenian Diocesan Theological School in Yerevan (1837-1912)] Tparan N. Aghaneani, T'iflis, 1914. (In Armenian)
19. Le'o'. Patmut'yun Gharabaghi Hayoc T'emakan dproci (1838-1913) [The History of Armenian Diocesan Theological School in Gharabagh (1838-1913)] Tparan N. Aghaneani, T'iflis, 1914. (In Armenian)
20. Xudoyan, Suren. Arevelahay dprochnery' 1830-1920 tt'. Jhamanakagrut'yuny' havelay manramasnerov. [Eastern Armenian Schools in 1830-1920. Chronology with Additional Details] "Luys" hratarakchut'yun, Yerevan, 1987. (In Armenian)
21. Kirakosyan, Hasmik. "Gand'akyan hayatar' parskeren d'er'agir Avetaran'y vitwabanakan t'argmanut'yunneri hamateqstum". [The Armeno-Persian Handwritten Gospel from Gandzak in the Context of Interreligious Polemic Translations] Banber Matenadarani, № 29, 2020, e'j 287-297. (In Armenian)
22. Kirakosyan, Hasmik. "Parskaxosut'yuny' Shirvani hay bnakchut'yan shrjanum (18 dar)". [The Persophonie among Armenians of Shirvan (18th century)] Gitakan Arcax, № 4(7), 2020, e'j 83-92. (In Armenian)
23. Kirakosyan, Hasmik. "Norahayt mi p'astat'ught' Shushium avetaranakan qarozechneri gorc'uneut'yan masin". [A recently Discovered Document about the Activity of Evangelical Missionaries in Shushi] Banber Matenadarani, № 34, 2022, e'j 295-304, DOI:10.57155/VWPW6295
24. Kostikyan, Kristine. "Qristonyanery' Shaqii shrjanum yev mahmedakanacac' udi hayeri xndragiry' (IX–XIX dd.)". [Christians in the Sheki Region and the Petition of the Islamised Armenian-Udins (IX–XIX centuries)] Patmabanasirakan handes, 3 (224), 2023, e'j. 30-45, DOI:10.54503/0135-0536-2023.3-30 (In Armenian)
25. Harut'yunyan, Grisha. Jhoghovrdakan krt'ut'yan zargacumy' Ler'nayin Gharabaghum. [The Development of Public Education in Nagorno-Karabakh] "Luys" hratarakchut'yun, Yerevan, 1985. (In Armenian)
26. Harut'yunyan, Hrachik. Shushi: Norahayt nyut'er qaghaqi patmut'yan masin. [Shushi. Newly Discovered Materials about the History of the City] Noyyan tapan, Step'anakert, 2002. (In Armenian)
27. Harut'yunyan, Marine. "XIX dari yerkrord kesi yev XX daraskzbi Arcaxi mshakuyt'i zargacman ar'and'nahatkut'yunnery'". [Features of the Development of Artsakh Culture in the Second Half of the 19th Century and the Beginning of the 20th Century] Ler'nayin Gharabaghi Hanrapetut'yun. ancyaly' nerkan yev apagan, Yerevani hamalsarani hratarakchut'yun, Yerevan, 2007, e'j 88-95. (In Armenian)
28. Hovhannisyan, Lavrenti. "Gharabaghi barbar'um iranakan mi qani p'oxar'ut'yunneri masin". [On Several Iranian Loan-Words in Karabakh Dialect] Lraber hasarakakan gitut'yunneri, hator 11, 1990, e'j 65-70. (In Armenian)
29. Gharabaghi hayoc hogeavor t'emakan dpranoci 75-ameaky'. [The 75th Anniversary of Armenian Theological Diocesan School in Karabakh] Tparan B. Te'r-Sahakeani, Shushi, 1913. (In Armenian)
30. Ghukaseanc, Hayrapet. Boghoqakanut'yuny Kovkasu hayoc me'j. [Protestantism among Armenians in the Caucasus] M. R'o'tineanci tparan Golov, T'iflis, 1886. (In Armenian)
31. Margaryan, Nikol. "Jhamancy' yev jhamanci hanrayin vayrery' Shushium XIX dari verjin - XX dari skzbin". [Leisure and Leisure Places in Shoushi at the end of the XIX - the Beginning of the XX centuries] Shushin haykakan mshakuyt'i o'jax: Haykakan gratput'yan 500-amyakin nvirvac' mijazgayin gitakan konferansi zekucumner ("Katwar" gitakan

kentroni taregirq). “Katwar” gitakan kentroni hratarakchut'yun, Shushi, 2014, e'j 130-136. (In Armenian)

32. Petoyan, Styopa. “Bazelyan boghoqakan qarozichneri` Shushium himnadrac' tparani patmut'yuny' (1827-1835 t't.).” [History of the Printing House in Shushi, Founded by Basel Protestant Missionaries (1827-1835)] Hayagitut'yan harcer, № 1, 2021, e'j 45-65.

33. Sant'rosyan, Mushegh. Arevelahay dprocy' 19-rd dari ar'ajin kesin. [The Eastern Armenian School in the First Half of the 19th Century] Haypetusmankhrat, Yerevan, 1964. (In Armenian)

34. Sargsyan, Hamlet. “Ler'nayin Gharabaghi bnakchut'yan t'vi yev e't'nik kazmi sharjhy'nt'acy' XIX darum”. [The Dynamics of the Population and Ethnic Composition of Nagorno-Karabakh in the 19th Century] Arcaxi jhoghovrdagitut'yuny'. azgagrut'yun, ht. 4(4), Step'anakert, 2020, e'j 530-538. (In Armenian)

35. Sevyan, Vladimir. Shushi (Patmakan aknark). [Shushi (Historical Overview)] Hayastan hrat, Yerevan, 1991. (In Armenian)

36. Ter-Gasparyan, R'uben. “Shushu bnakchut'yuny' 18-rd daric minchev mer o'rery”. [The Population of Shushi since 18th Century to the Present Day] HSSR' GA Teghekgagir hasarakakan gitut'yunneri, № 9, 1963, e'j 67-76. (In Armenian)

37. Ter-Gasparyan, R'uben. Shushi. [Shushi] Hayastani GA hratarakchut'yun, Yerevan, 1993. (In Armenian)

38. Shushinskij, Firidun. Shusha. [Shusha] Azerbajdzhanskoe Gosudarstvennoe Izdatel'stvo, Baku, 1968. (In Russian)

39. Melikjan, Guren i Al'bert Xromov. “Istorija prepodavanija persidskogo jazyka v Lazarevskom institute vostochnyh jazykov”. [History of Teaching of Persian Language in Lazarev Institute of Oriental Languages] estnik Yerevanskogo Universiteta, № 1 (67), Erevan, 1989, str. 188-197. (In Russian)

ON THE TEACHING OF THE PERSIAN LANGUAGE IN THE ARMENIAN EDUCATIONAL CENTERS OF SHUSHI IN THE 19TH CENTURY *

TEREZA AMRYAN

Yerevan State University,

Faculty of Oriental Studies,

Department of Iranian Studies, Lecturer,

Ph.D. in History, Associate Professor,

Yerevan, the Republic of Armenia

This article aims to examine the issue of teaching the Persian language in Armenian schools of Shushi in the 19th century. The research is highly relevant and timely because it deals with the teaching of one of the important languages of the region and its concept in Armenian schools of one of the important centers of Armenian culture. Furthermore, the research delves Shushi in a new light: it showcases Shushi as a vibrant center of Armenian cultural heritage, characterized by its multi-ethnic, non-homogeneous population. This rich diversity is reflected in the cultural mosaic of Shushi, where different cultural traditions coexisted with a high level of tolerance.

The Armenian-Iranian historical contacts, historical-cultural relations, and interactions, as well as the fact of prevalence of the Persian language and Iranian culture

* The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № 21T-6B125.

in Shushi, were taken into account to examine the issue of the teaching of the Persian language in Armenian schools of Shushi during the mentioned period. The teaching of the Persian language in Armenian schools of Shushi was examined in the context of the teaching of the Persian language in other Armenian schools of the region. The topic was also examined, taking into account not only the historical relations between Artsakh and Iran but also the socio-political and cultural processes prevailing in the region and the territory of Karabakh during the mentioned period.

This research project employed a multifaceted approach, combining and analyzing diverse materials and information drawn from various sources. The methodology employed a blend of historical and comparative methods, allowing for a comprehensive exploration of the subject matter.

The research findings suggest that in the 19th century, Persian was taught in some Armenian schools of Shushi not only as a language of dominance and influence, but also as a language of inter-ethnic communication. However, the lessons of Persian in these schools gradually diminished under the influence of the Russian language.

Keywords: *Karabakh, Shushi, school, language, diocesan, Persian, teaching, cultural.*

О ПРЕПОДАВАНИИ ПЕРСИДСКОГО ЯЗЫКА В АРМЯНСКИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ ШУШИ В XIX ВЕКЕ *

ТЕРЕЗА АМРЯН

*преподаватель кафедры иранистики
факультета востоковедения
Ереванского государственного университета,
кандидат исторических наук, доцент,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является рассмотрение вопроса преподавания персидского языка в армянских школах Шуши в XIX веке. Исследование весьма актуально и своевременно, поскольку касается преподавания одного из важных языков региона и его концепции в армянских школах одного из ключевых центров армянской культуры. Кроме того, исследование этих образовательных и культурных пластов по-новому раскрывает Шуши как центр армянского культурного наследия с многоэтничным, неоднородным населением, пестрой культурной палитрой и высоким уровнем толерантности.

При рассмотрении вопроса преподавания персидского языка в армянских школах Шуши были учтены армяно-иранские исторические связи, историко-культурные отношения и взаимодействия, а также факт распространенности персидского языка и иранской культуры в Шуши в указанный период. Преподавание персидского языка в армянских школах Шуши рассматривалось в контексте преподавания персидского языка в других армянских школах региона. Тема также была рассмотрена с учетом не только исторических отношений между Арцахом и Ираном, но и социально-политических и культурных процессов, преобладавших в регионе и на территории Карабаха в указанный период.

* Работа выполнена при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № 21Т-6В125.

В этом исследовательском проекте использовался разносторонний подход, объединяющий и анализирующий разнообразные материалы и информацию, полученные из разных источников. В ходе исследования использовались исторический и сравнительный методы.

Результаты исследования показывают, что в XIX веке персидский язык преподавался в некоторых армянских школах Шуши не только как язык доминирования и влияния, но и как язык межнационального общения. Однако преподавание персидского языка в этих школах постепенно уступило место русскому языку.

Ключевые слова: *Карабах, Шуши, школа, язык, епархиальный, персидский, преподавание, культурный.*

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ՕՐԳԱՆԻԶՄ Ե ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԱՐՏԱԴԱՏԿԵՐՈՒՄԸ *

ՀՏԴ 81`37

DOI: 10.52063/25792652-2024.2.21-52

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի լեզվաբանության և
մանկավարժության ֆակուլտետի անգլերենի ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
ani.harutyunyan88@gmail.com
ORCID: 0009-0003-5936-5442

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել «տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է» փոխաբերության հասկացական արտապատկերումը արդի հայերենի մամուլի տնտեսական խոսույթում: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ հոդվածում առաջադրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են «հիվանդ օրգանիզմ» աղբյուր տիրույթի իմաստակառուցվածքային առանձնահատկությունների քննությունը, ինչպես նաև «հիվանդ օրգանիզմ» և «տնտեսություն» հասկացական տիրույթներից սերող փոխաբերական կաղապարների միջտիրույթային արտապատկերումների ուսումնասիրությունը՝ ընդգծելով դրանց առկայացման լեզվական միջոցները:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է ներկայումս տնտեսական խոսույթում հասկացական փոխաբերությունների՝ որպես մի կողմից ճանաչողական գործիքի, մյուս կողմից մտաշահարկման հզոր միջոցի նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրությամբ:

Լեզվաբանական վերլուծության մեթոդների ընտրությունը փաստարկված է ուսումնասիրվող նյութի բնույթով և հետազոտության նպատակով: Նյութի քննությունն իրականացվել է նկարագրական վերլուծության և համատեքստային վերլուծության մեթոդներով:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ «տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է» փոխաբերությունը գործածական է դառնում մամուլում տնտեսական արտաքին շուկերի համատեքստում (համավարակ, պատերազմ): Մամուլի հրապարակումներում այս փոխաբերության կիրառության հիմնական նպատակը ոչ մասնագիտական լսարանին երկրի տնտեսական իրավիճակի մասին տեղեկատվության փոխանցումն է իրեն ամենաձանդաղ աղբյուր տիրույթի («հիվանդ օրգանիզմ») միջոցով: Տնտեսական ճգնաժամի փուլում գերակշռում են բացասական փոխաբերությունները (տնտեսության թույլ ու խոցելի վիճակը, ախտանիշներն ու հիվանդությունները), իսկ հետճգնաժամային շրջանում՝ վերականգնմանը միտված դրական փոխաբերությունները (տնտեսության առողջացում):

* Հոդվածը ներկայացվել է 11.05.2024թ., գրախոսվել՝ 12.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

Հիմնաբառեր՝ հասկացական փոխաբերություն, աղբյուր տիրույթ, թիրախ տիրույթ, հասկացական արտապատկերում, միջտիրույթային արտապատկերում, փոխաբերական կաղապար, տնտեսական խոսույթ:

Ներածություն

Գլոբալացման և տնտեսական փոփոխությունների դարաշրջանում, երբ ֆինանսական տարբեր ճգնաժամերով պայմանավորված արագորեն փոփոխվում է երկրի տնտեսական զարգացման պատկերը՝ տնտեսական խոսույթում տեղի են ունենում լեզվական և ոճական բազմապիսի փոփոխություններ: Հաշվի առնելով տնտեսության հարափոփոխ բնույթը՝ այս ոլորտում մշտապես անհրաժեշտ է սահմանել և բնութագրել տնտեսագիտական վերացական եզրերն ու գործընթացները, որոնց բնութագրման միջոց են համարվում փոխաբերությունները:

Տնտեսական աշխարհի փոխաբերական պատկերը հիմնականում մարդակենտրոն է: «Մարդիկ հիմնվում են իրենց սեփական փորձի և գիտելիքների վրա՝ վերացական և բարդ տնտեսագիտական հասկացություններն ու երևույթները հասկանալու համար» (Xia 1): Մարդը տնտեսությանը վերագրում է իր համար առավել ծանոթ և հասկանալի հատկանիշներ, ինչի արդյունքում տնտեսությունը ներկայանում է մարդու կերպարանքով՝ անատոմիայով, ֆիզիոլոգիայով, հարաբերություններով ու վարքագծով:

Մարդակենտրոն փոխաբերությունները մշտապես գտնվում են տնտեսական խոսույթի հետազոտողների ուշադրության կենտրոնում (Ջ. Չարթերիս–Բլեք, Թ. Էննիս, Ն. Սիլասկի, Տ. Դուրովիչ, Ջ. Զսիա): Ինչպես նշում են Ն. Սիլասկին և Տ. Դուրովիչը, մարդիկ, ընկալելով տնտեսությունը որպես մարդկային հիվանդ օրգանիզմ, տնտեսությանը վերագրում են մարդկային բոլոր որակները և, հետևաբար, տնտեսությունը կարող է հիվանդանալ և բուժում պահանջել (Silaski, Durovic 132-134):

Հարկ է նշել, որ այս փոխաբերական կաղապարը բավականին արդյունավետ է տնտեսական ճգնաժամը նկարագրելու գործում, ինչն ապացուցվել է մի շարք ուսումնասիրությունների (Թ. Էննիս, Ն. Սիլասկի, Տ. Դուրովիչ), ինչպես նաև սույն հոդվածում վերլուծված տվյալների միջոցով:

Ե. Կոլոտինյան անգլերեն և ռուսերեն տնտեսական խոսույթի իր համեմատական վերլուծության մեջ, առաջարկում է ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ՕՐԳԱՆԻԶՄ է փոխաբերական կաղապարի հետևյալ ֆրեյմերը՝ առողջություն, հիվանդություն, հիվանդի վիճակը, բուժման մեթոդները, դեղերը և հիվանդության ավարտը (Wang, Runtsova, Chen 259-288): Հետագայում, Ն. Սիլասկին և Տ. Դուրովիչը, իրենց «Անգլերեն և սերբական տնտեսական խոսույթում 2007 թվականի համաշխարհային տնտեսական ֆինանսական ճգնաժամի հասկացությանը համեմատական ուսումնասիրության մեջ բացահայտեցին «Տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է» փոխաբերական կաղապարից սերող հետևյալ ենթակաղապարները՝ հիվանդություն, ախտորոշում, բուժում և վերականգնում (Silaski, Durovic 135-137): Մեր ուսումնասիրության մեջ ունենք նմանատիպ արդյունքներ, բայց կան նաև որոշ անհամապատասխանություններ՝ պայմանավորված փաստական կյուլթով: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ արդի հայերեն մամուլի տնտեսական խոսույթում կատարված նմանատիպ ուսումնասիրությունների թիվը դեռևս սակավաթիվ է:

Հրապարակախոսական ոճում հաճախակի օգտագործվող հռետորական միջոցներից մեկը փոխաբերությունն է, որը որոշակի երանգավորում է տալիս և շղարշում տնտեսագիտության կոշտ լեզուն: Սույն հոդվածի փաստական կյուլթը քաղված է տնտեսությունը լուսաբանող հայկական լրագրային հոդվածներից (2020-2023թթ. ընկած ժամանակահատվածում), որոնք, ինչպես իրավացիորեն նշում է Լ. Հարությունյանը, համարվում են տնտեսական խոսույթի ձևաչափերից մեկը (Հարությունյան 10):

Փոխաբերության ավանդական և ճանաչողական հայեցակերպերը

Փոխաբերության ուսումնասիրության անցումը ավանդականից դեպի ճանաչողական մոտեցում բացատրվում է ճանաչողական լեզվաբանության՝ որպես առանձին գիտակարգի զարգացմամբ:

Ավանդական մոտեցման համաձայն՝ փոխաբերությունները հիմնականում դեկորատիվ են և պարզապես գեղեցկացնում են խոսքը, իսկ մարդու՝ փոխաբերություններ օգտագործելու կարողությունը համարվում է հմտություն (Kovecses 3): 2. Կովեչեսը նշում է, որ փոխաբերության ավանդական ընկալումը դիտարկում է «փոխաբերությունը որպես բառերին բնորոշ հատկություն, որն ունի միայն գեղագիտական գործառնություն: Փոխաբերությունը բառերի գիտակցված և միտումնավոր կիրառումն է խոսքում» (Kovecses 3): Ըստ դասական տեսաբանների՝ փոխաբերությունները զուտ լեզվական իրողություն են:

Այն փաստարկը, որ փոխաբերություններն ունեն ճանաչողական և ոչ թե զուտ գեղագիտական գործառնություն, առաջին անգամ մշակել են Ջ. Լեքոֆը և Մ. Ջոնսոնը: Համաձայն այս մոտեցման՝ «ճանաչողական համակարգը, որի միջոցով մենք մտածում և գործում ենք, իր բնույթով հիմնականում փոխաբերական է» (Lakoff, Johnson 3):

Փոխաբերության ճանաչողական հայեցակերպը պատճառաբանված կերպով հերքում է փոխաբերության ավանդական տեսության հիմնական գաղափարները՝ պնդելով, որ «փոխաբերությունը հասկացություններին բնորոշ հատկություն է, այլ ոչ թե բառերին, փոխաբերությունը դիտարկվում է որպես ճանաչողական, այլ ոչ թե լեզվական երևույթ, որի գործառնություն ավելին է, քան գեղագիտականը: Փոխաբերությունը մարդկային մտածողության և տրամաբանության անխուսափելի գործընթաց է, և ոչ թե լեզվի անտեղի, թեպետ, միևնույն ժամանակ գեղեցիկ զարդարման միջոց» (Kovecses 10):

Համաձայն Մ. Բորդերսի՝ փոխաբերությունը մարդկային մտքի և լեզվի կարևորագույն բաղադրիչն է, և այն «օգնում է մեզ արդյունավետ կերպով նավարկել իրական աշխարհում, ինչը չի կարող թույլ տալ գրական լեզուն» (Borders 1):

Հասկացական փոխաբերության կառուցվածքը բարդ է, քանի որ այն մտածողության երկու տարբեր տիրույթների ամբողջություն է, այլ ոչ թե մի բառի օգտագործում՝ մեկ այլ բառի փոխարեն: Փոխաբերությունն իրար է կապում երկու հասկացական տիրույթներ, որտեղ երկրորդ՝ թիրախ տիրույթը ընկալվում է առաջին՝ աղբյուր տիրույթի միջոցով (Lakoff, Johnson 254):

Հիմնվելով փոխաբերության ճանաչողական գործառնության վրա՝ Ջ. Լեքոֆը և Մ. Ջոնսոնը տարբերակում են փոխաբերության երեք հիմնական տեսակ՝ **կառուցվածքային** (մեկ հասկացության ընկալումը մեկ այլ հասկացության միջոցով, օրինակ՝ ԲԱՆԱՎԵԾԸ ՊԱՏԵՐԱԶՄ է), **կողմնորոշման** (տարածական բնույթ ունեցող փոխաբերությունները, ինչպիսիք են, վեր-վար, առաջ-հետ, հեռու-մոտ և այլն) և **գոյաբանական** (այն փոխաբերությունները, որտեղ ուսումնասիրության օբյեկտը՝ թիրախ տիրույթը, անձնավորվում է, օրինակ՝ ԳՆԱԾԸ ԹՇՆԱՄԻ է) (Lakoff, Johnson 16-50):

Սույն հոդվածում քննվող «**Տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է**» փոխաբերությունը գոյաբանական է, քանի որ «տնտեսություն» թիրախ տիրույթը անձնավորվում է և ընկալվում «մարդկային օրգանիզմ», մասնավորապես՝ «հիվանդ օրգանիզմ» աղբյուր տիրույթի միջոցով, որը, ինչպես 2. Կովեչեսն է նշում, ամենակենսունակ աղբյուր տիրույթներից մեկն է (Kovecses 25):

Այսպիսով, հետազոտության նպատակից ելնելով՝ ուսումնասիրվել են «**Տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է**» փոխաբերությունից սերող կաղապարները հայերեն տնտեսական խոսույթում, ներկայացվել են դրանց առկայացման լեզվական

միջոցները՝ հետազոտության հիմք ընդունելով Ջ. Լեքոֆի և Մ. Ջոնսոնի առաջարկած հասկացական փոխաբերությունների դասակարգումը:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ՕՐԳԱՆԻԶՄ Ե ՖՈՒՔԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԼԵՂՎԱԾԱՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐՍԼՈՐՈՒՄՆԵՐԸ

Տնտեսությունն ամենից հաճախ ընկալվում է որպես մարդկային օրգանիզմ, մասնավորապես, հիվանդ օրգանիզմ: Տնտեսական բազմապիսի խնդիրները նկարագրվում են տարբեր հիվանդությունների միջոցով՝ թույլ, խրոնիկ, մահացու: Հիմնվելով «հիվանդի» տնտեսության ունեցած ախտանիշների վրա՝ կատարվում է հիվանդության ախտորոշում և առաջարկվում հիվանդության բուժման տարբեր դեղատոմսեր, այսինքն, ձեռնարկվում են լուծման տարբեր քայլեր: Ճիշտ բուժման վերջնարդյունքում «հիվանդի» տնտեսության, վիճակը առողջանում է, իսկ սխալ բուժման դեպքում՝ վատթարանում:

Ուսումնասիրելով հայկական մամուլի տնտեսական ոլորտը լուսաբանող շուրջ 120 հոդված՝ առանձնացվել են **«Տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է»** սեռանիշ փոխաբերությունից սերող հետևյալ տեսականիշ փոխաբերական կաղապարները.

1. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ Ե

Ցանկացած տնտեսության հաջողության գրավականը նրա առողջությունն է: Երբ տնտեսության մեջ ի հայտ են գալիս խնդիրներ, այն սկսում է թուլանալ, հյուժվել, այնպես ինչպես հիվանդ մարդու օրգանիզմն է թուլանում առողջական տարբեր խնդիրներից: Տնտեսության հիվանդ վիճակը հաճախ ներկայացվում է հետևյալ փոխաբերական միավորներով՝ **թույլ, տկար, հյուժվող, անառողջ**, ինչպես հետևյալ հոդվածներում՝

- Ոչ միայն **թույլ է**, այլև **տկար է** մեր տնտեսությունը: (Մակարյան 25 Նոյ. 2022)
- **Հյուժվող** տնտեսություն և աճող աղքատություն ունենք: (Բադալյան 02 Դեկտ. 2021)
- ... երկրի տնտեսությունը, մեղմ ասած, **անառողջ է**: (Ավանեսով 17 Նոյ. 2022)

Տնտեսության թույլ ու տկար վիճակից սկսում են խոցվել ու խցանվել նրա «արյունատար անոթները»՝ բանկերը, մանր ու փոքր բիզնեսը, «արյան»՝ «փողի», շրջանառությունը սկսում է նվազել, կոտրվում է տնտեսության «ողնաշարը», ինչպես հետևյալ հոդվածներում՝

- Ամենախոցելիները **փոքր բիզնեսներն** են, որոնք հանդիսանում են **տնտեսության արյունատար անոթները**: (Կիսեբյան 09 Հուլ. 2020)
- **Տնտեսության արյունատար անոթները խցանված են**: Փողը չի գնում տնտեսություն: (Զոչարյան 20 Հունվ. 2022)
- Տոտալ «լոբդաունը» հարված կլինի **տնտեսության ողնաշարին**: («Վարչապետ. Տոտալ» 12 Հունիս 2020)

Տնտեսության վիճակի վատթարացումը մեծ մասամբ հիմնավորվում է կորոնավիրուսի համավարակով և 44-օրյա պատերազմով: Այս բոլոր խնդիրները հանգեցնում են տնտեսության օր օրի հյուժման, և տնտեսությունը, դառնալով լուրջ հիվանդ, սկսում է տառապել տարբեր հիվանդություններով, օրինակ՝

- **Հայաստանի տնտեսությունը շատ լուրջ հիվանդություններով է տառապում**. («Հայաստանի տնտեսությունը» 26 Օգոս. 2022)

Տնտեսության «հիվանդություններից» են գնաճը, աղքատությունը, գործազրկությունը, միգրացիան և այլն: Բերված բոլոր օրինակներում հիմնական խնդիրը տնտեսության վատթարացող վիճակն է, որի կանխարգելման համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր, որը հնարավոր է միայն

իրավիճակի ճիշտ փաստորոշմամբ՝ հիմնված «հիվանդի»՝ տնտեսության մոտ ի հայտ եկող փաստանիշների վրա:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՆԻՇՆԵՐ ԵՆ

Մինչև բուն հիվանդության ի հայտ գալը, մարդու օրգանիզմում նախանշվում են մի շարք փաստանիշներ, որոնք վկայում են օրգանիզմում առկա առողջական խնդիրները և բժշկին դիմելու հրատապությունը: Տնտեսության «հիվանդ օրգանիզմում» նույնպես ի հայտ են գալիս տարբեր փաստանիշներ, որոնք ուշադրություն են պահանջում, ինչպես օրինակ՝ **ցնցումները, տենդը, գերտաքացումը, փռշտոցը, մրսածությունը**՝

- Հայաստանի տնտեսությունը շարունակվում է **ցնցվել՝ այն տենդի մեջ է** (Մարտիրոսյան 22 Մարտ 2021)
- Տնտեսության ոչ արտահանելի ճյուղերում **գերտաքացում է** նկատվում: («Տնտեսության ողնաշարը» 18 Օգոս. 2023)
- ... «**Ռուսաստանը փռշտում է, Հայաստանը մրսում է**»: (Սարգսյան 28 Ապրիլ 2023)

Ինչպես ցույց է տալիս լեզվանյութի վերլուծությունը, «հիվանդ» տնտեսության փաստանիշները տարբեր են՝ հետքովիոյան գնաճ, բիզնեսի և տնտեսության սերտաճում, հակառուսական տնտեսական պատժամիջոցներ, դրսից եկող դրամական միջոցների՝ տրանսֆերտների նվազում և այլն:

Բերված օրինակներում «տնտեսական խնդիր» թիրախ տիրույթը ընկալվում է «փաստանիշ» աղբյուր տիրույթի միջոցով՝ տնտեսական բարդ երևույթները հանրությանը ավելի ընկալելի ու պատկերավոր ներկայացնելու ակնկալիքով: Թվարկված բոլոր փաստանիշները ճիշտ փաստորոշման կարիք ունեն, քանի որ, հակառակ դեպքում, առաջարկվող դեղատոմսը կարող է ավելի վատթարացնել «հիվանդի»՝ տնտեսության վիճակը:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՆՏՈՐՈՇՈՒՄՆ Է

Յուրաքանչյուր տնտեսական խնդրի պետք է ճիշտ գնահատական տրվի, որպեսզի ձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր՝ հետագա բարդություններից խուսափելու համար: Տնտեսական խնդրի ճիշտ փաստորոշումը տնտեսագիտական խոր և փաստարկված գնահատականների և վերլուծությունների մի ամբողջություն է: Այս փոխաբերական կաղապարը առկայանում է լեզվական հետևյալ միավորներով՝ **թթվածնային քաղց, արյան քանակի անբավարարություն, խրոնիկ հիվանդություն, տնտեսական դեպրեսիա, կախվածություն թմրանյութից**:

- Տնտեսությունը կանգնած է «**թթվածնային քաղցի**» առաջ (Գիշյան 15 Նոյ. 2021)
- Հայաստանի տնտեսության մարմնում **5 անգամ պակաս արյուն է հոսում**, քան պետք է (Հովհաննիսյան 08 Նոյ. 2022)
- Կորոնավիրուսը կկարողանա՝ բուժել Հայաստանի տնտեսության **խրոնիկ հիվանդությունը** («Կորոնավիրուսը կկարողանա՞» 18 Մայիս 2020)
- «...տնտեսական անկումը կվերածվի **տնտեսական դեպրեսիայի**» (Խաչատրյան 15 Մարտ 2021)
- Հայաստան դրամական փոխանցումներն արդեն **թմրանյութ են դառնում տնտեսության համար և կախվածություն առաջացնում**: (Հերզլյան 08 Նոյ. 2022)

Բերված բոլոր օրինակներում տնտեսության «հիվանդ օրգանիզմը» տառապում է մի շարք հիվանդություններից, որոնցից ամենագլխավորը կորոնաճնաժամն է՝ իր բացասական հետևանքներով: Տնտեսության քրոնիկ հիվանդություններից են գործազրկության բարձր մակարդակը, սովերային տնտեսությունը և դրանից բխող կոռուպցիան: Վարկերը տնտեսությանը թթվածին մատակարարող գլխավոր

«անոթներից» են, և վարկային կապիտալի կտրուկ նվազումը հանգեցնում է օրգանիզմում թթվածնի պակասի: Փոխաբերական զուգորդումների միջոցով տնտեսության մեջ մտնող ֆինանսական հոսքերի կտրուկ նվազումը համեմատվում է մարդու օրգանիզմում թթվածնային քաղցի հետ, ներդրումների ու ֆինանսավորումների անբավարար քանակը՝ արյան սակավության հետ, տնտեսական անկման տևական շարունակականությունը՝ տնտեսական դեպրեսիայի, դրամական փոխանցումների՝ տրանսֆերտների, անսպասելի ներհոսքը՝ թմրանյութից կախվածության հետ: Տրանսֆերտների կախվածության պատճառով երկրի տնտեսությունը «ախտորոշվում է» նաև **հոլանդական հիվանդությամբ** (տնտեսության որոշակի հատված կտրուկ զարգանում է, իսկ մյուս հատվածները՝ թուլանում), ինչպես հետևյալ հոդվածում՝

- Տնտեսագիտության մեջ մի տերմին կա՝ **«հոլանդական հիվանդություն»**, որը **Հայաստանի տնտեսության ներկա վիճակի շատ հստակ ախտորոշումն է:** (Բաբաջանյան 23 Օգոս. 2022)

Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով մեր երկիր մտնող դրամական հոսքերի անսպասելի աճը հանգեցրել է դրամի արժևորմանը: Սակայն այդ աճը, ըստ տնտեսագետների, «թունավոր» է, քանի որ տնտեսության ճյուղերը աճում են անհամաչափ: Չարգանում են բանկերը, առևտուրը, միևնույն մյուս ճյուղերը կրում են շեշտակի վնասներ, որի շարունակության պարագայում, տնտեսագետների կանխատեսմամբ, մեր տնտեսությունը կհայտնվի **«կոլապսի»**, մեջ, ինչպես՝

- Արժեզրկել դրամն ամեն գնով, այլապես, մեզ սպասվում է **կոլապս** (Բադալյան 01 Նոյ. 2022)

Այսպիսով, եթե տնտեսության նշված «հիվանդությունները» չբուժվեն, ապա երկրի տնտեսությունը չի կարող զարգանալ: Հետևաբար, տնտեսության պատասխանատուները առաջարկում են տարբեր «դեղատոմսեր ու բուժումներ»՝ ուղղված տնտեսության վիճակի բարելավմանը:

4. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՆԱԿԱՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԻՎԱՆՂՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄՆԵՐ ԵՆ

Տնտեսության խնդիրները, փոխաբերաբար ընկալելով որպես հիվանդություններ, տնտեսության «բժիշկները» առաջարկում են տարբեր «բուժումներ»՝ լուծումներ: Այս կաղապարը ներկայացվում է հետևյալ փոխաբերական միավորներով՝ **դեղատոմս, արհեստական շնչառություն, թթվածին տալ, փող ներարկել, արագ լիկվիդայնության ներարկում**, ինչպես օրինակ՝

- Թաթուկ Մանասերյանը **«դեղատոմս» է առաջարկում** («Ինչպես կարելի է» 08 Դեկտ. 2020)
- ...տնտեսությանը **արհեստական շնչառություն** է պետք (Ոսկանյան 07 Մայիս 2020)
- ՏՏ ոլորտին **սուբսիդիայի տեսքով թթվածին կտրվի** (Մարգարյան 30 Նոյ. 2022)
- Մտադիր ենք տնտեսության մեջ անսահմանափակ քանակությամբ **փող ներարկել** («Մտադիր ենք տնտեսության» 06 Մայիս 2020)
- «Հայաստանի տնտեսությանը պետք է **արագ լիկվիդայնության ներարկում**» («Հայաստանի տնտեսությանը» 31 Մարտ 2020)

Կորոնավիրուսի համավարակի բացասական հետևանքները մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը ձեռնարկում է տարբեր քայլեր, աջակցում տնտեսության «հիվանդ օրգանիզմի» բուժմանը՝ թթվածնի մատակարարմամբ, փողի ներարկմամբ, որպեսզի «արյունը»՝ փողը, ակտիվ հոսի տնտեսության մեջ:

Ձեռնարկված քայլերը սովորաբար ունենում են վերջնարդյունք, այս դեպքում, տնտեսության վիճակի առողջացում կամ վատթարացում:

5. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՀԻՎԱՆԴԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄ Ե

Տնտեսության առողջացումը մամուլում արտահայտվում է հետևյալ միավորներով՝ **սկսել շնչել, վերականգման նշաններ ցույց տալ, ապաքինվել**։ Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- Հայաստանի տնտեսությունը սկսում է **շնչել** («Հայաստանի տնտեսությունը» 03 Հունիս 2021)
- «Հայաստանի տնտեսությունը հետձգնաժամային **վերականգման առաջին նշաններն** է ցուցադրում» (Սահակյան 18 Փետր. 2021)
- Հայաստանի տնտեսությունն այս պահին **ապաքինման փուլում է** («Հայաստանի տնտեսությունն» 30 Օգոս. 2021)

Ինչպես ցույց է տալիս օրինակների վերլուծությունը, տնտեսությունը աստիճանաբար վերականգնվում է տարբեր շուկերից՝ համալարակ, պատերազմ։ Տնտեսության վերականգման դանդաղ տեմպերը բացատրվում են նրանով, որ 2020 թվականը տնտեսական անկման տարի էր ողջ համաշխարհային տնտեսության համար՝ կորոնավիրուսի տնտեսական բացասական ազդեցություններով պայմանավորված, իսկ մեր տնտեսության անկմանը զուգարկվեց նաև պատերազմի բացասական հետևանքները։ Բուժման վերջնարդյունքներին վերաբերող լրագրային հոդվածներում գերակշռում են տնտեսության առողջացմանը վերաբերող փոխաբերական միավորները։

Աղյուսակ 1

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ՕՐԳԱՆԻԶՄ Ե փոխաբերության միջտիրույթային արտապատկերումները

Աղբյուր տիրույթ		Թիրախ տիրույթ
Հիվանդ օրգանիզմ	→	Տնտեսություն
Հիվանդության ախտանիշներ	→	Տնտեսական խնդիրներ
Հիվանդություն	→	Տնտեսական ճգնաժամ
Առողջացում	→	Տնտեսության վերականգնում

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ մարդիկ խոսում և մտածում են տնտեսության մասին բժշկական եզրույթաբանությամբ՝ հատկապես տնտեսական վիճակի վատթարացման ժամանակ։

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Տնտեսությունը հիվանդ օրգանիզմ է» սեռանիշ և դրանից բխող տեսականիշ փոխաբերությունները, դրանց առկայացման լեզվական միջոցները, կարող ենք եզրահանգել, որ հասկացական արտապատկերման գործընթացում բազմապիսի փոխաբերական զուգորդումների հետևանքով հստակ պատկերացում է կազմվում երկրի տնտեսական վիճակի մասին՝ վերացական հասկացությունները դարձնելով ավելի դյուրընկալելի հանրության լայն շերտերի համար։ Փոխաբերության օգնությամբ բացատրվում է տնտեսության «հիվանդ» վիճակը, հիմնավորվում այդ վիճակի պատճառները, նկարագրվում ձեռնարկվող համապատասխան «բժշկական» միջամտությունները, կանխատեսվում այդ վիճակի վերականգնումը՝ ելք ճգնաժամից և տնտեսական աճ։ Փոխաբերության օգնությամբ բացատրվում և փաստարկվում է բնակչության նյութական վիճակի վատթարացումը՝ այդ կերպ խոսափելով հանրության շրջանում բողոքի ալիքի բարձրացմանը։ Տնտեսական ճգնաժամի փուլում մեծ մաս են կազմում բացասական փոխաբերությունները (տնտեսության թույլ վիճակը, ախտանիշներն ու հիվանդությունները), իսկ հետձգնաժամային փուլում՝ վերականգնմանը միտված դրական փոխաբերությունները (տնտեսության առողջացում)։

Փոխաբերական լեզվի ընտրությունն ու հաճախականությունը ազդում են ոչ միայն տնտեսական իրավիճակի պատկերի ստեղծման, այլև թիրախ լսարանի գիտակցության վրա՝ ընդգծելով փոխաբերության մտաշահարկային ուժը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսով Ալեքսանդր, «Հայաստանի տնտեսությունն անառողջ է», *ԱՐՄԻՆՖՈ* լրատվական պորտալ, 17 Նոյ. 2022 <https://shorturl.at/jotzM>: Մուտք՝ 08 Օգոստոս 2023:
2. Բադալյան, Աննա. «Հյուժվող տնտեսություն և աճող աղքատություն ունենք», *Փաստ* օրաթերթ, 02 Դեկտ. 2021. <https://shorturl.at/blP47>: Մուտք՝ 08 Օգոստոս 2023:
3. Բաբաջանյան, Ավետիս. «Փաշինյանը «տարգաշների» ու «աբսուլուտների» հասարակություն է ձեռնադրում», *Հրապարակ* օրաթերթ, 23 Օգոս. 2022. <https://shorturl.at/dpsD5>: Մուտք՝ 20 Օգոստոս 2023:
4. Բադալյան, Նաիրա. «Արժեզրկել դրամն ամեն գնով», *ԱՐՄԻՆՖՈ*, 01 Նոյ. 2022. <https://shorturl.at/cqVZ3>: Մուտք՝ 22 Օգոստոս 2023:
5. Գիշյան, Սոնա. «Տնտեսությունը կանգնած է «թթվածնային քաղցի» առաջ», *1or.am*, 15 Նոյ. 2021. <https://shorturl.at/frxOZ>: Մուտք՝ 13 Օգոստոս 2023:
6. «Ինչպես կարելի է դուրս գալ այս իրավիճակից», *Sputnik Արմենիա*, 08 Դեկտ. 2020. <https://shorturl.at/dfqG2>: Մուտք՝ 24 Օգոստոս 2023:
7. Խաչատրյան, Զվարթ. «Նման իրավիճակի շարունակության դեպքում տնտեսական անկումը կվերաճի տնտեսական դեպրեսիայի», *Տնտեսագետ*, *168.am*, 15 Մարտ 2021. <https://shorturl.at/bdgsG>: Մուտք՝ 17 Օգոստոս 2023:
8. «Կորոնավիրուսը կկարողանա՝ բուժել Հայաստանի տնտեսության խրոնիկ հիվանդությունը», *Sputnik Արմենիա*, 18 Մայիս 2020. <https://shorturl.at/ovwBL>: Մուտք՝ 15 Օգոստոս 2023:
9. Կիսեբլյան, Հայկ. «Ամենախոցելիները փոքր բիզնեսներն են», *Մամուլի խոսնակ*, 09 Հուլիս 2020. <https://shorturl.at/hPY01>: Մուտք՝ 10 Օգոստոս 2023:
10. «Հայաստանի տնտեսությունը սկսում է շնչել», *ՍԻՎԻԼԵԹ*, 03 Հունիս 2021. <https://shorturl.at/yGOPT>: Մուտք՝ 12 Օգոստոս 2023:
11. «Հայաստանի տնտեսությանը պետք է արագ լիկվիդայնության ներարկում», *Ա1+*, 31 Մարտ 2020. <https://shorturl.at/yOX16>: Մուտք՝ 02 Օգոստոս 2023:
12. «Հայաստանի տնտեսությունը շատ լուրջ հիվանդություններով է տառապում», *News.am*, 26 Օգոս. 2022. <https://shorturl.at/nzG35>: Մուտք՝ 11 Օգոստոս 2023:
13. «Հայաստանի տնտեսությունն այս պահին ապաքինման փուլում է», *ԱՐՄԵՆԴՐԵՍ*, 30 Օգոս. 2021. <https://shorturl.at/goDO2>: Մուտք՝ 28 Օգոստոս 2023:
14. Հարությունյան, Լուսինե. *Տնտեսական իրադարձության լեզվաանալիզական մոդելավորումը*, Բան.գիտ.դոկտ. ատենախոս, սեղմագիր, 2017:
15. Հերգլյան, Սեդա. «Հայաստանի տնտեսության «թմրանյութը»», *Հետք*, 08 Նոյ. 2022. <https://shorturl.at/beor0>: Մուտք՝ 15 Օգոստոս 2023:
16. Հովհաննիսյան, Ալինա. «Վահան Զերոբյան. Հայաստանի տնտեսության մարմնում 5 անգամ պակաս արյուն է հոսում, քան պետք է», *ԱՐՄԻՆՖՈ*, 08 Նոյ. 2022. <https://shorturl.at/zBGX8>: Մուտք՝ 14.08.2023:
17. Մակարյան, Վահե. «Վատ բան պետք է ասեմ, բայց պետք է նաեւ ստվեր լինի, որ տնտեսությունն արագ զարգանա», *Հրապարակ* օրաթերթ, 25 Նոյ. 2022. <https://shorturl.at/dDNW8>: Մուտք՝ 08 Օգոստոս 2023:
18. Մարտիրոսյան, Արա. «Հայաստանի տնտեսությունը տենդի մեջ է», *Yerevan.Today*, 22 Մարտ 2021. <https://shorturl.at/dhrzM>: Մուտք՝ 12 Օգոստոս 2023:
19. Մարգարյան, Լուսինե. «SS ոլորտին սուբսիդիայի տեսքով թթվածին կտրվի», *Առավոտ*, 30 Նոյ. 2022. <https://shorturl.at/djIX7>: Մուտք՝ 27 Օգոստոս 2023:

20. Միրզոյան, Վալերի. *Ժամանակակից տնտեսագիտական խոսույթի լեզվատրամաբանական վերլուծություն*, Երևան, Տնտեսագետ հրատարակչություն, 2014:
21. «Մտադիր ենք տնտեսության մեջ անսահմանափակ քանակությամբ փող ներարկել», *Հրապարակ* օրաթերթ, 06 Մայիս 2020. <https://shorturl.at/DEJL5>: Մուտք՝ 06 Օգոստոս 2023:
22. Ոսկանյան, Ժիրայր. «Կառավարության ծրագրերը անհամաչափ են», *1in.am*, 07 Մայիս 2020. <https://shorturl.at/gnEIO>: Մուտք՝ 06 Օգոստոս 2023:
23. Սահակյան, Նանե. «Տնտեսությունը կարծես թե մոտում է վերականգնման փուլ», *Ազատություն*, 18 Փետրվ. 2021. <https://shorturl.at/jlrwT>: Մուտք՝ 28 Օգոստոս 2023:
24. Սարգսյան, Սուրեն. «Ռուս-ուկրաինական պատերազմը եւ մենք», *Ազգ.*, 28 Ապրիլ 2023. <https://shorturl.at/mwzK9>: Մուտք՝ 03 Սեպտեմբեր 2023:
25. «Վարչապետ. Տոտալ «լոբիաունը» հարված կլինի տնտեսության ողնաշարին», *Mediamax*, 12 Հունիս 2020. <https://shorturl.at/orQW5>: Մուտք՝ 10 Օգոստոս 2023:
26. «Տնտեսության ողնաշարը ջարդելու գործընթացը շարունակվում է», *ՍԻԿԻԼՆԵԹ*, 18 Օգոստ. 2023. <https://shorturl.at/cqrM8>: Մուտք՝ 05 Սեպտեմբեր 2023:
27. Զոչարյան, Հակոբ. «Տնտեսության արյունատար անոթները խցանվել են», *168.am*, 20 Հունվ. 2022. <https://shorturl.at/afrxy>: Մուտք՝ 10 Օգոստոս 2023:
28. Borders, M. *The Economy: Metaphors We (Shouldn't) Live By*. <https://bit.ly/3Fidtwu>. Accessed: 5 March 2024.
29. Breazeale, Daniel. *Philosophy and Truth: Selections from Nietzsche's Notebooks of the Early 1870's*, Humanities Press, London, 1990.
30. Charteris-Black, Jonathan and Ennis, Timothy. *A comparative study of metaphor in Spanish and English Financial reporting*. English for Specific Purposes 20, 2001.
31. Ennis, Timothy. *A cross-linguistic analysis of metaphorical lexis and collocation in English and Spanish economic discourse*. M.A. in Linguistics, TESOL, 1998.
32. Wang, Huili, Runtsova, Tamara, Chen, Hongjun. *ECONOMY IS AN ORGANISM - a comparative study of metaphor in English and Russian economic discourse*. Text and Talk. 33(2), 259-288 2013
33. Kovecses, Zoltan. *Metaphor: A Practical Introduction*. Oxford University Press, New York, 2010.
34. Lakoff, George and Johnson, Mark. *Metaphors We Live by*. The University of Chicago Press, 2003.
35. Ortony, Andrew. *Metaphor and Thought*. Cambridge University Press, Cambridge, 1993.
36. Silaski, Nadezda and Durovic, Tatjana. *The conceptualisation of the global Financial crisis via the economy is a person metaphor – A contrastive study of English and Serbian*. Linguistics and Literature 8(2), 129-139, 2010.
37. Xia, Jue. *Economic metaphors in English newspapers*. C-essay in English Linguistics, 2009.

WORKS CITED

1. Avanesov, Aleqsandr. «Hayastani tntesut'yunn anar'oghj e'» [The Armenian Economy is Unhealthy], ARMINFO Iratvakan portal, 17 Noy. 2022 <https://shorturl.at/jotzM>, (mutq՝ 08.08.2023): (in Armenian)
2. Badalyan, Anna. «Hyuc'vogh tntesut'yun ev atwogh aghqatut'yun unenq» [We have a Dwindling Economy and Growing Poverty], P'ast o'rat'ert', 02 Dekt. 2021. <https://shorturl.at/blP47>, (mutq՝ 08.08.2023): (in Armenian)

3. Babajanyan, Avetis. «P'ashinyany' «targashneri» u «abslugneri» hasarakut'yun e' d'evavorum» [Pashinyan Forms the Targash and Abslug Society], Hraparak o'rat'ert', 23 O'gos. 2022. <https://shorturl.at/dpsD5>, (mutq` 20.08.2023): (in Armenian)
4. Badalyan, Naira. «Arjhezrkel dramn amen gnov» [Devalue Drams at Any Cost], ARMINFO, 01 Noy. 2022. <https://shorturl.at/cqVZ3>, (mutq` 22.08.2023): (in Armenian)
5. Gishyan, Sona. «Tntesut'yuny' kangnac' e' «t't'vac'nayin qaghci» ar'aj» [The Economy is Facing "Oxygen Starvation"], 1or.am, 15 Noy. 2021. <https://shorturl.at/frxOZ>, (mutq` 13.08.2023): (in Armenian)
6. «Inchpes kareli e' durs gal ays iravitwakic» [How Can we Get out of this Situation?], Sputnik Armenia, 08 Dekt. 2020. <https://shorturl.at/dfqG2>, (mutq` 24.08.2023): (in Armenian)
7. Xachatryan, Zvart'. «Nman iravitwaki sharunakut'yan depqum tntesakan ankumy' kverac'vi tntesakan depresiayi» [If this Situation Persists, the Economic Downturn will Turn into an Economic Depression.]. Tntesaget», 168.am, 15 Mart 2021. <https://shorturl.at/bdgsG>, (mutq` 17.08.2023): (in Armenian)
8. «Koronavirus' kkaroghana` bujhel Hayastani tntesut'yan xronik hivandut'yuny'» [Will coronavirus be able to cure the chronic disease of the Armenian economy?], Sputnik Armenia, 18 Mayis 2020. <https://shorturl.at/ovwBL>, (mutq` 15.08.2023): (in Armenian)
9. Kiseblyan, Hayk. «Amenaxocelinery' p'oqr biznesnern en» [Small businesses are the most vulnerable], Mamuli xosnak , 09 Hulis 2020. <https://shorturl.at/hPY01>, (mutq` 10.08.2023): (in Armenian)
10. «Hayastani tntesut'yuny' sksum e' shnchel» [The Armenian economy begins to breathe], SIVILNET', 03 Hunis 2021. <https://shorturl.at/yGOPT>, (mutq` 12.08.2023): (in Armenian)
11. «Hayastani tntesut'yany' petq e' arag likvidaynut'yan nerarkum» [Armenia's economy needs a quick liquidity injection], A1+, 31 Mart 2020. <https://shorturl.at/yOX16>, (mutq` 02.09.2023): (in Armenian)
12. «Hayastani tntesut'yuny' shat lurj hivandut'yunnerov e' tar'apum» [The Armenian economy is suffering from very serious diseases], News.am, 26 O'gos. 2022. <https://shorturl.at/nzG35>, (mutq` 11.08.2023): (in Armenian)
13. «Hayastani tntesut'yunn ays pahin apaqinman p'ulum e'» [The Armenian economy is currently in the recovery stage], ARMENPRES, 30 O'gos. 2021. <https://shorturl.at/goDO2>, (mutq` 28.08.2023): (in Armenian)
14. Harut'yunyan, Lusine. Tntesakan iradard'ut'yan lezvaanachoghakan modelavorumy' [Linguocognitive Modeling of an Economic Event], ban.git.dokt. atenaxos, seghmagir, 2017: (in Armenian)
15. Hergnyan, Seda. «Hayastani tntesut'yan «t'mranyut'y'»» [The “Drug” of the Armenian Economy], Hetq, 08 Noy. 2022. <https://shorturl.at/beor0>, (mutq` 15.08.2023): (in Armenian)
16. Hovhannisyan, Alina. « ahan Qerobyan. Hayastani tntesut'yan marmnum 5 angam pakas alyun e' hosum, qan petq e'» [There is 5 times less blood flowing in the body of the Armenian economy than it should], ARMINFO, 08 Noy. 2022. <https://shorturl.at/zBGX8>, (mutq` 14.08.2023): (in Armenian)
17. Makaryan, ahe. « at ban petq e' asem, bayc petq e' naew stver lini, or tntesut'yunn arag zargana» [I have to say something bad, but there must be a shadow for the economy to develop rapidly], Hraparak o'rat'ert', 25 noy. 2022. <https://shorturl.at/dDNW8>, (mutq` 08.08.2023): (in Armenian)
18. Martirosyan, Ara. «Hayastani tntesut'yuny' tendi mej e'» [Armenia's Economy is in a Fever], Yerevan.Today, 22 Mart 2021. <https://shorturl.at/dhrzM> , (mutq` 12.08.2023): (in Armenian)

19. Margaryan, Lusine. «TT volortin subsidiayi tesqov t't'vac'in ktrvi» [Oxygen will be provided to the IT sector in the form of a subsidy], Ar'avot, 30 Noy. 2022. <https://shorturl.at/djIX7>, (mutq` 27.08.2023): (in Armenian)
20. Mirzoyan, Valeri. jhamanakacic intesagitakan xosuyt'i lezvatramabanakan verluc'ut'yun [Linguistic Analysis of Modern Economic Speech], Erevan, Tntesaget hratarakchut'yun, 2014: (in Armenian)
21. «Mtadir enq tntesut'yan mej ansahmanap'ak qanakut'yamb p'ogh nerarkel» [We intend to invest an unlimited amount of money in the economy], Hraparak o'rat'ert', 06 Mayis 2020. <https://shorturl.at/DEJL5>, (mutq` 06.08.2023): (in Armenian)
22. Oskanyan, Jhirayr. «Kar'avarut'yan c'ragrery' anhamachap' en» [The Government's Plans are Disproportionate], 1in.am, 07 Mayis 2020. <https://shorturl.at/gnEIO>, (mutq` 06.08.2023): (in Armenian)
23. Sahakyan, Nane. «Tntesut'yuny' karc'es t'e mtnum e' verakangnman p'ul» [The economy seems to be entering a recovery phase], Azatut'yun, 18 P'etrv. 2021. <https://shorturl.at/jlrwT>, (mutq` 28.08.2023): (in Armenian)
24. Sargsyan, Suren. «R'us-ukrainakan paterazmy' ew menq» [The Russian-Ukrainian War and us], Azg, 28 April 2023. <https://shorturl.at/mwzK9>, (mutq` 03.09.2023): (in Armenian)
25. « archapet. Total «loqdauny'» harvac' klini tntesut'yan voghnasharin» [A Total "lockdown" will Strike at the Backbone of the Economy], Mediamax, 12 Hunis 2020. <https://shorturl.at/orQW5>, (mutq` 10.08.2023): (in Armenian)
26. «Tntesut'yan oghnashary' jardelu gorc'y'nt'acy' sharunakvum e'» [The process of breaking the backbone of the economy continues], SIVILNET', 18 O'gost. 2023. <https://shorturl.at/cqrM8>, (mutq` 05.09.2023): (in Armenian)
27. Qocharyan, Hakob. «Tntesut'yan aryunatar anot'nery' xcanvel en» [The blood vessels of the economy are clogged], 168.am, 20 Hunv. 2022. <https://shorturl.at/afrxxy>, (mutq` 10.08.2023): (in Armenian)

CONCEPTUAL MAPPING OF «ECONOMY IS A SICK ORGANISM» METAPHOR

ANI HARUTYUNYAN

*Brusov State University, Linguistics and Pedagogy Department,
the English Language Chair,
Ph.D. in Philology, Lecturer
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the article is to study the conceptual mapping of the metaphor ECONOMY IS A SICK ORGANISM within Armenian economic discourse. The primary goals of the study encompass analyzing the semantic-structural characteristics of the source domain "sick organism" and exploring the cross-domain mappings of metaphorical patterns derived from the conceptual domains "sick organism" and "economy."

The topicality of this article arises from the increasing scholarly attention to conceptual metaphors within economic discourse, both as cognitive instruments and as influential tools for manipulation.

The selection of linguistic analysis methods is justified by the nature of the examined data and the research objectives. The examination of the material was carried out through linguistic descriptive analysis and contextual analysis.

The research findings led us to conclude that the metaphor ECONOMY IS A SICK ORGANISM gains increased relevance in the press during periods of external economic

shocks such as pandemics or wars. The primary intent behind employing this metaphor in press publications is to elucidate the country's economic condition to the non-professional audience through the most familiar source domain ("sick organism"). Throughout the phases of economic crisis, negative metaphors predominated, depicting the economy as weak and vulnerable, with symptoms similar to diseases. Conversely, during post-crisis periods, positive metaphors emphasizing economic recovery become more prominent.

Keywords: *conceptual metaphor, source domain, target domain, conceptual mapping, cross-domain mapping, metaphorical model, economic discourse.*

КОНЦЕПТУАЛЬНОЕ КАРТИРОВАНИЕ МЕТАФОРЫ «ЭКОНОМИКА – ЭТО БОЛЬНОЙ ОРГАНИЗМ»

АНИ АРУТЮНЯН

*преподаватель кафедры английского языка
факультета языкознания и педагогики
Государственного университета имени В. Брюсова,
кандидат филологических наук,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение концептуального картирования метафоры **«ЭКОНОМИКА – ЭТО БОЛЬНОЙ ОРГАНИЗМ»** в рамках армянского экономического дискурса. Основными целями исследования являются анализ семантико-структурных характеристик исходного домена «больной организм» и изучение кросс-доменных отображений метафорических моделей, происходящих из концептуальных доменов «больной организм» и «экономика».

Актуальность данной статьи обусловлена увеличивающимся интересом ученых к концептуальным метафорам в рамках экономического дискурса, которые используются как когнитивные инструменты, а также являются влиятельными средствами манипуляции.

Выбор методов лингвистического анализа обусловлен характером исследуемых данных и целями исследования. Анализ материала был проведен с использованием лингвистического, описательного и контекстуального анализов.

Результаты исследования позволили сделать вывод, что метафора **«ЭКОНОМИКА – ЭТО БОЛЬНОЙ ОРГАНИЗМ»** становится наиболее актуальной в печати в периоды внешних экономических потрясений, таких, как пандемии или войны. Основная цель использования этой метафоры в печатных изданиях заключается в том, чтобы прояснить экономическое состояние страны для непрофессиональной аудитории через наиболее знакомую область-источник («больной организм»). На всем протяжении определения фаз экономического кризиса преобладают отрицательные метафоры, описывающие экономику как слабую и уязвимую, с симптомами, сходными с заболеваниями. А в периоды посткризисного восстановления наиболее заметными становятся положительные метафоры, которые акцентируют внимание на процесс улучшения экономического положения.

Ключевые слова: *концептуальная метафора, область-источник, область-цель, концептуальное картирование, междоменное картирование, метафорическая модель, экономический дискурс.*

MANIPULATION OF THE TERM «TERRORISM» *

UDC 8/81՝4

DOI: 10.52063/25792652-2024.2.21-64

ANUSH MARTIROSYAN

*Eurasia International University, Faculty of Languages, Communication and Pedagogy,
Department of Foreign Languages and Literature, Lecturer, Ph.D. Student;
Yerevan, the Republic of Armenia
University of Santiago de Compostela, Ph.D. Student
Lugo, Spain
anush.martirosyan@eiu.am
ORCID: 0009-0003-3536-4680*

The purpose of this article is to analyze how world leaders manipulate the concept of terrorism to justify their actions in the context of politics and diplomacy. Through the strategic use of language, politicians and diplomats shape public perceptions and gain support for their military operations. By using language associated with fighting terrorism and protecting civilians, leaders position themselves within a moral framework that does not allow the international community to question or condemn their actions.

The article also addresses the problem of evolving vocabulary of terrorism, including new forms such as "energy terrorism", "environmental terrorism", etc., that enable countries to organize actions under the guise of terrorism. To conduct the analysis, we applied qualitative research, case study and textual analysis of empirical research methodology. After the study of the article, it was concluded that the term "terrorism" serves as a powerful tool to shape public opinion and justify state actions by hindering the effective fight against terrorism. It is a means to legitimize politically motivated violent activities and to escape responsibilities in the diplomatic-political arena.

Key words: manipulation, diplomacy, language, terrorism, political, goals, justify, legitimize.

Introduction

Since the events of September 11, 2001, the term "terrorism" has been widely used in discussions of global security and politics. However, the term itself is often manipulated and used to serve agendas. The choice of language and rhetoric employed by both terrorists and politicians is crucial in shaping public opinion and obtaining support for their objectives. The purpose of this article is to investigate how nations employ the label "terrorism" as a means of evading responsibility, displacing it onto their adversaries, and creating narratives that favor them. From several case studies on political happenings in recent years, we examine the strategic use of terrorism as a framing device for politically motivated violent actions, to attract international sympathy as a base of justification for invasions. The interplay between terrorism and the language of power in this globalized world can be studied by investigating the dynamics of the evolving

* Հոդվածը ներկայացվել է 15.04.2024թ., գրախոսվել՝ 17.05.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

terrorism lexicon and linguistic strategies deployed to dominate. After all, the use of the words "terrorist" and "terrorism" as a weapon shapes political reality and is a powerful tool in justifying acts that might otherwise be questioned or condemned. It highlights the power of language.

Manipulating the Term of Terrorism

Being in the center of politics and diplomacy, world leaders frequently manipulate the concept of terrorism which is becoming more and more actual in modern politics. This means that the language and event-oriented texts of both terrorists and political and diplomatic figures are aimed at justifying and legitimizing their actions or vice versa. Wardlaw G. mentions that more powerful groups encourage perceptions by manipulation the information (Wardlaw 5).

As Hewer and Taylor mention in their article 'terrorism' becomes an indicator that is used to distinguish legitimate and non-legitimate politically motivated violence'.

It is mentioned that *'it is a linguistic tool that serves the interests of the state and those who wish to maintain the status quo and obscure the political import of the act' and it is a fight to legitimize or deny any kind of politically motivated violence, which is waged in front of media by specialists in political rhetoric* (Taylor 199-212).

States mainly manipulate the term to escape being labeled as a terrorist or to create preconditions to put responsibility on their adversaries and act based on their interests. Sometimes it is not necessary for a country to use the word 'terrorism' directly since there are other words that are associated with the phenomenon.

In 2013 after the suspected chemical weapon attack in Ghouta and other cities in Syria, the main message of Syria's acting president was that they were fighting against **terrorism** to defend **civilians**, in this way legitimizing the bombings of Syrian cities (Al-Assad 2016).

This example shows that political leaders through diplomatically and logically built speech show the innocence, reasonability, and inevitability of their steps.

In the diplomatic world words like the *fight against terrorism, protection of civilians, or their rights* hold great reputations and spread shadows on other concepts and give legit rights to the countries in their intentions. This means that actions carried out under the name of counterterrorism are justified and hold strong moral values.

In the case of the example given above, it can be said that the Syrian leader used it under the guise of protection to justify the events. However, the use of the term is not limited to that. It can be used for other motives as well. For example, when the Crimean Bridge was blown up during the Ukraine-Russia war (2022) Russia accused Ukraine of terrorism, partially Putin said *'There is no doubt, this is an act of **terrorism** aimed at destroying Russia's critical civilian infrastructure'* (Putin 2022).

The use of the word 'terrorism' by Putin was to complicate the ongoing events and give a more serious tone to the military-political events and create basis to accuse Ukraine in the latter.

Another example of this was the illegal trial and detention of Armenian servicemen in Azerbaijan after the 2021 May clashes between Armenia and Azerbaijan when Armenian soldiers were fortifying an Armenian army post on the border with Azerbaijan. Having no legal bases to keep them in Azerbaijan, the Armenian-origin prisoners of war were labeled as terrorists to be sentenced. In this way, they legitimize illegal actions taken by the Azerbaijani government (Khachatryan 2022).

Linguistic exploitation of the terrorism concept leads to the realization of political decisions and the latter is a good base to launch politically motivated violent operations. It is best to use this tactic when a country is not being attacked by terrorists, but instead is

organizing something against their adversaries. In these cases, manipulating the term can help legitimize their actions and start the process.

A vivid example of the manipulation of the concept can be seen in Azerbaijan's military operation in the disputed territory of Nagorno-Karabakh (Artsakh). Starting on September 19, 2023, Azerbaijan launched attacks on peaceful civilians in Nagorno-Karabakh, labeling these actions as 'anti-terror operations' (Kirby, 2023) after the nine months of blockade (UN, 2023). It is important to note that for over 25 years, Azerbaijan has been engaged in negotiations with Armenians in Nagorno-Karabakh, and no international organization or country has ever reported the presence of terrorists, terror organizations, or terrorism in the disputed zone. These so-called 'anti-terror operations' resulted in forced displacement of the local population with clear signs of ethnic cleansing from the disputed zone to the Republic of Armenia (Wright, 2023).

No country recognized those actions as 'anti-terror operations', moreover The European Parliament adopted a resolution on this question strongly condemning Azerbaijani actions. (EP, 2023).

These examples demonstrate how political leaders strategically employ language to shape public perception, justify their actions, and legitimize their intentions. By utilizing terms associated with counterterrorism or protecting civilians, they can cloak their actions in a moral framework, making it more challenging for the international community to question or condemn their behavior.

Azerbaijan's use of the term '*anti-terror operation*' in the context of the Nagorno-Karabakh conflict, despite the absence of terrorism in the region, can be seen as a strategic choice aimed at shaping the narrative and garnering international support. By framing their military actions as counterterrorism operations, Azerbaijan sought to portray themselves as fighting against a common global threat and justify their aggression. Using the language of counterterrorism carries significant weight in the international community, as it invokes notions of security, self-defense, and the protection of civilians.

By labeling their actions as anti-terror operations, Azerbaijan aimed to gain sympathy and legitimacy for their military campaign, both domestically and internationally.

Another example is Israeli attack on refugee camps in southern Beirut. In 1982, Israeli officials said that there were approximately 2,000 terrorists in the refugee camps of Sabra and Shatila in southern Beirut. Israeli Prime Minister Menachem Begin and Defense Minister Ariel Sharon ordered the invasion of Lebanon with the help of Phalange and massacred people under the name of counterterrorism actions (Jazeera, 2022).

Later, the Israeli side attacked Jenin Refugee Camp (2002) again claiming that they were fighting against terrorism, however during both attacks, Israel was unable to find all those terrorists which confirms the fact that political leaders via manipulating the term terrorism try reach their political goals. From this point of view, the concept of terrorism is very flexible and dangerous since the concept includes different types of crimes that can be used for different reasons and are easy to exploit linguistically.

On the other hand, the definition of terrorism is becoming increasingly complex as we encounter various forms of violent and aggressive actions that are labeled as terrorism leaving a door for the manipulation of the latter. The lack of the common definition of terrorism makes it even easier to manipulate it and the new emerging forms or names of terrorism give new possibilities to exploit the term.

Before the classical vocabulary of terrorism included words like *hijackings, hostage takings, kidnapping, mass shootings, car bombings, and suicide bombings*, however *nowadays* the common understanding and concept of terrorism have been given new names in recent decades, making it significantly more difficult to combat terrorism.

If before suicide bombing, hijacking of planes, or bombing of an embassy, metro, train, etc. were classical forms of terrorism, now we see that the concept of terrorism has

broadened having new types. The vocabulary of terrorism is not limited only to words such as terrorism, **suicide bombing**, or **hijacking**, etc. If before concepts like '**energy terrorism**' '**environmental terrorism**' '**hydro terrorism**' (Al-Marashi, 2005)', '**nuclear terrorism**' '**bioterrorism**'⁸, '**cyberterrorism**' '**chemical terrorism**' and other such kinds of denominations had no place in the terrorism vocabulary, nowadays we see them being used by diplomats and politicians as new forms of terrorism and this created additional possibilities for some countries to organize actions under the name of terrorism or to show deterioration of the events. When in October 2022 Russia attacked Ukraine's energy network, Ukraine's president Zelensky called it '**energy terrorism**' which was meant to say that Russia tried to terrorize the people of Ukraine leaving them without electricity in the winter season.

Zelensky in his speech addressed to the people said, '*The very fact that Russia is restoring to **energy terrorism** shows the weakness of the enemy*'. (Zelenski, 2022)

Qualifying such a phenomenon as terrorism shows that countries are very comfortable using the term against other countries. We should also try to understand the reason why countries use the word 'terrorism' so much and why they blame each other for terror actions, namely what makes them frightened so much. The reason is that in a world of international law and territorial integrity, for a country it is an extremely big issue to be accused of terrorism since it can have negative consequences in shaping their external policy and can have a huge impact on their international image and prosperity.

The linguistic manipulation in this context has 2 aspects:

1. To legitimize the actions
2. To justify the actions carried out by states.

The latter indicates that the concept of terrorism is used for political motives which is not a new fact. Many countries come across declaring they are fighting against terrorism, however, sometimes reality proves the opposite. The very fact that the concept of terrorism is manifold and complicated to define gives chances to other actors to use the term taking advantage of a linguistic and semantic gap between the latter. What we see and what we can say on this is that linguistic manipulation is not only aimed at the above-mentioned two goals but pursues many other goals among them to confuse the audience, distract them put forward their ideas, etc.

This is when we understand how powerful weaponizing the word '**terrorist**' or '**terrorism**' can be. The reason for that is when a person or group or state is labeled as terrorist and the fact that terrorism is intolerable, legitimates the other sides to respond to terrorist attacks or actions without being labeled terrorist.

Conclusion

The research suggests that:

- Political actors and diplomatic figures use terrorism as a tool to manipulate public opinion, provide reasons for actions, and legitimize decisions.
- Expanding the definition of terrorism allows states to justify their actions in fighting terrorists, portraying any conflict they involve themselves in as an act of heroism, which is not always the case.
- The term "terrorism" can be used by states against adversaries to engage in aggressive measures while pursuing political objectives, leading to accusations and

⁸ According to Cambridge Dictionary, Bioterrorism is a violent action using living matter, such as bacteria, to harm or kill people for political reasons.

counteraccusations. This suggests that labeling anything as terrorism can lead to countries attacking people based on mere suspicions, creating a cycle of endless war.

It is also concluded that governments use moralistic language and rhetoric to mask their actions, making it hard for the global community to question or denounce them causing the main problem unsolved which is to hold governments accountable for their violent actions.

REFERENCES

1. "Syrian President Bashar Al-Assad: Exclusive Interview." *Al-Assad Bashar, YouTube*, upload by NBC Nightly News, https://www.youtube.com/watch?v=45odEv_1DAY&t=249s. Accessed: 12 April 2022.
2. "Sabra and Shatila massacre: What happened in Lebanon in 1982?", *Al Jazeera Team*, 2022, <https://www.aljazeera.com/news/2022/9/16/sabra-and-shatila-massacre-40-years-on-explainer>. Accessed: 12 Aug 2022.
3. "Resolution of 5 October 2023 on the Situation in Nagorno Karabakh after Azerbaijan's Attack and the Continuing Threats against Armenia" *European Parliament*, (2023/2879(RSP)) https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2023-0356_EN.pdf?fbclid=IwAR3A47SSlj8eK-wke_RLKfymA824yYGhmEJZsu_tklQg7ydAMjbnRO9JaJc. Accessed: 12 May 2023
4. Khachatryan, Marine. "More Armenian POWs Sentenced in Azerbaijan". *Azatutyun Radio*, 2022, <https://www.azatutyun.am/a/31741697.html>. Accessed: 12 Oct 2022.
5. Kirby, Paul. "Azerbaijan Launches Operation against Nagorno-Karabakh and Demands Surrender". *BBC*, 20 Sep 2023", <https://www.bbc.com/news/world-europe-66851975>. Accessed: 12 Oct 2023.
6. Putin Vladimir. "Crimea bridge: Putin accuses Ukraine of "terrorism"" *BBC*, 2022, <https://www.bbc.com/news/world-europe-631955>. Accessed: 26 Nov 2022.
7. Taylor Wendy, Hower Christopher (2007). *Deconstructing Terrorism: Politics, Language and Social Representation*. In R. Roberts, Just War: Psychology and Terrorism), PCCS Books: PCCS Books.
8. "Lachin Corridor Must Be Reopened for Humanitarian Aid, Security Council Hears, as Speakers Urge Armenia, Azerbaijan to Normalize Relations", *United Nations*, 16 August 2023, <https://press.un.org/en/2023/sc15384.doc.htm>. Accessed: 10 Sept 2023
9. Wardlow, Grant. *Political Terrorism: Theory, Tactics and Counter-Measures*. Cambridge University Press, (5), 1989.
10. Wright, George. "Nagorno-Karabakh: Armenia says 100,000 refugees flee region". *BBC*, 2023, <https://www.bbc.com/news/world-europe-669698455>. Accessed: 10 Oct 2023.
11. Zelenski, Volodymyr. "Ukraine war: Zelensky accuses Russia of "energy terrorism"" *BBC*, 2022, <https://www.bbc.com/news/world-europe-63508836>. Accessed: 26 Jan 2023.

«ԱՅԱՔԵԿՉՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆ

ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Եվրասիա միջազգային համալսարանի օտար լեզուների և գրականության ամբիոնի ասպիրանտ և դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարանի ասպիրանտ,
ք. Լոգո, Իսպանիա*

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել, թե ինչպես են համաշխարհային առաջնորդները շահարկում «ահաբեկչություն» հասկացությունը՝ արդարացնելու իրենց գործողությունները քաղաքական և դիվանագիտական համատեքստերում: Լեզվի ռազմավարական գործածության միջոցով քաղաքական գործիչներն ու դիվանագետները ձևավորում են հանրային ընկալումները և աջակցություն ստանում իրականացնելու իրենց ռազմական գործողությունները: Օգտագործելով ահաբեկչության դեմ պայքարի և խաղաղ բնակիչների պաշտպանությանն առնչվող լեզու՝ առաջնորդները դիրքավորվում են բարոյական շրջանակում, որը թույլ չի տալիս միջազգային հանրությանը կասկածի տակ դնելու կամ դատապարտելու նրանց գործողությունները:

Հոդվածը անդրադառնում է նաև ահաբեկչությանն առնչվող բառապաշարի զարգացման հիմնախնդրին՝ ներառյալ նորակազմությունները, ինչպիսիք են՝ «Էներգետիկ ահաբեկչություն», «բնապահպանական ահաբեկչություն» և այլն, որոնք հնարավորություն են տալիս երկրներին կազմակերպելու գործողություններ ահաբեկչության շղարշի ներքո: Վերլուծությունն իրականացնելու համար մենք կիրառել ենք որակական հետազոտություն, դեպքի ուսումնասիրություն և տեքստային վերլուծություն՝ Էմպիրիկ հետազոտության մեթոդաբանության հիման վրա: Կատարված ուսումնասիրությունից եզրակացվեց, որ «ահաբեկչություն» եզրույթը ծառայում է որպես հզոր գործիք հասարակական կարծիք ձևավորելու և ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտող պետական գործողություններն արդարացնելու համար:

Այն քաղաքական դրդապատճառներով բռնի գործունեությունը օրինականացնելու և դիվանագիտական-քաղաքական ասպարեզում պատասխանատվությունից խուսափելու միջոց է:

Հիմնաբառեր՝ մանիպուլյացիա, դիվանագիտություն, լեզու, ահաբեկչություն, քաղաքական, նպատակներ, արդարացնել, օրինականացնել:

МАНИПУЛЯЦИЯ ТЕРМИНОМ «ТЕРРОРИЗМ»

АНУШ МАРТИРОСЯН

*преподаватель, аспирант кафедры иностранных языков и литературы факультета языков, коммуникации и педагогики
Международного университета Евразия,
г. Ереван, Республика Армения
аспирант Университета Сантьяго-де-Компостела
г. Луго, Испания*

Целью данной статьи является анализ того, как мировые лидеры манипулируют концепцией терроризма для оправдания своих действий в контексте политики и дипломатии. Посредством стратегического использования языка политики и дипломаты формируют общественное мнение и получают поддержку для проводимых ими военных операций. Используя язык (дискурс), связанный с борьбой с терроризмом и защитой гражданского населения, лидеры позиционируют себя в таких моральных рамках, которые не позволяют международному сообществу оспаривать или осуждать их действия.

Данная статья обращается также к проблеме меняющегося словаря терроризма, который включает в себя новые словоформы, такие, как «энергетический терроризм», «экологический терроризм» и т. д., которые позволяют странам организовывать военные операции под прикрытием борьбы с терроризмом. Для проведения анализа было использовано качественное исследование, кейс-стади и текстовый анализ на основе методологии эмпирического исследования. В результате исследования был сделан вывод о том, что термин «терроризм» служит мощным инструментом формирования общественного мнения и оправдания государственных действий, которые мешают эффективной борьбе с терроризмом.

Это – способ легитимизировать политически мотивированные насильственные действия и избежать ответственности на дипломатическо-политической арене.

Ключевые слова: *манипуляция, дипломатия, язык, терроризм, политические, цели, оправдание, легитимизация референдум.*

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ԱՐՔԵՏԻՊԸ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ «ՏԱՆ ՊԱՅԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ» ՀԵՔԻԱՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ *

ՉՏԴ 821.19.0

DOI: 10.52063/25792652-2024.2.21-71

ԼԻԱՆՆԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի
ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և
գրականության տեսության ամբիոնի հայցորդ,
Երևանի պետական համալսարանի եվրոպական լեզուների և հաղորդակցության
ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

lianna.baghdasaryan@ysu.am

ORCID: [0009-0008-4674-4212](https://orcid.org/0009-0008-4674-4212)

Սույն հոդվածը փորձ է համակարգված հետազոտելու արձակագիր Լևոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» ժողովածուի հեքիաթներում արքետիպային կառույցների առանձնահատկությունները: Արքետիպերը՝ որպես հավաքական անգիտակցական երևույթներ, պատկերաստեղծման նախապայմաններն են և գեղարվեստական գիտակցականում դրսևորվում են պատկերի, խորհրդանիշի, փոխաբերության միջոցով:

Հոդվածի նպատակն է Լևոն Խեչոյանի հեքիաթներում վերհանել արքետիպային համամարդկային պատկերները՝ վերջիններիս յուրաքանչյուր գրական ստեղծագործության մաս կազմելու հիմքով:

Հեքիաթը՝ որպես բանահյուսության ժանր, արքետիպերի դրսևորման համար լավագույն միջոցն է՝ լի արքետիպային գլոբալ պատկերներով: Արքետիպային պատկերները, մասնավորապես հեքիաթներում դրսևորվելով, ըստ Էռլայան գրական ստեղծագործության ընդհանուր գաղափարների կրողն են:

Խեչոյանի հեքիաթները հարուստ են «հոգու մարգարիտներով»՝ արքետիպերով, ուստի խնդիր է դրվել վերհանել արքետիպերը «Տան պահապան հրեշտակը» ժողովածուի հեքիաթներում՝ դրսևորված համեմատական կառույցներում, որոնք հոդվածում աղյուսակի տեսքով են ներկայացված, ինչպես նաև վերլուծել նորերը՝ հեղինակային անհատական արքետիպերը:

Հոդվածում կիրառվել են վերլուծական, մեկնաբանական, ինչպես նաև նկարագրական մեթոդները:

Եթե զուգահեռենք այլ մշակույթների հեքիաթներին, հայ գրական հեքիաթը ուրույն առանձնահատկություններ է դրսևորում, իսկ Լևոն Խեչոյանի մշակած հեքիաթները իրականի և հրաշապատումի յուրահատուկ ներդաշնակություն են: Նրա հեքիաթները հավերժական էությունների կենտրոնացում են՝ ջուր, մարդ, կենդանի և այլն: Դիցուք, հեղինակը հաճախ

* Հոդվածը ներկայացվել է 22.05.2024թ., գրախոսվել՝ 13.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

անդրադառնում է կենդանական աշխարհի ներկայացուցիչներին՝ մարդ-բնությունն ընդհատված կապը վերահաստատելու համար:

Հիմնաբառեր՝ անգիտակցական, արքետիպ, անհատական արքետիպ, հեքիաթ, Լևոն Խեչոյան, պատկերային համակարգ, նախնական պատկեր, հավաքական պատկեր, սիմվոլ:

Ներածություն

Արքետիպերը՝ որպես հավաքական անգիտակցականի պատկերներ, հայտնվում են երազներում, երևակայություններում և տարածվում բոլոր կրոններում, առասպելներում, լեգենդներում և հեքիաթներում, որոնք հաճախ մեկ մշակույթից մյուսը կարող են դրսևորվել միանման ձևով: Արքետիպերը անգիտակցականից գիտակցական դաշտ տեղափոխվելիս անձնական փորձառության փուլով են անցնում և դրսևորվում վարքի, խորհրդանիշի, ինչպես նաև պատկերի միջոցով: Արքետիպային պատկերները ցանկացած գրական ստեղծագործության հիմքում են: Պատկերները սերունդների հոգևոր Էվոլյուցիայի արդյունք են: Հեքիաթներն, ըստ Յունգի, անգիտակցականի բարձրագույն ձևի՝ կոլեկտիվ անգիտակցականի արտահայտման եղանակներն են: Հայ գրական հեքիաթը նույնպես հարուստ է գլոբալ պատկերներով, որոնք մարդը կրում է անգիտակցաբար: Այդ գլոբալ պատկերներն անձնական փորձանյութով լցվելիս երբեմն դուրս են գալիս իրենց սահմաններից և պայմանավորված տվյալ իրավիճակով, հույզերով, հոգեկան վիճակով՝ մի հեղինակից մյուսը կարող են ընդհանուր պատկերացման մեջ ստեղծել մասնավոր պատկերներ, որոնք մեն ուժով կապված են «նախնական պատկերներին»: Արքետիպային պատկերները դրսևորվում են մասնավորապես հայ արձակագիր Լևոն Խեչոյանի ստեղծագործական աշխարհում, ուստի սույն հոդվածում քննության են առնվում վերջինիս հեքիաթներում արքետիպային պատկերները, ինչպես նաև իր անհատական արքետիպերի դրսևորումները՝ հեղինակային համեմատությունների միջոցով:

Ըստ Յունգի՝ «Արքետիպը հավաքական անգիտակցականին պատկանող նախնական, համամարդկային խորհրդանիշ է» (Jung, L'homme à la découverte de son âme 87): Արքետիպերը հայտնվում են միջերում, ինչպես նաև երազներում, ուր ձևավորում են մշակույթների ու մտածելակերպերի խորհրդանշական կարգեր, ապա ուղղորդում առարկան դեպի անհատականացման: Ըստ Յունգի՝ արքետիպերը սիմվոլը միավորում են հույզին, որոնք ձևավորում են մարդկության ողջ գործունեությունը:

Յունգն առանձնացնում է արքետիպերի երկու խումբ: Առաջին խմբում ընդգրկված են *Անձի, Ինքնության, Անիմուս, Անիմայի, Ես, Ստվերի, Իմաստուն ծերի* արքետիպերը, որոնք մարդու անհատականացման փուլի անցման ճանապարհին են առնչվում: Երկրորդ խմբում ընդգրկված են փոխակերպման արքետիպերը, որոնք կարող են հասարականալ՝ հիմնվելով տիպական իրավիճակների, վայրերի, եղանակների վրա, որոնք խորհրդանշում են փոխակերպության տեսակը (Բեքմեյան 36; Юнг 363; Мелетинский 66):

Այսպիսով, արքետիպերը գործում են «անձնական անգիտակցականում» բարդության միջոցով և «հավաքական անգիտակցականում»՝ առաջացնելով բոլոր մշակույթների համար ընդհանուր հատկանիշներ: Արքետիպերը երևակայության, վերհուշի, հիշողության, երազի, տեսիլքի, միջի և հեքիաթի ձևով դրսևորվում են հոգեկան և զգայական աշխարհում: Իսկ արդեն գիտակցականում արքետիպերը հիմնականում դրսևորվում են միջական և սիմվոլիկ կառույցների օգնությամբ (Բեքմեյան 36):

Արքետիպերը նախապատրաստում են գործողությունների և պատկերաստեղծմանը: Յակոբին նշում է, որ արքետիպերն արտահայտվում են պատկերների միջոցով:

Ըստ Յունգի՝ կարևոր է գրական տեքստում վերհանել այնպիսի պատկերներ, որոնք կարելի է համապատասխանեցնել «նախնական պատկերներին»: Դրանք կենդանի, դինամիկ լինելու հատկություն ունեն: Ցանկացած գրական տեքստ բառի լայն իմաստով մի ամբողջ «պատկեր» է: Այս «գլոբալ պատկերում» հավերժական եռությունները (արև, ջուր, երկիր, մարդ և այլն) միշտ առկա են: Ուստի գրական ստեղծագործությունը արքետիպերի դրսևորման լավագույն միջոցն է, քանի որ հավաքական անգիտակցականի նախնական պատկերներն այնտեղ իդեալական արտացոլում են գտնում:

Մարդկանց, իրերը, երևույթները նկարագրելիս հեղինակը դիմում է ասոցիատիվ կապերի և ստեղծելով նոր կապեր՝ անգիտակցաբար շարժվում է դեպի սկզբնական պատկերները, որոնք կարող են ստեղծել անսպասելի և արտասովոր նոր կերպարներ:

Հայտնի է, որ հեքիաթները հազարամյակներ շարունակ արքետիպերի դրսևորման համար լավագույն միջոց են եղել: Դրանք երբեմն մարդկային չափազանցված վարքի արտացոլումն են և թույլ են տալիս տեսնել անհատին այլ տեսանկյունից: Հեքիաթները և դրանց կերպարները կարող են օգնել պարզել, թե որ արքետիպային մոտիվներն (patterns archétypiques) են ազդում մարդու վրա: Յունգը նույնիսկ արքետիպերն անվանում է իրական կենդանի էակներ: Յունգը նշում է. «Արքետիպերը եղել են և հիմա էլ հոգեկան մեծ կարևորություն են ներկայացնում: Դրանք միշտ պաշտպանված և օգտակար են եղել, և եթե մենք վնասում ենք նրանց, վտանգում ենք «հոգու մարգարիտները» (Jung, Kerenyi 98-99):

Անդրադառնալով ժամանակակից միտումներին՝ կարելի է առանձնացնել մի քանի գրական հեքիաթի հեղինակների՝ Լևոն Խեչոյան, Արփի Ոսկանյան, Էլֆիք Չոհրաբյան, Վահագն Գրիգորյան, Էդուարդ Ավագյան, Էդվարդ Միլիտոնյան, Երազիկ Գրիգորյան և այլք: Ուսումնասիրելով վերոնշյալ հեղինակների ստեղծագործությունները՝ կարելի է առանձնացնել գրական հեղինակային հեքիաթի մի քանի դրսևորումներ.

ա. նոր հեղինակային հեքիաթների ստեղծում, որի հենքում բանահյուսական հեքիաթն է՝ ֆոլկլորային հեքիաթի կանոնների պահպանումով,

բ. լրիվ նոր հեքիաթային-գերբնական աշխարհի ստեղծելու հեղինակային միտում, որն այլ կերպ անվանում են ֆենթեզի,

գ. ավանդական բանահյուսական և գրական հեքիաթների վերաիմաստավորում և քայքայում,

դ. հեղինակային մշակումներ, որոնց հենքում ավանդական ժողովրդական հեքիաթներն են (օրինակ՝ Լևոն Խեչոյանի «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն) (Վարդանյան Նվարդ, Սեմիրջյան-Բեքմեզյան Ալ., Վարդանյան Նարինե 92):

Ժանրային առումով յուրահատուկ է Լևոն Խեչոյանի մշակած «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուն: Լևոն Խեչոյանն այն բացառիկ հեղինակներից է, որը մշակել է ժողովրդական հեքիաթներ: Այս երևույթը հայ գրականության մեջ զարգացած չէ, իսկ Խեչոյանի մշակումները յուրօրինակ են, քանի որ նա ունի հեքիաթների մշակման իր սկզբունքը: Հեղինակը նշում է. «Հայ ժողովրդական հեքիաթները բաժանվում են երեք՝ հրաշապատում (կախարդական), իրապատում (կենցաղային) և Էզոտերիկ, մետաֆիզիկական խմբերի»:

Իր հեքիաթները հեղինակը դասակարգում է երրորդ՝ Էզոտերիկ, մետաֆիզիկական խմբում: «...ներկայացնում են իմ կողմից մշակված՝ երրորդ խմբին պատկանող Բարձր Հայքի հեքիաթների մի փունջ» (Խեչոյան 3):

«Էզոտերիկ կամ մետաֆիզիկական խմբի հեքիաթներ» դասակարգումը նորություն է հայ գրական հեքիաթի աշխարհում: Էզոտերիզմի և մետաֆիզիկայի

հիմնական նպատակն է հնարավորինս խորությամբ հասնել իրերի և երևույթների հստակ ու անաղարտ ընկալմանը: Խեչոյանի հեքիաթները միտված են ներքին տարածքների բացահայտմանը հեքիաթի արտաքին ձևի պահպանման սկզբունքով: Կարելի է ասել, որ այս հեքիաթները հրաշապատում և իրապատում հեքիաթների ժանրային միաձուլումն են: Խեչոյանի հեքիաթներում իրականը նույնքան գերբնական է, որքան գերբնականը՝ իրական (Վարդանյան Նվարդ, Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Վարդանյան Նարինե 102):

Սույն հոդվածում ներկայացնում ենք Լևոն Խեչոյանի մշակած հեքիաթներում արքետիպերի դրսևորումները:

Խեչոյանի աշխարհում կարելի է հանդիպել շատ արքետիպեր, ինչպես նաև նորերը՝ իր անհատական արքետիպերը: Առավել ակնառու արքետիպերից կարելի է առանձնացնել հետևյալները՝ ներկայացված աղյուսակի տեսքով:

Արքետիպային կառույցների դրսևորումները «Տան պահապան հրեշտակը» հեքիաթների ժողովածուում

կենդանի կատու	1. «Թագավորը տեսնում է՝ <u>կատուն</u> իր Մարդպետին, հանդերձապետին, մատռվակներին ու պալատականներին բոլորովին բանի տեղ չի դնում, ոնց որ իր շուրջը երկրորդ, երրորդ բարձին նստել արքունի մեծավոր՝ գնում, բազմում է գահին մոտիկ դրված թագավորական թախտին ու բերանն է բացում-փակում և բեղերն է հանդարտ սրբում, վեհերոտ նայում է շուրջը հավաքվածներին»: « <u>Հարևանի սև կատուն</u> »
գայլ	2. « Նա <u>կատու</u> չէ, նա մեզ համար միանգամից և՛ հրամանատար է, և՛ զորավար, ճանապարհի տվեք, չխանգարեք երթը»: « <u>Հարևանի սև կատուն</u> »
վիշապ	3. «Դրախտից դուրս է գալիս, բարձրանում է սարերը, կածաններ է ոտքի տալիս, մեկ էլ հանդիպում է իր որոնած մահին՝ ոսկրոտ, չորացած աչքերով, խելքից պակաս մի երկար <u>գայլի</u> »: « <u>Աղվեսն ու դրախտի թակարդը</u> »
	4. « ...ծառաները ոտքի տակ բարձ են դնում, իջնում է թագավորը, մոտենում է տղային, արևի շողջը հայելուց անդրադառնում է աչքերի մեջ, ցնցվում, ետ-ետ է գնում, իսկ նա, հայելին արևին դեմ արած, էլի է գնում դեպի թագավորը: Արքան այնտեղ հանկարծ տեսնում է իրեն ու էլի ինչ-որ բան (<u>վիշապ</u>), մերկացնում է սուրը, հետո շրջվում, սկսում է փախչել, հասնում է ձորակին.... ժայռից ընկնում, մեռնում է»: « <u>Աներևույթ վիշապը</u> »
եզ	5. «Էն <u>եզները</u> , որ տեսար, դա երկիր միաբանությունն է. թե որ մի երկրի մեջ «իմ» ու «քո» եղավ, ամեն մի իշխան իրենը վերցրեց ու փախավ երկրից, գործը առաջ չի գնա»: « <u>Թագավորն ու ճգնավորը</u> »
ծառ-անտառ	6. «Այսպես, հին բարեկամների նման խոսելով, գայլիս, հասնում են դրախտի կենտրոն՝ <u>ծառին</u> , որի տակ դրված էր թակարդը»: « <u>Աղվեսն ու դրախտի թակարդը</u> »

7. «Տղան հեծնում է ձին, գնում-հասնում է անտառի մուկ խորքը: Բոլոր ծառերը տգեղ, սարսափազդու մարդիկ են՝ ծուռ ու մուռ ոտք ու ձեռներով, ահռելի գլուխներով, սև դեմքերով...»:
«Լուսնդենի հեքիաթը»

8. «Թափած այլուրը քամին թռցնում է, նրանց արանքում մի ակնթարթում անտառ է աճում, այնպես խիտ, որ ճյուղերի արանքով անգամ ծիտը չէր կարող անցնել»:
«Քարափի մեջ փակված աղջիկը»

ոսկի

9. «Դուք (ոսկի) իմ երեխեքն եք, մեծ տառապանքով, արևահարվելով, կարկտի ու անձրևի տակ մնալով, ցրտահարվելով եմ ձեզ ունեցել,-ասում է,- վաղը ջուր եմ տաքացնելու, որ բոլորիդ լողացնեմ»:
«Մուրացկանը, Յարուստը»

10. ««Վա՛յ, կոչումս վկա,- ասում է Դատավորը,-էն հացը, ես եմ կերել, ոսկու երկու շեղջն էլ ինձ է հասնում»: Որ այդպես է ասում, ոսկիները ամբողջությամբ հող են դառնում, տղան էլ դառնում է աներևույթ հրեշտակ, բարձրանում է երկինք»:
«Դատավորը»

11. «Ու դու, Աքաբ թագավոր, լսեցի՞ր արդյոք՝ ոսկին արծաթ եղավ, արծաթը՝ չուգուն, մարդն էլ, չուգունն գմբեթի տակ ապրելով, փոքրացավ»:
«Աքաբ թագավոր»

հող

12. «Արդարների տեսա, որ անգամ մարդկային բարոյականության առաջին աստիճանն էլ չէին խախտել, հանկարծամահ ոչնչանում էին, իսկ խաբեբաներն ու ամբարիշտներն իրենց կյանքն էին երկարացնում՝ կեղծիքներ անելով: Սակայն այդ էլ գիտեցա, որ նրանք երկուսն էլ հողից են ծնվել, ամենքն էլ հող են դառնալու»:
«Ճանապարհորդը»

արև

13. «Եվ ինչ որ լինում է մարդկությանը, նույնը պատահում է անասունների հետ, և նրանց շուկնը մեկ է, ամեն ինչ ունայն է, իսկ արեգակը հավիտյան կա»:
«Ճանապարհորդը»

14. «Մեկ էլ ինչ տեսնի, երանի տեսնողի աչքերին, մի ջահել աղջիկ, կլիներ տասնվեց-տասնյոթ տարեկան, աղջիկ մի ասի, մի մոմե պատկեր ասա, մի հուրի-փերի, որ արևին ասում է՝ դու մի ելնի, իմ լուսնդեն դեմքը աշխարհին լույս կտա, ոչ ուտես, ոչ խմես, նրա քայլվածքին նայես»:
«Քարափի մեջ փակված աղջիկը»

15. «Երբ իջնում էին փողոցով, տեսնում են դարպասից մի գեղեցիկ աղջիկ է դուրս գալիս: Աղջիկ, բայց ի՞նչ աղջիկ, թե արև ասես, արևն ի՞նչ, թե լուսնյակ ասես, լուսնյակն ի՞նչ»:
«Խոսքով թագավոր»

կին (անիմա)

16. «-Թագավորն ապրած կենա, եթե ճիշտ էր Ձեր այն անգամ ասածը, թե միևնույն գեղեցկության համար (վարդ) սերունդների՝ կուրորեն կրկնվող զոհվելու բնագործ ինձ էլ կսպանի, ապա այդ

անմահական գեղեցկության պատճառով (Կին)՝ որդից մինչև թագավոր ոչնչանալու օրենքի անհրաժեշտությունը քեզ էլ չի խնայի»:

«Անմահական վարդը»

17. «Սև խավար զանգվածի ծնողն էր (Կին), հիմա էլ թանձր մուրի տեսքով դեպի ձեր մահճական էր հոսում՝ լույսի մեջ ապրող ձեր մարմիններին մահաշունչ խայթոցը դնելու համար»:

«Քարափի մեջ փակված աղջիկը»

18. «Պառավը մնացածը կտվորեցնի, թե ինչ է անելու»:

«Քարափի մեջ փակված աղջիկը»

19. «....-իմ երագում էլ մի եղևիկ էր հայտնվել, սուրում էր անծայրածիր դաշտերով, ես էլ՝ ետևից, այնքան հետապնդեցի՝ գնաց մի սարի դեմ առավ ու այլևս տեղ չունեի գնալու, հանկարծ գեղեցկուհի աղջիկ դարձավ»:

«Խոսքով թագավոր»

քար

20. «Քարը հանեց, դրեց լուսամուտի գոգին, ճրագի պես լույս տվեց, զվարթությամբ լցվեց տունը»:

«Տան պահապան հրեշտակը»

21. «-Քարը երկրի ժողովուրդն է ու աշխատավորն է՝ բանում, ստեղծում, լցնում է աշխարհը»:

«Թագավորն ու ճգնավորը»

22. «Ձեզանից հրաժարվում և վերադառնում եմ ժամանակի խորքը՝ որտեղից եկել եմ: Ահա, ինձ վրա իջած փոշին կիստանա, նրա հետ ես էլ քար կդառնամ ու կվերադառնամ սկիզբը՝ մեկ ուրիշ ընտանիք բերելու»:

«Տան պահապան հրեշտակը»

23. «Այս քարեղեն պատկերը տար աչքիս առաջից, չվնասես, բայ պահիր իրեն արժանի մի տեղ»:

«Քարափի մեջ փակված աղջիկը»

24. «Քար, տեղ տուր թագավորի աղջկան և այնքան պահե քո խավար ներսում, մինչև ինքն էլ մթնի ու սևածավալ դառնա, թող ազատագրվի այն ժամանակ, երբ ծիծեռնակը նրան որոնող տղային ճանապարհ ցույց կտա»:

«Քարափի մեջ փակված աղջիկը»

ծերունի

25. «Դժվար է ինձ ճանաչելը, ասեմ էլ, չես ճանաչի ... Ես այս տան պահապան հրեշտակն եմ»:

«Տան պահապան հրեշտակը»

26. «Մի ցրտաշունչ, հողմազարկ օր ճամփեգրին՝ շառի տակ նստած Գաբրիել հրեշտակին է տեսնում:

Տղան զարմանում է, թե,-այլ հայւնոր, դու ինչի՞ց իմացար, որ ես թագավորի տղա եմ»:

«Ճանապարհորդը»

27. «Ծերունին աղյուսակներին նայելով՝ բարձրաձայն կարդում էր խորհուրդը և մի առարկան փոխակերպում էր մեկ ուրիշի՝ անագն արծաթ էր սարքում, արծաթը՝ ոսկի...»:

«Սև, ճերմակ»

ծիծեռնակ

28. «...Դու էլ իմ պատմածից, եթե չես հիասթափվել, ու ասածներդ ճիշտ են, և էլի սիրում ես ինձ, գնա, որոնիր այն ծիծեռնակներին, որոնք գիտեն ինձ ազատագրելու գաղտնիքը»:

«Քարափի մեջ փակված աղջիկը»

հաց

29. «Սա այն հացն է, որի համար շատ գորավարներ են գլուխները հողին դրել, գիտնականներ են քունը կորցրել, կանայք են ամուսիններին դավաճանել, գողերը կոկորդներ են կտրել, բանաստեղծներ են իրենց տողերից հրաժարվել, ամրակուռ բերդերի ու քաղաքների դարպասների բանալիներ են թշնամիներին հանձնվել, ահա դրախտը, ահա նրա հացը, ահա դմակը՝ ինձ սպասող մահը»:

«Աղվեսն ու դրախտի թակարդը»

Ընթերցողը կենտրոնանում է ոչ միայն բառի վրա, այլև ուշադրություն է դարձնում պատկերային համակարգին: Պատկերաստեղծ միջոցներից մեկը համեմատությունն է, որի օգնությամբ կարելի է պատկերացում կազմել առաջին օբյեկտի մասին երկրորդի միջոցով:

Գրական համեմատությունն ապահովում է տեքստի գեղագիտական կողմն ու արտահայտչականությունը: Գրական պատկերը պատկերների համակարգ է, որն ընդգծելու համար հեղինակն օգտագործում է ոճական միջոցներ: Դրանցից են անհատական (պատահական) համեմատությունները, որոնք հեղինակային նորաբանություններ են:

Հեղինակային համեմատություններում համեմատության առարկան առավել հաճախ կենդանական աշխարհի ներկայացուցիչ է: Սա իր բացատրությունն ունի. մարդու առաջին ընկալումները անիմիստական էին:

Կենդանու կերպարին դիմելը նախնադարյան մարդու համար ամենաբնական ու հասկանալի միջոցն էր աշխարհի ճանաչման գործընթացում: Անիմիզմը հոգևոր ուսմունք է, ըստ որի մարդը վերակենդանացնում է բնության երևույթները՝ դրանց վերագրելով առասպելական ուժ:

Անիմիզմը անիմիզմի մի մասն է: Դա մարդու և կենդանիների նախնիների ուսումնասիրությունն է: Նախնադարյան հասարակության մեջ յուրաքանչյուր ցեղի ներկայացուցիչ պաշտում էր այս կամ այն կենդանուն, որը համարվում էր ցեղի անդամների ընդհանուր նախահայրը: Դա նաև կենդանու՝ տոտեմի հետ նույնանալու միջոց էր՝ նրա պատկերը քարի վրա փորագրելով, ծեսեր կազմակերպելով, կաշվից պատրաստված հագուստ կրելով, սուրբ կենդանի էր:

Ժամանակի ընթացքում մարդու և կենդանու միջև հաստատվեցին հիերարխիական հարաբերություններ, որոնք փոփոխություններ առաջացրին, այդ թվում՝ ընկալման մեջ: Կենդանիների հանդեպ հետաքրքրությունը միայն երեխաներն ունեն, որոնց համար կենդանիները հզոր են, օժտված մեծ ուժով, որն ամենևին էլ առասպելական չէ: Այդ իսկ պատճառով համեմատության առարկա կենդանու կերպարը վկայակոչում է կենդանական աշխարհի ներկայացուցիչների աստվածացման պահպանումը:

«Հարևանի սև կատուն» հեքիաթում սև կատուն գլխավոր կերպարն է, որի սիմվոլիկան կարելի է ներկայացնել մի քանի տեսանկյունից, սակայն բոլոր նշանակություններն ունեն բացասական կողմնորոշում:

Ըստ «Dictionnaire des symboles»-ի՝ «Կատուն մեկ մշակույթից մյուսն ունի տարբեր նշանակություն, ինչպես դրական, այնպես էլ բացասական մենկաբանություններ: Մասնավորապես, սև կատուն շատ ավանդույթներում խորհրդանշում է խավարն ու մահը: Կատուն երբեմն ընկալվում է որպես անդրաշխարհի ծառա: Մեռելները կամրջով են անցնում երկինք բարձրանալու համար, իսկ կամրջի տակ դժոխքի խորխորատն է: Դեպի երկինք մուտքի մոտ վահանով և Նիզակով զինված պահապանն է կանգնած, կատուն նրան օգնում է մեղավոր հոգիներին դժոխային ջրերը Նետելու համար» (Chevalier, Gheerbrant 215):

Սև կատուն այս հեքիաթում խորհրդանշում է քառսային կյանքը, որը հետապնդում է հեքիաթի ամուսին հերոսներին, կյանքի ստվեր, որ պատել է

մարդկանց, անընդհատ ուղեկից է տանտերերին: Յեքիաթագիրը, Նաև սև «հերոս» կատվին անձնավորելով, համեմատում է արքունի մեծավորին. «Թագավորը տեսնում է՝ կատուն իր Մարդպետին, հանդերձապետին, մատռվակներին ու պալատականներին բոլորովին բանի տեղ չի դնում, ոնց որ իր շուրջը երկրորդ, երրորդ, բարձին Նստեղ արքունի մեծավոր՝ գնում, բազմում է գահին մոտիկ դրված թագավորական թախտին ու բերանն է բացում-փակում և բեղերն է հանդարտ սրբում, վեհերոտ Նայում է շուրջը հավաքվածներին» (Խեչոյան 7): Յեղիսակը, սև կատվին մեծավորի հետ համեմատելով, բացահայտ տեքստով ներկայացնում է իշխանության ներկայացուցիչների և կատվի նմանությունը՝ վնասող, կծող, չարություն և սարսափ տարածող, մարդկանց կյանքը մղձավանջի վերածող ամենակարող ուժ, ինչպես որ հեքիաթում հերոսները կատվի պատճառով տագնապի մեջ էին ապրում: Յետաքրքիր է՝ սև կատուն շատ արագ ընդունվում է արքայի, արքունիի կողմից, դառնում իրենց համախոհը՝ վզից կախ ունենալով արքայի կողմից տրամադրված հրովարտակը: Պատահական չէ Նաև սև կատվի ծովային ճանապարհորդությունը: Ըստ Աստվածաշնչի՝ ծովով են գնում «այն աշխարհ» կամ աստվածներն են ծովով գալիս: Սև կատուն կարծես թե առասպելական ուժ ուներ, և դեռևս անիմիստական պատկերացումներով թագավորը մտածել էր, թե դա ինչ-որ Նշան է: Սև կատուն այս հեքիաթում խավարի, սովերի, քաոսի արքետիպն է:

Խեչոյանն իր հեքիաթներում հաճախ է անդրադառնում մարդ-կենդանի, կենդանի-մարդ, մարդ-բնություն փոխակերպության թեմային: «Աղվեսն ու դրախտի թակարդը» հեքիաթում աղվես-մարդ և գայլ-մարդ փոխակերպությունն է: Աղվեսը գիտուն է, գրքեր է գրում, գայլն էլ իր հերթին «խոսում է»: Յեքիաթում աղվեսն իր տեղը չի գտնում այս հասարակությունում և գնում է՝ իր «դրախտը» փնտրելու: Աղվեսը հասկանում է, որ արդեն դրախտում է այն ժամանակ, երբ տեսնում է շուրջբոլորը տիրող կատարյալ բնությունն իր բերք ու բարիքով (դրախտը՝ որպես հոգու հանգստության, կատարելության արքետիպ): Մարդը բնությունից հեռացել է, և նման քայլով հեղինակը վերստեղծել է մարդ-բնություն տարանջատված կապը՝ հերոսին՝ աղվեսին, ուղարկելով դրախտի որոնման ճանապարհով: Աղվեսի փախուստը Նաև օտարում է, ֆիզիկական փախուստ իրականությունից:

Յեքիաթի երկրորդ հերոսը՝ գայլը, հանդես է գալիս որպես մահաբեր, մահվան արքետիպ: «Դրախտից դուրս է գալիս, բարձրանում է սարերը, կածաններ է ոտքի տալիս, մեկ էլ հանդիպում է իր որոնած մահին՝ ոսկրոտ, չորացած աչքերով, խեղճից պակաս մի երկար գայլի» (Խեչոյան 11): Մահն, ըստ հեղինակի, ոսկրոտ, չորացած աչքերով, քաղցած, գայլն է: «Գայլը հոշոտող կենդանի է. մասնավորապես, երախը արքետիպային պատկեր է՝ կապված ցերեկ-գիշեր, մահ-կյանք փոփոխության երևույթի հետ: Գայլի երախը խորհրդանշում է գիշերը, քարանձավը, անդրաշխարհը, իսկ երախից ազատվելը կարծես լուսաբացն է, դժոխք իջնելուն հաջորդող մեկնարկային լույսը, ավրորան» (Chevalier, Gheerbrant 583):

«Թագավորն ու ճգնավորը» հեքիաթում հեղինակն այլաբանորեն է անդրադարձել եզանը: Ըստ հեղինակի՝ եզը համերաշխության, միաբանության արքետիպն է: Ի տարբերություն ցուլի՝ եզը հանգստության, խաղաղության, ուժի խորհրդանիշն է: Եզան պոզերը խորհրդանշում են ուժն ու անհաղթելիությունը: «Էն եզները, որ տեսար, դա երկիր միաբանությունն է. թե որ մի երկրի մեջ «իմ» ու «քո» եղավ, ամեն մի իշխան իրենը վերցրեց ու փախավ երկրից, գործը առաջ չի գնա» (Խեչոյան 42): Եզը երկրի միաբանությունն է:

Լևոն Խեչոյանի ձեռագիրը թերևս յուրօրինակ է և խորիմաստ, քանի որ հեքիաթները խոհափիլիսոփայական և ուսուցողական բնույթ ունեն: «Քարափի մեջ փակված աղջիկը» հեքիաթի առանցքային թեմաներից մեկը կրկին կենդանի-մարդ փոխակերպությունն է: Դեռ հանուն սիրո ցանկանում էր կերպարանափոխվել, իր սևածավալ բնույթից ազատվել: Սև խավար զանգվածի ծնողը սկզբում

փոխակերպվում է մոծակի՝ վնաս հասցնելով ձիուն, իսկ կեսգիշերին փոխակերպվում է օձի, որ նորապսակների լույս մարմինները մահաշունչ խայթոցով սպաներ:

«Առհասարակ օձը տարբերվում է մյուս բոլոր կենդանիներից: Կարելի է ասել, որ մարդն ու օձը իրար հակադրվում են, կարծես թշնամիներ լինեն: Սակայն միմյանց հակադրվելուն զուգահեռ մարդու մեջ օձին բնորոշ առանձնահատկություններ կան, որոնք տարածում են վախ, տագնապ, խավար: Օձը մարմնավորում է ներքին հոգեկանի մութ կողմը, որն անհասկանալի է և խորհրդավոր: Ընդ որում, օձը շարունակում է մնալ կյանքի և երևակայության աղբյուրների հետ կապված հիմնարար արքետիպը, որն ամբողջ աշխարհում շարունակում է պահպանել իր թվացյալ խորհրդանշական արժեքականությունը» (Chevalier, Gheerbrant 879):

Խեչոյանի հեքիաթներում ուշագրավ է բնության էլեմենտների՝ որպես հավերժական երևույթների անդրադարձը, որոնք հեղինակը յուրովի է օգտագործել: «Աղվեսն ու դրախտի թակարդը» հեքիաթում հեղինակն անդրադառնում է բնության կարևոր էլեմենտներից մեկի՝ ծառի՝ որպես կայունության արքետիպին: Որպես կյանքի խորհրդանիշ՝ ծառը հավերժական զարգացման մեջ է և դեպի երկինք բարձրանալով՝ առաջացնում է ուղղահայացության սիմվոլիկան: Մյուս կողմից այն նաև խորհրդանշում է տիեզերական էվոլյուցիայի ցիկլային բնույթը՝ մահ և վերածնունդ: Հատկապես սաղարթախիտ ծառերը խորհրդանշում են ցիկլը՝ ամեն տարի տերևաթափ լինելով և տերևներով ծածկվելով: Ծառը նաև կապվում է տիեզերքի երեք շերտերին. ստորգետնյա աշխարհին՝ արմատների միջոցով, երկրի մակերեսին՝ բնով, ստորին ճյուղերով, բարձունքին՝ վերին ճյուղերով և գագաթով՝ պարուրված երկնքի լույսով: (Chevalier, Gheerbrant 62-63): Մարդն անցողիկ է, իսկ ծառը միշտ իր տեղում է, սլացիկ: Հեքիաթում ծառը համեմատվում է դրախտի կենտրոնին. «Այսպես, հին բարեկամների նման խոսելով, գալիս, հասնում են դրախտի կենտրոն՝ ծառին, որի տակ դրված էր թակարդը» (Խեչոյան 12): Եվ՛ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով ծառը կրկին բնության այն կարևոր մասնիկ-հենքն է՝ դրախտը, որը հարատև է, կայուն, երբեք չի անհետանալու:

Լևոն Խեչոյանի հեքիաթներում հաճախ կարելի է հանդիպել անտառի և անտառանման մութ տեղանքների, որոնք, որպես արքետիպային կառույց, դժոխքի, խառնակության խորհրդանիշ են: «Տղան հեծնում է ձին, գնում-հասնում է անտառի մութ խորքը: Բոլոր ծառերը տգեղ, սարսափազդու մարդիկ են՝ ծուռ ու մուռ ոտք ու ձեռներով, ահռելի գլուխներով, սև դեմքերով...» (Խեչոյան 59): Այս տողերը կարծես հիշեցնում են Դանթեի դժոխքի պարունակները՝ վախ, սարսափ, աղմուկ-աղաղակ, հավիտենական տառապանքի մատնված մարդիկ, որոնք բղավում են անկարողությունից և դատապարտվածությունից: Հենց նույն կառույցում միաժամանակ արտացոլվել է նաև ծառի արքետիպը: Հեքիաթում տեսանելի է մարդ-ծառ փոխակերպումը. առաջադրանքը չկատարելու արդյունքում մարդը կարող է վերածվել ծառի:

Դժոխքի, քաոսի արքետիպային դրսևորումը կարող է արտահայտվել տեղանքի միջոցով: «Քարափի մեջ փակված աղջիկը» հեքիաթում քարափն, ուր աղջկան փակել էին, դժոխքի, քաոսի արքետիպն է, որին հակադրվում է ճերմակը՝ դրախտը, բարեկեցիկ կյանքը, այն լույսն, որը նրան արգելված էր: Հեքիաթում դժոխքը դրսևորվել է նաև «Սև բերդի» միջոցով: Դժոխքն ասոցացվում է մթությանը, սևին, ուր չկա արև, լույս: Անտառը նույնպես խորհրդանշական է՝ որպես փորձության արքետիպ: Այն այնքան դժվարանցանելի էր, որտեղով անգամ ծիտը չէր կարող անցնել: Անտառն իր մթությամբ, իր խոր արմատավորվածությամբ խորհրդանշում է անգիտակցականը: «Ըստ Յունգի՝ անտառի սարսափները, ինչպես խուճապային սարսափները, ոգեշնչված են անգիտակցականի բացահայտումների վախից» (Chevalier, Gheerbrant 456):

Դժոխքի արքետիպը «Ճանապարհորդը» հեքիաթում արտահայտվել է կնոջ բորոտությամբ, որը կրկին փորձություն է խորհրդանշում: Բորոտության հիմքում

դժոխքի այլաբանական արքետիպն է, քանի որ բոլորտությունը արյունոտ է և սև անցքերով, որը դժոխքն է հիշեցնում: Բոլորտ հերոսուհու (կնոջ) հիմքում անխմայի արքետիպն է՝ պայքարող տեսակ, ով միգուցե անտեսվել էր բոլորի կողմից, սակայն չհանձնվող տեսակով, ի վերջո, երջանիկ կյանք ունեցավ:

«Ամմահական վարդը» հեքիաթում նույնպես հեղինակն անդրադարձել է կնոջ՝ անխմայի արքետիպին: Արդեն իսկ վարդին «ամմահական» կոչելով՝ հեղինակն արքետիպային այլաբանություն է հաղորդել կառույցին: Թագավորից մինչև պալատական ուշիուշով սպասում են ամեն գարուն հոտավետ վարդի ծաղկմանը, սակայն այդպես էլ չեն տեսնում, քանզի ամեն տարի որդը հասցնում է հողից դուրս գալ և այն ուտել: Առաջին հերթին, որպես հավերժության արքետիպ, արտացոլվում է կյանքի կրկնվող ցիկլը: Ամեն տարի սպասում են նույն վարդի ծաղկմանը: Հեղինակը հիշեցնում է կյանքի կրկնվող ընթացքը: Պատահական չէ վարդի ընտրությունը, քանի որ վերջինիս ծաղկման շրջանը գարունն է, որն ազդարարում է նոր կյանքի սկիզբ, վերածնունդ: Ամբողջ թագավորությունը, ի դեմս թագավորի, խոր թախծի մեջ է. «...թագավորի տիրությունն էլ մագերի սպիտակ ավելանալու հետ ավելի է սաստկանում, քանի որ մոտալուտ ծերության պատճառով ամեն մարդ ձգտում է Ամմահական վարդի անհայտ գեղեցկության հետ հանդիպելու մասին» (Խեչոյան 26): Ամմահական վարդի՝ հավերժության գաղափարից զատ նաև հենց անմահության գաղափարն է ընկած, քանզի բնության յուրաքանչյուր էլեմենտ, լինի ծաղիկ, քար թե ծառ, մշտնջենական է, իսկ մարդն անցողիկ է: Հեղինակը վարդը ասոցացրել է կնոջ կերպարին. «-Թագավորն ապրած կենա, եթե ճիշտ էր Ձեր այն անգամ ասածը, թե միևնույն գեղեցկության համար (վարդ) սերունդների՝ կուրորեն կրկնվող զոհվելու բնագործ ինձ էլ կսպանի, ապա այդ անմահական գեղեցկության պատճառով (կին)՝ որդից մինչև թագավոր ոչնչանալու օրենքի անհրաժեշտությունը քեզ էլ չի խնայի» (Խեչոյան 28): Կնոջը վարդին ասոցացնելու նմանության սեմը գեղեցկությունն է: Վարդը խորհրդանշում է բացարձակ կատարելություն, անթերի ձեռքբերում, հոգի, սիրտ և սեր: Կարելի է այն դիտարկել որպես մանդալա և համարել միստիկ կենտրոն: Հաճախ թվում է, թե վարդը թափված արյան հետ իր փոխհարաբերությունների շնորհիվ առեղծվածային վերածննդի խորհրդանշն է: Պարտիզայանը նույնքան գերված էր թագուհու գեղեցկությամբ, որքան թագավորը և մյուսները՝ վարդի բույրով, տեսքով:

Հետաքրքիր է՝ Լևոն Խեչոյանը հեքիաթներում անդրադարձել է նաև քարին: «Տան պահապան հրեշտակը» հեքիաթում քարը կարծես այն լուսատու դարձան էր, որ ընտանիքին փրկեց ունեցած հիվանդությունից, գժությունից: «Քարը հանեց, դրեց լուսամուտի գոգին, ճրագի պես լույս տվեց, զվարթությամբ լցվեց տունը» (Խեչոյան 23): Ավանդույթի համաձայն քարը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Հոգու և քարի միջև սերտ հարաբերություն կա: Համաձայն Պրոմեթևսի լեգենդի՝ քարերը պահպանել են մարդկային հոտը: «Քարն ու մարդը ներկայացնում են բարձրանալու և իջնելու կրկնակի շարժում: Մարդը ծնվում է Աստծուց և վերադառնում Աստծուն: Բնական, անտաշ քարն իջնում է երկնքից փոխակերպված, բարձրանում է դեպի վեր (Chevalier, Gheerbrant 751): Ըստ Ժան-Պոլ Ռուսի ուսումնասիրության՝ քարի խորհրդանշական իմաստը հակադրվում է ծառին: Քարը հավերժական է, այն անփոփոխ կյանքի խորհրդանշն է, մինչդեռ ծառը ենթարկվում է կյանքի և մահվան փոփոխության, բայց որն ունի հավերժական վերածննդի անհավատալի շնորհ, դիմադրիկ կյանքի խորհրդանշն է» (Chevalier, Gheerbrant 753): Քարը կենսատու է, բերրիություն և լույս է հաղորդում ընտանիքին և փրկում սովից, աղքատությունից: «Թագավորն ու ճգնավորը» հեքիաթում նույնպես անդրադարձ է կատարվում քարի՝ որպես երկրի, ժողովրդի, աշխատանքի սիմվոլ:

«-Քարը երկրի ժողովուրդն է ու աշխատավորն է՝ բանում, ստեղծում, լցնում է աշխարհը» (Խեչոյան 43):

Ուշագրավ է նաև հողի այլաբանությունը, որը վերածվել է արքեոտիպի, քանի որ հիմքում զգայական, ենթագիտակցական դաշտն է: Հողն աշխարհի չորս տարերքներից մեկն է, աստվածացվել է և անգամ խորհրդանշել կանացի սկիզբը՝ երկնքի և երկրի միասնության մեջ հանդես գալով երկրային կնոջ մարմնավորմամբ: Հետաքրքիր է նաև, որ այն միջանկյալ գոտի է, տարածք անդրաշխարհի և երկնքի միջև, նաև տիեզերքի կենտրոնն է և բնութագրվում է իր մաքրությամբ: Հեղինակը մարդուն հողին է ասոցացնում, մարդը հողածին է: «Արդարների տեսա, որ անգամ մարդկային բարոյականության առաջին աստիճանն էլ չէին խախտել, հանկարծամահ ոչնչանում էին, իսկ խաբեբաներն ու ամբարիշտներն իրենց կյանքն էին երկարացնում՝ կեղծիքներ անելով: Սակայն այդ էլ գիտեցա, որ նրանք երկուսն էլ հողից են ծնվել, ամենքն էլ հող են դառնալու» (Խեչոյան 20):

Հեղինակն անդրադարձել է նաև մարդ-կենդանի հարաբերությունների ներդաշնակությանը՝ կարծես ցանկանալով, որ կրկին վերահաստատվի մարդ-բնություն-կենդանական աշխարհի կապը: Հերոսը փնտրտուքների արդյունքում եզրակացնում է, որ և՛ մարդիկ, և՛ կենդանիները, ի վերջո, նույն վախճանն են ունենում: Արծարծվել է նաև կյանքի անցողիկության գաղափարը, որը դրսևորվել է մահվան արքեոտիպով: Մահվանը հակադրվում է արևը՝ որպես հավիտենության արքեոտիպ: «Եվ ինչ որ լինում է մարդկությանը, նույնը պատահում է անասունների հետ, և նրանց շունչը մեկ է, ամեն ինչ ունայն է, իսկ արեգակը հավիտյան կա» (Խեչոյան 18): Լևոն Խեչոյանն իր հեքիաթներում բազմիցս անդրադառնում է օտարման թեմային, ընդ որում, հենց ֆիզիկական օտարմանը: «Սև, ճերմակ» հեքիաթում երկու հերոսների՝ հոր և որդու ճամփա ընկնելու միջոցով, հեղինակն անդրադարձել է օտարման թեմային դատապարտվածության արքեոտիպի դրսևորմամբ: Պատահական չէ ծերունու արտաբերած խոսքը: Վերջինս, բնության հետ ներդաշնակ, քարավաի խորքում, լուռ, հանգիստ նստած և հանկարծ լռությունն ընդհատվում է հոր և որդու հանած աղմուկով: «Ամենուր խաղաղություն է, իսկ դուք այդքան աղմկում եք» (Խեչոյան 30): Այստեղ հեղինակը հակադրում է կոսմոսն ու քաոսը: Հավերժական բնությունը, որ մշտական խաղաղություն է, իսկ ամբոխը, մարդիկ, հասարակությունը քաոսաբեր են: Սակայն հեղինակի մոտքերը միայն դրական են. 5 տարի բնության մեջ ապրելուց հետո Օվակը Օխայ ծերունու պես միաձուլվում է բնությանը:

«Դատավորը» հեքիաթում հեղինակն անդրադարձել է ապոկալիպսիսի թեմային վերստին մարդ-բնություն ներդաշնակություն վերահաստատելու համար: Զաղաքում քաոս էր...երաշտ, որը խաթարել էր անգամ մարդ-մարդ փոխհարաբերությունները: Գլխավոր հերոսը փրկություն գտնելու համար ճանապարհ է ընկնում, որով կրկին Լ. Խեչոյանը, ինչպես իր մյուս հեքիաթներում, անդրադառնում է օտարման թեմային՝ ֆիզիկական հեռացումով: Զարության, թշնամության հիմքում հացի, մսուկի պակասն էր, որոնց փնտրտուքով էլ հերոս Դատավորը բռնել էր օտարության ճանապարհը:

Հեքիաթում արծարծվում է նաև հացի գաղափարը՝ որպես սուրբ կերակուրի, ինչպես նաև արդարության, մաքրության խորհրդանիշներ:

Լևոն Խեչոյանի հեքիաթներում կան սուրբգրյան պատմություններ, Գաբրիել հրեշտակի, հրեշտակների վերաբերյալ հղումներ: Հրեշտակներն Աստծո բանակն են, դատարանը և տունը: Նրանք փոխանցում են Աստծո հրամանները, հսկում աշխարհը: Հրեշտակները կարևոր դեր են խաղում Աստվածաշնչում: Նրանց հիերարխիան կապված է Աստծո գահին նրանց մոտ լինելու հետ: Երեք գլխավոր հրեշտակապետներն են Միքայելը (վիշապների հաղթող), Գաբրիելը (պատգամաբեր և նախաձեռնող), Ռաֆայելը (բժիշկների և ճանապարհորդների ուղեցույց): Հրեշտակը՝ որպես սուրհանդակ, միշտ բարի լուր է բերում հոգուն (Chevalier, Gheerbrant 45): «Տան պահապան հրեշտակը» հեքիաթում հրեշտակը, երկու ընկույզ տալով, ուղղորդեց հերոսին դեպի փրկություն և մի ողջ ընտանիքի ազատություն,

լուսավորություն և վերածնունդ: Խորհրդանշական է նաև «Խմաստուն ծերունու» արքեպիսկոպի անդրադարձը շատ հեքիաթներում՝ որպես տան պահապան հրեշտակ «Տան պահապան հրեշտակը» հեքիաթում, ավեր Օխայը՝ որպես միջակայի հերոս, իմաստության արքեպիսկոպ «Սև, ճերմակ» հեքիաթում, «Դատավորը» հեքիաթում էլ տասնհինգամյա տղան մարմնավորում է «Խմաստուն ծերունու» արքեպիսկոպին կերպարը, որը, հեքիաթի վերջում իրապես դատելով իրավիճակը, դառնում է հրեշտակ և անհետանում:

Լևոն Խեչոյանի հեքիաթներից յուրաքանչյուրը մի ամբողջական «պատկեր» է: Այդ «գլոբալ պատկերում» հավերժական Էությունները (կենդանի, հող, արև, ծառ, մարդ) լի են, իսկ գրողն իր յուրահատուկ ձեռագրով նոր շունչ է տվել այս արքեպիսկոպին՝ ստեղծելով իր հեղինակային արքեպիսկոպերը: Ուստի պարզ է դառնում, որ հեղինակի կարևորագույն նպատակներից է բնության տարրերի շնորհիվ վերահաստատել մարդ-բնություն խեղաթյուրված կապը՝ քառսը վերածելով կոսմոսի: Խեչոյանի հերոսներն իրական կյանքից են դուրս եկել, և նրա մտքերը միայն դրական ելևէջներով են լի, քանի որ հեքիաթներում մշտապես տեսանելի է բարու և չարի պայքարը. քառսը՝ կոսմոսի դեմ, խավարը՝ լույսի, որոնք մեծ մասամբ ավարտվում են բարու հաղթանակով:

Եզրակացություններ

Որպես եզրակացություն նշենք.

- Արքեպիսկոպերը հայտնվում են միջերում, ինչպես նաև երազներում, ուր ձևավորում են մշակույթների ու մտածելակերպերի խորհրդանշական կարգեր, ապա ուղղորդում առարկան դեպի անհատականացման:
- Արքեպիսկոպերը նախապատրաստում են գործողությունների և պատկերաստեղծմանը:
- Արքեպիսկոպերը երևակայության, վերհուշի, հիշողության, երազի, տեսիլքի, միջի և հեքիաթի ձևով դրսևորվում են հոգեկան և զգայական աշխարհում:
- Գրական ստեղծագործությունը արքեպիսկոպերի դրսևորման լավագույն միջոցն է, քանի որ հավաքական անգիտակցականի նախնական պատկերներն այնտեղ իդեալական արտացոլում են գտնում:
- Գրական պատկերը պատկերների համակարգ է, որն ընդգծելու համար հեղինակն օգտագործում է ոճական միջոցներ: Դրանցից են անհատական (պատահական) համեմատությունները, որոնք հեղինակային նորաբանություններ են:
- Լևոն Խեչոյանի հեքիաթներից յուրաքանչյուրը մի ամբողջական «պատկեր» է: Այդ «գլոբալ պատկերում» հավերժական Էությունները (կենդանի, հող, արև, ծառ, մարդ) լի են, իսկ գրողն իր յուրահատուկ ձեռագրով նոր շունչ է տվել այս արքեպիսկոպին՝ ստեղծելով իր անձնական արքեպիսկոպերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեքմեզյան, Ավարդ. *Միջակիրառության բնույթը արդի հայ արձակում*, ԵՊՀ հրատ., Երևան, 2007:
2. Խեչոյան, Լևոն. *Տան պահապան հրեշտակը*, «Անահիտ» հրատ., Երևան, 2002:
3. Վարդանյան Նվարդ, Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Ավարդ, Վարդանյան Նարինե. *Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները*, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2015:
4. Chevalier Jean, Gheerbrant Alain. *Dictionnaire des symboles*, Éditions Robert Laffont, S.A. et Éditions Jupiter, Paris, 1982.

5. Jung Carl Gustav, Kerenyi Karl.
<https://press.princeton.edu/books/paperback/9780691017563/essays-on-a-science-of-mythology>, Paris, 1993.
6. Jung, Carl Gustav. *L'homme à la découverte de son âme*, Paris, Payot, 1962.
7. Мелетинский, Елеазар. *Поэтика мифа*, М., 1976.
8. Юнг, Карл. *Избранное*, Минск, 1998.

WORKS CITED

1. Beqmezyan Alvard. Mifakirarutyan bnuyty ardi hay ardzakum, YePH hrat., Yerevan, 2007, [The Nature of Myth Usage in Modern Armenian Prose]. (in Armenian)
2. Xechoyan Levon. Tan pahapan hreshtaky, «Anahit» hrat., Yerevan, 2002, [The Guardian Angel of the House]. (in Armenian)
3. Vardanyan Nvard, Semirjyan-Beqmezyan Alvard, Vardanyan Narine. Hay jhoghovrdakan yev grakan heqati ardi himnaxndirnery, HH GAA gitakrtakan mijazgayin kentron, 2015, [Current Issues of Armenian Folk and Literary Fairy Tale]. (in Armenian)
4. CHEVALIER Jean, GHEERBRANT Alain. Dictionnaire des symboles, Éditions Robert Laffont, S.A. et Éditions Jupiter, Paris, 1982, [Dictionary of Symbols, Editions Robert Laffont, S.A. and Editions Jupiter]. (in French)
5. Jung Carl Gustav. *L'homme à la découverte de son âme*, Paris, Payot, 1962, [Modern Man in Search of a Soul]. (In French)
6. Meletinskiy Yeleazar. *Poetika mifa*, M., 1976, [The Poetics of Myth]. (in Russian)
7. Yung Karl. *Izbrannoye*, Minsk, 1998 [Selected Writings]. (in Russian)

THE ARCHETYPE IN LEVON KHECHOYAN'S FAIRY TALES IN THE «GUARDIAN ANGEL OF THE HOUSE» COLLECTION

LIANNA BAGHDASARYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology,
Chair of History of Armenian Literature and Theory of Literature after
Academician Hrant Tamrazyan, Ph.D. Student;
Lecturer at the Chair of French Philology, Faculty of European Languages and
Communication, Yerevan State University
Yerevan, the Republic of Armenia*

This article is an attempt to systematically research the features of archetypal structures in the fairy tales of the collection "Guardian Angel of the House" by the novelist Levon Khechoyan. Archetypes, as phenomena of the collective unconscious, are the prerequisites for image creation and are conveyed in the artistic consciousness through an image, symbol, metaphor.

The purpose of the article is to highlight archetypal universal images in Levon Khechoyan's fairy tales on the basis of being a part of each literary creation.

The fairy tale, as a genre of folklore, is the best medium for the manifestation of archetypes, full of archetypal "global" images. Archetypal images, in particular, appearing in fairy tales, are essentially the carrier of the general ideas of the literary work.

Khechoyan's fairy tales are rich in "pearls of the soul" - archetypes, so the task was to highlight the archetypes in the comparative structures shown in the fairy tales of the "Guardian Angel of the House" collection, which are presented in the form of a table in the article, as well as to analyze the new ones, the author's individual archetypes.

Analytical, interpretive, and descriptive methods were used in the article.

If we parallel the fairy tales of other cultures, the Armenian literary fairy tale shows unique characteristics, and the fairy tales developed by Levon Khechoyan present a unique harmony of reality and fantasy. His fairy tales are a concentration of eternal beings: water, man, animal, etc. In addition, the author often refers to the representatives of the animal world in order to reestablish the interrupted connection between man and nature.

Keywords: *Unconscious, archetype, individual archetype, fairy tale, Levon Khechoyan, image system, primordial image, collective image, symbol.*

АРХЕТИП В СКАЗКАХ СБОРНИКА «АНГЕЛ-ХРАНИТЕЛЬ ДОМА» ЛЕВОНА ХЕЧОЯНА

ЛИАННА БАГДАСАРЯН

*соискатель кафедры истории армянской литературы и теории литературы
им. академика Г. Тамразяна факультета армянской филологии
Ереванского государственного университета,
преподаватель кафедры французской филологии факультета европейских
языков и коммуникации Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Данная статья представляет собой попытку системного исследования особенностей архетипических структур в сказках сборника «Ангел-хранитель дома» прозаика Левона Хечояна. Архетипы как явления коллективного бессознательного являются предпосылками для создания образа и проявляются в художественном сознании через образ, символ, метафору.

Цель статьи – выделить архетипические универсальные образы в сказках Левона Хечояна, основываясь на том, что архетип является составляющей любого литературного произведения.

Сказка как жанр фольклора является лучшим пространством для проявления архетипов, полных архетипических «глобальных» образов. Архетипические образы, в частности, фигурирующие в сказках, по сути, являются носителями общих идей литературного произведения.

Сказки Хечояна богаты «жемчужинами души» – архетипами, следовательно, задача состоит в том, чтобы выделить архетипы в сравнительных структурах, выведенных в сказках сборника «Ангел-хранитель дома», которые в статье представлены в виде таблицы, а также проанализировать новые, индивидуальные авторские архетипы.

В ходе работы над статьей были использованы аналитические, интерпретационные и описательные методы.

Если сравнивать сказки других культур с армянской сказкой, то можно увидеть, что армянская литературная сказка обладает оригинальными чертами, а сказки, обработанные Левоном Хечояном, представляют собой уникальное сочетание реальности и фантазии. Его сказки – это сосредоточие таких вечных образов и понятий, как вода, человек, животное и т. д. Как представляется, автор часто обращается к миру животных, чтобы восстановить прерванную связь человека и природы.

Ключевые слова: *бессознательное, архетип, индивидуальный архетип, сказка, Левон Хечоян, образная система, первоначальный образ, коллективный образ, символ.*

17-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ *

ՀՏԴ 82.09

DOI: 10.52063/25792652-2024.2.21-85

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼԵՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kristine.melqumyan.83@mail.ru
ORCID: 0000-0001-6099-7007

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել ու վերլուծել 17-րդ դարի հայերեն կամ հայերենին առնչվող տպագիր ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը:

Հոդվածում խնդիր է դրված վեր հանել այդ ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի տեսակները, հիմնավորել դրանց գործածականությունն ու ներկայացնել գործառնությունները: 17-րդ դարում դասագիրք և ուսումնական ձեռնարկ հասկացությունները ինչ-որ իմաստով հարաբերական են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կոնկրետ հասցեականություն, օրինակ՝ տարիքային, ինչպես ժամանակակից դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների պարագայում է, չունեն:

Հոդվածը գրված է վերլուծական, պատմական և համեմատական մեթոդների կիրառմամբ:

Հոդվածում հանգում ենք այն եզրակացությանը, որ 17-րդ դարում, հատկապես Հռոմում, Միլանում ու Փարիզում տպագրված հայերեն կամ հայերենին առնչվող դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները, թեպետ ունեին ընդգծված քարոզչական նպատակներ, սակայն կազմված են այնպես, որ կարող են ուսումնական ձեռնարկ դառնալ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են տիրապետել հայոց լեզվին: Հայ տպագրիչների կողմից և հայ եկեղեցական միջավայրում տպագրված ձեռնարկները նախատեսված էին նաև չափահասների համար, իսկ աշխարհագրական գիտելիքներ, տոմարական հաշվումներ և մաթեմատիկական գործողություններ սովորեցնող ձեռնարկները՝ վաճառականների համար: 17-րդ դարի այն հրատարակությունները, որոնք վերաբերում էին գիտության տարբեր բնագավառներին, ոչ թե այդ բնագավառներին վերաբերող ուսումնասիրություններն էին, այլ այդ բնագավառների գիտելիքները հայ ընթերցողին հանրամատչելիորեն ներկայացնող ձեռնարկներ, որոնք մեծացնում են 17-րդ դարի ուսումնական ուղղվածությունն ունեցող հրատարակությունների թիվը:

Հիմնաբառեր՝ ուսումնական ձեռնարկ, դասագիրք, երկլեզու, այբուբեն, դպրոց, գործառնականություն, կողմնորոշիչ, հայոց լեզու, կրոն, բնական գիտություններ:

Ներածություն

Ուսումնական ձեռնարկների և դասագրքերի ըմբռնումն ու դրանց ստեղծումը հայ իրականության մեջ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր են եղել՝

* Հոդվածը ներկայացվել է 23.05.2024թ., գրախոսվել՝ 12.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

պայմանավորված կոնկրետ գործառնությունների, նպատակների ու առաջնահերթությունների գերակայությամբ: Շատ կարևոր է տարբեր դարաշրջանների կամ ժամանակահատվածների հայկական ու հայերեն դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները գնահատելիս կամ արժևորելիս՝ երբեք նկատի չունենալ այն չափանիշները, չափորոշիչները, գործածականությունն ու նպատակները, որոնցով դրանք ըմբռնվում են արդի ժամանակներում:

Մասնավորապես, մեր ուսումնասիրության խնդրադրության ժամանակաշրջանում դասագիրք և ուսումնական ձեռնարկ հասկացությունները ինչ-որ իմաստով հարաբերական են: Դա պայմանավորված է նախևառաջ այն հանգամանքով, որ կոնկրետ, այսպես ասած դասապրոցեսային հասցեականություն, օրինակ՝ տարիքային, ինչպես ժամանակակից դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների պարագայում է, չունեն: Հարցն այն է, որ այդ ժամանակաշրջանում հասցեականության գլխավոր թիրախ, այսինքն՝ դպրոց, նույնպես ժամանակակից ըմբռնմամբ, գրեթե գոյություն չունի: Գործել են տարբեր տիպերի ուսումնական հաստատություններ, որոնք միասնական կրթական ծրագրով չեն գործել: Ընդ որում, այս դեպքում հարկ է արձանագրել, որ 17-րդ դարն այդ առումով ինչ-որ իմաստով բեկումնային էր: Հարցն այն է, որ պատերազմներով, գաղթերով, ինչպես նաև հայ հասարակության մեջ որոշակի հուսահատական տրամադրություններով ու բարոյաքմամբ պայմանավորված կրթական-մշակութային անկումը 17-րդ դարավերջին կամաց-կամաց սկսեց տեղի տալ կրթական-մշակութային վերելքին, այդ թվում՝ տպագրական գործի վերաթարմացմանն ու ինչ-որ առումով աշխարհագրական տեսանկյունից՝ ընդլայնմանը (Իշխանյան 317-328):

Մեր ուսումնասիրության խնդրադրության տեսանկյունից այստեղ ուշագրավ ու կարևոր է այն հանգամանքը, որ, ինչպես գրում է Ռաֆայել Իշխանյանը. «Հայկական տպագրության զարգացումը 17-րդ դարում շատ թելերով կապված է... Սյունյաց մեծ անապատի հետ» (Իշխանյան 327): Սա նշանակում է, որ կրթական-ուսումնական նպատակների պահանջարկով է նաև, որ զարգացել է հայ տպագրությունը: Սյուն կողմից՝ կարևոր է Վարդան Դևրիկյանի այն դիտարկումը, որ 17-րդ դարում հայ ժողովրդի մտավոր վերածնությունն ապահոված գրեթե բոլոր գործիչները, մասնավորապես՝ Մովսես Գ Տաթևացի, Փիլիպոս Ա Աղբակեցի, Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսները, «ուղղակիորեն կապված են հայ տպագիր գրքի և հայ տպագրության հետ» (Դևրիկյան 7):

Ուստի, բուն ուսումնասիրությանն անցնելուց առաջ ամրագրենք ամենակարևորը՝ դասագիրք և ուսումնական ձեռնարկ հասկացությունները ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինչ-որ առումով հարաբերական են: Դրանց ըմբռնումն ու գնահատումը պայմանավորված է, թե ինչ նպատակի համար են նախատեսված եղել, այսինքն՝ գործառնական հատույթը: Այլ խոսքով՝ շատ հաճախ գործառնականությունն ու նպատակը վերաիմաստավորում են գրքի բնույթը:

Գրքերի՝ ուսումնական ուղղվածության կողմնորոշիչները

Գրքերի՝ ուսումնական ուղղվածության կողմնորոշիչների առումով՝ նախևառաջ պետք է նկատի ունենալ այն, թե արդյոք դրանք հետապնդում են ուսումնական և կրթական նպատակներ: Ուսումնասիրությունները փաստում են, որ բավական շատ են այն հրատարակությունները, որոնք նախատեսված են եղել ժամանակի հայկական ուսումնական հաստատությունների համար: Սյուն կողմից՝ այդ շարքին պետք է դասել նաև Հռոմի՝ քարոզչական նպատակներով իրականացված հայերեն ուսումնական հրատարակությունները (Ճեմմեմեան Սահակ Վրդ., Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ. դար)): Նույնը վերաբերում է նաև եվրոպական դիվանագիտական կենտրոնների, հատկապես Փարիզի ու Միլանի հայերեն այն հրատարակություններին, որոնց նպատակն էր հայերեն սովորեցնել եվրոպական դիվանագիտական

առաքելությունների ներկայացուցիչներին, որպեսզի Արևելքում իրենց գործունեության ընթացքում նրանք անմիջապես կարողանային հաղորդակցվել հայերի հետ, որոնց մեծ դեր էին վերապահում իրենց առաջխաղացման և արևելքի մի շարք երկրներ ներթափանցման գործում:

Բնականաբար, այս հատույթում կարևոր տեղ են գրավում հայոց եկեղեցու հրատարակությունները, որոնք յուրովի շարունակում էին այս բնագավառում ձեռագրերից եկող նախորդ դարերի ավանդույթները:

Ընդհանրապես, եթե մի փոքր ավելի նեղ հատույթում դիտարկենք հարցը, ապա քննարկվող ժամանակաշրջանում մեծ հաշվով դասագրքերի և, ընդհանրապես, ուսումնական ձեռնարկների կարևոր յուրահատկությունն այն էր, որ դրանք ավելի շատ ուղղված էին ոչ թե պատանեկան տարիքի դպրոցականներին կամ ուսումնառողներին, այլ ավելի չափահասներին՝ նրանց համապատասխան գիտելիքներ հաղորդելու համար:

Ուսումնական բնույթի հրատարակություններն այս առումով ավելի շատ ուղղված էին մեծերին և պարունակում էին ընդհանուր գիտելիքներ տարբեր գիտությունների և կյանքի բնագավառների վերաբերյալ:

Այս պայմաններում դասագրքերին առավել մոտ էին լեզվի և կրոնի ուսուցմանը վերաբերող ձեռնարկները, որոնք որոշակիորեն տարբեր նպատակներ էին հետապնդում՝ պայմանավորված այն հարցով, թե դրանք արդյոք հայերի կողմից էին հրատարակված, թե եվրոպացիների:

Օրինակ՝ այբբենարանի եվրոպական հրատարակությունները, ինչպես նշել ենք, նպատակ ունեին հայերեն սովորեցնելու դիվանագիտական առաքելությունների և կրոնական տարբեր միաբանությունների ներկայացուցիչներին: Նույն ձևով նրանց հրատարակած կրոնի դասագրքերը, որոնք սովորաբար ունեին «Վարդապետութիւն քրիստոնեական» անվանումը, նախատեսված էին կաթոլիկ քարոզչության համար: Կրոնի նման դասագրքերը այն յուրահատկությունն ունեին, որ դրանք ոչ թե անմիջաբար նախատեսված էին աշակերտների ուսումնառության, այլ որպես մեթոդական ձեռնարկներ էին ծառայում միսիոներներին՝ կաթոլիկությունը քարոզելու համար:

Հայոց եկեղեցու հրատարակությունները, անմիջաբար ուղղված լինելով ընթերցող աշակերտին, նույնպես ավելի շատ վերաբերում էին չափահասներին: Ասվածի հաստատումն է և այն, որ այս գրքերի առաջաբաններում և հիշատակարաններում օգտագործվող և ընթերցողին ուղղված «մանուկ» և «պատանի» բնորոշումներն ավելի շատ վերաբերում են ոչ թե նրանց տարիքային աստիճանին, այլ մտավոր պատրաստվածությանը, որ նրանք որպես նորավարժ մանուկներ պետք է սկսեն յուրացնել այդ գրքերում գրվածները և հասնել որոշակի մտավոր մակարդակի:

Առավել ևս մեծերի ու հատկապես վաճառականների համար էին նախատեսված աշխարհագրական գիտելիքներ, տոմարական հաշվումներ և մաթեմատիկական գործողություններ սովորեցնող ձեռնարկները:

Կրոնաեկեղեցական գրականությունից դուրս՝ 17-րդ դարի այն հրատարակությունները, որոնք վերաբերվում էին գիտության տարբեր բնագավառներին, ըստ էության, ոչ թե այդ բնագավառներին վերաբերող ուսումնասիրություններն էին, այլ այդ բնագավառների գիտելիքները հայ ընթերցողին հանրամատչելիորեն ներկայացնող ձեռնարկներ:

Այս հանգամանքը նկատելիորեն մեծացնում է 17-րդ դարի ուսումնական ուղղվածություն ունեցող հրատարակությունների թիվը:

Եվ վերջապես, քննարկվող ժամանակաշրջանում որևէ հրատարակության կրթական և ուսումնական ուղղվածություն ունենալու կարևոր փաստարկներից մեկը շարադրանքի լեզուն է՝ այն գրված է գրաբարով, թե՛ ժամանակի խոսակցական լեզվով, որով գրվում էին գործնական կիրառություն ունեցող գործերը:

Ահա այս հենքով այժմ ներկայացնենք 17-րդ դարի ուսումնական և նման ուղղվածություն ունեցող **հայոց լեզվին և կրոնին** վերաբերող հրատարակությունները:

Հայոց լեզվի և կրոնի դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները

Հայոց լեզվի և կրոնի դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները որոշ առումներով պետք է դիտարկել միասնական հատույթում այն պատճառով, որ տարբեր նպատակներից ելնելով՝ դրանց հեղինակները կամ տպագրիչները կապակցում էին այդ երևույթները: Հիմնականում, հատկապես օտարազգի հեղինակների ու տպագրիչների հրատարակություններում հայոց լեզվի ուսուցումը հետապնդում էր հետագայում կրոնական քարոզչություն իրականացնելու նպատակ, և պատահական չէ, որ 17-րդ դարում տպագրված այդօրինակ գրքերը հիմնականում համադրում են այդ երկու հատույթները: Պատահական չէ, որ հայերենի առաջին այբբենարաններն ու քերականության դասագրքերը նախաձեռնվեցին և հրատարակվեցին Իտալիայում և ոչ հայ հեղինակների կամ տպագրիչների կողմից (Մելքումյան 86-92):

Եվ ընդհանրապես, հարկ է նշել, որ հայոց լեզվին վերաբերող և «Այբուբենք հայոց» կամ «Այբբենարանք հայոց» անվանվող, ինչպես նաև կրոնական առաջին ձեռնարկները տպագրվել են Միլանում, Յոնմում և Փարիզում⁹:

17-րդ դարի սկզբում Միլանում հիմնվում է Ամբրոսյան դպրոցը և արևելյան լեզուներով հրատարակություններ իրականացնելու տպարանը: Ինչպես գրում է Սահակ Վրդ. Ճեմճեմեանը. «Պապերու կողմէ արեւելեան լեզուներով տպարան հաստատելու նպատակը մէկ էր. տպագրուած գիրքերը միսիոնարներու կողքին յարմարագոյն միջոցն էր տարածելու կաթողիկէ վարդապետութիւնը, դարձի բերելու արեւելեան եկեղեցիները» (Ճեմճեմեան Սահակ Վրդ. 9):

Այդ տպարանում 1624 թվականին լույս է տեսնում Ֆրանչիսկոս Ռիվոլայի «Քերականութիւն հայոց» գիրքը: Այն նախատեսված է հայերեն չիմացողներին հայերեն սովորեցնելու համար և կարելի է համարել հայերեն ինքնուսույցների նախօրինակը: Քերականությունը գրված է լատիներենով և հայերենից բերված օրինակներն են գրված հայերենով (Grammaticae Armenae- Քերականութիւն հայոց 8-10, 14-16, 19, 21 և այլն): Այն գործնական քերականություն է: Հատկապես մեծ ուշադրություն է դարձված հնչյունաբանությանը, որպեսզի հայերեն չիմացողները ոչ միայն կարդալ սովորեն, այլև կարողանան ճիշտ սրբագրել ասվածը: Մեծ տեղ է տրված երկբարբառների ուղղագրությանը և ճիշտ կարդալուն:

Սկսած այս հրատարակությունից՝ հայերենի քերականությանը նվիրված ձեռնարկներում սիստեմավորված ձևով ներկայացվում են հեգելով (վանկ առ վանկ կարդալով), բերվում են միավանկ, երկվանկ և բազմավանկ բառերը:

Փարիզում նույն քաղաքական նպատակով կարդինալ Ռիշելյիոն 1630-ական թվականներին հիմնում է ակադեմիա արևելյան ուսումնասիրությունների համար: 1634 թվականին այստեղ լույս է տեսնում «Առաւել պարգաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» ձեռնարկը, որն իր հերթին արտատպությունն էր Յոնմում 1630 թվականին իրականացված հրատարակության (Առաւել պարգաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան -Explanation of Christian Mission): Այս ձեռնարկը, բնականաբար, նույնպես երկլեզու է:

⁹ Օրինակ, Աիբուբենք Հայոց: Alphabetum/ Armenum, Յոնմ, տպ. Ստ. Պալլինեան, 1623; Grammaticae Armenae- Քերականութիւն հայոց, Միլան, տպ. Ամբրոսյան վարժարանի, 1624; Առաւել պարգաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան, Յոնմ, տպ. Ուրբանյան, 1630; Այբուբեն հայոց, Յոնմ, տպ. Ուրբանյան, 1673, և այլն:

Այն, որ քրիստոնեական վարդապետությունն անվանվող այս գրքերը ոչ թե կրոնական աշխատանքներ են, այլև ուսումնական ձեռնարկներ, դիտարկելի է մի քանի գործոնով: Նախ՝ շարադրանքի ոճը, որ չափազանց համառոտ է, ապա՝ լեզուն, որ պարզ է և առանց բառաբարդումների, մյուս կողմից՝ շատ հստակ են ներկայացվում քրիստոնեական հավատի տարբեր հասկացությունները: Բայց ամենակարևորն այստեղ այդ գրքերի կառուցվածքն է, որը ենթարկված է ուսումնական ձեռնարկներին բնորոշ յուրահատկություններին: Դրանք մեծ մասամբ գրված են հարց ու պատասխանի ձևով: Նախ՝ աշակերտի հարցն է, ապա հաջորդում է ուսուցչի պատասխանը: Ընդ որում՝ հարցերը բավական կարճառոտ են, իսկ պատասխանները գրեթե միշտ ավելի ընդարձակ (Առաել պարզաբանութիւն քրիստոնեական վարդապետութեան, 1634թ, 1, 2, 67, 84 և այլն):

Իսկ մինչ այդ Զոմմում քարոզչական նպատակով 1623 թվականին իրականացվել էր նաև հայերենի քերականության հրատարակություն, որը կոչվում էր «Այբուբեն հայոց» (Այբուբենը Հայոց: Alphabetum/ Armenum Գ): Այն ևս երկլեզու է՝ լատիներեն և հայերեն: Նույն ձևով է բերված նաև հայոց այբուբենը: Հայերեն յուրաքանչյուր տառի դիմաց նշվում է նրա տառադարձությունը լատիներենով: Այս շրջանի թե՛ եվրոպական և թե՛ հայկական քերականական ձեռնարկներին բնորոշ հատկանիշներից է այն, որ որպես օրինակ բերվող բառերը հիմնականում պատկանում են հոգևոր բառաշերտին: Հիշված ձևերով բերված են Աստված, Քրիստոս, Հիսուս, Տեր, սրբություն, կաթողիկոս, վարդապետ, ծառա, թագավոր, հրեշտակ, առաքյալ բառերը (Այբուբենը Հայոց: Alphabetum/ Armenum Թ): Նույն ձևով հայերեն կարդալու համար ընտրված են Տերունական աղոթքը, հրեշտակի՝ Մարիամին ուղղված ողջույնը՝ Ավե Մարիան, Հավատո հանգանակը (Այբուբենը Հայոց: Alphabetum/ Armenum Ժ-ԺԱ):

Հայերենի ուսուցման դասագրքային կամ ձեռնարկային ավանդույթի ամրապնդման տեսանկյունից կարևոր հրատարակություն է նաև Կոնստնտինոպոլի «Քերական եւ տրամաբանական ներածութիւն» գիրքը, որ տպագրվել է Զոմմում 1645 թվականին:

Գիրքը տիտղոսաթերթում վերնագրված է «Քերականական, եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ», ինչը, ըստ էության, պարզաբանում է նաև գրքի ստեղծման նպատակը Գալանոսը որպես քարոզիչ գրում է գործնական քերականություն, որպեսզի դրա հիման վրա հայկական միջավայրում իրենց քարոզությունն իրականացնող լատին հոգևորականները կարողանային անմիջաբար հայերեն խոսել և ոչ թե թարգմանիչների օգնությամբ: «Շահելոյ» բառը, որը կցված է քերականությանը, ունի նաև «օգտվել» իմաստը: Նշանակում է, որ սա մի ձեռնարկ է, որից օգտվելու են հայերենի քերականությունը սովորելու համար:

Հայ տպագրիչների կողմից և հայ եկեղեցական միջավայրում առաջին ուսումնական ձեռնարկը տպագրվել է Ամստերդամում Ոսկան Երևանցու կողմից 1666 թվականին: Այն անվանվում է «Այբբենարան և քրիստոնեական», որն ինչպես գրքի առաջաբանում է ասվում նախատեսված է «յաղագս նորեկ տղայոց և մանկանց անկրթից» (Այբբենարան եւ քրիստոնեական 1):

Գրքի քննությունը ցույց է տալիս, որ թե՛ այստեղ, թե՛ ընդհանրապես 16-17-րդ դարերի հրատարակություններում «Այբուբեն» բառն ընկալվել է որպես սկզբնական գիտելիք և ոչ թե որպես միայն տառերի դասավորված հաջորդականություն: Գրքում նշվում է, որ գրաճանաչությունը միջոց է աստվածային խորհուրդներին հասնելու: Ասվածին համաձայն՝ այբուբենի ուսուցմանը հաջորդում է քրիստոնեականի բաժինը, որում կրոնական սկզբնական գիտելիքներ են հաղորդվում, որն էլ իր հերթին է համարվում Հավատո այբուբեն:

«Այբբենարան և քրիստոնեական» ձեռնարկը իր կառուցվածքով նման է «Առաել պարզաբանութիւն քրիստոնեական վարդապետութեան» ձեռնարկին,

թեպետ միայն հայերեն է: Այստեղ էլ գիտելիքը մատուցվում է հարց ու պատասխանի ձևով:

Կարդալ սովորեցնող բաժնի սկզբում որպես հարց ասվում է, թե ինչպես պետք է կրթության տալ երեխաներին և որպես պատասխան նշվում է, թե՝ «Նախ և առաջին զտառնս միահամուռ շարագծել՝ զձայնաւորսն, և զբաղաձայնսն. և ապայ բաժանել զնոսա ի միմեանց» (Այբբենարան եւ քրիստոնեական 3), այսինքն՝ հարկավոր է տառերը միահամուռ գրել, այլ խոսքով՝ ամբողջականորեն և ոչ թե մասնիկ առ մասնիկ:

Հայոց այբուբենի գրերի թիվը ներկայացվում է ոչ թե ըստ Մաշտոցի ստեղծածի, այլ ըստ Կիլիկյան շրջանի գրային համակարգի, երբ ավելացվել էին օ-ն և ֆ-ն, որի համար ընդունված 29 բաղաձայնի և 7 ձայնավորի փոխարեն ասվում է, թե Հայոց այբուբենը ունի 8 ձայնավոր և 30 բաղաձայն (Այբբենարան եւ քրիստոնեական 4):

«Այբբենարան և քրիստոնեական» ձեռնարկում հնչյունը սահմանվում է որպես բառի նվազագույն միավոր, որին հաջորդում է վանկը, որն արդեն բառի մասն է:

Ոսկան Երևանցու հրատարակած «Այբբենարան և քրիստոնեական» ձեռնարկը չափազանց կարևոր նշանակություն ունի ոչ միայն որպես սկզբնավորող, այլև միտում թելադրող երևույթ: Հարցն այն է, որ հայոց լեզվին նվիրված դասագրքերի՝ Ոսկան Երևանցու ձեռնարկում ամրագրված կառուցվածքը շարունակվում է մինչև 1730-ական թվականները, մինչև Մխիթար Սեբաստացու հրատարակած քերականական աշխատանքները:

Քերականագիտական աշխատանքների և քերականական ձեռնարկների միջև միջանկյալ տեղ է գրավում դարձյալ Ոսկան Երևանցու կողմից Նույն՝ 1666 թվականին հրատարակված «Քերականութիւնը»: Այդ գրքի նպատակների և առավելապես ձեռնարկի հատույթում դիտարկվելու օգտին է խոսում տիտղոսաթերթի գրությունը. «ԵԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ./ԳԻՐԸ/ Համառօտիւք ծայրաքաղ արարեալ /Յաղագս մանկանց./ և Նորավարժից/ կրթութեան]. Ի տառս մատենից/ և ի գիտութիւնս մասանց բանի, /ըստ քերթութեան /արիեստի:/» (Ոսկան Երևանցի 2): Ինչպես գրում է Ռաֆայել Իշխանյանը. «Քերականական այս աշխատությունը լատինաբան գրաբարի ուսուցման ձեռնարկի հատկանիշներ ունի, բայց և շատ կողմերով ինքնուրույն է ու հետաքրքրական» (Իշխանյան 435):

Եզրակացություն

Հայերենի և կրոնի դասագրքերը, ամեն դեպքում, որոշակիորեն վերաբերում էին նաև դպրոցական տարիքին՝ անկախ այդ ձեռնարկների բուն նպատակադրումներից: 17-րդ դարի ուսումնական ձեռնարկների մյուս խումբը, որ վերաբերում է աշխարհագրությանը, մաթեմատիկային, տոմարագիտությանը, հստակորեն նախատեսված էին հայ վաճառականների համար, որպեսզի նրանք օգտվեին իրենց առևտրական գործունեության ընթացքում երկրներկիր անցնելիս:

Դասագրքերի և ուսումնական ձեռնարկների այս լայն ընդգրկումից մասնագիտացվածությանը անցում է կատարվում Մխիթարյան միաբանության հիմնադրմամբ, երբ եվրոպական փորձի համադրմամբ ու Եվրոպայի խաղաղ պայմաններում հնարավոր է դառնում իրականացնել կանոնավոր ուսուցում, որն իր հերթին պարտադրում է համապատասխան դասագրքերի ստեղծումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աիբուբենը Հայոց*, տպ. Ստ. Պավլինյան, Հռոմ, 1623:
2. *Այբբենարան եւ քրիստոնեական, տպարանում սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի*, Ամստերդամ, 1666:
3. *Այբուբեն հայոց*, տպ. Ուրբանյան, Հռոմ, 1673:
4. *Առաւել պարզաբանութիւն քրիստոնեական վարդապետութեան*, Հռոմ, 1630:

5. *Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան*, Փարիզ, 1634:
6. Դևրիկյան Վարդան, *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում*, մասն Բ. Լկովից Ամստերդամ (17-րդ դար), Երևան, 2014:
7. Իշխանյան Ռաֆայել, *Հայ գրքի պատմություն*, Երևան, 2012:
8. Կղեմես Գալանոս, *Քերական և տրամաբանական ներածություն*, Հռոմ, 1645:
9. Ճեմճեմեան Սահակ Վարդապետ, *Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ժէ. դար)*, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1989 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», թիւ 29):
10. Իշխանյան Զրիստիկ, «Հայոց լեզվի տպագիր առաջին երեք դասագրքերը».
«Հայագիտական հանդես», N4 (42), Երևան, 2018, էջ 86-92:
11. Ոսկան Երևանցի, *Քերականություն*, Ամստերդամ, 1666:
12. Francisco Rivola, *Grammaticae Armenae*, Mediolani, 1624:

WORKS CITED

1. Aibubienq Hayoc, Hr'om, [Armenian Alphabet, Rome] 1623.
2. Aybbenaran ew qristone'akan, Amsterdam, [Primer in Reading and Christian Faith, Amsterdam] 1666. (in Armenian)
3. Aybuben hayoc, Hr'om, [Armenian Alphabet, Rome] 1673. (in Armenian)
4. Ar'awel parzabanut'iun qristone'akan vardapetut'ean, Hr'om, [Explanation of Christian Mission, Rome] 1630. (bilingual Armenian-Latin)
5. Ar'awel parzabanut'iwn qristone'akan vardapetut'ean, P'ariz, [Explanation of Christian Mission, Paris] 1634. (bilingual Armenian-Latin):
6. Derikyan Vardan, *Hay girqy' ashxarhi xachmeruknerum, masn B. Lvovic Amsterdam (17-rd dar)*, Erevan, [The Armenian Book in the World Crossroads, Part II, From Lviv to Amsterdam (17th century) Yerevan] 2014. (in Armenian)
7. Ishxanyan Rafael, *Hay grqi patmut'yun*, Erevan, [History of the Armenian book] 2012. (in Armenian)
8. Kghemes Galanos, *Qerakan ev tramabanakan neracut'iun*, Hr'om, [Grammaticae et logigae/ Institvtiones] 1645. (in Armenian):
9. Temtemean Sahak Vardapet, *Hay tpagrut'iuny' ew Hr'om (JhE'. dar)*, Venetik-S. Ghazar, [Armenian printing and Rome (17th century), Venice-St. Lazarus] 1989 (Hayagitakan matenashar «Bazmave'p», t'iw 29) (in Armenian)
10. Melqumyan Kristine, *Hayoc lezvi tpagir ar'ajin ereq dasagrqery'*, Erevan, «Hayagitakan handes», N4 (42), [The first printed three books of Armenian, Yerevan] 2018, e'j 86-92. (in Armenian)
11. Oskan Erevanci, *Qerakanutiun*, Amsterdam, [Grammar] 1666. (in Armenian)
12. Francisco Rivola, *Grammaticae Armenae*, Mediolani, [Grammaticae Armenae, Mediolani (Milan)] 1624. (in Armenian)

ARMENIAN PRINTED STUDY MANUALS OF THE 17TH CENTURY

KRISTINE MELKUMYAN

NAS RA Institute of Literature after M. Abegyan, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to present and analyze printed Armenian or Armenian-language manuals and textbooks of the 17th century.

The task of the given article is to highlight the types of these manuals and textbooks, justify their functionality, and present their functions. In the 17th century, the concepts of textbook and manual were relative in some sense, due to the fact that they

did not have a specific addressability, for example, related to age, as is in the case of modern textbooks and manuals.

The article is written using analytical, historical, and comparative methods.

In this article we conclude that the Armenian or Armenian-language textbooks and study guides printed in the 17th century, especially those published in Rome, Milan and Paris, although propaganda in nature, were aimed at specific activities and were designed in such a way that they could be used by anyone who wanted to learn Armenian. The manuals printed by the Armenian church or Armenian printers environment were also intended for adults. Manuals for merchants teach geographical knowledge, calendar calculations and mathematics. In addition to religious-ecclesiastical literature, publications of the 17th century devoted to various fields of science were, in fact, not studies related to these fields, but manuals presenting knowledge in these fields to the Armenian-speaking reader in a generally accessible language which significantly increases the number of educational publications of the 17th century.

Keywords: *study manual, textbook, bilingual, alphabet, school, functionality, orientation, Armenian language, religion, natural sciences.*

АРМЯНСКИЕ ПЕЧАТНЫЕ УЧЕБНЫЕ ПОСОБИЯ 17 ВЕКА

КРИСТИНЕ МЕЛКУМЯН

младший научный сотрудник

Института литературы имени М.Абегамяна НАН РА,

г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – представить и проанализировать печатные армянские или армяноязычные учебные пособия и учебники 17 века.

Задача статьи - выделить виды этих учебных пособий и учебников, обосновать их использование и представить их функциональность. В X II веке понятия «учебник» и «учебное пособие» в некотором смысле были относительно, так как они не имели конкретного распределения, например, возрастного, как это свойственно современным учебникам и учебным пособиям.

Статья написана с использованием аналитического, исторического и сравнительного методов.

В статье мы приходим к выводу о том, что напечатанные в 17 веке армянские или армяноязычные учебники и учебные пособия, особенно те, которые были опубликованы в Риме, Милане и Париже, хотя и носили характер пропаганды, были направлены на конкретную деятельность и составлены таким образом, чтобы могли быть использованы всеми, кто хочет выучить армянский язык. Пособия, напечатанные в армянских типографиях и церквях, предназначались и для взрослых. Предназначенные для купцов пособия давали определенные географические знания, обучали счету, простым математическим действиям. Помимо религиозно-церковной литературы, издания X II века, посвященные различным областям науки, были, по сути, не научными исследованиями, а пособиями, представляющими армяноязычному читателю на общедоступном языке знания в этих областях. Эти издания значительно увеличили количество учебно-просветительских изданий 17 века.

Ключевые слова: *учебное пособие, учебник, двуязычный, алфавит, школа, функциональность, направленность, армянский язык, религия, естественные науки.*

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԲՍՈՒՄ *

ՀՏԴ 159.923:316.6

DOI: 10.52063/25792652-2024.2.21-93

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության
և հոգեբանության ֆակուլտետի անձի
հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր,
հոգեբանական գիտությունների դոկտոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hlana68@gmail.com

ORCID:0000-0002-7773-4358

ԼԻԼԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության
և հոգեբանության ֆակուլտետի անձի
հոգեբանության ամբիոնի դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
lil.mail.ru@mail.ru

ORCID: 0009-0008-2964-1983

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել անձի սոցիալ-հոգեբանական հարմարման տեսական հիմքերը: Մեր հոդվածի խնդիրներից մեկն է գիտական ուսումնասիրության ընթացքում միջառարկայական մոտեցման հիման վրա հարմարման տեսակների վերաբերյալ հայեցակարգերի և բնութագրերի դուրսբերումը: Անձի հարմարումը անձի բնականոն, ներդաշնակ զարգացման, կենսագործունեության նշանակալի գործընթացներից մեկն է: Սույն ուսումնասիրությունը իրականացվել է գրականության տեսական վերլուծության մեթոդի կիրառմամբ: Հիմնախնդիրը վերլուծված է տարբեր հոգեբանական մոտեցումների համատեքստում: Առանձնակի ուշադրության են արժանացած նրա հիմնավոր և մասնավոր բնորոշումները: Ըստ ժամանակակից սոցիալական, տնտեսական, քաղաքական մեծ փոփոխությունների և մարտահրավերների՝ սույն ուսումնասիրությունը ունի մեծ նշանակություն՝ հնարավորություն տալով անձին լինելու կյանքի ակտիվ փոփոխությունների կիզակետում, ստեղծելու նորը և զարգանալու: Մեր ուսումնասիրության մեկ այլ խնդիրն է դիտարկել անձին նոր միջավայրում, դուրս բերել անձի սոցիալ-հոգեբանական հարմարման ձևերը:

Հոդվածում եզրակացվում է, որ սոցիալ-հարմարման ընթացքում անձը իր կյանքում տեղի ունեցող փոփոխությունների ակտիվ մասնակիցն է, ինչպես նաև դառնում է խմբի անդամ՝ կրելով խմբի նորմերը, պահանջները: Այն մի գործընթաց է, որը բնորոշ է յուրաքանչյուր մարդու՝ կյանքի տարբեր

* Հոդվածը ներկայացվել է 08.05.2024թ., գրախոսվել՝ 02.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

իրավիճակներում և պայմաններում: Այս ամենը տեղի են ունենում անձի ներքին և արտաքին փոփոխություններով:

Յիմնաբառեր՝ հարմարում, սոցիալական հարմարում, հոգեբանական հարմարում, անձ-միջավայր, անձ-զարգացում, փոփոխություններ, հարմարման ձևեր, դրական հարմարում:

Ներածություն

Անձի կայացումն ու զարգացումը, ինչպես նաև նրա ամենօրյա կյանքը ենթադրում է սոցիալական միջավայրում ընդգրկվածություն: Նրա կենսագործունեությունը պայմանավորող սոցիալական միջավայրը հանդիսանում է բազմաբնույթ ամբողջություն, որտեղ արտահայտվում են անձի հասարակական, տնտեսական, նյութական, արժեքային, քաղաքական մոտեցումներն ու դրսևորումները: Արդի մարտահրավերները, տեղի ունեցող անընդհատ փոփոխություններն ու վերակառուցումները, որոնք հաճախ պայմանավորված չեն անձի ցանկություններից, անմիջական ազդեցություն են ունենում նրա կյանքի որակի, պայմանների փոփոխությունների վրա: Տվյալ արտակարգ և նոր իրավիճակներում մարդն ինքնաբերաբար հայտնվում է իր համար անծանոթ պայմաններում և ենթարկվում ազդեցությունների, որոնք ստիպում են փնտրել նոր լուծումներ:

Բնականոն կենսագործունեությունը ենթադրում է նոր սոցիալական պայմաններին, միջավայրին հարմարում, նոր միջանձնային հարաբերությունների հաստատում և գործելու կարողություն:

**«Հարմարում» տերմինի էությունը.
միջառարկայական հայացքները խնդրի շուրջ**

Հարմարում հասկացությունն առաջին անգամ կիրառել է Գ. Աուբերգը: Այն բազմանշանակ, միջառարկայական հասկացություն է, որն արտահայտվում է մարդու կյանքի տարբեր մակարդակներում: Որպես միջառարկայական գիտական հասկացություն՝ այժմ էլ գտնվում է գիտական ուսումնասիրությունների կիզակետում: Առանձնացվում են հարմարման տարբեր տեսակներ՝ սոցիալական, կենսաբանական, մասնագիտական, հոգեբանական և այլն: «Հարմարումը» կենսաբանության մեջ բնութագրվում է որպես օրգանիզմի կողմից շրջապատող միջավայրի պայմանների յուրացում, ինչպես նաև օրգան համակարգի աշխատանքի վերակառուցում: Հատկանշական է հարմարման դինամիկ լինելը, քանի որ այն գոյությունը պահպանելու հնարավորություն է տալիս զարգանալու հարցում անկախ միջավայրի պայմանների փոփոխությունից: Փիլիսոփայության և սոցիոլոգիայի տեսանկյունից հարմարումը բնութագրվում է որպես անձի կողմից սոցիալական միջավայրի նորմերի, օրենքների, արժեքների նոր սոցիալական դերերի յուրացում (Ковригина 201):

Հարմարման մեկ այլ նշանակալի տեսակ է սոցիալական հարմարումը, որն արտահայտվում է նոր հասարակական կապերի տիրապետմամբ: Հարկ է նշել, որ այստեղ չի բացառվում կենսաբանական հարմարումը, այլ այն ներառում է իր մեջ՝ որպես կարգավորվող մաս (Ковригина 201-202):

Անձի հարմարման հարցը դիտարկելիս Գ. Անդրեան այն նկարագրում է որպես սոցիալիզացիայի հիմնական մաս և բնութագրում որպես երկակի գործընթաց՝ մի կողմից մարդը յուրացնում է նորմերի, գիտելիքների համակարգը, որը իրեն օգնում է գործել որպես համայնքի լիիրավ անդամ, իսկ մյուս կողմից էլ ակտիվ արտահայտում է սոցիալական կապերը, իրացնում իրեն՝ որպես անձ, միևնույն ժամանակ ազդում այլ մարդկանց կյանքի, իրավիճակների վրա (Долгова 150, Царегородцева и др. 276):

Անձի համար սոցիալական հարմարումն ունի հակասող, պարադոքսալ բնույթ: Այն բնութագրվում է նաև որպես անձի փնտրողական ակտիվություն, անձի ունեցած սահմաններից դուրս գալու վիճակ: Հարկ ենք համարում նշել, որ Ա. Միրոսլավսկիի պնդմամբ՝ հարմարվող անձը համագործակցում է միջավայրի հետ, որից ելնելով էլ փոխում է իր անձնային որակները, արժեքները, բնութագրերը (Красильников, Константинов 932):

Դիտարկելով անձի և հասարակության միջև հարմարման գործընթացը՝ նկատում ենք, որ մեծ դեր է հատկացվում սոցիալական պայմաններին, նորմերին արժեքներին, տվյալ միջավայրի ավանդույթներին, նշելով՝ անձի ակտիվության, գործունեության սուբյեկտ լինելու դերը: Հատկանշական է, որ այստեղ հարմարումը դիտարկվում է որպես փոփոխություն, ակտիվություն, զարգացում:

Նման մոտեցում ունի նաև ամերիկացի հայտնի գիտնական Ս. Շիբուտանին և նրա հոգեբանական դպրոցը: Այստեղ մեզ համար հատկապես կարևորվում է այն, որ հարկավոր է հարմարման գործընթացը ուսումնասիրել և մեկնաբանել որպես նոր սոցիալական նորմերին, դերերին հարմարում և տիրապետում (Шибутани 81): Ս. Շիբուտանին սոցիալական հարմարումը սահմանում է որպես սոցիալականացման ձև: Այդ տեսակետը կիսում է նաև Լ. Շպակը: Նա նույնպես կարծում էր, որ սոցիալական հարմարումը իրականացնում է սոցիալականացման գործընթացի գործառույթ (Долгова 149):

Հենց սոցիալական հարմարումը հանդես է գալիս անձի և սոցիալական միջավայրի միջև միջնորդի դերում: Նա նպաստում է նրանց փոխադարձ համաձայնությանը, փոխադարձ զարգացմանը, փոխադարձ բավարարվածությանը:

Ա. Նալչաջյանը, խոսելով սոցիալ-հոգեբանական հարմարման մասին, նշում է, որ այն բերում է սոցիալ-հոգեբանական հարմարվողականության, որն արտահայտվում է անձի և խմբի ներդաշնակ փոխհարաբերություններով. սուբյեկտը առանց երկար տևող ներքին և արտաքին կոնֆլիկտների՝ կարողանում է իրականացնել իր հիմնական գործառույթները ու, մեծամասամբ, կարողանում է համապատասխանել այն սպասումներին, որոնք ունենում է խումբը, և որտեղ գործում է նա: Սրան զուգահեռ անձն ունենում է ներքին հնարավորությունների, ռեսուրսների զարգացում (Налчаджян 69):

Սոցիալ-հոգեբանական հարմարման հարցերին անդրադարձել է նաև Պ. Կուզնեցովը: Նա նկարագրել է հարմարման երեք հիմնական դրույթներ՝ 1. ուսումնասիրել մարդու հարմարման գործընթացը՝ որպես նոր միջավայրի հարմարում, յուրացում, 2. հարմարումը դիտարկել որպես կայուն վիճակ, 3. հարմարումն ուսումնասիրել որպես անձի զարգացում (Гордон 13-15):

Բավականին հետաքրքրական է նաև այն մոտեցումը, համաձայն որի՝ հարմարումը դիտարկվում է անհատի կողմից որպես իր հիմնական գործառույթ, երբ ի հայտ են գալիս դժվարին իրավիճակներ: Սակայն տվյալ ուսումնասիրությունները դեռևս լիարժեք հնարավորություն չեն տալիս՝ գտնելու դժվարին իրավիճակին ավելի հեշտ ու անձի համար շահեկան արձագանքելու մոտեցումներ և մեխանիզմներ (Милославова 13):

Չնայած նրան, որ չկա հստակ առանձնացում, այնուամենայնիվ մենք համարում ենք, որ այստեղ նույնպես կարող ենք խոսել հարմարման, զարգացման բնական փոփոխության մասին:

Է. Դյուրգեյմը ևս սոցիալական հարմարումը բնութագրում է որպես նորմերի յուրացման գործընթաց, սակայն նա նաև նշում է հասարակության հարմարման և անհատի հարմարման ամբողջականության մասին՝ դիտարկելով հարմարումն ու սոցիալիզացիան որպես հոմանիշներ (Дюркгейм 65):

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ կատարված հետազոտությունները, որոնց ուսումնասիրության կիզակետում են անձ-միջավայր հարաբերությունները, նշում են երկու հիմնական մոտեցումների մասին. անձը մի կողմից փոխում է իրավիճակը, դրա

ընկալումը, մյուս կողմից էլ ինքն է փոփոխվում՝ փոփոխվող իրավիճակից ելնելով: Հարկ ենք համարում նշել, որ չկան ուսումնասիրություններ, որ լիովին և միանշանակ կտան հարմարման բանալին:

«Հարմարում» եզրույթի գիտական մեկնաբանումը հոգեբանության բնագավառում

Անդրադառնալով նեղ հոգեբանական գիտությանը՝ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել Է. Էրիքսոնի մոտեցումը: Է. Էրիքսոնը, նախևառաջ, հարմարումը հասկանում է որպես անձի զարգացում: Ավելի հստակ կարելի է նշել, որ նա դիտարկում է անձի զարգացում դեպի իր Էգո ինտեգրացիա, որն էլ ենթադրում է սեփական անձի մասին բոլոր ունեցած գիտելիքների, տեղեկությունների մի ամբողջականություն: Այն իր մեջ ներառում է երեք մակարդակ, որոնց բարեհաջող անցումը հնարավորություն է տալիս անձին համարել, որ նա ամբողջությամբ ձևավորված է: Հիմնական երեք մակարդակները հետևյալն են՝ այն պետք է ստեղծվի, ստեղծված կերպարը պետք է ընդունված լինի այլոց կողմից, պետք է լինի հետադարձ կապ, որը կտա հնարավորություն՝ ընկալել սեփական սոր անձը: Շրջակա միջավայրն այստեղ մեծ նշանակություն ունի. նրանից է կախված, թե ինչպես է արտահայտվելու անձի անհատականությունը, ինչպես է նա բարեհաջող հաղթահարելու կյանքի ճգնաժամերը (Налчаджян Психологическая адаптация 237):

Մեկ այլ մոտեցում է ներկայացնում Կ. Ռոջերսը՝ կարևորելով անձի սուբյեկտիվ ընկալումը. յուրաքանչյուր մարդ ընկալում է շրջապատող իրականությունը՝ համապատասխան իր սուբյեկտիվ ընկալման, ըստ որի, ներքին աշխարհը հասանելի է միայն իրեն: Հենց այս մակարդակում է անձը արտահայտում կոնգրուենտությունը իր վերաբերմունքով աշխարհի, մարդկանց հանդեպ: Հենց դրանից է կախված արդյունավետ հարմարումը շրջապատող միջավայրում: Սրան հակառակ՝ կոնգրուենտության խախտումը կարող է բերել լարվածության, տագնապանության աճին և հարմարման դժվարություններին: Այստեղ նկատում ենք, որ Է. Էրիքսոնը և Կ. Ռոջերսը բարեհաջող հարմարման հասնելու համար հիմնական շեշտադրումը դնում են անձի անձնային առանձնահատկությունների վրա: Հետաքրքրական է, որ Ա. Մասլոուն դիտում է այս հարցը հակառակ կողմով՝ համարելով, որ մարդը ձգտում է խախտել այդ հավասարակշռությունը, քանի որ անձը ձգտում է անձնային աճի, իսկ երբ հավասարակշռությունն է արտահայտված, այստեղ ինքնաիրականացման ձգտումը կարող է խափանվել: Մասլոուն նշում էր, որ մարդը, բախվելով իր արժեքներին և պատկերացումներին չհամապահասխանող սոցիալական իրականությանը, հայտնվում է կոնֆլիկտային վիճակի մեջ: Այդ վիճակն էլ դրդում է անձին նոր ակտիվության, փոփոխությունների, իրավիճակի հաղթահարման, որն արտահայտվում է անձի և սոցիալ միջավայրի հարմարմամբ (Хьелл, Зиглер 479-506):

Հարմարման հիմնախնդրի հոգեբանական մոտեցումները վերլուծելիս հարկ ենք համարում անդրադառնալ նաև դրդապատճառա-կամային մոտեցման կարևորությանը: Այսպես՝ Շապկինի և Լ. Դիկայայի հետազոտությունները ցույց են տալիս, որ դրդապատճառա-կամային ռազմավարությունները հարմարման համակարգաձևավորող գործոնն են՝ որոշելով կոգնիտիվ, հուզական, էներգետիկ ակտիվության ինտենսիվությունը և ուղղվածությունը, որն էլ անձին գործունեության է մղում: Մ. Ռոմի կողմից նշվում է, որ հարմարման արդյունավետությունը կախված է տեղեկատվության անհատական մեկնաբանումից: Ցանկացած միջավայրի փոփոխություն բերում է մարդու մոտ այդ իրավիճակի վերաիմաստավորման, նոր քայլերի առաջացման (Красильников, Константинов 935):

Ժամանակակից հոգեբանական դաշտում բավականին խնդրային և առանձնահատուկ է արժեքային կամ արժեքների հարմարման հարցը: Այն բնութագրվում է անհատի մոտ առաջատար արժեքների առանձնացմամբ: Սա էլ իր

հերթին կապված է մշակույթի բարոյահոգեբանական դինամիկային: Միևնույն ժամանակ արժեքային հարմարումը կարող է ունենալ միանգամից մի քանի մշակույթների հետ կապ և տարբեր սոցիալ փոփոխություններ, որոնք ունեն համընդհանուր բնույթ՝ մեծ կախվածություն ունենալով մարդու կենսագործունեության ոլորտից (Трошина 33):

Միանգամայն, դրդապատճառականային ուսումնասիրությունների հետ մեկտեղ պետք է անդրադառնալ արժեհամակարգային, դիրքորոշումների հարցերին: Այս հետազոտության ուսումնասիրման կիզակետում է նաև ստիպված տեղահանվածների սոցիալ հոգեբանական հարմարման հարցերը: Կատարված հետազոտությունները փաստում են, որ անձի ցածր սոցիալ-հոգեբանական հարմարումը սերտորեն կապված է արժեքների, մոտիվների, դիրքորոշումների անհամընկնության հետ: Հատկանշական է, որ տվյալ գործընթացում կարևորվում է ստիպված տեղահանվածի հարմարումը կյանքի նոր պայմաններին և սոցիալ միջավայրին, մասնավորապես բնիկների հարմարումը տեղահանվածներին: Վ. Կոնստանտինովի կողմից դրական հարմարման էությունը դիտարկվում է անձի դրական վերաբերմունքից ելնելով, որը ենթադրում է ագրեսիայի մակարդակի իջեցում, վերափոխումներ, փոխադրեցություն միջավայրի հետ և կողմնորոշում դրականին, սուբյեկտիվ բավարարվածության զգացում: Դրան հասնելու համար անհրաժեշտ է սոցիալական նոր միջավայրին անձի ներգրավվածությունը, որն էլ իր հերթին կնվազեցնի տարբերությունները: Այստեղ կարևոր է մարդկանց ուղղված վերաբերմունքը՝ տոլերանտություն, բարյացակամություն, ագրեսիվություն և այլն (Константинов 16-21):

Այս արտակարգ իրավիճակում, անձի հոգեբանական ռեսուրսների վերաբաշխման ու կառավարման ժամանակ արտակարգ իրավիճակի կարևոր բաղադրիչ է դառնում հոգեբանական հարմարումը, որովհետև հոգեբանական ռեսուրսների հարմարման ընթացքում անձը ձգտում է հասնել կյանքի և գործունեության ներքին ու արտաքին պայմանների ներդաշնակության, ինչի հետ մեկտեղ աճում է արտաքին միջավայրի պայմաններին անձի հարմարման աստիճանը (Վելյան 75):

Հոգեբանական վերլուծության տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև հարմարման արտաքին և ներքին ձևերին: Այսպես՝ Ա. Նալչաջյանը հարմարման մասին խոսելիս՝ նշում է, որ այն անհատի կայուն և ադեկվատ արձագանքն է, երբ առաջ են գալիս խնդրային իրավիճակներ: Ա. Նալչաջյանը առանձնացնում է հարմարման երկու ձև՝ արտաքին, երբ անձը սովորում է հարմարվում է արտաքին, օբյեկտիվ խնդիրներին, և ներքին՝ կապված ներքին կոնֆլիկտների և անձի ճգնաժամերի հետ (Налчаджян, Психологическая адаптация 55):

Մեկ այլ հեղինակ՝ Վ Սելիվանովը, առաջ է քաշել սոցիալ-հոգեբանական հարմարման չորս ձև: Նա նշում է, որ մարդու վարքագիծը կյանքի նոր պայմաններում կարող է ունենալ պասիվ և ակտիվ դիրքորոշում: Պասիվի դեպքում կա ներքին համաձայնեցվածություն սեփական գործողությունների և այլոց հետ: Ակտիվի դեպքում՝ մարդը նախ ձգտում է հասկանալ մարդկանց և ձեռք բերել վստահություն, հետո էլ սեփական նպատակներով ազդել նրանց վրա: Չգուշավոր դիրքորոշումը ենթադրում է մարդկանց և ստեղծված իրավիճակի զգուշավոր ուսումնասիրում: Չորրորդը պարզ հարմարումն է, որը բնութագրվում է ավելի ուժեղի կողմից աջակցության ձգտմամբ, նրա հովանու տակ լինելով: Ինչպես նկատում ենք, մարդու արձագանքը ստեղծված նոր պայմաններում կարող է բնութագրվել հարմարման բոլոր տեսակներով, սակայն ոչ բոլորն են միանշանակ նպաստում անձի աճին, զարգացմանը (Селиванов 283-285):

Հետաքրքրական է նաև Մ. Դյաչենկոյի և Դ. Կադիբովիչի մոտեցումը, համաձայն որի, հարմարման գործընթացը կարելի է անվանել ճանաչողական փուլ, երբ մարդը

սովորում է վարքի նոր ձևեր, նոր խնդիրների ներքին ընդունում և դրանք լուծելու գործունեության նոր պայմանների ստեղծում (Дьяченко и др.69):

Եզրահանգումներ

Այսպիսով՝ կատարելով անձի սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդրի բազմակի մոտեցումների վերլուծություն, կարող ենք ասել, որ հարմարումն անձի հոգեկանի, արտաքին միջավայրի ազդեցությունների, փոփոխությունների արձագանքն է: Մարդու կյանքում հարմարումը դիտարկվում է որպես բնական գործընթաց, որն առաջ է գալիս կյանքի պայմանների փոփոխություններով պայմանավորված: Հարմարումը մարդու կյանքի անբաժան մասն է: Օրվա մեջ մենք բազմիցս ստիպված են ցուցաբերել հարմարում կյանքի փոքր և մեծ իրավիճակներին, իրադարձություններին: Հարմարումն ամբողջական և համակարգված գործընթաց է: Այն անձի ներքին և արտաքին, սուբյեկտիվ և օբյեկտիվ փոփոխությունների արդյունք է, որն էլ տեղի է ունենում շրջակա միջավայրի ազդեցության հետևանքով՝ իր հերթին փոխելով նաև միջավայրը: Հարմարումը ենթադրում է մարդու ողջ օրգան համակարգի, կենսագործունեության, կյանքի նոր պայմանների, ինքնակարգավորման, հուզական դրսևորումների կարգավորման մի դիմամիկ համակարգ-գործընթաց, որտեղ նշանակալի է հարմարվելը փոփոխություններին և դրա դիտարկումը որպես անձի զարգացում: Այստեղ մի կողմից սոցիալական դերերի, նորմերի յուրացումը հարմարման բանալին է, մյուս կողմից էլ անձի զարգացումն է դիտարկվում որպես դրական հարմարում:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ չնայած վերը թվարկած բազմաթիվ արժեքավոր հետազոտությունների, դեռ հոգեբանական գիտության մեջ չկա հարմարում հասկացության լիարժեք և ամբողջական սահմանում և բնութագիր:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք հարմարումը երկկողմանի բարդ բազմաշերտ գործընթաց է, որը դեռ ուսումնասիրման կարիք ունի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վեյլան, Արթուր, «Անձի հոգեբանական հարմարման մեխանիզմները արտակարգ իրավիճակներում», *Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն*, 2019 № 3 (30), էջ 74-79:
2. Гордон, Леонид. «Социальная адаптация в современных условиях». *Социологические исследования*, № 4, 1994, стр. 13-15.
3. Долгова, Валентина. «Адаптация как научно-исследовательский феномен: сущность и содержание». *Молодой ученый*, № 9 (9), 2009, стр. 149-152.
4. Дьяченко, Михаил. Кандыбович, Лев. *Психологические проблемы готовности к деятельности*. Минск: БГУ, 1976. с. 175.
5. Дюркгейм, Эмиль. *Социология*. Ее предмет, метод. М. Канон, 1995. стр. 352.
6. Ковригина, Ирина. «Социально-психологическая адаптация: сущность, виды и стадии формирования». *Актуальные проблемы гуманитарных и естественных наук*, № 9, 2009, стр. 201–205.
7. Константинов, Всеволод. «Социально-психологическая адаптация вынужденных мигрантов в условиях диффузного или компактного проживания». *Психологический журнал*, Т. 26. № 2, 2005, стр. 16 - 21.
8. Красильников, Игорь, Константинов, Всеволод. «Социально-психологическая адаптация личности и стратегии разрешения внутренних конфликтов». *Известия Самарского научного центра РАН*, № 4-4, 2009, стр. 932- 937.
9. Милославова, Ирина. «Адаптация как социально-психологическое явление». *Социальная психология и философия*. Изд-во «Мысль», 1973. стр. 111-120.

10. Налчаджян, Альберт. *Социально-психическая адаптация личности: (Формы, механизмы и стратегии)*. Изд-во АН Армянской ССР, Ереван, 1988, 69 с.
11. --- *Психологическая адаптация: Механизмы и стратегии*. СПб., Эксмо, 2012, 237 с.
12. Селиванов, Владимир. «Взаимоотношения в малой группе и волевая активность». *Материалы III Всесоюзного съезда Общества психологов СССР*, в 5 т., Т. 3. Вып. 1, М., 1968, стр. 283-285.
13. Трошина, Надежда. «Виды адаптации современного человека: социально-философский анализ проблемы». *Известия Саратов. ун-та. Нов. Сер. Философия. Психология. Педагогика*, Т. 14, 2014, стр. 32-34.
14. Хьелл, Ларри и Зиглер, Дэниел. *Теории личности*. «Питер», Санкт - Петербург, 2008, 607 с.
15. Царегородцев, Геннадий, Георгиевский, Александр и др. *Философские проблемы теории адаптации*. Изд-во «Мысль», Москва, 1975, 276 с.
16. Шибутани, Тамотсу. *Социальная психология*. Феникс, Ростов- на- Дону, 1999, 544 с.

WORKS CITED

1. elyan, Art'ur. «And'i hoguebanakan harmarman mexanizmneri' artakarg iravitwaknerum»: «Banber Erevani hamalsarani. P'ilisop'ayut'yun, Hoguebanut'yun», № 3 (30) e'j 74-79. [*Mechanisms of Psychological Adaptation of a Person in Emergency Situations* Articles of Yerevan University. Philosophy, Psychology", No. 3 (30) pp 74-79] 2019. (In Armenian)
2. Gordon, Leonid. *Social'naja adaptacija v sovremennyh uslovijah. Sociologicheskie issledovanija.* № 4. s 13-15. [*Social Adaptation in Modern Conditions. Sociological research*. No. 4. pp. 13-15.] 1994. (In Russian)
3. Dolgova, Valentina. *Adaptacija kak nauchno-issledovatel'skij fenomen: sushhnost' i sodержание*. Molodoj uchenyj. № 9 (9). s 149-152. [*Adaptation as a Scientific Research Phenomenon: Essence and Content*. Young scientist. No. 9 (9). pp. 149-152] 2009. (In Russian)
4. D'jachenko, Mihail. Kandybovich, Lev. *Psihologicheskie problemy gotovnosti k dejatel'nosti*. Minsk: BGU., S. 175. [*Psychological Problems of Readiness for Activity*. Minsk: BSU, P. 175] 1976. (In Russian)
5. Djurkgejm, Jemil'. *Sociologija. Ee predmet, metod*, M. Kanon, pp. 352 [*Sociology. Its subject, method*, M. Kanon, P. 352] 1995. (In Russian)
6. Kovrigina, Irina. *Social'no-psihologicheskaja adaptacija: sushhnost', vidy i stadii formirovanija*. Aktual'nye problemy humanitarnyh i estestvennyh nauk. № 9 s. 201–205. [*Socio-Psychological Adaptation: Essence, Types and Stages of Formation*. Current problems in the humanities and natural sciences. No. 9. pp. 201–205] 2009. (In Russian)
7. Konstantinov, Vsevolod. *Social'no-psihologicheskaja adaptacija vynuzhdennyh migrantov v uslovijah diffuznogo ili kompaktnogo prozhivaniya*. Psihologicheskij zhurnal. T. 26. № 2. S. 16 - 21. [*Socio-Psychological Adaptation of Forced Migrants in Conditions of Diffuse or Compact Living*. Psychological Journal. T. 26. No. 2. P. 16 - 21.] 2005. (In Russian)
8. Krasil'nikov, Igor', Konstantinov, Vsevolod. *Social'no-psihologicheskaja adaptacija lichnosti i strategii razreshenija vnutrennih konfliktov*. Izvestija Samarskogo nauchnogo centra RAN. № 4–4. S. 932- 937. [*Socio-Psychological Adaptation of Personality and Strategies for Resolving Internal Conflicts*. News of the Samara Scientific Center of the Russian Academy of Sciences. No. 4–4. pp. 932-937] 2009. (In Russian)
9. Miloslavova, Irina. *Adaptacija kak social'no-psihologicheskoe javlenie .Social'naja psihologija i filosofija*: Izd-vo «Mysl'», S. 111-120. [*Adaptation as a Socio-Psychological*

Phenomenon. Social psychology and philosophy: Mysl Publishing House, pp. 111-120.] 1973. (In Russian)

10. Nalchadzhjan, Al'bert *Social'no-psihicheskaja adaptacija lichnosti: (Formy, mehanizmy i strategii)*. Erevan: Izd-vo AN Armjanskoj SSR, pp 69. [*Socio-Psychic Adaptation of Personality: (Forms, mechanisms and strategies)*. Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 69 p.] 1988. (In Russian)

11.---- Psihologicheskaja adaptacija: *Mehanizmy i strategii*. SPb.: Jeksmo,S.237. [*Psychological adaptation: Mechanisms and Strategies*. St. Petersburg: Eksmo, 237 p.] 2012. (In Russian)

15. Six Seconds: the emotional intelligence network. *A Case for Emotional intelligence in our Schools*, 316 Seville Way, San Mateo, CA 94402, About Us." *Six Seconds*, Six Seconds, 2024, www.6seconds.org/about/. Accessed 15 July 2024.
16. Shriver, T.P., & Weissberg, R.P. "No Emotion Left Behind." *The New York Times*, 16 Aug. 2005, www.nytimes.com/2005/08/16/opinion/no-emotion-left-behind.html. Accessed 15 July 2024.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԴՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈՒԶԱԿԱՆ ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ

ՄԵՐԻ ՂԱԶԱՐՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի՝ ակադեմիկոս Մ. Մազմանյանի անվան
հոգեբանության ամբիոնի հայցորդ,
ք. Բեյրութ, Լիբանան*

Հոդվածում ներկայացվում է Հայաստանի և Լիբանանի մանկավարժական հաստատություններում իրականացած հետազոտության համեմատական վերլուծության արդյունքները: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ուսուցիչների ինքնագիտակցության, ինքնակարգավորման, կարեկցանքի, մոտիվացիայի և սոցիալական հմտությունների մակարդակը, ներկայացնել սոցիալական հմտությունների կարևորությունը ժամանակակից դպրոցներում, ուսուցման ռազմավարություններում և ապագա մանկավարժների պատրաստման գործում, ինչպես նաև բացահայտել ուսուցիչների ուժեղ կողմերը այդ ոլորտներում, գտնել այն խնդիրները, որոնք մեկնարկային կետեր կլինեն համայնքներին մասնագիտական զարգացման հնարավորություններ առաջարկելու համար: Աշխատանքում ներկայացնում է մանկավարժների անձնական և սոցիալական իրավասությունների համեմատական ուսումնասիրության քանակական վերլուծություն: Այն առաջարկում է գրականության ակնարկ սոցիալական զգացմունքային ուսուցման ծրագրերի առավելությունների վերաբերյալ՝ դպրոցներում արդարություն ստեղծելու, ինքնագիտակցության ոգին մնուցելու, սովորողներին հույզերի կարգավորման գործիքների և կարեկցանքի վրա հիմնված առողջ, երկարատև հարաբերություններ կառուցելու կարողության վերաբերյալ: Հոդվածում ներկայացվում են առաջարկություններ և ուղեցույցներ դպրոցների համար, որոնք նպատակ ունեն արդյունավետ կերպով ներկայացնելու սոցիալական զգացմունքային

ուսուցումը դասարաններում՝ թիրախավորելով ուսուցիչների գիտելիքները սոցիալական հոլգական ուսուցման վերաբերյալ:

Հիմնաբառեր՝ *հոգեկան առողջություն, սոցիալական հմտություններ, սոցիալական զգացմունքային ուսուցում, հոլգական բարեկեցություն, փափուկ հմտություններ, կյանքի հմտություններ, Հայաստան, Հիբանան:*

ФОРМИРОВАНИЕ СОЦИАЛЬНО-ЭМОЦИОНАЛЬНЫХ НАВЫКОВ УЧИТЕЛЕЙ АРМЯНСКИХ ШКОЛ В ЛИВАНЕ И АРМЕНИИ

МЕРИ КАЗАРЯН

*соискатель кафедры психологии имени академика М. Мазмания
Армянского государственного педагогического
университета им. Хачатура Абовяна,
г. Бейрут, Ливан*

В статье представлены результаты сравнительного анализа исследований, проведенных в педагогических учреждениях Ливана и Армении. Целью данной статьи является изучение уровня самосознания, саморегуляции, эмпатии, мотивации и социальных навыков учителей, представление важности социальных навыков в современных школах, в стратегиях преподавания и при подготовке будущих педагогов, выявление сильных сторон учителей в этих областях, а также выявление проблем, которые станут отправной точкой для предоставления сообществу возможностей профессионального развития. В статье представлен количественный анализ сравнительного исследования личностных и социальных компетенций педагогов. Кроме того, представлен и обзор литературы о преимуществах программ социально-эмоционального обучения с точки зрения обеспечения равенства в школах, воспитания духа самосознания, предложения учащимся инструментов регулирования эмоций и способности строить здоровые долгосрочные отношения, основанные на эмпатии. В статье представлены рекомендации и методические указания для школ, которые стремятся эффективно внедрить социально-эмоциональное обучение в классах, ориентируясь на знания учителей в области социально-эмоционального обучения.

Ключевые слова: *психическое здоровье, социальные навыки, социально-эмоциональное обучение, эмоциональное благополучие, мягкие навыки, жизненные навыки, Армения, Ливан.*

WHY QUALITY OF THE TEACHER MATTERS? TEACHERS AND TEACHING STYLE *

UDC 159.98

DOI: 10.52063/25792652-2024.2.21-118

SOSSY KAROGLANIAN

*Kalusdian-Noubarian Armenian School,
Armenian language and literature teacher;
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University,
Chair of Applied Psychology, Ph.D. Student,
Cairo, Egypt
sossiechilingirian@gmail.com
ORCID: 0009-0004-2192-3979*

This article explores the teachers and their careers, and it aims to highlight the importance of the teachers' quality, the way skilled teachers inspire and motivate their students by bringing life to curriculum. This article also emphasizes the importance of teaching skills.

To accomplish our aim, the following task have been set: to experimentally study the teaching style of teachers and their ability to inspire students taking into consideration their values of priority, psycho-emotional state, self-assessment, teaching style and reliability of the facts.

In order to achieve our goal, we used the test method to determine teachers' teaching style. The main goal is to acknowledge the teaching style of teachers and their ability to inspire their students and mainly to discover how their methods affect the researcher's motivation and academic progress.

As a result, we found out that the student's motivation, learning improvements and academic achievements depend on the quality of the teacher.

The motivation of a student in the third millennium requires a passionate and motivated teacher, who possesses a strategic vision within the education system and implements effective lesson plans.

Keywords: *teacher, teaching, good teaching, teaching style, teacher quality, to inspire, to motivate.*

Introduction How do We Define the Teacher?

In his book "A Passion for Teaching" Christopher Day quoted Clark's (Day 184) definition about teachers, that they are the human point of contact with students. All other influences on the quality of education are mediated by who the teacher is and what the teacher does. Teachers have the potential for enhancing the quality of education by bringing life to curriculum and inspiring students to curiosity and self-directed learning. And teachers can also degrade the quality of education through error, laziness, cruelty or incompetence. For better or worse, teachers determine the quality of education.

Day (Day 184) defined teacher as potentially the single most important asset in the achievement of the learning society. It is the teacher who holds the key to students'

* Հոդվածը ներկայացվել է 08.04.2024թ., գրախոսվել՝ 07.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

growing or diminishing self-esteem, achievement, and visions of present and future possibilities for learning through their commitment, knowledge and skills.

The best teachers at all levels are those who have strong intellectual and emotional identities and commitments both to their subject(s) and to their students.

Finnish professor Kirsi Tirri in her article (Tirri 10) said that teachers should be able to prepare their students for the future by teaching them the 21st century skills.

She discussed Finnish (Finland) national curriculum in which 7 areas of core competencies related to 21st century skills have been proposed, including:

1. Thinking and learning to learn.
2. Cultural competence, interaction, and self- expression.
3. Taking care of oneself, managing daily life.
4. Multi-literacy.
5. Competence in information and communication technology.
6. Working life competence and entrepreneurship.
7. Participation, involvement and building a sustainable future.


She added that Finland was the first Nordic country to establish the ethical codes for teachers in 1998. During the last 20 years, these codes have been revised and updated. In these codes, the basic values for teaching profession are established. These values are dignity, truthfulness, fairness, responsibility and freedom. The skills required for the 21st century encompass an open-minded attitude from educators and a growth mindset towards learning. This approach enables teachers to continually embrace new challenges and effectively guide students in their pursuit of purposeful learning.

Christopher Day (Day 10) in his work defined teaching as a journey of hope, based upon a set of ideals, for example, I, as a teacher, can and will make a difference to the learning and the lives of the students. I teach, and my colleagues and I work diligently despite being aware of obstacles to motivation and commitment, the socio-economic circumstances of our students, resource constraints, and policy factors beyond our control.

Methods and Results

In our article we used R. Rozhdestvensky's teaching style test to determine teachers' teaching style and learn some features of their nervous system. The main goal is to acknowledge the teaching style of the teachers and their ability to inspire their students and mainly to discover how their methods affect the researcher's motivation and academic progress.

Our research was conducted in 2018-2023. The test, consisting of 50 questions, was completed by 24 teachers from a school in Egypt. Each teacher answered by selecting the option that best reflected their thoughts, feelings, and reactions, and marked the appropriate box on the answer sheet. The data were collected and analyzed as follows: choosing from the 1st scale's questions 1, 6, 11, 16, 21, 26, 31, 36, 41, 46 the most possible answer by assigning 1 point, from the 2nd scale's questions 2, 7, 12, 17, 22, 27, 32, 37, 42, 47 the most possible answer by assigning 1 point, from the 3rd scale's questions 3, 8, 13, 18, 23, 28, 33, 38, 43, 48 the most possible answer by assigning 1 point, from the 4th scale's questions 4, 9, 14, 19, 24, 29, 34, 39, 44, 49 the most possible answer by assigning 1 point, from the 5th scale's questions 5, 10, 15, 20, 25, 30, 35, 40, 45, 50 the most possible answer by assigning 1 point, then we added the points and received 3 digit sum, by choosing the highest digit, we got the teacher's self-diagnosis experience.



Discussion

Thus, the result of the completed test of the teachers shows that 75% of the teachers defend the interests of their students and deal with them with trust and love, while 25% of the teachers have interests not limited to academic problems. This means that they care for their students, but 75% of the result is not enough for an efficient and effective teacher's performance.

A child, especially the third millennium child needs to be safe, both at home and at school, so that s/he can acquire the essential academic knowledge.

From the perspective of an inspirational approach to teaching, only the 75% of the result is not a satisfactory figure, which means that accessive effort should be exerted to create awareness among the teaching circles to adopt a more friendly approach towards students always revealing their love and care towards the pupils that they are responsible for the education. The results of the 2nd scale show that 60% of the teachers experience a feeling of anxiety and powerlessness, 33% of them are in psycho-emotional state, and 7% can make the right decisions and bear responsibility for their consequences.

Here, we should refer to the "psycho-emotional state" by quoting the definition, that "They are a special form of human mental state and experience with the manifestation of emotional responses to oneself, others, and to reality. These states are largely regulated by the emotional-volitional sphere and include emotional responses and relationships. The concept of "psycho-emotional state" is collective and includes several phenomena, such as loneliness (Kon, Korchagina, Rogova, Fromm-Reichman, Frankl), depression

(Aleksandrovsky, Vertogradova, Lakosina, Sinitsyn & Smulevich) and neurosis (Vasilyuk, Garbuzov, Karvasarsky, Myasishchev, Svyadosch, Horner)". 60% of the result experiencing a feeling of anxiety and powerlessness, as the diagram shows, has a bad effect on the student's academic success and achievement. The results of the 3rd scale show that 75% of the teachers can create an atmosphere of lively communication in classes and provide the students with psychological support, and 25% of them do not involve in free communication with others, which prevents them from creating a favorable creative atmosphere in the classroom. The results of 4th scale show that 33% of the teachers have a reputation as a "influential" teacher, they make their own decisions, and 67% of them are equal partners with the students, they involve children in decision-making, listen to their opinions, consider not only academic performance, but also the personal qualities of students. The results of the 5th scale show that 8% of the teachers are very sincere and 92% are characterized by satisfaction with their profession contributing to the effectiveness of learning.

It is true that the third millennium student needs teachers who are interested in their educational progress, know how to involve them in different types of activities and work, and are also interested in their personal qualities, they also need an influential, disciplined teacher, so that the acquisition of knowledge goes more smoothly.

From the results of the research, a question mark hangs above the teaching styles of most of the teachers generated from the basic ways of explaining the lesson, where accessive demandingness and meanness from the teachers' side would affect negatively the efforts of the teachers to inspire and lead them to acquire knowledge and achieve academically.

It is essential to take different types of measures to inspire and motivate the 21st century students, in the process of acquiring knowledge.

In teacher-student relationship and in the process of the student's academic achievement, one of the most important factors is the teacher's quality.

According to Sonia Guerriero (Guerriero 99-118), teacher's quality is an important factor in determining gains in student achievement, taking into consideration student's learning and family background characteristics.

Knoell M. Christopher quoted Hargreaves (Knoell 135) point of view that "good teaching is charged with positive emotion. It is not just a matter of knowing one's subject, being efficient, having correct competencies, or learning all the right techniques. Good teachers are not just well-oiled machines. They are emotional, passionate beings who connect with their students and fill their work and classes with pleasure, creativity, challenge and joy."

According to Christopher Day, the high quality of teachers in schools is of paramount importance.

It is suggested that quality is related not only to the knowledge and skills which may be developed during training and improved during the course of a career, but also to the passion which the best teachers and teacher educators bring to their work.

Christopher Day quoted Rowe (Day 27) that "there are strong empirical grounds for believing that teachers can and do make a difference and that consistent high-quality teaching, supported by strategic professional development, can and does deliver drastic improvements in student learning."

As for Day, there are five observations about the qualities evident in good teaching and teachers, that have been made by researchers over the years.

1. Good teaching is recognized by its combination of technical and personal competencies, deep subject knowledge and empathy with the learners. Good teaching is a passionate affair.

2. Good teachers are universally identified by students as those who care.

3. Teachers' sense of identity is crucial to their own motivation, commitment and effectiveness.

4. The extent to which teachers are able to understand emotions within themselves and others is related to their ability to lead and manage teaching and learning.

5. To be a good and effective teacher over time requires hopefulness and resilience, the ability to bounce back in challenging circumstances and changing contexts.

Day (Day 184) in his work quoted the Finnish educator Haavio's 3 key characteristics of the good teacher:

1. Pedagogical discretion - the ability to use the most appropriate teaching for each individual.

2. Pedagogical love - the caring instinct, i.e. the desire to help, protect and support.

3. Vocational awareness - it seizes the teachers' personality in such a way that he/she is ready to do his/her utmost for it and finds in its internal gratification and the purpose of his/her life.

R.M. Harden and Joy Crosby (Harden & Crosby 334-347) quoted Biggs definition that a good teacher is s/he who helps the student to learn. He or she contributes to this in a number of ways. The teacher's role goes way beyond information giving, with the teacher having a range of key roles to play in the education process. What one sees as good teaching suggests Biggs, depends on what conception of teaching one has.

According to Alex Moore (Moore 191) the key to good teaching is conceived as having less to do with education and training, and more to do with the inherent or intrinsic qualities of character or personality of the teacher, typically coupled with a deeply "caring" orientation aimed very specifically at "making a difference" to pupils' lives. And he defined the good teacher as precisely the teacher who does not "take over", dictate, instruct, but who supports, responds, advises, assesses, needs and assists development; a communicative competent, reflective practitioner who also enjoys a high degree of professional autonomy and respect and whose success as a teacher may be judged in terms of the extent to which to expand their students' expectations and possibilities.

Conclusion

Research suggests that quality of the teacher matters in the teacher-student relationship and in the process of the student's academic achievement, one of the most important factors is the teacher's quality. Teachers that are passionate, enthusiastic, life-long learners, teachers that create a good and positive atmosphere in the class, their class is based on mutual respect, and they apply new teaching methods.

A student's motivation, learning improvement and academic achievement depends on the quality of the teacher. This means that not only the knowledge and the teaching skills matter, but also the teacher's passion, open-minded attitude, creativity, effectiveness. The good teachers are the ones who believe in student's abilities, who care, motivate, inspire and guide them towards the future.

As a result, we concluded, that as the mindset, priorities and perspectives of students are different in the 21st century compared to previous times, nowadays teachers face the challenge of adopting ways of conducting their lessons in a more pleasant way, because the basic method of teaching is no longer admirable.

The third millenium student needs a passionate and motivated teacher, who has insight into the education system, who knows to use new and inspiring teaching methods, who cares about the studeents, and involves them in class, (especially the weakest), and

whose class is based on mutual respect, who masters his/her profession, can implement a curriculum wisely and effectively and succeeds to penetrate the hearts of their students.

REFERENCES

1. Day, Christopher, "A Passion for Quality: Teachers Who Make a Difference", *Edurama.be*, 2009, p.10.
2. ---, *A Passion for Teaching*, 1st ed., University of Nottingham, Routledge, London, 2004, p. 184, doi:10.4324/9780203464342.
3. Guerriero, Sonia, *Teacher's Pedagogical Knowledge and The Teaching Profession*, Background Report and Project Objectives, OECD, 2017, pp. 99-118, doi:10.1787/9789264270695-6-en.
4. Harden, Ronald, and Crosby Joy, *AMEE Guide No 20: The Good Teacher is More Than a Lecturer-The Twelve Roles of The Teacher*, Vol. 22, No 4, 2000, pp. 334-347, <https://doi.org/10.1080/014215900409429>.
5. Knoell, Christopher M., "The Role of the student-Teacher Relationship in the Lives of Fifth Graders: A Mixed Methods Analysis", *Public Access Theses and Dissertations from the College of Education and Human Sciences*, May 2012, p. 135.
6. Maksimenkova, Larissa, Guchkova Tatyana N., Chernova Veronica, Nikolaev Sergei M, Romanov Kirill I., Rantsev Gennady M, "Psychoemotional States and Personality Traits of Patients Undergoing Treatment", *Advances in Health Sciences Research*, 2020, pp. 238-243, doi:10.2991/ahsr.k.201001.048.
7. Moore, Alex, *A Good Teacher: Dominant Discourses in Teacher Education*, 2004, 1st ed., p. 191.
8. Tirri, Kirsi, "The Purposeful Teacher", *Teacher Education in the 21st Century*, Dec. 2018, p. 10, doi:10.5772/intechopen.83437.
9. World Bank, *Teacher Skills and Motivation Both Matter (Though Many Education Systems Act Like They Don't)*, Oct. 2017, pp.131-144, https://doi.org/10.1596/978-1-4648-1096-1_ch6.

ԻՆՉՈՒՒ Է ԱՆՅՐԱԺԵՇՏ ՌԻՍՈՒՑԻ ՈՐԱԿԸ: ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՈՃ

ՍՈՍԻ ԳԱՐՕՂԱՆՅԱՆ

Գալուստյան-Նուբարյան Ազգային վարժարանի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի,
Հայկական պետական մանկավարժական համալսարանի
կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
ք. Կահիրե, Եգիպտոս

Այս հոդվածն ուսումնասիրում է ուսուցիչներին և նրանց կարիերան: Այն ընդգծել է ուսուցիչների որակի կարևորությունը. թե ինչպես են հմուտ ուսուցիչները մոտիվացնում են իրենց ուսանողներին՝ կյանքի կոչելով ուսումնական պլանը: Այս հոդվածում ընդգծվում է նաև ուսուցման հմտությունների կարևորությունը:

Մեր նպատակն իրականացնելու համար կատարել ենք հետևյալ առաջադրանքը՝ փորձարարական ճանապարհով ուսումնասիրել ուսուցիչների դասավանդման ոճը և սովորողներին մոտիվացնելու նրանց կարողությունը՝ հաշվի առնելով նրանց առաջնահերթության արժեքները, հոգե-հուզական

վիճակը, ինքնագնահատումը, դասավանդման ոճը և փաստերի հավաստիությունը:

Մեր նպատակին հասնելու համար օգտագործել ենք թեստային մեթոդը՝ ուսուցիչների դասավանդման ոճը որոշելու համար: Հիմնական նպատակն է ճանաչել ուսուցիչների դասավանդման ոճը և ուսանողներին մոտիվացնելու նրանց կարողությունը և բացահայտելու, թե ինչպես են նրանց մեթոդներն ազդում հետազոտողի մոտիվացիայի և ակադեմիական առաջընթացի վրա:

Արդյունքում, մենք պարզեցինք, որ աշակերտի մոտիվացիան, ուսման բարելավումը և ակադեմիական նվաճումները կախված են ուսուցչի որակից:

Երրորդ հազարամյակի աշակերտին մոտիվացնելու համար անհրաժեշտ է ջերմեռանդ և մոտիվացված ուսուցիչ, որն ունի կրթական համակարգում ռազմավարական տեսլական և արդյունավետ դասի պլան:

Հիմնաբաներ՝ ուսուցիչ, ուսուցում, լավ ուսուցում, դասավանդման ոճ, ուսուցչի որակ, ներշնչել, մոտիվացնել:

ПОЧЕМУ КАЧЕСТВО ПРЕПОДАВАТЕЛЯ ИМЕЕТ ЗНАЧЕНИЕ? УЧИТЕЛЯ И СТИЛЬ ПРЕПОДАВАНИЯ

СОСИ КАРОГЛАНЯН

*преподаватель армянского языка и литературы
в Армянской школе Калусдян-Нубарян;*

*аспирант кафедры прикладной психологии Армянского государственного
педагогического университета им. Х. Абовяна,
Каир, Египет*

В данной статье рассматривается личность учителя и его деятельность и акцентируется внимание на важности качества работы учителей. Особое внимание уделяется тому, как опытные преподаватели могут вдохновлять и мотивировать своих учеников, приводя их к успеху в усвоении учебных программ. В статье также подчеркивается значение преподавательских навыков.

Для достижения цели исследования была поставлена задача экспериментально изучить стиль работы учителей и их способность вдохновлять учеников учитывая при этом их приоритетные ценности, психоэмоциональное состояние, самооценку, а также стиль преподавания и достоверность преподаваемой информации.

Для реализации этой задачи был использован метод тестирования для определения стиля работы учителей. Основной целью исследования было выявление стиля преподавания и способности учителей вдохновлять своих учеников, а также определение влияния их методов работы на мотивацию и успеваемость учащихся.

В результате исследования было установлено, что мотивация учеников, их успеваемость и академические достижения зависят от качества работы преподавателя. В современном мире мотивация учеников требует труда увлеченного и мотивированного учителя, обладающего стратегическим видением в рамках системы образования и способного эффективно реализовать цели и задачи урока.

Ключевые слова: *учитель, преподавание, хорошее преподавание, стиль преподавания, качество преподавателя, вдохновлять, мотивировать.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱԾՐՋՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ PESTLE ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՈՎ ***

ՀՏԴ 338

DOI: 10.52063/25792652-2024.2.21-125

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և
միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
t.torosyan@ysu.am
ORCID: 0009-0009-8402-7422

ՇՈՂԻԿ ՄԵՋԼՈՒՄՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և
միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
shogikmejlumyan2022@gmail.com
ORCID: 0000-0003-2000-0318

Սույն հոդվածը նպատակն է PESTLE վերլուծական գործիքի միջոցով գնահատել Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական խնդիրներն ու վերհանել լուծման ուղիները, որոնք կարող են երկարաժամկետ և կայուն զարգացման միտումներ դրսևորել՝ դիրքավորելով Հայաստանը միջազգային շուկայում:

Հոդվածում Հայաստանի միջազգային զբոսաշրջային ներուժը գնահատելու համար օգտագործվել են հիմնականում քանակական և որակական հետազոտական մեթոդներ: Խնդիրը համակողմանի հասկանալու համար հոդվածում օգտագործվել են վիճակագրական, (գրաֆիկական), համեմատական և կառուցվածքային վերլուծության մեթոդները:

Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ PESTLE վերլուծական գործիքի հիմնական բաղադրիչներով առկա են զբոսաշրջային ներուժի ամբողջական իրացման մի շարք խնդիրներ ու մարտահրավերներ: Այսպես, քաղաքական առումով Հայաստանը պարբերաբար բախվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ցնցումների: Տնտեսական առումով առկա են խնդիրներ ինչպես տնտեսության ընդհանուր զարգացման մակարդակի, այնպես էլ ենթակառուցվածքներով հագեցվածության առումով: Սոցիալական գործոնի համատեքստում, հատկապես հաշվի առնելով Հայաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությունն ու դրա նշանակությունը զբոսաշրջության զարգացման

* Հոդվածը ներկայացվել է 30.03.2024թ., գրախոսվել՝ 07.05.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

ուղղությամբ, հնարավորությունները մնում են չիրացված: PESTLE վերլուծական գործիքի տեխնոլոգիական գործոնով ցույց է տրվել, որ Հայաստանում դեռևս առկա են հեռահաղորդակցական ցանցերի և բարձր տեխնոլոգիական սարքավորումների արդիականացման և սպառողների պահանջներին համապատասխանեցման մի շարք մարտահրավերներ: Իրավական դաշտի անկատարությունն ու զբոսաշրջային հոսքերի ակտիվացմամբ պայմանավորված բնապահպանական խնդիրները նույնպես բավական լուրջ խնդիրներ են ստեղծում ոլորտի կայուն զարգացման համար:

Հիմնաբառեր՝ զբոսաշրջություն, Հայաստան, PESTLE վերլուծական գործիք, ենթակառուցվածքներ, պատմամշակութային ժառանգություն, միջազգային զբոսաշրջային հոսքեր, զբոսաշրջության մրցունակություն:

Նախաբան

Միջազգային զբոսաշրջության արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը Հայաստանի տնտեսության զարգացման կարևորագույն «լույսփայլերից» է: Հայաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությունը, բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական դիրքը կարող են երկրի զբոսաշրջության ոլորտի միջազգային մրցունակության բարձրացման իրական հնարավորություններ ստեղծել: Միևնույն ժամանակ, Հայաստանի զբոսաշրջային ներուժն ամբողջության իրացված համարել հնարավոր չէ՝ հաշվի առնելով հատկապես ոլորտի զարգացումը խոչընդոտող մի շարք առանցքային գործոններ՝ զբոսաշրջային ծառայությունների բարձր գները, կենտրոնացվածությունը Երևանում, Հայաստանի պատմամշակութային ժառանգության «առևտրայնացման» վերաբերյալ խնդիրները և այլն: Բացի այդ, Հայաստանի զբոսաշրջության ոլորտը բախվում է բազմաթիվ մարտահրավերների, որոնք խոչընդոտում են միջազգային հարթակում արդյունավետ մրցակցելու երկրի կարողությանը: Հայաստանի զբոսաշրջության ոլորտի մրցունակության ուսումնասիրության արդյունքում հնարավոր է դառնում բացահայտել ու գնահատել ՀՀ զբոսաշրջային ներուժը, ներկայացնել ոլորտի մրցունակության բարելավմանը խոչընդոտող հիմնական խնդիրները ու դրանց լուծման ուղղությամբ առարկայական լուծումներ գտնել: Այս համատեքստում, PESTLE վերլուծական գործիքի կիրառմամբ ՀՀ զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտների նախասահմանումն ու դրանց լուծման ուղիների վերհանումը այս հոդվածի հիմնական նպատակն է:

Զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացումը Հայաստանի համար ենթադրում է համալիր մոտեցում, որի ընթացքում անհրաժեշտ է գործարկել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային զբոսաշրջային կարիքների ու պահանջների բավարարման համաչափ ու արդյունավետ գործիքակազմ, ենթակառուցվածքներ և կարգավորման ինստիտուտներ: Հայաստանի զբոսաշրջային ներուժի ամբողջական իրացման և զարգացման հնարավորությունների բացահայտման համար մեծ կարևորություն է ստանում այդ ներուժի համապարփակ գնահատումն ու զարգացման ուղիների կանխորոշումն ըստ դրա:

Գրականության ակնարկ

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է, որը նպաստում է առանձին երկրների տնտեսությունների զարգացմանը, միջազգային մրցունակության ամրապնդմանն ու միջմշակութային հարաբերությունների կայացմանը: Պետք է նշել, որ տնտեսագիտական գրականության մեջ չկա մեկ միասնական սահմանում, որը հնարավորություն կտա համապարփակ կերպով ներկայացնել միջազգային զբոսաշրջությունը և դրա դրևստորման ամբողջականությունը:

Ընդհանուր առմամբ, զբոսաշրջությունը կարելի է դիտարկել որպես մարդկանց նպատակաուղղված տեղաշարժ կոնկրետ օբյեկտի այցելության կամ հետաքրքրությունների բավարարման նպատակով և վերադարձի պայմանով: Զբոսաշրջության իրավական-սկզբունքային շարժառիթ կարելի է համարել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», որտեղ ամրագրված են՝

- ✓ ցանկացած մարդ իրավունք ունի ազատ տեղաշարժվելու և իր համար բնակության վայր ընտրելու ցանկացած պետության սահմաններում,
- ✓ ցանկացած մարդ իրավունք ունի մեկնելու ցանկացած երկրից, այդ թվում՝ և իր, և վերադառնալու իր երկիր,
- ✓ ցանկացած մարդ իրավունք ունի հանգստի և ազատ ժամանակի, ներառյալ աշխատանքային օրվա խելամիտ սահմանափակման և պարբերաբար վճարվող արձակուրդի («Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»):

ՄԱԿ-ի կողմից ընդունված առաջին բնորոշումներից մեկը մեկնաբանում է զբոսաշրջությունը որպես «մշտական բնակավայրի սահմաններից դուրս տեղաշարժերի հետ կապված մարդու առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման վրա ազդող ակտիվ հանգիստ» (United Nations, 5):

Ընդհանուր առմամբ, բնակչության զբոսաշրջային ակտիվությունը ժամանակակից հասարակության կարևորագույն պահանջմունքներից մեկն է: Միջազգային զբոսաշրջության շնորհիվ հնարավոր է նախկինում փակ հասարակությունները վերափոխել ակտիվ, բազմաառարկա և դինամիկ զարգացող հասարակությունների, որտեղ տարբեր ազգերի միջև շփումը ամենօրյա իրականություն է: Առհասարակ, զբոսաշրջությունը սոցիալ-տնտեսական դրսևորում է, որն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն է թողնում ոլորտին առնչվող ենթակառուցվածքների վրա (Adebayo, 13-19): Զբոսաշրջության ամենամեծ առավելությունը երկրի տնտեսության մեջ փողի ներհոսքի ապահովումն է, ինչը հատկապես էական է զարգացող տնտեսություններ ունեցող երկրների համար:

Բացի այդ, զբոսաշրջությունը տնտեսությանը տարբերակված (դիվերսիֆիկացված) զարգացման հնարավորություններ է տալիս, խթանում է երկրում զբաղվածության աճը և, իհարկե, ուղղակիորեն անդրադառնում է տեղական ենթակառուցվածքների բարելավման վրա: Զբոսաշրջությունը հնարավորություն է տալիս գործարարներին կյանքի կոչելու նոր գաղափարները և ստեղծելու նոր արտադրանք: Հատկանշական է նաև զբոսաշրջության սոցիալական գործառույթը: Ի վերջո, միջազգային զբոսաշրջիկները հիմնականում ցանկանում են տեսնել այլ երկրի իրական պատկերները, ինչը խթանում է մշակութային ժառանգության պահպանումը, նպաստում է միջմշակութային հաղորդակցությանն ու բարիդրացիական հարաբերությունների ձևավորմանը երկրների միջև: Հատկապես փոքր, բաց տնտեսություն ունեցող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, զբոսաշրջությունը երկրի տնտեսական ներուժի բացահայտման, համաշխարհային տնտեսությանը ինտեգրման առանցքային շարժիչ ուժ է, որն անհրաժեշտ է բացահայտել և իրացնել առավելագույն հնարավորություններով:

Մեթոդաբանություն

Սույն հոդվածի մեթոդաբանական հիմքը երկրորդային տեղեկության հավաքագրման գործիքակազմի կիրառումն է: Հոդվածի իրականացման մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտական տեսությունների հիմնադրույթները, զբոսաշրջությունը ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաները, Հայաստանի պետական կառավարման մարմինների որոշումները, հաշվետվություններն ու ռազմավարական ծրագրերը, ոլորտին առնչվող մասնավոր կազմակերպությունների

հաշվետվություններն ու Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալները և այլն: Հոդվածի շրջանակներում առաջադրված հիմնական խնդիրներն են լուծվել են PESTLE (Political, Economic, Social, Technological, Legal and Environmental) վերլուծական գործիքի կիրառմամբ՝ բացահայտելով հիմնական արտաքին և ներքին գործոնները (քաղաքական, տնտեսական, սոցիական, տեխնոլոգիական, իրավական և բնապահպանական), որոնք ազդում են Հայաստանի զբոսաշրջության ոլորտի միջազգային մրցունակության վրա: Հայաստանի զբոսաշրջության միջազգային մրցունակության գործընթացների ուսումնասիրության համար օգտագործվել են հիմնականում քանակական և որակական հետազոտական մեթոդներ: Բացի այդ, խնդիրը համակողմանի հասկանալու համար նաև այս հոդվածի շրջանակներում օգտագործվել են քանակական և որակական, գիտական վերացարկման (աբստրահման), ինդուկցիայի, վիճակագրական վերլուծության և մի շարք այլ մեթոդներ: Զանազան մեթոդների օգնությամբ կատարվել են Հայաստանի զբոսաշրջային իրավիճակի վիճակագրական վերլուծություն՝ հետազոտական հարցերին պատասխանելու համար: Այնուհետև, հիմք ընդունելով խնդրի քանակական վերլուծության արդյունքները, տրվել են նաև իրավիճակը նկարագրող որակական գնահատականներ:

Գիտական վերացարկման (աբստրահման) մեթոդի շնորհիվ բացահայտվել են Հայաստանի միջազգային զբոսաշրջության հիմնական էությունը, միտումները, ազդող գործոնները և զարգացման հնարավորությունները: Վերլուծության մեթոդով ուսումնասիրվել է միջազգային զբոսաշրջության զարգացման խոչընդոտները՝ նախասահմանելով նաև դրանց հաղթահարելու հիմնական ուղիները:

Ինդուկցիայի մեթոդով և PESTLE վերլուծական գործիքի համադրմամբ իրականացվել է Հայաստանում զբոսաշրջության մրցունակության խթանման առանձին բաղադրիչների, դրանց վրա ազդող բազմապիսի գործոններ ուսումնասիրություն: Վիճակագրական վերլուծության այս մեթոդի կիրառման միջոցով վեր են հանվել զբոսաշրջության մրցունակության վրա ազդեցություն ունեցող մի շարք երևույթների փոփոխություններ, դրանց միջև եղած քանակական համամասնություններ, ինչի հիման վրա նախանշվել են որակական փոփոխության միտումները, որն էլ նպաստել է եզրահանգումների և առաջարկությունների իրականացմանը:

Միջազգային զբոսաշրջային հոսքերը ՀՀ-ում

ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի պաշտոնական վիճակագրությունը վարում է ՀՀ վիճակագրական կոմիտեն: Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած Հոսսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված զբոսաշրջության վիճակագրական տվյալների վարման մեթոդաբանությանը՝ Հայաստանում այս ուղղությամբ դեռևս մի շարք խնդիրներ են առկա՝ պայմանավորված բնագավառն արտացոլող տվյալների ոչ համապարփակ կամ ոչ ամբողջական լինելով: Գծապատկեր 1-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում միջազգային զբոսաշրջային հոսքերի աճի տարեկան միջին տեմպը կազմել է 22.04%, իսկ 2001 թվականի համեմատ 2022 թվականին միջազգային ժամանումների թիվը Հայաստանում ավելացել է մոտ 19 անգամ:

Հայաստան ժամանած միջազգային զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունը ցույց է տալիս, որ դիտարկվող 2014-2023 թվականների ընթացքում երկրների խմբերից ժամանած զբոսաշրջային հոսքերը փոփոխվել են: Այսպես, եթե մինչև 2019 թվականը գերակշռողը հիմնականում այլ երկրներից զբոսաշրջային ժամանումներն են, ապա 2020 թվականից սկսած սկսել են գերակշռել ԱՊՀ երկրներից միջազգային զբոսաշրջային հոսքերը դեպի Հայաստան: Ընդհանուր առմամբ, հատկապես Ռուսաստանից և Իրանի Իսլամական Հանրապետությունից միջազգային զբոսաշրջային հոսքերը դեպի Հայաստան առանձին դիտարկման են ենթակա: 2023

թվականին ԱՊՀ երկրներից Հայաստան ժամանած միջազգային զբոսաշրջիկների տեսակարար կշիռը կազմել է ընդհանուրի 49.4%-ը: Ընդ որում, ԱՊՀ երկրներից ժամանած զբոսաշրջիկների 45.7%-ը բաժին է Ռուսաստանին, 1.3%-ը Ուկրաինային, իսկ մնացած 2.4%-ը՝ ԱՊՀ այլ երկրներին: 2023 թվականին ԵՄ երկրներից ժամանած միջազգային զբոսաշրջիկների պատկերը հետևյալն է: Գերմանիայից Հայաստան են ժամանել միջազգային զբոսաշրջիկների 3.3%-ը, Ֆրանսիայից՝ 3.2%-ը, Իտալիայից՝ 1.3%-ը: Այլ երկրներ խմբից Հայաստան ժամանած միջազգային զբոսաշրջիկների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ԱՄՆ-ից ժամանած զբոսաշրջիկները (9%), ապա՝ Իրանից զբոսաշրջիկները (7.6%):

Ի հավելում 2020 թվականի սկզբին CO ID-19 համավարակի տարածմանը՝ նույն տարվա սեպտեմբերի 27-ին Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի նկատմամբ սանձազերծված 44-օրյա պատերազմը, դրան հաջորդած՝ նոյեմբերի 9-ի հայտարարությունը, 2021 թվականի հունիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ խորհրդարանական ընտրությունները, Ադրբեջանի ՉՈւ ներթափանցումը ՀՀ ինքնիշխան տարածք և պարբերաբար շարունակվող սահմանային լարվածությունը նոր իրականություն են ձևավորել ՀՀ զբոսաշրջային գործընթացներում, որի ընդգրկման շրջանակն ու զարգացման հնարավոր միտումները Հայաստանի համար զբոսաշրջության զարգացման լրջագույն մարտահրավերներից են դարձել:

Իհարկե, ինչպես ցույց է տալիս գծապատկեր 1-ը, 2020 թվականի համեմատ 2021 թվականին դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջային հոսքերն մոտ 2.5 անգամ ավելացել են, սակայն, միևնույնն է, դրանք 53.8%-ով պակաս են մինչհամավարակային 2019 թվականի ցուցանիշից:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի հիմնական ցուցանիշների համադրական վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ մինչև 2020 թվականի համավարակի տարածումը ՀՀ զբոսաշրջային ոլորտը հիմնականում կայուն աճի միտումներ է արձանագրել: 2020 թվականի ցնցումներից հետո՝ 2021-2023 թվականներին, զբոսաշրջության ոլորտում աշխուժացման միտումները վերականգնվել են: Ընդհանուր առմամբ, Հայաստանի հարուստ և հնագույն պատմամշակութային ժառանգությունը, տեսարժան վայրերը և յուրահատուկ ավանդույթները ինչպես միջազգային, այնպես էլ ներքին զբոսաշրջության զարգացման առանցքային գործոններ են: Հայաստանի բազմազան լանդշաֆտը, լեռնաշղթաները, լճերը, փարթամ հովիտներն ու անտառները, բնական ազգային հարստություն կարելի է համարել, որոնց ճիշտ «փաթեթավորումը» կարող է խթանել զբոսաշրջության միջազգային մրցունակության բարելավմանը:

PESTLE վերլուծական գործիքի կիրառումը Հայաստանի զբոսաշրջության ոլորտում

Հայաստանի միջազգային զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու, ինչպես նաև դրա բարձրացման հեռանկարները առավել տեսանելի դարձնելու համար կիրառվել է PESTLE (Political, Economic, Social, Technological, Legal and Environmental) վերլուծական գործիքը, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու հիմնական արտաքին և ներքին գործոնները (քաղաքական, տնտեսական, սոցիական, տեխնոլոգիական, իրավական և բնապահպանական), որոնք ազդում են զբոսաշրջության ոլորտի միջազգային մրցունակության վրա:


Հայաստանի միջազգային զբոսաշրջության մրցունակության վրա անդրադարձող առաջին գործոնը PESTLE վերլուծական գործիքով *քաղաքական* է: Քաղաքական անկայունությունը կարող է բավական լուրջ մարտահրավերներ ստեղծել Հայաստանի միջազգային զբոսաշրջային ծառայությունների համար:

Հատկանշական է, որ երկրում քաղաքական միջավայրի և զբոսաշրջության ոլորտի փոխառնչությունները բացահայտող մասնագիտական գրականության մեջ

Նշվում է, որ զբոսաշրջությունը ոչ միայն քաղաքականության շարունակությունն է, այլև աշխարհի քաղաքական տնտեսության անբաժանելի մասը:

Գծապատկեր 1.

Հայաստանի միջազգային զբոսաշրջային ժամանումներն ու դրանց տարեկան աճի տեմպը, 2001-2023 թթ.¹



¹ Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա՝ հիմք ընդունելով հետևյալ հաշվետվությունները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվարին» https://www.armstat.am/file/article/sv_01_24a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_18a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_16a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_14a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_12a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_10a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_08a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_06a_421.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv-01-04a-iii_4_2_1.pdf, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թվականի հունվարին», https://www.armstat.am/file/article/sv_01_02a_421.pdf (մուտք՝ 13.05.2024 թ.)

Ընդ որում, զբոսաշրջությունը դիտարկվում է ոչ միայն որպես տնտեսական, այլև քաղաքական գործիք (Edgell 107-110): Համաշխարհային պատմությունը մի շարք իրադարձություններով ևս փաստում է, որ երկրում արձանագրված քաղաքական անկայությունն ուղղակիորեն անդրադառնում է միջազգային զբոսաշրջային ծառայությունների վրա: Այսպես, օրինակ 1989 թվականի հունիսի 4-ին Չինաստանի մայրաքաղաք Պեկինի Տյանանմեն հրապարակում չինական իշխանությունների կողմից ուսանողական բողոքի ցույցերի բռնի ճնշման արդյունքում նույն տարում Պեկինի զբոսաշրջային եկամուտները նվազեցին 30%-ով (Sonmez 416- 456):

Գծապատկեր 2.

Հայաստանի միջազգային զբոսաշրջության վերլուծությունը PESTLE-ի գործիքի միջոցով

Քաղաքական	<ul style="list-style-type: none"> Քաղաքական կայունություն և արդյունավետ պետական քաղաքականություն Միջազգային կապեր Վիզային (մուտքի արտոնագիր) քաղաքականություն
Տնտեսական	<ul style="list-style-type: none"> Փոխարժեքի տատանումներ Եկամուտների մակարդակ Ենթակառուցվածքների զարգացում
Սոցիալական	<ul style="list-style-type: none"> Մշակութային գրավչություն Հայկական ազգային նկարագիրը Ժողովրդագրական միտումներ
Տեխնոլոգիական	<ul style="list-style-type: none"> Զբոսաշրջության թվայնացում Կապ և հեռահաղորդակցություն
Իրավական	<ul style="list-style-type: none"> Զբոսաշրջության պետական կարգավորում
Բնապահպանական	<ul style="list-style-type: none"> Կայունության հիմնահարցեր Բնական ռեսուրսների պաշտպանություն

Հայաստանյան համատեքստում ներքին քաղաքական պարբերաբար սրացող անկայուն իրավիճակը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ լարված հարաբերությունների արդյունքում տարածաշրջանային անկայունությունը երկրի միջազգային զբոսաշրջության մրցունակության վրա անդրադարձող կարևոր գործոններից են: Առանցքային կարևորություն ունի նաև դիվանագիտական կայուն հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, որը նույնպես Հայաստանի միջազգային զբոսաշրջային շուկայի ընդլայնման համար կարևոր նախապայման է: Մյուս կողմից՝ արդյունավետ վիզային (մուտքի արտոնագիր) քաղաքականության իրականացումը կարող է խթանել դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջային հոսքերը:


PESTLE վերլուծական գործիքի *տնտեսական գործոնը* ևս Հայաստանի միջազգային զբոսաշրջային մրցունակության վրա ուղղակիորեն անդրադարձող անկյունաքար է: Այս համատեքստում, հատկապես փոխարժեքի տատանումները տնտեսական անկանխատեսելիության մթնոլորտ են ձևավորում, իսկ կայուն փոխարժեքն անդադառնում է Հայաստանում զբոսաշրջային ծառայությունների հասանելիության, գնային մրցունակության, զբոսաշրջային ծախսումների ինչպես նաև զբոսաշրջային

ներդրումների վրա: Զբոսաշրջային եկամուտների մակարդակը ևս միջազգային զբոսաշրջային ծառայությունների մրցունակության վրա անդադարձող կարևոր գործոն է: Հատկանշական է, որ Հայաստանի պարագայում զբոսաշրջության միջազգային մրցունակության բարձրացման տեսանկյունից մեծ կարևորություն ունի զբոսաշրջային ծառայությունների գնային տարբերակված քաղաքականության մշակումը, ինչը հնարավորություն կտա խթանելու եկամուտների տարբեր մակարդակ ունեցող զբոսաշրջային հոսքերը դեպի Հայաստան:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2023 թվականին ծառայությունների 5.3% կամ 23.6 ՀՀ դրամ բաժին է ընկել զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններին¹, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 125.1%-ով: Համաձայն Զբոսաշրջության և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի վերջին տվյալների՝ միջազգային զբոսաշրջային ծախսերը Հայաստանում 2019 թվականին կազմել են 1.5 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2021 թվականին ցուցանիշը նվազել է մոտ 59%-ով՝ կազմելով 614,7 մլն ԱՄՆ դոլար (World Travel & Tourism Council, 1-2):

Գծապատկեր 3

Զբոսաշրջության և ճանապարհորդության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում և փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, 2010-2021 թթ. (%)




Ինչպես հայտնի է, զբոսաշրջության ոլորտը երկրի համաչափ տարածքային զարգացման կարևորագույն գործիքներից է: Սակայն Հայաստանի պարագայում այստեղ ևս առկա են մի շարք խնդիրներ: Ինչպես ցույց է տվել մեր կողմից իրականացված վերլուծությունը, միջազգային զբոսաշրջային հոսքերը հիմնականում կենտրոնացած են Երևանում՝ պայմանավորված նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների (հյուրանոցային և սննդի օբյեկտներ, թանգարաններ, այլ մշակութային վայրեր և այլն) Երևանում տեղակայման հետ: Սա, իհարկե, պայմանավորված է նաև Հայաստանում ճանապարհային ենթակառուցվածքների թույլ զարգացվածությամբ: Հայաստանի ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը շուրջ 7513 կմ է: Ընդհանուր օգտագործման պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները, ըստ ֆունկցիոնալ

¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_23a_126.pdf:

նշանակության, բաժանված են՝ միջպետական նշանակության ճանապարհների (1753.12 կմ), հանրապետական նշանակության ճանապարհների (2000.11 կմ), տեղական նշանակության ճանապարհների (3760 կմ): Տեղական նշանակության ճանապարհներն, իրենց հերթին, ըստ պատկանելության, բաժանվում են մարզային և համայնքային ճանապարհների¹:

Գծապատկեր 4

2019-2021 թվականների ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերանորոգված միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների երկարությունը (կմ)



Դեռևս 2019 թվականին Համաշխարհային բանկը գնահատել է, որ Հայաստանի ճանապարհների 40%-ը շարունակում են մնալ անբարեկարգ վիճակում (World bank), ինչը Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացման համար առանցքային խոչընդոտ է: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հրապակարված ճանապարհաշինական ծրագրերի² ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջպետական (օրինակ՝ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհ, «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցք», նշանակության մի շարք ծրագրեր դեռևս չեն ավարտվել: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով հանրապետությունում հիմնանորոգվել են մոտ 218.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ (միջպետական՝ 120,7 կմ, հանրապետական՝ 79,3 կմ, տեղական՝ 18,5 կմ):

Զբոսաշրջային ոլորտի մրցունակության բարձրացումն անհնար է պատկերացնել առանց գործունակ ու զարգացած ենթակառուցվածքների գոյության: Զբոսաշրջության զարգացման և ենթակառուցվածքների միջև ամուր կապը տեսականորեն հաստատվել է մի շարք հեղինակների կողմից (Adobayo et al.): Զբոսաշրջային ենթակառուցվածքը ներառում է օժանդակ և աջակցող օբյեկտներ, սարքավորումներ, համակարգեր, գործընթացներ և ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են զբոսաշրջային վայրի արդյունավետ գործունեության համար: Սա ներառում է զարգացած տրանսպորտային համալիր, առողջապահական համակարգեր, հանրային և սպասարկման ծառայություններ և այլն: Այս առումով, Հայաստանի զբոսաշրջային և

¹ Տվյալների հիմքը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք՝ <https://mtad.am/pages/road-construction-projects>

² Տվյալների հիմքը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք՝ <https://mtad.am/pages/road-construction-projects>

տրանսպորտային ենթակառուցվածքներում արձանագրված խնդիրները բավական լուրջ մարտահրավեր են ստեղծում ոլորտի միջազգային մրցունակության խթանման համար:

PESTLE վերլուծական գործիքի *սոցիալական գործոնի* համատեքստում առանձնացվել են մշակութային գրավչությունը: Ընդհանուր առմամբ, մշակութի «առևտրայնացումը» Հայաստանում բավական լուրջ հիմնահարց է շարունակում մնալ տարիներ շարունակ: Այս համատեքստում, առանցքային է հատկապես զբոսաշրջային ներուժ ունեցող համայնքներում թիրախային և հասցեական մշակութային զարգացման ռազմավարությունների մշակումն ու իրականացումը (Mariot, 242-253), որոնք հնարավորություն կտան իրացնել նաև Հայաստանի համայնքների զբոսաշրջային ներուժը:

Հայաստանի համայնքների տնտեսական համաչափ զարգացման գործում մշակույթի կարևորությունն ընդգծելու համար մշակված մշակութային զարգացման ռազմավարության հիմնական տեսլական պետք է սահմանել կայուն, պատասխանատու և ներառական մշակութային կյանքի առկայությունը համայնքում: Կայուն մշակութային կյանքն, առաջին հերթին, կարևոր է մշակութային ոլորտի զարգացման շնորհիվ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի ակտիվացման, ինչպես նաև դրա շարունակականության ապահովման տեսանկյունից: Մշակութային կյանքի վերաարտադրությունը և դրա շնորհիվ համայնքում սոցիալ-տնտեսական զարգացումը հիմնական ուղենիշներ պետք է լինի ռազմավարության մշակման աշխատանքներում: Հատկապես զարգացող երկրներում կայուն համայնքների առկայությունը ամրագրված է նաև որպես ՄԱԿ-ի կայուն զարգացման 11-րդ նպատակ: Սա հնարավորություն կտա Հայաստանում մշակույթը որպես գործիք ծառայեցնել բիզնես հնարավորություններ ստեղծելու, ինչպես նաև համայնքերում կայուն հասարակություն և տնտեսություն կառուցելու համար:

Մյուս կողմից, հաշվի առնելով բնապահպանական հիմնախնդիրներն ու դրանց առանցքային դերը համայնքներում, մեծ նշանակություն ունի մշակույթի միջոցով պատասխանատու հասարակության կերտման գործընթացը: Օրինակ, Սևանա լճի առկայությունը՝ որպես բառացիկ Էկոհամակարգ, որպես տարածաշրջանային նշանակության խմելու ջրի շտեմարան, պարտավորեցնում են համայնքի հետ կապված բոլոր մակարդակներում որոշումների կայացման ժամանակ հաշվի առնել բնապահպանական բաղադրիչը և համայնքում ձևավորել շրջակա միջավայրի հետ համակեցության օրինակելի մշակույթ՝ սկսած կենցաղավարությունից մինչև տնտեսական գործունեություն, ինչը օրինակ կծառայի նաև այլ համայնքների համար:

Միևնույն ժամանակ, մշակույթի զարգացման հարցում մեծ դեր ունի դրա ներառականությունը համայնքի բոլոր բնակիչների համար: Մշակութային զարգացման ռազմավարությամբ սահմանված գործողությունների իրականացման շնորհիվ համայնքի յուրաքանչյուր բնակիչ (անկախ ազգության, բնակության վայրի, սեռի, ազգային կամ էթնիկական պատկանելիության, կրոնի, լեզվի կամ գրաված դիրքի) պետք է զգա մշակույթի դրական ազդեցությունն իր կյանքում, ինչի կարևորագույն գործիքներից մեկը հենց դրա առևտրայնացումն է: Այս համատեքստում, Հայաստանի համայնքներում մշակութային ժառանգության քարտեզագրումը, դրա առևտրայնացմանն ուղղված գործնական քայլերը կարող են նպաստել միջազգային զբոսաշրջային ծառայությունների որակական և քանակական աճին: Որպես մշակութային գրավչության առանձին ենթագործոն առանձնացնել նաև հայկական ազգային նկարագիրը, որի ընդգծումը ևս մեծ նշանակություն ունի միջազգային զբոսաշրջային հոսքերը խթանելու տեսանկյունից: Միջազգային զբոսաշրջիկներին կարող են հետաքրքիր լինել հայկական ազգային ավանդական արժեքներն ու մշակութային առանձնահատկությունները՝ դրանց ճիշտ «փաթեթավորման» և ներկայացման դեպքում: Բացի այդ, սոցիալական գործոնի կարևոր բաղադրիչ է նաև միջազգային զբոսաշրջիկների ժողովրդագրական համայնապատկերի վերլուծությունը: Ի վերջո, առանցքային է հասկանալ, թե որ թիխարային

խմբի համար կարող է Հայաստանը, որպես զբոսաշրջային ուղղություն, հետաքրքրություն ներկայացնել: Այս պահին նմանատիպ համապարփակ վերլուծություն իրականացնելու հիմնական խոչընդոտ է անհրաժեշտ վիճակագրական շտեմարանների բացակայությունն ու առկաների թերիությունը, ինչը լուրջ մարտահրավերներ է ստեղծում Հայաստանի զբոսաշրջային մրցունակության խթանման ծրագրերի մշակման հիմքում Նաև քանակական խորքային վերլուծություններ ունենալու անհրաժեշտության հարցում:

PESTLE վերլուծական գործիքի *տեխնոլոգիական գործոնի* կարևորությունը կայանում է հատկապես միջազգային զբոսաշրջության մրցունակության խթանման հարցում ժամանակակից թվային տեխնոլոգիաների օգտագործումով, ինչպիսիք են օրինակ, առցանց մարքեթինգը, ամրագրման հարթակները և վիրտուալ շրջագայությունները և այլն: Կապի և հեռահախորդակցության ոլորտի ճկունությունն ու հասանելիությունը ևս միջազգային զբոսաշրջային հոսքեր ներգրավելու համար առաջնային է: Հաղորդակցության ոլորտը, ներառյալ անլար ցանցերը, բջջային հավելվածները և թարգմանչական տեխնոլոգիաները, զբոսաշրջիկներին հնարավորություն են տալիս հաղթահարել լեզվական խոչընդոտները՝ բովանդակի շփում ստեղծելով տեղացիների հետ և ապահովելով հուսալի և մատչելի հաղորդակցման ուղիների հասանելիություն:

2015-2022 թթ. ՀՀ տեղեկատվության և կապի ոլորտին բաժին է ընկել ՀՆԱ միջինում 3.5%-ը: Ինչպես տեղեկատվության և կապի ոլորտը, այնպես էլ ՀՆԱ շարժընթացները նշված ժամանակահատվածում համընթաց են եղել: Շուկայի ծավալը ՀՆԱ կառուցվածքում աստիճանաբար սկսել է աճել, ինչը նշանակում է, որ ոլորտի ընկերությունները ակտիվ գործունեություն են իրականացնում, և կարճաժամկետում կանխատեսելի է ոլորտի հետագա աճը: Ընկերությունները կատարում են հսկայական կապիտալ ներդրումներ ոլորտի զարգացումն ապահովելու համար, ինչպես նաև նրանց գործունեության հիմքում նորամուծություններն են, որոնք արդեն երկարաժամկետում կապահովվեն զգալի աճ: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թվականին Հայաստանի ՀՆԱ-ում տեղեկատվության և կապի մասնաբաժինը կազմել է ՀՆԱ-ի 4.5%-ը:

ՀՀ-ում հեռահաղորդակցության շուկայում հասույթը ձևավորվում է բջջային կապի, ինտերնետ հասանելիության, լարային հեռախոսակապի և մալուխային հեռուստատեսության համակարգերի շահագործման և մատուցման ծառայություններից: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 2022 թվականին ստացված հասույթը կազմել է 158 մլրդ ՀՀ դրամ, որի առյուծի բաժինը ապահովել է հեռահաղորդակցության ոլորտը՝ 89.2% կամ 141 մլրդ դրամ: Հեռահաղորդագրության հասույթի մեջ ինտերնետ հասանելիության հասույթին 2022 թվականին բաժին է ընկել 68 մլրդ ՀՀ դրամ կամ 48.3%-ը: Չնայած ՀՀ ՏՀՏ ոլորտի ընկերությունները պարբերաբար իրականացնում են կապի արդիականացման աշխատանքներ, սակայն վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հուսալի և որակյալ լայնաշերտ կապի հասանելիությունը բարելավելու, ինչպես նաև թվային տնտեսության հիմքեր ստեղծելու համար հեռանկարներ կան:

Հայաստանում ինտերնետից օգտվողների թվաքանակը նշված ժամանակաշրջանում սկսել է աճել՝ պայմանավորված պարբերաբար իրականացվող ցանցերի արդիականացման աշխատանքներով: Ինտերնետից օգտվողների թվաքանակի սահմանափակումը կարող է պայմանավորված լինել ոչ միայն կապի հասանելիության խնդրի հետ, այլև բնակչության հմտությունների, իրազեկվածության պակասով՝ դառնալով տեխնոլոգիական անբավարար կարողությունների հետևանք, որն անհրաժեշտ է ծառայություններից լիարժեք օգտվելու համար:

Հայաստանը ՏՀՏ ոլորտում ունի որոշակի առավելություններ, օրինակ՝ ֆիքսված լայնաշերտ կապի համեմատաբար բարձր տարածվածությունը, հատկապես՝ քաղաքային վայրերում, սակայն թվային տնտեսության լիարժեք ներուժի ապահովման համար անհրաժեշտ միակցային ենթակառուցվածքը դեռևս

բացակայում է, հատկապես՝ Երևանից դուրս: Ֆիքսված լայնաշերտ կապի տարածվածությունը մեկ շնչի հաշվով կազմում է 10%- թվային զարգացման ոլորտի համաշխարհային առաջատարների՝ Սինգապուրի 25% և Էստոնիայի 31% ցուցանիշների համեմատ: ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման խորհրդաժողովի բիզնես-սպառող էլեկտրոնային առևտրի 2017 թ. համաթվով (ըստ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022թ. վերլուծության) Հայաստանը 144 երկրների շարքում զբաղեցրել է 78-րդ տեղը, ինչը վկայում է առցանց առևտրին աջակցելու ավելի լավ պայմանների անհրաժեշտության մասին՝ պայմանավորված ֆինանսական ծառայությունների սահմանափակ օգտագործմամբ, մասնավորապես՝ վճարային քարտերն ու միջազգային վճարային համակարգերը:

ՏՀՏ ոլորտում հիմնական մրցակցային առավելությունը ձևավորվում է ցանցի արդյունավետ կառավարումից: Հեռահաղորդակցության շուկայի մրցակցությունը հատկապես վերջին տարիներին էլ ավելի է սրվել՝ պայմանավորված միկրոէլեկտրոնիկայի և նյութագիտության նվաճումներով, որոնք հնարավորություն են տալիս մեծապես բարձրացնել տեղեկատվության փոխանցման, պահպանման, մշակման արդյունավետությունը: Ներկայումս, այս ոլորտի ընկերությունների առաջնային խնդիրներից է հեռահաղորդակցական ցանցերի և բարձր տեխնոլոգիական սարքավորումների անընդհատ արդիականացումը և համապատասխանեցումը սպառողների պահանջներին:

PESTLE վերլուծական գործիքի *իրավական գործոնը* զբոսաշրջության ոլորտի թիրախային և նպատակային կարգավորման անհրաժեշտությամբ է պայմանավորված՝ համապատասխան պետական ծրագրերով ու միջոցառումներով, որոնք պետք է նպաստել ոլորտի միջազգային մրցունակության բարձրացմանն ու հանրահռչակմանը: Հայաստանում զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենսդրության անկատարությունը շարունակում է ոլորտի զարգացմանը խոչընդոտող լրջագույն մարտահրավեր մնալ:

2023 թվականին ընդունվել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմունքները, գործունեություն իրականացնող անձանց ներկայացվող պահանջների, ֆիզիկական անձանց հանգստի, շրջագայության հետ կապված հարաբերությունները: Բացի այդ, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում ընդամենը մեկ էջի սահմաններում ներկայացված է ոլորտի զարգացման տեսլականը՝ բավական հավակնոտ թիրախներով: Այսպես, նախատեսվում է մինչև 2026 թվականը միջազգային այցելությունների թիվը հասցնել 2.5 միլիոնի, ինչը 47%-ով ավել է 2022 թվականի փաստացի ցուցանիշից: Սակայն մյուս կողմից, զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության ինչպես նպատակները, այնպես էլ դրանց հասնելու ուղղությամբ նախատեսվող աշատանքները չափազանց վերացական են:

2006 թվականին Հայաստանն վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան, իսկ 2009 թվականի հոկտեմբերի 7-ին ընդունված «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքը որոնց հիմնական նպատակներն են ոչ նյութական մշակութային ժառանգությունը պաշտպանելը, ապահովելը շահագրգիռ համայնքների, խմբերի և անհատների հարգանքը ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ, տեղական, ազգային և միջազգային մակարդակներում բարձրացնել ոչ նյութական մշակութային ժառանգության և փոխադարձ ճանաչելիության ապահովման կարևորության գիտակցումը, ինչպես նաև ապահովել միջազգային համագործակցությունը և աջակցությունը:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի իրավական կարավորման բավական լուրջ բացթողում է շարունակում մնալ ՀՀ զբոսաշրջության զարգացման ռազմավարության բացայակությունը: Ընթացիկ փուլում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը մշակում է

«Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2024-2028 թվականների ռազմավարությունը», որը ուղենիշային փաստաթուղթ է առաջիկա 5 տարիների համար զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության մշակման և իրականացման համար՝ ի նպաստ զբոսաշրջության կայուն զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, ծառայությունների որակի բարելավմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումներին, Հայաստանի՝ որպես ապահով և բարենպաստ զբոսաշրջային երկրի նկարագրի ամրապնդմանը, Հայաստանի ճանաչելիության և հասանելիության բարձրացմանը, կլիմայի փոփոխության հարմարվողականությանը և այլն¹:

Սակայն մինչև այս պահը Հայաստանի զբոսաշրջային ներուժը բավականաչափ բացահայտված, գույքագրված և օգտագործված չէ, ինչը պայմանավորված է, առաջին հերթին, այս ուղղությամբ անհրաժեշտ պետական արդյունավետ ու թիրախային քաղաքականության բացակայությամբ: Ստացվում է, որ միակ վիճակագրական տվյալները, որով հնարավոր է գնահատել զբոսաշրջության ոլորտում վարվող պետական քաղաքականության արդյունավետությունը զբոսաշրջային այցելություններն արտացոլող ցուցանիշներն են, որոնք շատ մակերեսային են ներկայացնում իրավիճակը: Հայաստանում զբոսաշրջության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ քաղաքականություն մշակող մարմնի սահմանափակ լիազորությունները հանգեցրել են նրան, վերջինս չունի ոլորտում ծառայություններ մատուցող սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն (ինչը կնպաստի նաև զբոսաշրջության ոլորտում վիճակագրության բարելավմանը), ինչպես նաև՝ առկա չեն վերահսկողական լծակներ:

Բնապահպանական գործոնի շրջանակներում բարձրաձայնվում են բնական ռեսուրսների ու մշակութային արժեքների պաշտպանության ու պահմանն առջվող հարցերն ու կայունության հիմնահարցերը: Հայաստանում առկա են մի շարք փոխկապակցված բնապահպանական խնդիրներ, ինչպես օրինակ՝ ջրի և օդի աղտոտվածությունը, անտառային տարածքի նվազումը, հողերի դեգրադացիան, լանդշաֆտի փոփոխությունները, կենսաբազմազանության վտանգները, բնական աղետները և կլիմայի փոփոխության հետևանքները: Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացումն ու միջազգային զբոսաշրջային հոսքերի աճն էապես ընդգծում են շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված խնդիրներն ու դրանց լուծման անհրաժեշտության նոր հնամայականներ են ստեղծում:

Եզրակացություններ

Այսպիսով, Հայաստանի զբոսաշրջային ոլորտի միջազգայնացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը PESTLE վերլուծական գործիքի միջոցով ցույց է փաստում, որ զբոսաշրջության ոլորտում Հայաստանի պետական ակտիվ քաղաքականությունը ոլորտի կայուն և երկարաժամկետ զարգացման առանցքային «լոկոմոտիվը» կարող է դառնալ: Հայաստանում ներքին և արտաքին քաղաքական ցնցումներն ու անկայունությունը վերջին տարիներին երկրի զբոսաշրջային ծառայությունների միջազգայնացման վրա անդրադարձող առանցքային գործոններին են: Այս համատեքստում, կայուն քաղաքական միջավայրի ապահովումը կարող է նպաստել դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջային հոսքերի ակտիվացմանը:

Հայաստանում միջազգային զբոսաշրջային ծառայությունների զարգացման համար լրջագույն մարտահրավերներ են նաև տնտեսական գործոնները՝ բնակչության եկամուտների ցածր մակարդակը, ենթակառուցվածքների թույլ զարգացումը, ինչպես

¹ «Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2024-2028 թվականների ռազմավարության» նախագծային տարբերակը հասանելի է <https://www.e-draft.am/projects/5965/about> (մուտք՝ 11.06.2024թ.)

ՀԱՆՈՒՄԻ, այսպես էլ ծառայությունների մեջ ոլորտի ցածր տեսակարար կշիռները: Այս առումով, մեծ կարևորություն է ստանում պետական ակտիվ ու թիրախային քաղաքականության մշակումն ու իրականացումը՝ համապատասխան գործիքակազմով ու բարեփոխումներով: Հայաստանի միջազգային զբոսաշրջության զարգացման հիմնական նախապայման է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների բարելավումը, ներառյալ՝ ճանապարհները, նշանները, այցելուների կենտրոնները և կոյուղային ցանցը: Մյուս կողմից, պետական ակտիվ մասնակցության պետք է մշակվեն նաև համապատասխան բազմալեզու տեղեկատվական նյութեր, աուդիո ուղեցույցները և ինտերակտիվ ցուցանմուշները, որոնք զբոսաշրջային տպավորություններն առավել վատ ու տպավորիչ կդարձնեն:

Զբոսաշրջությունն, ինչպես արդեն նշվել է, համայնքային զարգացման համար հսկայական ներուժ է պարունակում, ուստի, այս առումով ևս պետական միջամտությունն ու վերահսկողությունը կարող է արդյունավետ դարձնել այդ ներուժի ամբողջական իրացումը: Հայաստանի տարբեր համայնքներում համապատասխան վերապատրաստման ծրագրերը կարող են զարգացնել համայնքի բնակիչների հմտություններն ու կարողությունները՝ էքսկուրսավարության, հյուրընկալության և հարակից այլ ոլորտներում:

Զբոսաշրջության զարգացման իրավական գործոնով պայմանավորված՝ զբոսաշրջության համապարփակ ռազմավարության մշակումը, որը պետք է կենտրոնացած լինի մշակութային ժառանգության պահպանման, կայուն զարգացման և Հայաստանի համայնքների ներգրավվածության վրա: Բացի այդ, առանցքային նշանակություն ունի մշակութային վայրերի և բնական լանդշաֆտների պահպանմանն ուղղված իրավական ակտերի մշակման անհրաժեշտությունը, որոնք հնարավոր է իրականացնել մշակութային ժառանգության փորձագետների և բնապահպանների հետ համագործակցային ջանքերով մշակելով համապատասխան ծրագրերի և միջոցառումների միջոցով, որոնք ուղղված են լինելու այս ռեսուրսների պատմական և բնապահպանական ամբողջականության պաշտպանությանը:

Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացումն ունի հստակ բնապահպանական ազդեցություն և ուղղակիորեն փոխակապակված է նաև շրջակա միջավայրի վրա, ուստի միջազգային զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականությունը Հայաստանում պետք է կառուցված լինի կայուն և պատասխանատու զբոսաշրջային ծառայությունների մատուցման շուրջ՝ խրախուսելով Էկոլոգիապես մաքուր տրանսպորտային համակարգի զարգացումն և թափոնների տեսակավորման համակարգերը: Հատկապես զարգացող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, որտեղ առկա է սահմանափակ բյուջեի արդյունավետ բաշխման շարունակական անհրաժեշտություն, միջազգային զբոսաշրջության զարգացման համար առանցքային նշանակություն ունի գործընկերային հարաբերությունների խթանումը մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ, ովքեր կարող են համապատասխան ներդրումների իրականացմամբ նպաստել Հայաստանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպես նաև իրականացնել համայնքային զարգացման ծրագրեր՝ երկարաժամկետ ֆինանսական կայունություն ապահովելու համար:

Ի վերջո, Հայաստանում միջազգային զբոսաշրջային ծառայությունների զարգացման, միջազգային զբոսաշրջային շուկայում դիրքավորման համար երկրի առկա ռեսուրսների ճիշտ քարտեզագրումն է, դրանց առևտրայնացման ուղղությամբ անհրաժեշտ ճիշտ պետական քաղաքականությունը՝ համապատասխան միջոցառումներով և մեխանիզմներով, որը Հայաստանի զբոսաշրջային ապագայի դուռը բացող միակ «բանալին» է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Չքոսաշրջության մասին» ՀՀ օրենք. 22 Դեկտեմբերի 2023. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188696>:
2. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից. 1948 թ. http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/declhr.shtml:
3. «Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2024-2028 թվականների ռազմավարության» նախագծային տարբերակ. 2023. <https://www.e-draft.am/projects/5965/about>:
4. Համաշխարհային բանկի տեղեկատվական շտեմարան՝ <https://databank.worldbank.org>: Մուտք՝ 11 Հուն 2024:
5. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք. <https://mtad.am/pages/road-construction-projects>: Մուտք՝ 11. Հուն 2024:
6. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք. <https://www.armstat.am>: Մուտք՝ 11. Հուն 2024:
7. «Ոչ կյուբական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք. 07 Հոկտեմբերի 2009. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121003>:
8. «Ոչ կյուբական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիա. 17 Հոկտեմբերի 2003 . <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31391>:
9. Mariot, P. "Functional assessment of potential of tourism as a basis for creating a spatial model of Tourism", *Geografický časopis*, 23(3), 1971, pp. 242-253.
10. Edgell, D. "A barrier-free future for tourism" *Tourism Management*, 16(2), 1995, pp. 107-110, <https://doi.org/10.1177/0047287595034002>.
11. Sonmez Sevil. "Tourism, Terrorism, and Political Instability." *Annals of Tourism Research*, 25(2), 1998, pp. 416- 456, [https://doi.org/10.1016/S0160-7383\(97\)00093-5](https://doi.org/10.1016/S0160-7383(97)00093-5).
12. Adebayo, Anthony and Iweka Anthony. "Optimizing the Sustainability of Tourism Infrastructure in Nigeria through Design for Deconstruction Framework", *American Journal of Tourism Management*, 3(1A), 2014, pp. 13-19, doi:10.5923/s.tourism.201401.03.
13. "Recommendations on Tourism Statistics", *United Nations*, Department for Economic and Social Information and Policy Analysis, Statistical Division and World Tourism Organization, New York, 1994, http://unstats.un.org/unsd/publication/Seriesm/SeriesM_83e.pdf. Accessed: 11 Jun 2024.
14. "ARMENIA, 2022 Annual Research: Key Highlights", *World Travel & Tourism Council*, https://wttc.org/DesktopModules/MVC/FactSheets/pdf/704/61_20220613154142_Armeni a2022_.pdf. Accessed: 30 May 2024.
15. "World Bank Supports Further Improvement of Armenia's Rural Roads Network", *World Bank*, Press release, <https://www.worldbank.org/en/news/press-release/2019/05/08/world-bank-supports-further-improvement-of-armenias-rural-roads-network>. Accessed: 11 Jun 2024.

WORKS CITED

1. Hamashxarhayin banki teghekatvakan shtemaran՝ <https://databank.worldbank.org> (verjin mowtq՝ 11.06.2024t՝.), [The World Bank Database, (last access: 11.06.2024)] (In English)

2. ՀՀ տարածքային կառավարման եւ տեղակայվածության նախարարության փաշտոնական կայք՝ <https://mtad.am/pages/road-construction-projects>, (verjin mutq` 11.06.2024t'.) [The official website of Ministry of Territorial Administration and Infrastructure, (last access: 11.06.2024)] (In Armenian)
3. ՀՀ վիտակագրական կոմիտեի տեղեկատվական հիմնարանը՝ <https://www.armstat.am> (verjin mutq` 11.06.2024t'.) [The Statistical Committee of the Republic of Armenia, (last access: 11.06.2024)] (In Armenian)
4. «Հայաստանի Հանրապետության շրջակայքի զարգացման 2024-2028 թվականների ռազմավարության» նախագծի տարբերակ՝ <https://www.e-draft.am/projects/5965/about> [Project version of the 2024-2028 tourism development strategy of the Republic of Armenia 2023. <https://www.e-draft.am/projects/5965/about>] (In Armenian)
5. «Մարդու իրավունքների համընդհանուր հրժեշակագիր» ղեկավար՝ MAK-i Glxavor asambleayi koghmich 1948 t'. http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/declhr.shtml [“Universal Declaration of Human Rights” adopted by the UN General Assembly in 1948] (In Russian)
6. «Վոչ նյութական մշակույթի յարանցանքային մասին» ՀՀ օրենք, 07.10.2009, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121003> [RA Law "On Intangible Cultural Heritage".] (In Armenian)
7. «Վոչ նյութական մշակույթի յարանցանքային փաշտպանության մասին» կոնվենցիա, 17.10.2003 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=31391> [Convention “On the Protection of Intangible Cultural Heritage”] (In Armenian)
8. «Շրջակայքի զարգացման մասին» ՀՀ օրենք՝ 22.12.2023 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121640> [RA Law "On Tourism "] (In Armenian)

ASSESSMENT OF THE INTERNATIONAL TOURISM POTENTIAL OF ARMENIA USING THE PESTLE ANALYTICAL TOOL

TOROS TOROSYAN

*Yerevan State University, Faculty of Economics and Management,
Chair of Economics and International
Economic Relations, Doctor of Economy, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

SHOGHIK MEJLUMYAN

*Yerevan State University, Faculty of Economics and Management,
Chair of Economics and International
Economic Relations, Ph.D Student,
Yerevan, the Republic of Armenia*

This article utilizes the PESTLE analytical tool to evaluate the primary issues hindering the development of Armenia's tourism sector and proposes solutions that can facilitate long-term and sustainable growth, enhancing Armenia's position in international markets. The research employs both quantitative and qualitative methods to assess Armenia's international tourism potential. To thoroughly understand the problem, statistical, graphic, comparative, and structural analysis methods were used.

The study reveals several challenges in fully realizing Armenia's tourism potential through the PESTLE analytical tool. Politically, Armenia experiences frequent internal and external shocks. Economically, issues include the overall development level of the

economy and insufficient infrastructure. Socially, despite Armenia's rich historical and cultural heritage and its importance for tourism, opportunities remain unexploited. Technologically, Armenia faces challenges in modernizing telecommunication networks and high-tech equipment to meet consumer demands. Additionally, legal imperfections and environmental issues resulting from increased tourist activity pose significant obstacles to the sustainable development of the tourism sector.

Keywords: *tourism, Armenia, PESTLE analytical tool, infrastructures, historical and cultural heritage, international tourist flows, tourism competitiveness.*

ОЦЕНКА МЕЖДУНАРОДНОГО ТУРИСТИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА АРМЕНИИ С ИСПОЛЬЗОВАНИЕМ АНАЛИТИЧЕСКОГО ИНСТРУМЕНТА PESTLE

ТОРОС ТОРОСЯН

*кафедра экономики и международных экономических отношений
факультета экономики и менеджмента
Ереванского государственного университета
доктор экономических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

ШОГИК МЕДЖЛУМЯН

*аспирант кафедры экономики и международных
экономических отношений факультета экономики и менеджмента
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

В данной статье используется аналитический инструмент PESTLE для оценки основных проблем, препятствующих развитию туристического сектора Армении, и предлагаются решения, которые могут способствовать долгосрочному и устойчивому росту, укрепляя позиции Армении на международных рынках. В исследовании применяются как количественные, так и качественные методы оценки международного туристического потенциала Армении. Для более глубокого понимания проблемы были использованы методы статистического, графического, сравнительного и структурного анализа.

Исследование выявляет несколько проблем на пути полной реализации туристического потенциала Армении с помощью аналитического инструмента PESTLE. В политическом отношении Армения испытывает частые внутренние и внешние потрясения. С экономической точки зрения проблемы включают общий уровень развития экономики и недостаточную инфраструктуру. В социальном плане, несмотря на богатое историческое и культурное наследие Армении и её важность для туризма, возможности остаются неиспользованными. В технологическом отношении Армения сталкивается с проблемами модернизации телекоммуникационных сетей и высокотехнологичного оборудования для удовлетворения потребностей потребителей. Кроме того, несовершенство законодательства и экологические проблемы, возникающие в результате роста туристической активности, создают серьёзные препятствия для устойчивого развития туристического сектора.

Ключевые слова: *туризм, Армения, аналитический инструмент PESTLE, инфраструктура, историко-культурное наследие, международные туристические потоки, конкурентоспособность туризма.*

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾ» ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ***

ՀՏԴ 330.4

DOI: 10.52063/25792652-2024.2.21-142

ԱԼՎԱՐԴ ԽԱՌԱՏՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
alvardkharatyan@ysu.am
ORCID: 0009-0005-2542-5085

ԱՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ,
ֆիզմաթ գիտությունների թեկնածու
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anoushpetrosyan@ysu.am
ORCID: 0009-0004-2775-7510

ԿԱՐԵՆ ԵՂՈՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
k.yeghoyan@ysu.am
ORCID: 0009-0007-1401-4648

Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ), որպես ՀՆԱ-ի բաղադրատարրի, աճը, բնականաբար, նպաստում է տնտեսական աճին: Իրականում, սակայն, չպետք է մոռանալ, որ «տնտեսական աճ - ՕՈՒՆ» կապը «երկկողմանի» է, այսինքն՝ բացի այն, որ ՕՈՒՆ-ը խթանում է աճը, այն նաև կրում է տնտեսական աճի ազդեցությունը: Եթե վերոհիշյալ «երկկողմանի» կապի առաջին՝ «ավանդական», ուղղության վերաբերյալ առկա են գիտագործնական բազմաթիվ հետազոտություններ, կապի մյուս կողմը՝ տնտեսական աճի ազդեցությունը ՕՈՒՆ-ի վրա, բավարար չափով ուսումնասիրված չէ:

Հոդվածի նպատակն է ռեգրեսիոն մոդելների կիրառմամբ գնահատել Հայաստանի տնտեսության ոլորտների աճի ազդեցությունը ՕՈՒՆ-ի վրա:

Հոդվածում ՀՀ տնտեսությունը դիտարկվել է որպես հետևյալ ոլորտների ամբողջություն՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, ծառայություններ և առևտուր:

ՀՀ-ում ՕՈՒՆ-ի և տնտեսության ոլորտների միջև կապերի բացահայտման ու գնահատման նպատակով կառուցվել են բազմագործոն ռեգրեսիայի մոդելներ: Կատարվել է նաև մոդելներով ստացված արդյունքների տնտեսագիտական վերլուծություն, գնահատվել է դիտարկվող գործոններից

* Հոդվածը ներկայացվել է 04.06.2024թ., գրախոսվել՝ 18.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

յուրաքանչյուրի համար ՕՈՒՆ-ի վրա ազդեցության չափը: Մասնավորապես, ստացվել է, որ այլ հավասար պայմաններում.

- Արդյունաբերական արտադրանքի հավելածի տեմպի 1% աճը հանգեցնում է ՕՈՒՆ-ի ծավալի 2.6%-ով նվազման:
- Ծառայությունների ոլորտի 1% աճը նպաստում է ՕՈՒՆ-ի ծավալի 5.5% աճին:
- Գյուղատնտեսության 1% աճը հանգեցնում է ՕՈՒՆ-ի ծավալի 4.2% աճին:
- Առևտրի ոլորտի աճը հանգեցնում է ՕՈՒՆ-ի ծավալի աճի, իսկ շինարարության ոլորտինը՝ կրճատման:

Հիմնաբառեր՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), տնտեսական աճ, «ՕՈՒՆ-տնտեսական աճ» կապ, ժամանակային շարքեր, Էկոնոմետրիկ վերլուծություն, ռեգրեսիա, վիճակագրորեն նշանակալի ազդեցություն:

Ներածություն

Երկրի տնտեսության զարգացման և կայուն ու դիսամիկ աճի ապահովման տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի ներդրումային բարենպաստ դաշտի ապահովումը, քանի որ դա, տնտեսական աճին նպաստելուց բացի, հնարավորություն է ընձեռում բարելավելու տնտեսական սուբյեկտների վիճակը և, վերջին հաշվով, բարձրացնելու բնակչության բարեկեցության մակարդակը:

Ներդրումային միջոցների պակասը լուրջ խոչընդոտ է կայուն տնտեսական աճի համար: Ներքին ռեսուրսների հաշվին գեներացվող ներդրումների անբավարարության պարագայում ներդրումային պահանջարկը բավարարելու հիմնական հնարավորությունը օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավման համար նպաստավոր պայմանների ապահովումն է: Այս հիմնախնդիրն առանձնակի սրությամբ է դրսևորվում զարգացող և անցումային երկրների մեծ մասում (այդ թվում՝ ՀՀ-ում), քանի որ այդ երկրներում ազգային խնայողությունները չեն բավականացնում ներդրումների ցանկալի մակարդակն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով այդ երկրներում առանձնակի կարևորություն է ստանում օտարերկրյա ներդրումների համար ներդրումային գրավչության բարձրացումն ու տնտեսության ոլորտից կախված ներդրումային գերակայությունների սահմանումը: Օտարերկրյա ներդրումների ներգրավումը նաև նպատակահարմար է՝ պայմանավորված տարբեր պատճառներով (ներքին ներդրումային ցածր ակտիվություն, ձեռնարկատիրական գործունեության կառավարման և կազմակերպման լավագույն փորձի օգտագործման անհրաժեշտություն, արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական արդիականացում, մրցունակ տնտեսության ստեղծում և այլն):

Խնդրի ընդհանուր դրվածքը և գրականության վերլուծությունը

ՕՈՒՆ-ը ընդգրկված է ՀՆԱ-ում և դրա աճը բնականաբար հանգեցնելու է ՀՆԱ-ի աճի: Այսինքն՝ ՕՈՒՆ-ի ազդեցությունը տնտեսական աճի վրա անժխտելի է: Այդ ազդեցությունը քանակապես գնահատելու և կապի տեսքը ճշտելու համար կատարվել և կատարվում են բազմաթիվ փորձառական (եմպիրիկ) հետազոտություններ: Դրանց ճնշող մեծամասնությունը վկայում է, որ ՕՈՒՆ-ի ազդեցությունը տնտեսական աճի վրա դրական է:

Որպես կանոն՝ տնտեսական աճի բարձր տեմպերով երկրներն ավելի հեշտությամբ են ներգրավում ՕՈՒՆ, քան այն երկրները, որոնց տնտեսությունները լավ վիճակում չեն (չնայած որ այս երկրներն ՕՈՒՆ-ի կարիքն ավելի ունեն): Սա,

թերևս, վկայում է այն մասին, որ ՕՌԲ-տնտեսական աճ կապը երկկողմանի է՝ բացի այն, որ ՕՌԲ-ը խթանում է աճը, տնտեսական աճը նույնպես ազդում է երկրում ՕՌԲ-ի մակարդակի վրա: Մինչդեռ ՀՆԱ-ի ազդեցությունը ՕՌԲ-ի վրա բավարար չափով ուսումնասիրված չէ:

Այս իմաստով կարևոր է, որ հնարավորինս ճշգրիտ գնահատվի ՕՌԲ-ի վրա ՀՀ տնտեսության յուրաքանչյուր ոլորտում աճի ազդեցության բնույթը և չափը, ինչի հիման վրա էլ կսահմանվեն ըստ ոլորտների, ՕՌԲ-ի առումով գերակա ուղղությունները, ինչպես նաև այդ ուղղություններից յուրաքանչյուրի համար իրականացվելիք միջոցառումները:

Աշխատանքի նպատակն է գնահատել Հայաստանի տնտեսության ոլորտների համախառն արտադրանքի աճի ազդեցությունը ՕՌԲ-ի վրա: Մեր կողմից առաջադրվել և ռեգրեսիոն մոդելների կիրառմամբ ստուգվել է հետևյալ վարկածը. «ՀՀ տնտեսության ոլորտների զարգացումը նպաստում է ՕՌԲ-ի աճին»:

ՀՀ տնտեսությունը դիտարկվել է որպես հետևյալ ոլորտների ամբողջություն՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, ծառայություններ և առևտուր:

Տնտեսական աճի վրա ՕՌԲ-ի ազդեցության վերաբերյալ առկա են բազմաթիվ տեսական ու գործնական ուսումնասիրություններ: Ինչպես և կարելի էր ակնկալել, դրանց ճշող մեծամասնությունը կամ հանգում է այնպիսի եզրակացության, որ այդ ազդեցությունը դրական է, կամ ելնում է այդ ենթադրությունից:

Մասնագիտական գրականության մեջ նշվում են ՕՌԲ-ի բազմաթիվ առավելություններ ինչպես ընդունող, այնպես էլ ծագման երկրի համար: Մասնավորապես, հետազոտողների մեծ մասը պնդում է, որ ՕՌԲ-ի շնորհիվ ընդունող երկրում ստեղծվում են նոր աշխատատեղեր, արագանում է տեխնոլոգիական զարգացումը և, վերջին հաշվով, բարելավվում է ընդհանուր տնտեսական փճակը: Մասնագետների մեծ մասը համարում է, որ զարգացող երկրներում, բացի տնտեսական աճի վրա ՕՌԲ-ի դրական ուղղակի ներգործությունից, առկա է նաև դրա միջնորդավորված ազդեցություն: Մասնավորապես, Carkovic-ի և Levine-ի կարծիքով ՕՌԲ-ի ներհույսը զարգացող երկրներ տեխնոլոգիաների փոխանցման շնորհիվ դրական արտաքին էֆեկտ է ստեղծում, որը, վերջին հաշվով, բարենպաստ ազդեցություն է ունենում տնտեսական աճի առումով (Carkovic and Levine 13): Alfaro-ի կարծիքով նույնպես, օրինակ, ՕՌԲ-ն ի լրում կապիտալ ներդրումների ուղղակի ֆինանսավորման, զարգացող երկրի համար կարող է արժեքավոր տեխնոլոգիաների և գիտելիքների աղբյուր հանդիսանալ (Alfaro 1):

Անժխտելի են ՕՌԲ-ից ստացվող օգուտները, սակայն հարկ է նշել, որ այն պարունակում է նաև որոշակի լուրջ վտանգներ: Մասնավորապես.

- Անդրազգային կորպորացիաների մուտքի ձևով ՕՌԲ-ը կարող է հանգեցնել տեղական ընկերությունների մի մասի դուրսմղմանը, քանի որ ստեղծվում է որոշ իմաստով անհավասար մրցակցություն:

- Որոշ դեպքերում (օրինակ, ընդունող երկրում տնտեսական կամ աշխարհաքաղաքական ռիսկերի պատճառով) ՕՌԲ-ը կարող է հանգեցնել կապիտալի հոսքի ուղղության փոփոխության՝ զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ:

- Օտարերկրյա ընկերությունների ավելի բարձր արտադրական հզորությունների պատճառով ՕՌԲ-ն կարող է լուրջ բնապահպանական վնաս պատճառել (հատկապես հանքարդյունաբերության ոլորտում) (Bora 215, 221):

Բացի առավել լայնորեն տարածված տեսակետից, համաձայն որի «ազդող» (անկախ) փոփոխականը ՕՌԲ-ն է, որն ազդում է կախյալ փոփոխական հանդիսացող տնտեսական աճի վրա, գոյություն ունի (և վերջին շրջանում գնալով ավելի լայն տարածում է ստանում) հակառակ կարծիքը, համաձայն որի՝ շատ հաճախ

տնտեսական աճն է անկախ, իսկ ՕՈՒՆ-ը՝ կախյալ փոփոխական: Ասվածի օգտին է խոսում այն հանգամանքը, որ, սովորաբար, աճի բարձր տեմպերով երկրներն ավելի հեշտությամբ են ներգրավում ՕՈՒՆ, քան ցածր տնտեսական ակտիվությամբ երկրները:

Kumar-ը և Pradhan-ը նշում են, որ շատ դեպքերում աճի և ՕՈՒՆ-ի միջև պատճառահետևանքային կապի ուղղությունը պարզ չէ: Ավելին, աղքատ երկրներում, «տնտեսական աճ-ՕՈՒՆ» կապը գրեթե նույնքան ուժեղ է, որքան «ՕՈՒՆ-տնտեսական աճ» կապը (Kumar and Pradhan 2): Նույն կարծիքն են արտահայտում նաև Hansen-ը և Rand-ը՝ ՕՈՒՆ-ը և աճը դրականորպես են կապված, սակայն պատճառահետևանքային կապի ուղղությունը պարզ չէ (Hansen and Rand 18):

Այսինքն, առնվազն կարելի է պնդել, որ, ՕՈՒՆ-ի կողմից տնտեսական աճի խթանումը չի բացառում հակառակ պատճառահետևանքային կապի առկայությունը:

Արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման համար այդ պատճառահետևանքային կապի հստակեցումը չափազանց կարևոր է որոշում ընդունող անձանց համար: Սույն աշխատանքը ուղղված է ՀՀ համար այդ կապի առկայության ստուգմանը և տեսքի ստացմանը:

Տվյալները և հետազոտության մեթոդաբանությունը

Մեր կողմից իրականացված փորձառական հետազոտության մեջ օգտագործվել են ՀՀ հետևյալ փոփոխականների 2000-2023 թթ. տարեկան տվյալները. ՀՆԱ ընթացիկ գներով՝ մլն դրամ (GDP), ՕՈՒՆ-ի ծավալ, մլն դրամ (FDI), արդյունաբերական արտադրանքի ծավալ, մլն դրամ (IND), գյուղատնտեսական արտադրանքի ծավալ, մլն դրամ (AGR), շինարարության արտադրանքի ծավալ, մլն դրամ (CNSTR), ծառայությունների ոլորտի արտադրանքի ծավալ, մլն դրամ (SERV), առևտրի ոլորտի արտադրանքի ծավալ, մլն դրամ (TRD), ՀՆԱ-ի աճ¹, % (GDPGR), արդյունաբերության արտադրանքի աճ, % (INDGR), գյուղատնտեսության արտադրանքի աճ, % (AGRGR), շինարարության արտադրանքի աճ, % (CNSTRGR), ծառայությունների ոլորտի արտադրանքի աճ, % (SERVGR), առևտրի ոլորտի արտադրանքի աճ, % (TRDGR): Տվյալների աղբյուրը Համաշխարհային բանկի, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Վիճակագրական կոմիտեի հաշվետվությունները, հրապարակումները և տվյալների բազաներն են:

ՀՀ ՕՈՒՆ-ի և տնտեսության ոլորտների միջև կապերի բացահայտման ու գնահատման նպատակով կառուցվել են բազմագործոն ռեգրեսիայի մոդելներ: Փոփոխականների ինտեգրման կարգը պարզվել է «Ընդլայնված Դիկի-Ֆուլլերի միավոր արմատ» թեստով (Augmented Dickey-Fuller (ADF) test), որի կիրառման դեպքում գնահատվում է հետևյալ հավասարումը.

$$\Delta Y_t = \beta_1 + \delta Y_{t-1} + \beta_2 t + \sum_{i=1}^k c_i \Delta Y_{t-i} + u_t \quad (1)$$

(1)-ում $\beta_1, \delta, \beta_2, c_i$ -ն գործակիցներ են, t -ն՝ տրենդի փոփոխականը, u_t -ն՝ պատահական սխալը, որը White Noise գործընթաց է:

ADF-ը թեստավորում է $\delta = 0$ զրոյական վարկածը՝ ժամանակային շարքն ունի միավոր արմատ: Այն գնահատվում է 3 տարբեր թեստային հավասարումներով. Random Walk ($\Delta Y_t = \delta Y_{t-1} + u_t$), Random Walk with Drift ($\Delta Y_t = \beta_1 + \delta Y_{t-1} + u_t$) և Random Walk with Drift and Trend ($\Delta Y_t = \beta_1 + \delta Y_{t-1} + \beta_2 t + u_t$) (Gujarati and Porter 2009): Ակայլեի տեղեկատվական չափանիշ վիճականու (Akaike information criterion-AIC) հիման վրա շարքի համար ընտրվում է լավագույն թեստային հավասարումը և ստուգվում ստացիոնարությունը: Եթե ADF թեստային վիճականին նշանակալիության որևէ մակարդակում (1%, 5%, 10%) մեծ է թեստային կրիտիկական արժեքից, ապա

¹ Նախորդ տարվա համեմատ իրական ՀՆԱ-ի տոկոսային աճը:

գրոյական վարկածը նշանակալիության այդ մակարդակում չի մերժվում. ժամանակային շարքը ստացիոնար չէ: Ստացիոնար դարձնելու համար ոչ ստացիոնար շարքերի համար կիրառվել է հաջորդական տարբերությունների օպերատորը:

Բազմագործոն ռեգրեսիայի մոդելը ներկայացվում է հետևյալ հավասարմամբ.

$$Y_t = \beta_0 + \beta_1 X_{1t} + \beta_2 X_{2t} + \dots + \beta_k X_{kt} + \varepsilon_t \quad (2)$$

որտեղ $\beta_0, \beta_1 \dots \beta_k$ -ն մոդելի անհայտ պարամետրերն են, որոնք պետք է գնահատվեն փոքրագույն քառակուսիների մեթոդով, X_{jt} -ն՝ j-րդ բացատրող փոփոխականը, ε_t -ն՝ մոդելի պատահական սխալը:

Մոդելի մնացորդների հոմոսկեդաստիկությունը ստուգելու համար օգտագործվել է Բռեուշ-Պագան-Գոդֆրեյ հետերոսկեդաստիկության (Breusch-Pagan-Godfrey Heteroskedasticity) թեստը: Թեստային վիճականին՝ $N * R^2$ -ն, ունի 2 բաշխում k ազատության աստիճանով, որտեղ k-ն անկախ փոփոխականների թիվն է, N-ը՝ դիտարկումների թիվը: R^2 -ն այն ռեգրեսիայի հավասարման դետերմինացիայի գործակիցն է, որտեղ կախյալ փոփոխականը մոդելի մնացորդների քառակուսին է, իսկ անկախները՝ սկզբնական ռեգրեսիայի անկախ փոփոխականները.

$$\widehat{\varepsilon}_t^2 = \beta_0 + \beta_1 X_{1t} + \beta_2 X_{2t} + \dots + \beta_k X_{kt} + u_t \quad (3)$$

Եթե $^2 \leq \frac{2}{crit}$ (Prob. Chi Square(k) ≥ 0.05), ապա գրոյական վարկածն այն մասին, որ մոդելի մնացորդները հոմոսկեդաստիկ են, չի մերժվում նշանակալիության 5% մակարդակում:

Բռեուշ-Գոդֆրեյ ավտոկոռելյացիայի (Breusch-Godfrey Serial Correlation) LM թեստով ստուգվել է մոդելի մնացորդների անկախ լինելու մասին գրոյական վարկածը՝ $H_0: \rho_1 = \rho_2 = \dots = \rho_r = 0$: Օգտագործվում է Լագրանժի բազմապատկիչների վիճականին՝ $LM = (N - r)R^2$, որտեղ r-ը ավտոկոռելյացիայի կարգն է, N-ը՝ դիտարկումների թիվը, իսկ R^2 -ն՝ հետևյալ մոդելի դետերմինացիայի գործակիցը.


$$\widehat{\varepsilon}_t = \beta_0 + \beta_1 X_{1t} + \beta_2 X_{2t} + \dots + \beta_k X_{kt} + \rho_1 \widehat{\varepsilon}_{t-1} + \rho_2 \widehat{\varepsilon}_{t-2} + \dots + \rho_r \widehat{\varepsilon}_{t-r} + u_t \quad (4)$$

Եթե $LM \leq \frac{2}{crit}$ (Prob. Chi Square(k) ≥ 0.05), ապա գրոյական վարկածը չի մերժվում. մնացորդներն ավտոկոռելյացված չեն:

Մոդելի որակի գնահատման համար օգտագործվել է ճշգրտված դետերմինացիայի գործակիցը՝ $Adj. R_{sq}$, գնահատված պարամետրերի վիճակագրական նշանակալիության ու վարկածների ստուգման համար՝ t, F, Chi_sq վիճականիները: Մոդելում բազմակոլինեարության բացակայությունը ստուգվել է IF թեստով, իսկ մոդելի սպեցիֆիկացիայի ճշտությունը՝ Ռամզեյի թեստով:

Հետազոտության արդյունքները

ՀՀ տնտեսության ոլորտների արտադրանքի ծավալների և ՀՆԱ-ի գրաֆիկական դիտարկումը բացահայտում է, որ վերլուծության ժամանակահատվածում ինչպես ՀՀ ՀՆԱ-ի (9502779 մլն դրամ), այնպես էլ արդյունաբերության, ծառայությունների և առևտրի ոլորտների առավելագույն արժեքները գրանցվել են 2023 թ.: Միջինում տարեկան արտադրանքի ամենափոքր ծավալով ներկայանում է շինարարության ոլորտը (451796.6 մլն. դրամ), ամենամեծ ծավալն ունի առևտրի ոլորտը (2114317 մլն. դրամ): ՕՈՒԼ-ի ամենամեծ ծավալը գրանցվել է 2022 թ.՝ 434819 մլն. դրամ (տե՛ս գծապատկեր 1 և աղյուսակ 1):




Գծապատկեր 1. ՀՀ տնտեսության ոլորտների արտադրանքի ծավալների և ՀՆԱ-ի շարքերը

Աղյուսակ 1. Փոփոխականների նկարագրական վիճակագրությունները

	AGR	CNSTR	FDI	GDP	IND	SERV	TRD
Mean	715776.1	451796.6	158482.6	4256794.	1264303.	1052831.	2114317.
Median	814189.8	458653.7	151083.4	4022203.	1193567.	893215.6	2122609.
Maximum	1021742.	858680.1	434819.0	9502779.	2783215.	3025912.	5492384.
Minimum	281173.4	100990.0	28647.48	1031338.	300549.7	177747.0	494338.6
Std. Dev.	229154.6	177824.8	94188.54	2280318.	770780.3	774609.6	1220363.
Skewness	-0.419267	-0.206508	0.945409	0.506114	0.472317	0.915480	0.929319
Kurtosis	1.786942	3.219344	4.212962	2.627888	2.056240	3.166512	3.777461
Jarque-Bera	2.174650	0.218693	5.046467	1.163074	1.783018	3.380144	4.058981
Probability	0.337117	0.896420	0.080200	0.559038	0.410037	0.184506	0.131402
Sum	17178626	10843118	3803582.	1.02E+08	30343260	25267937	50743615
Sum Sq. Dev.	1.21E+12	7.27E+11	2.04E+11	1.20E+14	1.37E+13	1.38E+13	3.43E+13
Observations	24	24	24	24	24	24	24

ՀՀ տնտեսության ոլորտների արտադրանքի ծավալների աճերը ներկայացնող ժամանակային շարքերը 2000-2023 թթ. որոշակի միտում չեն դրսևորում: 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով արտադրության ծավալների մեծ անկումներ են գրանցվել գյուղատնտեսության, շինարարության և արդյունաբերության ոլորտներում, իսկ COVID-19 համավարակի արդյունքում ծառայությունների և առևտրի ոլորտներում (տե՛ս, գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ տնտեսության ոլորտների արտադրանքի ծավալների աճերը

ADF թեստով պարզվել է ժամանակային շարքերի ինտեգրման կարգը: Փոփոխականների մի մասի համար վիճակագրորեն նշանակալի ազդեցություններ ստացվել են մոդելներում դրանք լոգարիթմած արժեքներով դիտարկելու դեպքում:

Աղյուսակ 3-ում ներկայացված են ռեգրեսիոն մոդելներում ներառված փոփոխականների ստացիոնարության թեստերի արդյունքները: Առևտրի, շինարարության և ծառայությունների ոլորտների արտադրանքների ծավալները ներկայացնող շարքերը 2-րդ կարգի ինտեգրման գործընթացներ են, գյուղատնտեսության, արդյունաբերության արտադրանքների ծավալները և առևտրի աճը ներկայացնող շարքերը՝ 1-ին կարգի ինտեգրման գործընթացներ, մյուս շարքերը ստացիոնար են:

Աղյուսակ 3. Փոփոխականների ADF թեստի արդյունքները

Փոփոխականը	ADF թեստային հավասարումը	ADF test statistic	5% level critical value
LFDI	Constant	-3.179907	-3.040391
D(AGR)	Constant, Linear Trend	-4.521550	-3.644963
D(LIND)	Constant, Linear Trend	-4.440412	-3.632896
D(D(TRD))	Constant, Linear Trend	-4.417492	-3.673616
GDPGR	Constant	-3.206872	-2.998064
SERVGR	Constant	-3.533668	-2.998064
D(TRDGR)	Constant	-4.439360	-3.029970
AGRGR	Constant	-3.925685	-2.998064
D(D(LSERV))	Constant, Linear Trend	-4.103252	-3.673616
D(D(LCNSTR))	Constant	-9.266225	-3.012363

Մոդել 1-ի հավասարումն է.

$$\ln(FDI)_t = 5.528 + 4.205 \cdot 10^{-6} * d(AGR)_t - 2.621 * d(LIND)_t + 9.948 \cdot 10^{-7} * d(d(TRD))_t + 0.546 * \ln(FDI)_{t-1} + e_t \quad (5):$$

Մոդել 1-ի արդյունքներով՝ գյուղատնտեսության և առևտրի ոլորտների արտադրանքի ծավալների աճերը ընթացիկ տարում նշանակալի դրական ներգործություն ունեն ՕՈՒՆ-ի վրա: ՕՈՒՆ-ի վրա նշանակալի դրական ներգործություն ունի նաև նախորդ տարվա ՕՈՒՆ-ի ծավալը, որի 1% աճը, այլ հավասար պայմաններում, մեկ տարի հետո նպաստում է ՕՈՒՆ-ի ծավալի 0.55% աճին: Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպի 1% ավելանալու դեպքում, այլ հավասար պայմաններում, ընթացիկ տարում ՕՈՒՆ-ի ծավալը նվազում է 2.6%-ով:

Աղյուսակ 4. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Քաղաքորդ փոփոխական	Կախյալ փոփոխական՝ $\ln(FDI)$			
	Մոդել 1	Մոդել 2	Մոդել 3	Մոդել 4
	Coefficient	Coefficient	Coefficient	Coefficient
C	5.527612*	4.848670**	4.629612***	11.85899*
D(AGR)	4.21E-06**			
D(LIND)	-2.6213**			
D(D(TRD))	9.95E-07*			
Ln(FDI(-1))	0.546122*	0.594202*	0.492084*	
GDPGR			-0.085234*	
SERVGR			0.054939*	
D(TRDGR)			0.040191*	0.038434**
AGRGR			0.041806**	
D(D(LSERV))		1.953798**		
D(D(LCNSTR))				-1.276405***
Adjusted R-squared	0.591906	0.444707	0.574693	0.211834
F-statistic	8.614685	9.408944	6.945479	3.822060
Prob(F-statistic)	0.000546	0.001446	0.001060	0.040267
Durbin-Watson stat	1.946790	1.907755	1.838669	1.185110
Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey				
F-statistic	1.586056	1.103545	0.797236	0.285099
Prob(F-statistic)	0.2234	0.3520	0.5666	0.7551
Breusch-Godfrey Serial Correlation LM Test:				
F-statistic	0.013964	0.039774	0.330509	1.642306
Prob(F-statistic)	0.9861	0.9611	0.7237	0.2228
Jarque-Bera Normality Test				
Jarque-Bera	0.344152	1.092423	0.589734	0.322941
Prob(Jarque-Bera)	0.841915	0.579140	0.744631	0.850892
Ramsey RESET Test				
Prob(F-statistic)	0.4006	0.7160	0.8149	0.0742

* Նշանակալիության 1% մակարդակ, ** 5% մակարդակ, *** 10% մակարդակ

Մոդել 2-ը ներկայացվում է հետևյալ հավասարմամբ՝

$$\ln(FDI)_t = 4.849 + 1.954 * d(d(\ln(SERV)))_t + 0.594 * \ln(FDI)_{t-1} + e_t \quad (6)$$

Ըստ մոդելի արդյունքների՝ ծառայությունների ոլորտի արտադրանքի աճը ընթացիկ տարում դրական նշանակալի ներգործություն ունի ՕՈՒՆ-ի ծավալի վրա: ՕՈՒՆ-ի վրա դրական է ազդում նաև նախորդ տարվա ՕՈՒՆ-ի ծավալը:

Մոդել 3-ի հավասարումն է.

$$\ln(FDI)_t = 4.63 - 0.085 * GDPGR_t + 0.055 * SERVGR_t + 0.04 * d(TRDGR)_t + 0.042 * AGRGR_t + 0.492 * \ln(FDI)_{t-1} + e_t(7)$$

Մոդելի արդյունքներով, այլ հավասար պայմաններում, ծառայությունների ոլորտի արտադրանքի 1% աճը ընթացիկ տարում նպաստում է ՕՈՒՆ-ի ծավալի 5.5% աճին, իսկ գյուղատնտեսական արտադրանքի 1% աճը՝ ՕՈՒՆ-ի ծավալի 4.2% աճին: ՕՈՒՆ-ի ծավալի վրա նշանակալի դրական ներգործություն ունի նաև առևտրի ոլորտի արտադրանքի ծավալի աճը, միևնույն ժամանակահատվածում ՌՆԱ-ի աճը նշանակալիության 1% մակարդակում բացասական ազդեցություն ունի ՕՈՒՆ-ի վրա: ՌՆԱ-ի 1% աճն, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է ՕՈՒՆ-ի ծավալի նվազման 8.5%-ով: Մոդել 3-ում ևս ՕՈՒՆ-ի վրա նշանակալի դրական ազդեցություն ունի նախորդ տարվա ՕՈՒՆ-ի ծավալը:

Մոդել 4-ը ներկայացվում է հետևյալ հավասարմամբ՝

$$\ln(FDI)_t = 11.859 + 0.038 * d(TRDGR)_t - 1.276 * d(d(\ln(CNSTR)))_t + e_t(8)$$

Համաձայն մոդելի արդյունքների՝ առևտրի ոլորտի արտադրանքի աճը ընթացիկ տարում դրական նշանակալի ներգործություն ունի ՕՈՒՆ-ի ծավալի վրա: Շինարարության ոլորտի արտադրանքի աճի տեմպի ավելանալը, այլ հավասար պայմանների դեպքում, հանգեցնում է ՕՈՒՆ-ի աճի դանդաղեցման:

Բոլոր մոդելների մնացորդների համար զրոյական վարկածները չեն մերժվում. մնացորդները հոմոսկեդաստիկ են, ավտոկոռելյացված չեն, ունեն նորմալ բաշխում: VIF թեստի արժեքները վկայում են, որ մոդելներում բացակայում է բազմակոլիներությունը: Ռամզեյի թեստի արդյունքներով բոլոր մոդելների համար $\text{Prob}(F\text{-statistic}) > 0.05$, ինչը նշանակում է, որ մոդելի սպեցիֆիկացիայի ճիշտ լինելու մասին զրոյական վարկածը չի մերժվում (տե՛ս, աղյուսակ 4):

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Alfaro, Laura. "Foreign direct investment and growth, does the sector matter?" *Harvard Business School. Working Paper*, 2003, <https://typeset.io/pdf/foreign-direct-investment-and-growth-does-the-sector-matter-12yhymmtf8.pdf>.
2. Alfaro, Laura et al. "FDI and economic growth: the role of local Financial market." *Journal of international economics*, volume 64, 2004, pp. 89-112, <https://econweb.umd.edu/~kalemli/assets/publications/fdi2004jie.pdf>.
3. Bora, Bijit. *Foreign Direct Investment: Research Issues*. 1st ed., Routledge, 2002, <https://doi.org/10.4324/9780203469699>.
4. Carkovic, Maria, and Ross Levine. "Does foreign direct investment accelerate economic growth?". *U of Minnesota Department of Finance, Working Paper*, June 2002, <http://dx.doi.org/10.2139/ssrn.314924>
5. Gujarati, Damodar N., Dawn C. Porter. *Basic Econometrics*, 5-th ed., New York, 2009.
6. Kumar, Nagesh and Pradhan, Jaya Prakash. "Foreign Direct Investment, Externalities and Economic Growth in Developing Countries: Some Empirical Explorations and Implications for WTO Negotiations on Investment", *RIS Discussion Paper*, # 27, 2002, <https://www.ris.org.in/en/discussion-paper/foreign-direct>.
7. Hansen, Henrik and Rand, John. "On the casual link between FDI and growth in developing countries". *Discussion papers, Institute of Economics, University of Copenhagen*, Denmark, 2004, <https://www.economics.ku.dk/research/publications/wp/2004/0430.pdf>.

8. "Statistical databases of the Central Bank of RA".
<https://www.cba.am/en/sitepages/statmonetaryfinancial.aspx>. Accessed: 24 Jun.2024.
<https://www.cba.am/en/sitepages/statexternalsector.aspx>. Accessed: 24 Jun 2024.
<https://www.cba.am/en/sitepages/statrealsector.aspx>. Accessed: 24 Jun 2024.
9. "Statistical databases of the Statistical Committee of RA".
<https://armstat.am/en/?nid=14>. Accessed: 24 Jun 2024.
10. "World Development Indicators". *Data Bank of the World Bank Group*.
<https://databank.worldbank.org/source/world-development-indicators#>. Accessed: 24 Jun 2024.

ANALYSIS OF THE RELATIONSHIP «FOREIGN DIRECT INVESTMENTS - ECONOMIC GROWTH» FOR RA ECONOMY

ALVARD KHARATYAN

*Yerevan State University, Chair of Mathematical Modeling in Economics, Head,
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

ANUSHIK PETROSYAN

*Yerevan State University, Chair of Mathematical Modeling in Economics,
Ph.D. in Physics and Mathematics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

KAREN YEGHOYAN

*Yerevan State University, Chair of Mathematical Modeling in Economics,
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The growth of foreign direct investment (FDI) as a component of GDP certainly contributes to economic growth. However, one should not forget that the relationship "economic growth - FDI" is "bi-directional", that is, in addition to the fact that FDI stimulates growth, it is also affected by economic growth. If there are many scientific and practical studies on the first, "traditional" direction of this "two-way" relationship, its other side - the impact of economic growth on FDI, has not been sufficiently studied.

The goal of this article is to evaluate the impact of the growth of RA economy sectors on FDI using regression models.

In the given article, the RA economy was regarded as an aggregate of the following sectors: industry, agriculture, construction, services and trade.

Multi-factor regression models were built in order to identify and evaluate the connections between FDI and economy sectors in RA. An economic analysis of the results obtained by the models was also performed, and the impact on FDI was estimated for each of the considered factors. Particularly, the econometric analysis shows that, other conditions being equal:

- 1% increase in the growth rate of industrial output leads to a 2.6% decrease in the volume of FDI.
- 1% growth of the service sector contributes to the 5.5% growth of the volume of FDI.
- 1% increase in agriculture leads to a 4.2% increase in the volume of FDI.
- Increase in the trade sector leads to the increase of FDI volume, whereas the increase in the construction leads to the decrease of it.

Keywords: *Foreign direct investment (FDI), gross domestic product (GDP), economic growth, "FDI-economic growth" relationship, time series, econometric analysis, regression, statistically significant effect.*

АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ «ПРЯМЫЕ ИНОСТРАННЫЕ ИНВЕСТИЦИИ – ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ» ДЛЯ ЭКОНОМИКИ РА

АЛВАРД ХАРАТЯН

*заведующая кафедрой экономико-математического моделирования
Ереванского государственного университета,
кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

АНУШИК ПЕТРОСЯН

*доцент кафедры экономико-математического моделирования
Ереванского государственного университета,
Աշխատանքային պայմանների ճկունությունը՝ ներառյալ հեռահար աշխատանքը և ճկուն գրաֆիկը, դառնում են առաջնահերթություն: Բազմազանության և ներառականության կարևորությունը մեծանում է, ինչը ընկերություններին մղում է ստեղծելու ներառական աշխատատեղեր: Տվյալների և վերլուծությունների վրա հիմնված թեկնածուների նկատմամբ անհատականացված մոտեցումը բարելավում է հավաքագրման գործընթացը:

Հավաքագրողի ժամանակակից կոմպետենցիաները (Adler 2024)

Բիզնեսի գործընթացների և ռազմավարության խոր պատկերացումը թույլ է տալիս հավաքագրողին բացահայտելու ընկերության անձնակազմի կարիքները և հարմարեցնելու հավաքագրման գործընթացները կազմակերպության կոնկրետ նպատակներին և համատեքստին:

Վերլուծական հմտություններ և տվյալները վերլուծելու ունակությունը օգնում են հավաքագրողին տեղեկացված որոշումներ կայացնելու, կանխատեսելու շուկայի փոփոխությունները և օպտիմալացնելու հավաքագրման ռազմավարությունները:

Հաղորդակցման և համոզելու գերազանց հմտությունները, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր, հնարավորություն է տալիս արդյունավետ շփվելու թեկնածուների, ղեկավարության և գործընկերների հետ և կառուցել վստահելի հարաբերություններ:

Տաղանդներ փնտրելու և գտնելու հմտությունն ապահովում է տաղանդների շարունակական համալրումը նույնիսկ մասնագետների պակասի դեպքում:

Ժամանակակից տեխնոլոգիաների և հավաքագրման գործընթացների օպտիմալացման ծրագրերի իմացությունը հնարավորություն է տալիս օգտագործելու

ավտոմատացում, վերլուծություն և սոցիալական մեդիա գործիքներ՝ աշխատանքի ընդունելու արդյունավետությունը բարելավելու և արագացնելու համար:

Ապրումակցումը և թեկնածուների դրդապատճառներն ու կարիքները հասկանալու և կարեկցանք ցուցաբերելու կարողությունը բարելավում է հարաբերությունները թեկնածուների հետ և օգնում ստեղծել առաջարկ, որը պահանջված է թափուր աշխատատեղի համար:

Ճնշման տակ աշխատելու, ժամանակը կառավարելու և նպատակների հասնելու կարողությունը ապահովում է աշխատանքի արդյունավետությունը դինամիկ աշխատաշուկայում:

Թեկնածուներին ճիշտ գնահատելու ունակությունը ապահովում է այն թեկնածուների ընտրությունը, ովքեր լավագույնս համապատասխանում են ընկերության պահանջներին:

Սեփական մասնագիտական զարգացում, անընդհատ սովորելու և հավաքագրման ոլորտում փոփոխություններն ընդունելու ունակությունը հնարավորություն է տալիս հավաքագրողին տեղեկանալու վերջին միտումների և նորարարությունների մասին:

Հավաքագրման ժամանակակից չափիչները (սլոբո 2024)

Հավաքագրման գործընթացը վերլուծելու և արդյունավետությունը չափելու համար կարևոր է նաև հաշվի առնել հավաքագրման գործընթացի ժամանակակից չափիչները, որոնցից ուզում ենք մատնանշել հետևյալները՝

Թափուր հաստիքի
համայնման ծախս

ներքին հավաքագրման ծախսեր + արտաքին հավաքագրման ծախսեր
նոր աշխատողների ընդհանուր թիվը

Առաջարկի ընդունման
գործակից

առաջարկն ընդունած թեկնածուների թիվը
առաջարկ ստացած թեկնածուների ընդհանուր թիվը

Ընտրության գործակից

ընտրված աշխատողների թիվը
թեկնածուների թիվը

Եկամտաբերության
գործակից

հավաքագրման տվյալ փուլը հաջողությամբ անցած թեկնածուների թիվը
տվյալ փուլի թեկնածուների ընդհանուր թիվը

Եկամտաբերության
գործակից

հավաքագրման տվյալ փուլը հաջողությամբ անցած թեկնածուների թիվը
տվյալ փուլի թեկնածուների ընդհանուր թիվը

Հաջողության
գործակից

հաջողության հասած նոր ընդունված աշխատողների թիվը
նոր ընդունված աշխատողների թիվը

Հոսունության
գործակից

կազմակերպությունից գնացած աշխատողների թիվը
տվյալ ժամանակահատվածի աշխատողների միջին թիվը

Եզրահանգումներ

Տաղանդների ձեռքբերման և պահպանման արդյունավետ ռազմավարությունները պարզ գործընթացներից վերածվում են ռազմավարական նախաձեռնությունների, որոնք կարող են ձևավորել ձեռնարկության ապագան: Այս համատեքստում ամփոփենք հավաքագրման կարևորությունը ընկերության հաջող գործունեության համար:

1. Ճկունություն և հարմարվողականություն. ժամանակակից շուկան ընկերություններից պահանջում է ճկունություն և արագ հարմարվողականություն:

2. Նորարարություն և ան. այսօր հավաքագրումը միայն թափուր աշխատատեղերի համալրում չէ. տաղանդը պետք է ի վիճակի լինի նորարարություն բերելու, խթանելու ընկերության անը, դիմակայելու ապագայի մարտահրավերներին:

3. Մշակույթ և ներառականություն. եզակի կորպորատիվ մշակույթը, ներառականության ընդունումը ռազմավարական գործիք են աջակցող և ոգեշնչող միջավայր ստեղծելու համար:

4. Հարմարվել նոր միտումներին. հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջների մշտական փոփոխությունները՝ հավաքագրման արդյունավետ մեթոդները պետք է ուղղված լինեն ոչ միայն ներկա, այլև ապագա կարիքներին: Տաղանդների համար մրցավազքում առաջ են այն ընկերությունները, որոնք կարող են արագ հարմարվել նոր միտումներին:

5. Արդյունավետություն և արտադրողականություն. Առաջին փուլից ճիշտ աշխատողների ընտրությունը հետագայում կիսնայի ընկերության ժամանակն ու ռեսուրսները: Արդյունավետ հավաքագրումն ուղղակիորեն առնչվում է արտադրողականության բարձրացմանը և բիզնես նպատակների իրականացմանը:

6. Գործատուի հեղինակության ամրապնդում. հավաքագրումը դառնում է նաև ընկերության՝ որպես գործատուի բրենդ ստեղծելու հզոր գործիք: Աշխատանքի ընդունման գործընթացում թեկնածուի դրական փորձը բարելավում է գործատուի բրենդինգը և ներգրավում նոր տաղանդներ:

Հարկ է նշել, որ պետական համակարգում անձնակազմի հավաքագրման գործընթացն իրականացվում է այլ ձևաչափով:

Հավաքագրման ու ընտրության գործընթացն իրականացվում է աշխատակազմի համալրման պահանջով: Թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվում է մրցույթ, որը, ըստ դասակարգման, լինում է արտաքին և ներքին: Զաղծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթի կազմակերպման գործընթացը մեկնարկում է Կադրային քաղաքականության բաժինը՝ ԶԾՏՀ-ին տեղեկացնելով թափուր պաշտոնի մասին և հրապարակելով մրցույթի մասին հայտարարություն: Դիմումների հավաքագրումը իրականացվում է առցանց տարբերակով: Դիմումները դիտարկվում և համապատասխանության դեպքում ընդունվում են: Եթե որևէ թեկնածուի ընդգրկումն անհնար է, իրականացվում է այլ թեկնածուի ընտրություն: Մրցույթն իրականացվում է մրցույթի հանձնաժողովի կողմից թեստավորման միջոցով: Գործընթացը ամփոփվում է մրցույթի արդյունքների հրապարակմամբ և տվյալների պահպանմամբ: Դիմումների բացակայության դեպքում տեղեկացվում է գլխավոր քարտուղարը, և մրցույթը չեղարկվում է:

Մրցույթի կազմակերպման գործընթացը հաջողությամբ հաղթահարած դիմորդները հրավիրվում են հարցազրույցի: ԶԾ պաշտոն զբաղեցնելու համար հարցազրույցի իրականացման գործընթացը մեկնարկում է ԿԶ բաժինը՝ նշանակելով հարցազրույցի ժամանակացույց: Հարցազրույցը իրականացնում է գլխավոր քարտուղարը: Մրցույթը հաղթահարած քաղծառայողը նախարարի հրամանով նշանակվում է պաշտոնին: Հավաքագրման գործընթացը հիմնականում նպատակաուղղված է քաղծառայողի մասնագիտական գիտելիքների և թափուր պաշտոնի համապատասխանությանը, իսկ հարցաքազան ամբողջությամբ չի ենթադրում մասնակիցների ընդհանուր գիտելիքների, էթիկայի նորմերի և վարքագծի կանոնների, կառավարչական հմտությունների և կողմնորոշվելու ունակությունների ստուգում: Այս գործընթացում նաև բացակայում է մրցույթի մասնակիցների արժեքների հիման վրա օբյեկտիվ և թափանցիկ գնահատման համակարգը (Գալոյան 165-166): Ուսումնասիրելով պետական համակարգի անձնակազմի հավաքագրման

գործընթացը՝ հասկանում ենք, որ այն ցանկալի է արդիականացնել՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ և մոտեցումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալոյան, Շուշանիկ. «ՀՀ պետական կառավարման համակարգի մարդկային ռեսուրսների կառավարման մոդելի գործընթացային վերլուծություն», *Գիտական Արցախ*, № 1(16), 2023:
2. Shaikh, Ayub. "The Complete IT Recruitment Survival Guide", 2008
3. Hovhannisyan, Ashkhen. "Recruiters have the power to lead change", *LinkedIn*, 24 Jan. 2018, <https://www.linkedin.com/pulse/recruiters-have-power-lead-change-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6-ashkhen-hovhannisyan/>.
4. Hovhannisyan, Ashkhen. "How to leverage company culture to recruit", *LinkedIn*, 21 Feb. 2018, <https://www.linkedin.com/pulse/how-leverage-company-culture-recruit-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6-ashkhen-hovhannisyan/>.
5. Mostyn, Steven. "Recruiting 101: The Fundamentals of Being a Great Recruiter", 2016, p. 18-21
6. Murugaiah, Prabakaran. "A Beginner's Guide to Technical Recruiting", 2011, էջ 6-18, <https://www.techfetch.com/A-Beginners-Guide-to-Technical-Recruiting-Prabakaran-Murugaiah.pdf>.
7. «От воина до менеджера», журнал «Рекрутинг news», №1, 2011.
8. Центр-профи. «История возникновения рекрутинга», <http://cprofi.info/istoriya-vozniknoveniya-rekrutinga/>. Дата обращения: 28 Июнь 2024.
9. APS Recruiting. «Экскурс в рекрутинг», <https://www.aps-rec.com/useful/eternal/History-of-recruiting>. Дата обращения: 28 Июнь 2024.
10. HR Method. «Из истории рекрутинга», <https://hr-metod.com/polezno/o-podbore-personala/iz-istorii-recruitinga.html>. Дата обращения: 28 Июнь 2024.
11. «История технологий в рекрутменте — от дырокола до облачного ИИ», <https://hh.ru/article/505113>. Дата обращения: 28 Июнь 2024.
12. HURMA. «7 ключевых этапов процесса подбора персонала», <https://hurma.work/ru/blog/7-klyuchevykh-etapov-proczessa-podbora-personala/>. Дата обращения: 28 Июнь 2024.
13. Zielinski, Dave. "2023 HR Technology Trends: Talent Marketplaces, Expanding AI and Optimizing Existing Systems", <https://www.shrm.org/topics-tools/news/technology/2023-hr-technology-trends-talent-marketplaces-expanding-ai-optimizing-existing-systems>. Accessed: 28 June 2024.
14. Shani, Jay. "Develop Your Talent Acquisition Strategy With 6 Practical Examples", <https://www.aihr.com/blog/talent-acquisition-strategy/>. Accessed: 28 June 2024.
15. Marson, Luke. "8 critical talent acquisition and recruitment trends in 2024", <https://www.techtarget.com/searchhrsoftware/feature/7-talent-acquisition-and-recruitment-trends>. Accessed: 28 June 2024.
16. Louadlergroup. "Recruiter Competency Model – Become a Talent Advisor and Career Consultant", <https://www.louadlergroup.com/resources/recruiter-competency-model/>. Accessed: 28 June 2024.
17. ulpen, Erik an. "23 Recruiting Metrics You Should Know [+ Free Template]", <https://www.aihr.com/blog/recruiting-metrics/>. Accessed: 28 June 2024.

WORK CITED

1. "Ot voina do menedzhera" [From Warrior to Manager], zhurnal «Rekruting news», №1, 2011. (in Russian)
2. Centr-profi. "Istoriya vozniknoveniya rekrutinga" [The History of Recruiting], <http://cprofi.info/istoriya-vozniknoveniya-rekrutinga/>. Data obrashheniya: 28.06.2024. (in Russian)
3. APS Recruiting. "Jekskurs v rekruting" [An Excursion into Recruiting], <https://www.aps-rec.com/useful/eternal/History-of-recruiting>. Data obrashheniya: 28.06.2024. (in Russian)
4. HR Method. "Iz istorii rekrutinga" [From the History of Recruiting], <https://hr-metod.com/polezno/o-podbore-personala/iz-istorii-rekrutinga.html>. Data obrashheniya: 28.06.2024. (in Russian)
5. "Istoriya tehnologij v rekrutmente — ot dyrokola do oblachnogo II" [The History of Technology in Recruitment — from Hole Punch to Cloud AI], <https://hh.ru/article/505113>. Data obrashheniya: 28.06.2024. (in Russian)
6. HURMA. "7 ključevyh etapov processa podbora personala" [7 Key Stages of the Recruitment Process], <https://hurma.work/ru/blog/7-klyuchevyh-etapov-processa-podbora-personala/>. Data obrashheniya: 28.06.2024. (in Russian)
7. Galoyan, Showshanik. HH petakan kar'avarman hamakargi mardkayin r'esursneri kar'avarman modeli gorc'y'nt'acayin verluc'ut'yun [Process Analysis of the Human Resource Management Model of the RA Public Administration System], Gitakan Arcax, № 1(16), 2023:

FEATURES OF RECRUITMENT AS ONE OF THE MAIN FUNCTIONS OF MANAGING HUMAN RESOURCES

ANNA MAKSUDYAN

*Yerevan State University, Department of Theory and History of Sociology,
Associate Professor; YSU Human Resources Management Master's Program, Head;
RA Public Administration Academy, Lecturer;
Member of Armenian HR Association, Ph.D. in Economics
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to present one of the HRM functions - recruitment, as well as to emphasize the importance of the function in HRM processes.

In order to achieve the goal, the following tasks were set:

- based on scientific materials, to research and present the evolution and formation history of recruitment, the stages of recruitment, the use of technologies in recruitment, modern trends and strategies of recruitment;
- to explore and to emphasize the importance of organizational culture and the core recruiter's because recruitment process is one of the fundamental functions of HR and helps to increase the effectiveness of the organization in the short and long term.

With recruitment done properly, an organization has happier and more productive employees.

The recruitment process creates a favorable working environment and good employee relations.

Analysis, synthesis, induction, deduction and historical comparative methods were used during the research.

The main conclusions made in the framework of the research are:

- The recruitment process is highly dependent on the organizational culture;

- Skill-based recruitment is replacing knowledge-based recruitment;
- The entry of innovative technologies and artificial intelligence into recruitment is inevitable and helps to improve the recruitment process.

Keywords: *recruiting, organizational culture, competence, artificial intelligence, technology, automation, human resource management.*

ОСОБЕННОСТИ РЕКРУТМЕНТА КАК ОДНОЙ ИЗ ОСНОВНЫХ ФУНКЦИЙ УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ

АННА МАКСУДЯН

*доцент кафедры теории и истории социологии,
руководитель магистерской программы
«Управление человеческими ресурсами»*

*Ереванского Государственного университета,
преподаватель Академии государственного управления РА,
член Ассоциации Управление человеческими ресурсами РА, кандидат
экономических наук
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – представить одну из функций управления персоналом, а именно подбор персонала, а также выделить важность этой функции в процессах управления персоналом.

Для достижения цели перед нами были поставлены следующие задачи:

на основе научных материалов исследовать и представить историю эволюции и становления рекрутинга, этапы рекрутинга, использование технологий в рекрутменте, современные тенденции и стратегии рекрутинга;

изучить и подчеркнуть важность организационной культуры и основных компетенций рекрутера.

Данное исследование актуально, поскольку процесс подбора персонала является одной из фундаментальных функций HR-команды и способствует повышению эффективности организации в краткосрочной и долгосрочной перспективе.

При правильном подборе персонала в организации появляются более счастливые и продуктивные сотрудники.

Процесс подбора персонала создает благоприятную рабочую среду и хорошие отношения между сотрудниками.

В ходе исследования использовались методы анализа, синтеза, индукции, дедукции и исторического сравнения.

Основные выводы, сделанные в рамках исследования:

- процесс подбора персонала во многом зависит от организационной культуры;
- подбор персонала, основанный на навыках, заменяет подбор, основанный на знаниях;
- внедрение инновационных технологий и искусственного интеллекта в рекрутмент неизбежен и способствует улучшению процесса рекрутмента.

Ключевые слова: *рекрутинг, организационная культура, компетенция, искусственный интеллект, технологии, автоматизация, управление персоналом.*

**ԱԳՐՈՂԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓՈՐՁԸ ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ***

ՀՏԴ 338.43:339.137.2

DOI: 10.52063/25792652-2024.2.21-176

ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
Ագրարային քաղաքականության և
տնտեսագիտության հետազոտական
կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

ashot.voskan@gmail.com

ORCID ID: 0000-0002-0027-666x

ԿԱՐԻՆԵ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական
կենտրոնի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

karinemalkhasyan@mail.ru

ORCID ID: 0009-0007-7787-6093

Հոդվածի նպատակն է ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգերի վերաբերյալ տեսական և գործնական դրույթների ուսումնասիրության, ինչպես նաև միջազգային փորձի հետազոտության և տեղայնացման հիման վրա մշակել ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպակառավարման համակարգի կիրառելի և արդիական սխեմա:

Հոդվածի խնդիրներն են ՀՀ ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի ձևավորման հիմնական սկզբունքների վերհանումը՝ կայունություն, հասցեականություն, երաշխավորվածություն, լիազորությունների հստակ բաշխում և մրցակցության հավասար պայմանների ապահովում, միջազգային փորձի և համաշխարհային զարգացման միտումների հաշվի առնում, ինչպես նաև հիմնական փուլերի մշակումը և կատարելագործման ուղղությունների առաջադրումը:

Հոդվածում կիրառվել են դիալեկտիկայի, գիտական վերացարկման, համեմատական վերլուծության և տրամաբանական մեթոդները:

Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումների հիման վրա առաջարկվել է ագրոպարենային համակարգի կառավարման հայեցակարգի սահմանման նոր մոտեցում, այն է՝ ագրոպարենային համակարգի կառավարման կառուցակարգն առկա համակարգի և դրա ենթահամակարգերի փոփոխության անընդհատ և համակարգված գործընթաց է, որը բխում է կառավարման խնդիրների նպատակային և համալիր լուծման անհրաժեշտությունից, ինչպես նաև ագրարային ոլորտի արդյունավետ գործառնության և հետագա զարգացման օբյեկտիվ

* Հոդվածը ներկայացվել է 05.06.2024թ., գրախոսվել՝ 19.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

պահանջներից: Վերջինիս հիման վրա մշակվել է ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպակառավարման համակարգի նոր սխեմա:

Հիմնաբառեր՝ ագրոպարենային համակարգ, կազմակերպատնտեսական կառուցակարգ, շուկայական տնտեսություն, պետություն, գյուղատնտեսություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, մարզպետարան, համայնքապետարան:

Ներածություն

Կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգը ներառում է միմյանց հետ փոխկապակցված տնտեսական մեթոդները և լծակները, որոնք անմիջականորեն ազդում են ապրանքների արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման գործընթացների վրա: Ընդ որում, որպես կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի տարրեր հանդես են գալիս տարբեր տնտեսական կառույցներ, որոնք ձևավորվում են ագրոարդյունաբերական ինտեգրացիայի ազդեցության ներքո:

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի կիրառման նպատակները և խնդիրները հանգում են հետևյալին՝ արտադրանքի թողարկման ծավալների աճ, պարենային անվտանգության ապահովում, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում, ագրարային ոլորտի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակի բարելավում, գյուղական տարածքների կայուն զարգացում, ոլորտի ներդրումային գրավչության բարձրացում, նորարարությունների կիրառում և այլն:

Զանի որ շուկայական տնտեսական համակարգը կատարյալ չէ և կարող է ունենալ խաթարումներ, ապա որպես գլխավոր կարգավորող սուբյեկտ հիմնականում հանդես է գալիս պետությունն իր ուղղակի և անուղղակի ազդեցության լծակներով:

Այս առումով առանձնահատուկ կարևորություն է ստանում ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի միջազգային փորձի ուսումնասիրությունը և վերջինիս կիրառելի տարբերակի մշակումը:


Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի էությունը

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգը վարչական, տնտեսական, իրավական ազդեցության լծակների և արտադրական գործընթացների կազմակերպման ձևերի համախումբ է, որոնք ապահովում են ագրոպարենային համակարգի գործունեությունը և կայուն զարգացումը:

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգը որոշակի մեթոդների և լծակների կիրառությամբ պետական ինստիտուտների և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների կառավարման և վերահսկողության համակարգ է, ինչի միջոցով ապահովվում է տնտեսության ագրարային ոլորտի արդյունավետ գործունեությունը:

Որոշ տնտեսագետներ տարանջատում են «կազմակերպական կառուցակարգ» և «տնտեսական կառուցակարգ» հասկացությունները, մասնավորապես՝ ռուս տնտեսագետ, պրոֆեսոր Բ. Չ. Միլները կառավարման կազմակերպական կառուցակարգը սահմանում է որպես կապերի համակարգ, որոնք առաջ են գալիս որոշակի դինամիկայում: Տոհոկուի համալսարանի պրոֆեսոր Տ. Կոնոն կազմակերպական կառուցակարգը դիտարկում է որպես տարբեր աշխատանքային գործընթացները խմբավորելու, ինչպես նաև այդ գործընթացներում ուղղահայաց և հորիզոնական կապերը կանոնակարգելու եղանակ (Цхырбаева и Фарниева,-с.151-154):

Ընդհանուր առմամբ, կազմակերպական կառուցակարգը վերաբերում է ազդեցության կազմակերպական միջոցներին, իսկ տնտեսական կառուցակարգը՝ տնտեսավարման մեթոդներին և ձևերին, որոնք ներառում են տնտեսական հարաբերությունները, գործունեության ընդհանուր արդյունքների վրա վերջիններիս ազդեցության գնահատման եղանակները, տնտեսական գործունեության խթանման, պլանավորման, վերլուծության ենթահամակարգերը և այլն:



Գծապատկեր 1. Ագրոպարենային համակարգի կառավարման կառուցակարգի կազմակերպական և տնտեսական գործոնները (Тарасов, Исаева, и др., 167)

Ագրոպարենային համակարգի տնտեսական կառուցակարգը որոշակի տարրերի ամբողջությունն է, որոնք բնորոշ են արտադրության գործընթացի և կառավարման համակարգի կազմակերպմանը, որոնք էլ ապահովում են ագրարային ոլորտի սուբյեկտների գործունեությունը և զարգացումը, և վերջիններիս գործունեության վերջնական արդյունքների ստացումը՝ դրված նպատակներին համապատասխան (Франциско и Молчан 142-148):

Մեր կարծիքով, ագրոպարենային համակարգի կառավարման կառուցակարգն առկա համակարգի և դրա ենթահամակարգերի փոփոխության անընդհատ և համակարգված գործընթաց է, որը բխում է կառավարման խնդիրների նպատակային և համալիր լուծման անհրաժեշտությունից, ինչպես նաև՝ ագրարային ոլորտի արդյունավետ գործառնության և հետագա զարգացման օբյեկտիվ պահանջներից:

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի միջազգային փորձը

Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ պետությունը գրեթե բոլոր տնտեսապես զարգացած երկրներում աջակցում է ագրարային ոլորտին, ընդ որում, պետական կարգավորման մեթոդների ընտրությունը կախված է կոնկրետ երկրի գյուղատնտեսության զարգացման մակարդակից և ազգային առաջնահերթություններից:

Պետության կողմից ագրարային ոլորտին աջակցության միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից հատկապես ուշադրության են արժանի բարձր մրցունակությամբ գյուղատնտեսական արտադրանք և գերհագեցած շուկա ունեցող երկրները:

Այսպես, վերջին տարիներին ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում դիտվում է պետության կողմից ագրարային ոլորտին աջակցության նվազում: Դա նշանակում է, որ ագրոբիզնեսի համակարգը և հատկապես գյուղատնտեսական արտադրության ոլորտը առավելագույնս մոտեցել և շարժվում է բիզնես գործունեության կանոններին համապատասխան: ԵՄ-ում և ԱՄՆ-ում գյուղատնտեսական արտադրություն իրականացնողների աջակցության ուղղակի ձևերի տեսակարար կշռի նվազումն ուղեկցվում է աջակցության անուղղակի ձևերի աճով՝ ներառյալ պետական տրանսֆերտների միջոցով ընդհանուր ծառայությունների ֆինանսավորումը: Վերջիններիս թվին են դասվում «կանաչ զամբյուղի» աջակցության միջոցառումները, մասնավորապես՝ սննդամթերքի որակի և անվտանգության վերահսկողությունը, կադրերի կրթության և վերապատրաստման ծախսերը, ներդրումների աճը, ենթակառուցվածքների և մարքեթինգային գործունեության բարելավումը և այլն:

Ի հակադրություն դրա՝ Չինաստանում ոլորտի աջակցության ցուցանիշն ունի կայուն դրական դինամիկա, ինչը կապված է ինչպես կոշտ հովանավորչական քաղաքականության իրականացման, այնպես էլ՝ ազգային տնտեսության և եկամուտների աճի տեմպի հետ:

Ագրարային ոլորտի պետական կարգավորումը զարգացած երկրների մեծ մասի ագրարային քաղաքականության առաջնահերթ ուղղություններից է: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ՀՀ-ում պետական կարգավորման կառուցակարգեր կիրառվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից, որի գլխավոր նպատակը հենց ոլորտի կարգավորումն է:

Կարգավորման կառուցակարգերի կիրառումը կարող է հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.

- գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացում՝ տեխնիկական առաջընթացի խթանման և արտադրության գործոնների, հատկապես աշխատուժի առավել արդյունավետ օգտագործման հաշվին,
- գյուղական բնակչության կենսամակարդակի և եկամուտների մակարդակի բարձրացում,
- բնակչության ապահովում անհրաժեշտ պարենային ապրանքներով,
- գյուղացիական տնտեսությունների կողմից իրացման միջին գների և մանրածախ գների հարաբերակցության համահարթեցում:

ՀՀ-ում միասնական ագրարային քաղաքականությունը կարող է հիմնվել հետևյալ բաղադրիչների վրա.

1. Ուղղակի վճարումներ գյուղացիական տնտեսություններին, ինչը կբերի դրանց կայունացմանը, ինչպես նաև՝ արտադրության շահութաբերության մակարդակի բարձրացմանը:
2. Գյուղական բնակավայրերի զարգացմանն ուղղված միջոցառումներ մասնավորապես՝ նորարարությունների նոր տեխնոլոգիաների կիրառմամբ տնտեսությունների մրցունակության, կյանքի որակի բարձրացում և այլն:

ԵՄ-ում ստեղծվել է գյուղատնտեսության ֆինանսավարկային ապահովման առանձնահատուկ համակարգ, որը հիմնված է ագրարային ոլորտի արտոնյալ վարկավորման վրա: Ագրոպարենային համակարգում իրականացվում է բանկերի, վարկային կոոպերատիվների և այլ մասնագիտացված ֆինանսավարկային կազմակերպությունների հետևողական պետական կարգավորում: Գրեթե բոլոր զարգացած երկրներում գործում են ֆինանսավարկային կազմակերպությունների գործառնության հատուկ պայմաններ, որոնց կիրառումն անմիջականորեն ազդում է

ագրոպարենային համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետության վրա:

Ֆրանսիայում, օրինակ, իրականացվում է տարբեր կազմակերպությունների համախմբում, որոնք ներգրավված են ագրարային վարկավորման համակարգում՝ «Գյուղատնտեսության ֆինանսավորման մշտական հանձնաժողովի» միջոցով: Վերջինս առաջարկություններ է մշակում վարկավորման ընդհանուր ծավալների և ըստ տարիների կոնկրետ գումարների մասով: Որպես գործառնության հատուկ պայման հարկ է առանձնացնել ցածր տոկոսադրույքները: Տոկոսադրույքները խստորեն վերահսկվում են՝ կախված վարկի գործողության ժամկետից և կատեգորիայից: Ավելին, տոկոսադրույքների մի մասը սուբսիդավորվում է պետության կողմից: Ոչ արտոնյալ տոկոսադրույքները կազմում են 6-10% (Бурлакова, 61-63):

ՌԴ-ում ագրոպարենային համակարգի կառավարման գլխավոր սուբյեկտը պետությունն է: Այստեղ ագրոպարենային համակարգի պետական կառավարման համակարգն ունի 3 մակարդակ. (Кызнецова, 223)

- դաշնային,
- տարածաշրջանային,
- տեղական:

Վերոնշյալ տարանջատումը պայմանավորված է կառավարման համապատասխան գործառնությունով, ինչը ենթադրում է գործունեության տարբեր ձևերի միավորում կառավարման այնպիսի մակարդակում, որում դրանք կիրականացվեն ռեսուրսների նվազագույն ծախսերով և առավելագույն արդյունավետությամբ: Նշված մակարդակներից յուրաքանչյուրն օժտված է հստակ իրավասություններով և կառավարչական գործառնությունով, որոնց իրականացումը կոչված է նպաստելու ագրարային ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Այսպես, ագրոպարենային համակարգի կառավարման դաշնային մակարդակը ներառում է ագրոպարենային համակարգի աջակցության և զարգացման ծրագրերի, ինչպես նաև՝ ագրարային բարեփոխումների իրականացման ռազմավարության մշակումը, ագրոպարենային համակարգի պետական կարգավորման մեթոդների կիրառման կառուցակարգերի որոշումը և այլն: Այս մակարդակում մշակվում են հարկման, վարկավորման, ապահովագրության հիմնական ուղղությունները, մշակվում են տարբեր նպատակային ծրագրեր, կազմվում են ոլորտի գործառնության և զարգացման պլաններ և կանխատեսումներ, ամբողջացվում է կառավարման մարմինների համակարգը:

Տարածաշրջանային մակարդակում ագրոպարենային համակարգի կառավարման գործառնությունը նման են դաշնային մակարդակում իրականացվող գործառնություններին՝ ֆունկցիոնալ տարբերակման մակարդակների և տարածքային սահմանափակումների տարբերությամբ: Այստեղ սուբյեկտներն իրենց իրավասության շրջանակներում ընդունում են կանոնակարգող դրույքներ, մշակում են տարածաշրջանային զարգացման նպատակային ծրագրեր, ձևավորում են կառավարման մարմինների իրենց կառուցվածքը և այլն:

Մարզային մակարդակում ագրոպարենային համակարգի պետական կառավարման գործառնությունը իրականացնող տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառացած հիմնական խնդիրները հանգում են ագրարային ոլորտը սպասարկող կազմակերպությունների գործունեության կարգավորմանը և համակարգմանը, շուկայական ենթակառուցվածքների ձևավորմանը, գյուղմթերքի որակի վերահսկողությանը և այլն:

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի մարզային մակարդակում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին զուգահեռ որպես շուկայական

հարաբերությունների անմիջական մասնակիցներ գործունեություն են ծավալում նաև առանձին տնտեսավարող սուբյեկտներ, որոնց գործունեությունն ուղղված է նախորդ մակարդակներում մշակված և հաստատված նպատակային ծրագրերի իրականացմանը:

ՀՀ ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի կատարելագործման ուղիները

ՀՀ ագրոպարենային համակարգի պետական կառավարման համակարգն ունի 3 մակարդակ.

- հանրապետական կամ կենտրոնական,
- տարածքային,
- տեղական ինքնակառավարման:

Որպես ագրարային ոլորտի կառավարման կենտրոնական լիազոր մարմին ՀՀ-ում հանդես է գալիս Էկոնոմիկայի նախարարությունը, տարածքային մարմինների դերում՝ մարզպետարանները (համապատասխան գերատեսչություններով), իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դերում՝ համայնքները՝ համայնքապետի գլխավորությամբ:

ՀՀ ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի ձևավորման հիմնական սկզբունքները հանգում են հետևյալին.

- Կայունություն. տնտեսավարող սուբյեկտները պետք է համագործակցեն նախապես սահմանված կանոնակարգերի շրջանակներում:
- Հասցեականություն. տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը պետք է ունենա հստակ ուղղվածություն և նպատակայնություն:
- Երաշխավորվածություն. պետության կողմից մշակված օրենքները և նորմատիվ իրավական ակտերը պետք է երաշխավորեն տնտեսավարող սուբյեկտների գործունեության հեռանկարայնությունը:
- Լիազորությունների հստակ բաշխում և մրցակցության հավասար պայմանների ապահովում:
- Միջազգային փորձի և համաշխարհային զարգացման միտումների հաշվի առնում:

Կարծում ենք, որ ՀՀ-ում ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգը պետք է մշակվի հետևյալ փուլերով՝


- ագրոպարենային համակարգի զարգացման նպատակների և խնդիրների հստակ ձևակերպում,
- ագրոպարենային համակարգի զարգացման նպատակով իրավաօրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի ձևավորում,
- ագրոպարենային համակարգի կառավարման վրա ազդող հիմնական գործոնների առանձնացում,
- ագրոպարենային համակարգի զարգացման հնարավոր տարբերակների կանխատեսում,
- ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի կատարելագործման հիմնական ուղղությունների սահմանում և հիմնավորում,
- ինստիտուցիոնալ և կազմակերպչական կարգավորման իրականացում:

Ագրոպարենային համակարգի կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգի կատարելագործման հեռանկարային ուղղություններն են.

- հարկային և վարկային քաղաքականության կատարելագործումը,
- թիրախային /նպատակային/ ֆինանսավորումը,
- ներդրումային գործունեության և լիզինգային գործառնությունների խթանումը,

- ագրարային ոլորտի զարգացման պետական կարգավորումը,
- գների կարգավորումը:

Մեր կողմից մշակվել է ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպակառավարման համակարգի հետևյալ սխեման.



Գծապատկեր 2. ՀՀ ագրարային ոլորտի կազմակերպակառավարման համակարգի սխեմա

Ինչպես երևում է առաջարկվող սխեմայից, ՀՀ ագրարային ոլորտի կառավարման կառուցվածքում գերակա դերակատարություն պետք է ստանձնեն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, տարածաշրջանային (մարզային) կառավարման և հատկապես տեղական ինքնակառավարման մարմինները՝ հանձնիս Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության: Վերջինս համայնքապետարանի հետ միասին իրենց վերապահված ընդլայնված լիազորությունների շրջանակներում կհամակարգի տարածաշրջանային ագրոպարենային հատվածի գործունեությունը, այդ թվում՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների և այլ տնտեսավարող սուբյեկտների կարիքները և փոխհարաբերությունները:

Համայնքների կտրվածքով գյուղատնտեսության կառավարելիության աստիճանը բարձրացնելու և տարածաշրջանային քաղաքականություն մշակելու և իրականացնելու նպատակով առաջարկվում է որոշակի կառուցվածքային և գործառնության փոփոխություններ կատարել արդեն խոշորացված համայնքներում: Մասնավորապես՝ համայնքապետարանի կառուցվածքում նպատակահարմար է ավելացնել համայնքի ղեկավարի՝ գյուղատնտեսության զարգացման գծով տեղակալի ինստիտուտը: Վերջինիս միջոցով համայնքի ղեկավարը կարող է միջնորդավորված ձևով իրականացնել գյուղատնտեսության զարգացման համայնքային քաղաքականություն (Казарян, Восканян и Арутюнян, 204):

Որպես կառավարման համակարգի մասնակիցներ կարող են հանդես գալ մասնագիտացված սպասարկող ծառայությունները, ֆինանսական կազմակերպությունները, գիտական և կրթական կառույցները, ինչպես նաև հասարակական կազմակերպություններն ու միավորումները:

Ֆինանսական կազմակերպությունների շարքում առանձնահատուկ կարևորություն է տրվում «ԱԿԲԱ» բանկ ՓԲԸ-ին, որն առաջատար է ոլորտի վարկավորման գծով, քանի որ ընդգրկում է շուկայի շուրջ 44%-ը: Ոլորտում որոշակի գործունեություն են ծավալում նաև «Արմավիսբանկ» ՓԲԸ-ն, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն, «Կոնվերսբանկ» ԲԲԸ-ն, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «Ամերիաբանկ» ԲԲԸ-ն: Ի սկզբանե կարևորվել է հատկապես «Ակբա» բանկի ծավալած գործունեությունը, որի հիմնական առաքելությունն է եղել օժանդակել գյուղացիական տնտեսությունների միավորմանը և գյուղատնտեսության զարգացմանը: Վերլուծությունները վկայում են՝ չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսական ոլորտի վարկավորման գործում «ԱԿԲԱ» կրեդիտ ագրիկոլ բանկը պահպանել է իր առաջատարի դիրքերը՝ զբաղեցնելով շուկայի գերակշիռ մասը, այնուհանդերձ, գործունեությունում առկա են որոշակի շեղումներ, այսպես՝ բանկի վարկային պորտֆելում գյուղատնտեսության տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 31.5 տոկոս, ընդ որում՝ պետական աջակցության ծրագրերով տրամադրված վարկերը կազմել են ավելի քան 73 տոկոսը («ԱԿԲԱ» կրեդիտ ագրիկոլ բանկի պաշտոնական կայքէջ <https://www.acba.am/files/Annual-Report-2021.pdf>):

Գյուղատնտեսության ոլորտի վարկավորում են իրականացնում նաև հանրապետությունում գործող որոշ ունիվերսալ վարկային կազմակերպություններ, այդ թվում՝ «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ն, «ՖԻՆԶԱ» ՈՒՎԿ-ն, «Կամուրջ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն և այլն: Հատկապես մեծ է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի դերը, քանի որ այն ՀՀ տարածքում հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ զբաղվող և գյուղատնտեսական մթերքի վերամշակում իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկավորմամբ:

Գիտական և կրթական կառույցների շրջանակներում կարող են դիտարկվել ՀԱԱՀ-ն և մի շարք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք գործունեություն են ծավալում ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում: Ընդ որում, ցանկայի կլիներ, որ նշված հաստատություններն ընդլայնեին իրենց գործունեության շրջանակները մարզերում, հատկապես՝ լեռնային և նախալեռնային տարածաշրջաններում:

Հասարակական կազմակերպություններն ու միավորումները նպատակային ուղղվածություն և ֆինանսավորում ունեցող կառույցներ են, որոնց գործունեությունը միտված է ագրարային ոլորտում առավելապես թիրախային խնդիրների լուծմանը:

Մասնագիտացված սպասարկող ծառայության օրինակ է Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, որի գործառույթներն են՝ սննդի շղթայի փուլերում նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառում իրականացվող պետական վերահսկողության աշխատանքների պլանավորումը, համակարգումը և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարող ենք փաստել, որ շուկայական տնտեսական համակարգում, ուր տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ի հայտ են գալիս տարաբնույթ խաթարումներ, օբյեկտիվորեն առաջանում է պետության աջակցության և կառավարման կազմակերպատնտեսական արդյունավետ կառուցակարգերի կիրառման անհրաժեշտություն: Ընդ

որում, մի շարք երկրների՝ ԱՄՆ, Չինաստան, ՌԴ, ԵՄ երկրներ, փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ագրոարդյունաբերության պետական աջակցության ընդգրկման չափի և մեթոդների ընտրությունը մեծապես պայմանավորված է տվյալ երկրի առջև դրված խնդիրների լուծման և միասնական ագրարային քաղաքականության իրականացման մակարդակով:

Կառավարման կազմակերպատնտեսական կառուցակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում գյուղատնտեսության կառավարման գործում ոլորտի զարգացման համար պատասխանատու Գյուղատնտեսության նախարարության բացակայության պայմաններում, հիմնական դերակատարությունը պետք է ստանձնի ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը: Նշենք, որ գյուղատնտեսության զարգացման և ագրարային քաղաքականության իրականացման գործում հատկապես կարիք է զգացվում մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացման, իրավունքների ընդգծման և պատասխանատվության բարձրացման:

Ընդօրինակելի է նաև ագրոկրթական գիտական խորհրդատեղեկատվական և նոր տեխնոլոգիաների ներդրման կազմակերպակառավարման ձևերի և մեթոդների կիրառումը՝ խրախուսելով գյուղացիական տնտեսությունների ներգրավվածությունը և մասնակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бурлакова С., «Особенности финансирования аграрного сектора стран ЕС» // *АПК: экономика и управление*, № 10, стр. 61-63.
2. Казарян Э.С., Восканян А.Е., Арутюнян А.Г., «Подходы к децентрализации политики развития сельского хозяйства в РА», Развитие сельских территорий: региональный аспект, сб. ст. по материалам XVII Междунар. науч.-практ. конф. / отв. за вып. А. А. Адаменко. – Краснодар: КубГАУ, 2023, стр. 204.
3. Тарасов А.Н., Исаева О.В., Холодова М.А. и др, *Организационно-экономический механизм развития различных форм хозяйствования в аграрном секторе АПК в условиях новой экономической реальности: монография*, Ростов н/Д ВНИИЭУН – филиал ФГБНУ ФРАНЦ; Изд-во ООО «АзовПринт», 2020, стр. 167.
4. Кузнецова. В.В., *Управление агропромышленным комплексом ИКЦ «МарТ»*; Ростов н/Д: Издательский цент «МарТ», М., 2003, стр. 223.
5. Франциско О.Ю., Молчан А.С., *Система управления аграрным сектором экономики: уровневая и структурная дифференциация*, стр. 142-148, <https://cyberleninka.ru/article/n/sistema-upravleniya-agrarnym-sektorom-ekonomiki-urovnevaya-i-strukturnaya-differentsiatsiya>.
6. Цхурбаева Ф.Х., Фарниева И.Т., «Организационно-экономический механизм управления предприятиями АПК», *TERRA ECONOMICUS, Экономический вестник Ростовского государственного университета*, Том 7 № 2 (часть 3), 2009, стр. 151-154, <https://cyberleninka.ru/article/n/organizatsionno-ekonomicheskii-mehanizm-upravleniya-predpriyatiyami-apk/viewer>.
7. «ԱԿԲԱ» կրեդիտ ագրիկոլ բանկի պաշտոնական կայքէջ <https://www.acba.am/files/Annual-Report-2021.pdf>: Մուտք՝ 31 Մայիս 2024:

WORKS CITED

1. Burlakova S., "Osobennosti finansirovaniya agrarnogo sektora stran ES" [Peculiarities of Financing the Agrarian Sector of the EU Countries] // *APK: jekonomika i upravlenie*, № 10, s. 61-63. (in Russian)
2. Kazarjan Je.S., Voskanjan A.E., Arutjunjan A.G., Podhody k decentralizacii politiki razvitija sel'skogo hozjajstva v RA, Razvitie sel'skih territorij: regional'nyj aspect [Approaches to the Decentralisation of Agricultural Development Policy in the Republic of Armenia, Development of Rural Territories: Regional Aspect], sb. st. po materialam XVII

Mezhdunar. nauch.-prakt. konf. / otv. za vyp. A. A. Adamenko. – Krasnodar: KubGAU, 2023, s. 204. (in Russian)

3. Tarasov A.N., Isaeva O.V., Holodova M.A. i dr, Organizacionno-jekonomicheskij mehanizm razvitiya razlichnyh form hozjajstvovaniya v agrarnom sektore APK v usloviyah novoy jekonomicheskoy real'nosti [Organisational and Economic Mechanism of Development of Various Forms of Management in the Agrarian Sector of the Agroindustrial Complex in the New Economic Reality]: monografiya, Rostov n/D VNIIJeIN – filial FGBNU FRANC; Izd-vo OOO «AzovPrint», 2020, s. 167. (in Russian)

4. . . Kuznecova., Upravlenie agropromyshlennym kompleksom IKC «MarT» [Management of Agroindustrial complex ICC "Mart"]; Rostov n/D: Izdatel'skij cent «MarT», M., 2003, s. 223. (in Russian)

5. Francisko O.Ju., Molchan A.S., Sistema upravleniya agrarnym sektorom jekonomiki: urovnevaya i strukturnaya differenciaciya [System of Management of Agrarian Sector of Economy: Level and Structural Differentiation], s.142-148, <https://cyberleninka.ru/article/n/sistema-upravleniya-agrarnym-sektorom-ekonomiki-urovnevaya-i-strukturnaya-differentsiatsiya> (in Russian)

6. Churbaeva F.H., Farnieva I.T., Organizacionno-jekonomicheskij mehanizm upravleniya predpriyatijami APK [Organisational and Economic Mechanism of Management of AIC Enterprises], TERRA ECONOMICUS, Jekonomicheskij vestnik Rostovskogo gosudarstvennogo universiteta, Tom 7 № 2 (chast' 3), 2009, s. 151-154, <https://cyberleninka.ru/article/n/organizatsionno-ekonomicheskij-mehanizm-upravleniya-predpriyatijami-apk/viewer>. (in Russian)

7. «AKBA» kredit agrikol banki pashtonakan kayqe'j [“AKBA” Credit Agricole Bank Official website] <https://www.acba.am/files/Annual-Report-2021.pdf>. (Verjin aycy" 31.05.2024t'.)

INTERNATIONAL EXPERIENCE AND POSSIBILITIES OF APPLICABILITY OF ORGANIZATIONAL AND ECONOMIC MECHANISMS OF AGRICULTURE SYSTEM MANAGEMENT IN RA

ASHOT VOSKANYAN

National Armenian Agrarian University, Research Center of Agrarian Policy and Economics, Head, Ph.D. in Economics, Associate Professor, Yerevan, the Republic of Armenia

KARINE MALKHASYAN

Armenian National Agrarian University, Research Center of Agrarian Policy and Economics, Researcher, Ph.D. in Economics, Associate Professor, Yerevan, the Republic of Armenia

The purpose of the article is to study the theoretical and practical provisions on the organizational and economic mechanisms of the management of the agro-food system, as well as to develop an applicable and modern scheme of the organizational management system of the agrarian sector of RA based on the research and localization of international experience.

The problems of the article are: highlighting the main principles of the formation of the organizational and economic mechanism of the management of the RA agro-food system: stability, addressability, guarantee, clear distribution of powers and provision of equal conditions of competition, taking into account international experience and global development trends, as well as developing key milestones and setting improvement directions.

The article used dialectical, scientific methods of elimination, comparative analysis and logical methods.

Based on the conclusions made as a result of the research, a new approach to defining the concept of agro-food system management was proposed, that is: the management

mechanism of the agro-food system is a continuous and systematic process of changing the existing system and its subsystems, which stems from the need for a targeted and complex solution to management problems, as well as from the objective requirements of the effective operation and further development of the agrarian sector. Based on it a new scheme of the organizational management system of the RA agrarian sector was developed.

Keywords: *agro-food system, organizational and economic mechanism, market economy, state, agriculture, RA Ministry of Economy, regional administration, community administration.*

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ И ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ОРГАНИЗАЦИОННО-ЭКОНОМИЧЕСКИХ МЕХАНИЗМОВ УПРАВЛЕНИЯ СИСТЕМОЙ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В РА

АШОТ ВОСКАНЯН

*директор Научно-исследовательского центра аграрной политики и экономики
Национального аграрного университета Армении,
кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

КАРИНЕ МАЛХАСЯН

*исследователь Научно-исследовательского центра аграрной политики и экономики
Национального аграрного университета Армении,
кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – разработать применяемую и современную схему организационно-управленческой системы аграрного сектора РА на основе изучения теоретических и практических положений относительно организационно-экономических механизмов управления аграрным сектором, а также исследования и локализации международного опыта.

Задачами статьи являются выделение основных принципов формирования организационно-экономического механизма управления агропродовольственной системой РА: стабильность, адресность, гарантированность, четкое распределение полномочий и обеспечение равных условий конкуренции, учет международного опыта и мировых тенденции развития, а также разработка основных этапов и предложение направлений совершенствования.

В ходе исследования использовались методы диалектики, научной абстракции, сравнительного анализа и логический метод.

На основе выводов, сделанных в результате исследования, предложен новый подход к определению понятия управления агропродовольственной системой: механизм управления агропродовольственной системой представляет собой непрерывный и систематический процесс изменения существующей системы и ее подсистем, который вытекает из необходимости целенаправленного и комплексного решения задач управления, а также из объективных требований эффективного функционирования и дальнейшего развития аграрного сектора. На этой основе была разработана новая схема организационно-управленческой системы управления аграрным сектором РА.

Ключевые слова: *агропродовольственная система, организационно-экономический механизм, рыночная экономика, государство, сельское хозяйство, Министерство экономики РА, региональная администрация, общинное управление.*

BAYESIAN APPROACH IN NEURAL NETWORKS *

UDC 330.4

DOI: 10.52063/25792652-2024.2.21-187

NARE DAVTYAN

Yerevan State University,
 Faculty of Economics and Management,
 Chair of Mathematical Modeling in Economics, Ph.D. Student;
 «Information Systems Agency of Armenia», Data Analyst,
 Yerevan, the Republic of Armenia,
naredavtyan987@gmail.com
 ORCID: 0000-0002-9757-4654

With the development of Deep learning, neural networks have become very popular. But nowadays neural networks which are being used are based on standard approach of Statistics. The main purpose of this work is to present Bayesian approach, highlight the main differences between Bayesian and frequentist approaches, their principles. The problem was set to show in which cases Bayesian neural networks can be more preferable.

The purpose was achieved through the following stages. The main steps of neural networks are presented. After it the fundamentals of Bayesian approach are described. As Bayesian approach is a common concept, not just an inference used in neural networks, initially author speaks about this approach generally and then tells about its usage in neural networks. After that the main advantages and limitations of Bayesian networks in Deep learning are spoken about: which problems they can solve.

The main conclusion of this paper is that Bayesian approach could be used to avoid overfitting. However, it is essential to understand the specific conditions under which Bayesian neural networks are preferable.

Keywords: Deep learning, Machine learning, Bayesian and standard (frequentist) approaches, neural network, loss function, activation function, overfitting, prior distribution, likelihood, posterior distribution.

INTRODUCTION


Nowadays a huge amount of data is being accumulated in different areas of the economy. And it is important for business managers to use the data about their companies effectively. This is one of the reasons why Deep learning algorithms have been developed. One of the most popular Deep learning algorithms are neural networks. In 1943 neurophysiologist Warren McCulloch and mathematician Walter Pitts introduced the first artificial neural networks. The logic behind these neurons was like the neurons of the human brain. Neurons get the information in the form of signals from the other neurons and then produce their own signals. (Geron 277-278) In the case of artificial neural networks (ANN) they get the data as input and then recycle these data and transfer it to the next layer of network. So, this simple logic has led to the development of neural networks with their many variations. Firstly, neural networks were introduced in the standard or frequentist approach of statistics. But in the late 1990s, with the development

* Հոդվածը ներկայացվել է 05.06.2024թ., գրախոսվել՝ 17.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

of Bayesian inference, this approach also started to find its applications in neural networks. Standard and Bayesian approaches provide the main principles used in statistical analysis, Deep learning, and Machine Learning. Depending on the size of the dataset, our prior knowledge, the main purpose of our analysis and other factors, one of frequentist and Bayesian approaches will provide better and more accurate results. The main differences of those methods in Deep learning will be discussed afterwards in this paper.

NEURAL NETWORKS

Հայաստանում կրթության՝ որպես բարձր արժեքի ընկալման մշակութային գործոնը ձևավորում է ուսուցման և զարգացման հնարավորությունների ստեղծման անհրաժեշտություն նաև կազմակերպություններում: Վերջերս իրականացրած հարցման ընթացքում «Ավելի բարձր աշխատավարձ, բայց անառողջ մթնոլորտ» հարցին պատասխանելիս հարցվողների մեծամասնությունը կարևորել է առողջ մթնոլորտը, ինչը կրկին արժեքային դրական դիսամիկայի ցուցիչ է: Այստեղ շատ կարևոր է, որ կազմակերպությունները, հաշվի առնելով այս մշակութային չափիչը, տրամադրեն ուսուցման և զարգացման դիսամիկ ծրագրեր, որոնք համահունչ կլինեն աշխատակիցների ինքնակատարելագործման ձգտումներին: Վերջին կետն առավել քան կարևոր է տաղանդների պահպանման տեսանկյունից:

Աշխատակիցների մոտիվացիա և պահպանում.

Այնպիսի հայկական ավանդական մշակութային գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են հյուրընկալությունն ու առատաձեռնությունը, տարածվում է նաև աշխատանքային միջավայրում, որտեղ կազմակերպությունները կարող են նպաստել աջակցող և ընտանեկան մթնոլորտի ձևավորմանը: Հետևաբար, տաղանդների

կառավարման գործելակերպը կարող է օգուտ քաղել այս մշակութային արժեքների ճանաչումից և տեղայնացումից՝ աշխատակիցների ներգրավվածության ապահովման, ինչպես նաև ուսուցման և վերապատրաստման ծրագրերի իրականացման համար:

Աշխատակիցների մոտիվացիան և պահպանումը խորապես փոխկապակցված են Հայաստանում մշակութային գործոնների հետ: Հավաքական մտածելակերպը և պատկանելիության զգացումը խթանում են կազմակերպության հանդեպ նվիրվածությունը: Սակայն այստեղ կա շատ կարևոր գործոն, որն է սոցիալական բաղադրիչը, որով պայմանավորված՝ մարդկանց մոտիվները դեռևս մեծամասամբ կյուրական են: Սակայն տաղանդների մասին խոսելիս հարկ է նաև նշել, որ վերջիններս դնում են հստակ աշխատավարձային ակնկալիքներ և չեն սակարկում, ինչն էլ արևմտյան մշակույթից փոխառված տարր է և դրական է այնքանով, որ անձը կարողանում է իրատեսական գնահատական տալ իր մասնագիտական արժեքին:

Եզրափակելով նշենք, որ մշակութային գործոնների ազդեցությունը Հայաստանում տաղանդների կառավարման գործընթացների վրա բազմակողմանի է և խոր: Ներգրավման և ընտրության գործընթացները, կատարողականի կառավարումը, առաջնորդության ոճերը, կազմակերպական մշակույթը, ուսուցման և զարգացման հնարավորությունները, աշխատակիցների մոտիվացիան և պահպանումն ազդում են Հայաստանում տարածված եզակի մշակութային չափումների և հասարակական նորմերի վրա: Մշակութային այս նրբերանգներին համապատասխանեցնելու համար տաղանդների կառավարման պրակտիկաների ճանաչումը և հարմարեցումը կարևոր է այն կազմակերպությունների համար, որոնք ձգտում են օպտիմալացնել իրենց տաղանդների ձեռքբերման, զարգացման և պահպանման ռազմավարությունները հայկական համատեքստում:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները՝ կարող ենք անել մի քանի արժեքավոր դիտարկում և կատարել համապատասխան առաջարկներ:

Յուրաքանչյուր երկիր և ազգ ունի իր մշակույթը, որն ինչպես կարող է նպաստել, այնպես էլ խոչընդոտել տաղանդների բացահայտման, զարգացման և պահպանման գործընթացներին: Օբյեկտիվ ուսումնասիրության համար կարևոր է հիշել, որ յուրաքանչյուր մշակույթ ինչ-որ միջանկյալ դիրք է զբաղեցնում և չեն հանդիպում մշակույթի բացարձակ ձևեր: Իսկ անհատի տեսակի ձևավորման և վարքագծի վրա ազդում են նաև նրա բնավորությունը, սեռը, տարիքը և մի շարք այլ գործոններ:

Վերլուծական մասում անդրադարձ կատարվեցին մի շարք մշակութային խնդիրների, որոնք խոչընդոտում են անհատականության դրսևորմանը, տաղանդի զարգացմանը, ինչպես նաև կարող են պատճառ հանդիսանալ ուղեղների արտահոսքի համար: Դրանցից են.

- համաշխարհային ճանաչում ունեցող հայ տաղանդներն իրենց գյուտերն արել և իրենց տաղանդի ճանաչումը գտել են օտար երկրներում,
- 1990-ական թվականներին կապիտալի ոչ ճիշտ վերաբաշխման, գիտելիքը կամ կրթությունը փողի վերածելու, հմտությունների բացի և վերջին տարիներին ոչ ֆորմալ կրթության, միջազգային ծրագրերի մասնակցության և աշխատուժի սերունդների փոփոխություններով պայմանավորված բարձրագույն կրթության դերը նվազման միտում ունի,
- աշխատաշուկայի ամենապահանջված փափուկ հմտությունների զարգացման դինամիկայի և մասշտաբայնության վրա ազդում են մի շարք մշակութային գործոններ,

• Հայաստանի համար Իշխանության հեռավորություն Power Distance (PDI) ինդեքսը 85 է, որը բավական բարձր ցուցանիշ է:

Այստեղ մեքենաները Սինգապուրի նախկին վարչապետ Լի Կուան Յուի խոսքը. «Եթե երկիրը սխալ կառավարես, բոլոր խելացի մարդիկ կհեռանան»: Եթե խոսում ենք տաղանդների մասին, չպետք է մոռանալ, որ եթե մշակույթը չի նպաստում իրենց զարգացմանն ու հնարավորությունների իրացմանը, ապա նրանք վաղ թե ուշ լքում են նման մշակույթները՝ ձևավորում կամ գտնում իրենցը: Սա տեղի ունի ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակում և վերաբերում է ինչպես երկրներին, այնպես էլ կազմակերպություններին:

Աշխարհաքաղաքացիության կամ կոսմոպոլիտիզմի հոսանքի տարածմանը զուգահեռ, դիմակայելու և ազգային ինքնության պահպանման, ուղեղների արտահոսքը կանխելու համար անհրաժեշտ է մշակութային իրական արժեքների ճանաչում, համակողմանի գնահատում, տաղանդների կառավարման գործընթացների վրա ունեցած բացասական և դրական կողմերի վերլուծություն և ժամանակակից միտումների համապատասխան, նոր և տաղանդածին մշակույթի ձևավորում, տարածում և զարգացում:

Այսպիսով, տաղանդների կառավարման համատեքստում հայկական մշակույթի խոցելի կողմերը շատ են.

- գաղափարական կարծրատիպեր,
- արժեհամակարգային տարբերություններ,
- գենդերային անհավասարություն և ֆեմինիստական գաղափարախոսության սխալ պրոպագանդա,
- աշխատուժի սերունդների բախումներ,
- կրթական համակարգի փոփոխությունները, ոչ ֆորմալ կրթության դերի բարձրացում,
- հմտություններին միտված աշխատաշուկային հարմարման անհրաժեշտություն,
- իշխանությունից հեռավորություն, թիմային, կոլեկտիվիստական թույլ գաղափարախոսություն և այլն:

Այս և շատ այլ գործոններով պայմանավորված տաղանդավոր հայ մասնագետներն իրենց ճանաչումը գտնում են օտար երկրներում, այն մշակույթներում, որտեղ կարևոր արժեք է մարդը, վերջիններս գնահատված են և ունեն իրենց ամբողջական ներուժի իրացման հնարավորություններ:

Նշված խնդիրներին զուգահեռ վերլուծական հատվածում ներկայացված լուծումները կնպաստեն ազգային մշակույթի խորքային վերլուծությանը, կազմակերպություններում վերջինիս ազդեցությունը տաղանդների կառավարման գործընթացների վրա գնահատելուն, նշված միջոցառումների կիրառմամբ տաղանդների բացահայտմանը, ինչպես նաև զարգացման, ճանաչման և պահպանման գործընթաներն առավել արդունավետ իրականացնելուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Руденко, Галина Георгиевна, «Управление талантами: зарубежный опыт и лучшие практики». *Вестник Омского университета*, Серия «Экономика», no. 2, 2016, стр. 113-119.
2. Barmeyer, Christoph I., and Ulrike Mayrhofer. *Intercultural Management: A Case-Based Approach to Achieving Complementarity and Synergy*. Palgrave Macmillan, 2018.
3. Bond, M.H., *Beyond the Chinese Face: Insights from Psychology*. Hong Kong: Oxford University Press, 1991.
4. Cappelli, Peter. "Talent Management for the Twenty-First Century." *Harvard Business Review*, 2008, pp. 74-81.

5. Cheese, Peter, Robert J. Thomas, and Elizabeth Craig. *The Talent Powered Organization: Strategies for Globalization, Talent Management and High Performance*. Kogan Page, 2008.
6. Earley, P. Christopher, and Randall S. Peterson. "The Elusive Cultural Chameleon: Cultural Intelligence as a New Approach to Intercultural Training for the Global Manager." *Academy of Management Learning & Education*, vol. 3, no. 1, 2004, pp. 100-115.
7. Gladwell, Malcolm. *Geniuses and Outsiders*. Translated by O. Galkin, Mann, Ivanov and Ferber, 2023, p. 8.
8. Hofstede, Geert. "Culture and Organizations." *International Studies of Management & Organization*, vol. 10, no. 4, 1980, pp. 15-41.
9. INSEAD. *The Global Talent Competitiveness Index 2023: What a Difference Ten Years Make What to Expect for the Next Decade*. Descartes Institute for the Future and the Human Capital Leadership Institute, 2023.
10. Linzer, Norma. "The Jewish Family: Authority and Tradition in Modern Perspective." *Journal of Jewish Communal Service*, pp. 132-142.
11. Meyer, Erin. *The Culture Map: Breaking Through the Invisible Boundaries of Global Business*. PublicAffairs, 2014.
12. Mordy Walfish, "A Path Forward in Jewish Leadership Development." Leading Edge, <https://www.leadingedge.org/resource/a-path-forward-in-jewish-leadership-development>, Accessed: 25 March 2024.
13. Schein, Deborah. "Research and Reflections on the Spiritual Development of Young Jewish Children." *Journal of Jewish Education*, vol. 79, no. 3, July 2013, pp. 360-385.
14. Staff.am, <https://staff.am/staffmedia/labor-market-2023/>. Accessed: 28 March 2024.
15. The Culture Factor Group, <https://www.hofstede-insights.com/country-comparison-tool>. Accessed: 01 April 2024.
16. Thomas, Roosevelt R. *World Class Diversity Management: A Strategic Approach*. Berrett-Koehler Publishers, 2010.
17. Tobin Belzer, "When What You Do Is Who You Are: The Intersection of Jewish Organizational Culture and Identity." Center for Religion and Civic Culture, <https://crcc.usc.edu/when-what-you-do-is-who-you-are-the-intersection-of-jewish-organizational-culture-and-identity/>. Accessed: 25 March 2024.
18. World Population Review, <https://worldpopulationreview.com/country-rankings/nobel-prizes-by-country>. Accessed: 28 March 2024.

WORK CITED

1. Rudenko Galina Georgiyevna, "Upravlenie talantami: zarubezhnyj opyt i luchshie praktiki." *estnik Omskogo universiteta. Serija «Jekonomika»*, [Talent Management: Foreign Experience and Best Practices] no. 2, 2016, s. 113-119. (in Russian).

THE EFFECT OF NATIONAL-CULTURAL FACTORS IN THE CONTEXT OF DEVELOPING TALENT DISCOVERY AND THEIR MANAGEMENT STRATEGIES

LILIT MANUKYAN

*Armenian State University of Economics,
Faculty of Management, Chair of Management,
Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

At the core of talent management processes and all work activities lies the individual. The type of individual and their maturity shape the culture. Adapting talent management processes to the country's culture is crucial for achieving optimal results.

This research explores the intricate interplay between cultural factors and talent management processes.

The primary objective of this research is to comprehensively examine how specific cultural norms and behavioral patterns prevalent in Armenian society influence talent management strategies within organizations. The aim is to propose approaches that enhance the efficiency of talent management processes and address issues hindering talent development, thereby mitigating "brain drain."

The tasks outlined to achieve this goal are:

- To study and comprehensively evaluate the impact of cultural factors on talent management processes.
- To identify positive and negative aspects and propose solutions.

The article employs a comparative, collational, and analytical approach based on international literature, thematic research, and practitioner observations.

In conclusion, this research offers valuable insights into the intricate relationship between Armenian culture and talent management processes. By acknowledging cultural factors and accurately assessing their impact, organizations can optimize their human capital utilization, leading to enhanced organizational performance.

Keywords: *talent, talent management, talent identification, national culture, talent culture, culture, cultural factors, organizational culture, skills.*

ВЛИЯНИЕ НАЦИОНАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ФАКТОРОВ В КОНТЕКСТЕ РАСКРЫТИЯ ТАЛАНТОВ И ИХ УПРАВЛЕНЧЕСКИХ СТРАТЕГИЙ

ЛИЛИТ МАНУКЯН

*соискатель кафедры управления
факультета управления
Армянского государственного экономического университета,
Ереван, Республика Армения*

Основой процессов управления талантами и всякой трудовой деятельности в целом является личность. Тип личности и ее зрелость формируют культуру. Крайне важно адаптировать процессы управления талантами под культурные особенности страны для достижения максимального результата. Данное исследование рассматривает сложные взаимосвязи между культурными факторами и процессами управления талантами.

Основная цель исследования заключается в комплексном изучении того, как определенные культурные нормы и поведенческие проявления, характерные для армянского общества, влияют на стратегии управления талантами в организациях.

Задачи, поставленные в исследовании для достижения этой цели, включают в себя изучение и всестороннюю оценку влияния культурных факторов на процессы управления талантами, а также выявление положительных и отрицательных аспектов с предложением соответствующих решений.

Статья использует сравнительный, сопоставительный и аналитический методы на основе международной литературы, тематических исследований и наблюдений практиков.

В заключение, данное исследование предоставляет важные и существенные идеи о взаимодействии армянской культуры и процессов управления талантами. Признание культурных факторов и правильная, всесторонняя оценка их влияния позволят организациям эффективнее использовать свой человеческий капитал, что в конечном итоге приведет к улучшению организационной производительности.

Ключевые слова: *талант, управление талантами, идентификация талантов, национальная культура, культура талантов, культура, культурные факторы, организационная культура, навыки.*

ՀԱՐԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾԻ ԿՐԱ ՀՀ-ՈՒՄ *

ՀՏԴ 336

DOI: 10.52063/25792652-2024.2.21-212

ՄԵՐԻ ՓԱՆՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

panosyan.m@ysu.am

ORCID: 0009-0003-7027-6539

ՀՀ պետական քաղաքականության առանցքային նպատակներից է բարձր և կայուն տնտեսական աճի ապահովումը, ինչն էլ անուղղակիորեն կապված է հարկաբյուջետային ճիշտ քաղաքականության հետ, քանի որ տնտեսության ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները, դրանց զարգացման օրինաչափություններն ու պետության կարիքները բավարարելու նպատակով իրականացված ճիշտ հարկային քաղաքականությունը կայուն և երկարաժամկետ տնտեսական աճ ապահովող առանցքային գործոններից են: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ տնտեսական աճի կառուցվածքը, բացահայտել ՀՀ տնտեսական աճ ապահովող ու տնտեսական աճին խոչընդոտող գործոնները, վերլուծել ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքը տնտեսական աճի տեսանկյունից, ու գնահատել ՀՀ հիմնական հարկատեսակների ազդեցությունը տնտեսական աճի վրա ՀՀ-ում: Այդ նպատակով հոդվածում խնդիր է դրվել ուսումնասիրելու ՀՀ տնտեսական աճի և հիմնական հարկատեսակների փոխկապվածությունը:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ իրականացվել է Էկոնոմետրիկ վերլուծություն և համեմատական վերլուծություն: Հետազոտության տեսական փուլում կիրառվել է համադրության մեթոդը: Ռեգրեսիոն մոդելի գնահատված պարամետրերը և տնտեսական աճի կառուցվածքի դինամիկան հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ տնտեսական աճի և ՀՀ որոշ հարկատեսակների աճի՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտային հարկի աճի և ընդհանուր հարկային եկամուտների աճի միջև առկա է դրական կախվածություն, իսկ ՀՀ-ում 2012-2023 թթ. տնտեսական աճի տեմպերը պայմանավորված են եղել ՀՆԱ-ի սպառման բաղադրիչի աճով:

Հիմնաբառեր՝ տնտեսական աճ, հարկային եկամուտներ, համախառն առաջարկ, համախառն պահանջարկ, ճյուղային կառուցվածք, ռեգրեսիոն վերլուծություն, դրական կախվածություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական աճը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական ծավալի աճն է, որը նպաստում է ինչպես բնակչության եկամուտների աճին, այնպես էլ՝ պետական եկամուտների աճին (հարկերի, տուրքերի և այլ պետական վճարների տեսքով): Տնտեսական աճի միջոցով ապահովվող բնակչության եկամուտների աճը նպաստում է կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացմանը, իսկ պետական եկամուտների աճը՝ ենթակառուցվածքների զարգացմանն ու այլ հանրային բարիքների ստեղծմանը:


* Հոդվածը ներկայացվել է 06.06.2024թ., գրախոսվել՝ 19.06.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

Սակայն, տնտեսական աճի միջոցով վերոհիշյալ արդյունքները երկարաժամկետ հատվածում հնարավոր է ապահովել, եթե տնտեսական աճն ունենա անհրաժեշտ որակը (Սուվարյան 6-7): Տնտեսական աճի որակը գնահատելու համար կարևոր են դրա երկու հիմնական հատկանիշները.

1. Տնտեսական աճի կառուցվածքը, որը ցույց է տալիս, թե ստեղծված հավելյալ ԶՆԱ-ն տնտեսության որ ճյուղերում է ստեղծվել:

2. Տնտեսական աճի ներառականությունը, որը ցույց է տալիս, թե արդյոք բոլորը հավասարապես օգտվո՞ւմ են տնտեսական աճի արդյունքներից, թե՞ այն կենտրոնանում է միայն որոշ խմբերի մոտ:

Ընդհանուր առմամբ՝ ԶԶ 2008-2023 թթ. ԶՆԱ-ն տարեկան աճել է մոտ 11 %-ով: ԶԶ-ում 2023 թ. ԶՆԱ-ն կազմել է ավելի քան 9.5 տրիլիոն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 11.77 %-ով, ընդ որում՝ 2023 թ. 2022 թ. համեմատ շինարարության ծավալն աճել է 14.5 %-ով և կազմել ավելի քան 619 մլրդ. դրամ, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 3.7 %-ով և կազմել է 2.78 տրիլիոն դրամ, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 7.2 %-ով և կազմել 948 մլրդ. դրամ, առևտրի շրջանառությունը աճել է 25.7 %-ով և կազմել 5.49 տրիլիոն դրամ, իսկ ծառայությունների ծավալը՝ 17.5 %-ով և կազմել 3 տրիլիոն դրամ (ԶՆԱ-ի իրական աճի տեմպը):




Գծապատկեր 1. 2012-2023 թթ. ԶԶ տնտեսության ճյուղային կառուցվածքը ըստ ոլորտների

Հարկեր/ԶՆԱ հարաբերակցությունը ցույց է տալիս, թե երկրի ԶՆԱ-ի որ մասն է հավաքագրվում հարկերի միջոցով: Որքան բարձր է հարկեր/ԶՆԱ ցուցանիշը, այնքան լավ է երկրի տնտեսական փիճակը: Այս մասին է վկայում ՏՀԶԿ անդամ երկրներում այդ ցուցանիշի արժեքը, որը երկար տարիներ միջինում տատանվել է 32-36 %-ի միջակայքում: ՏՀԶԿ անդամ երկրներում 2022 թ. այդ ցուցանիշը միջինում կազմել է 34 % (հարկեր/ԶՆԱ ցուցանիշը ամենաբարձրը եղել է Ֆրանսիայում՝ 46.1 %, ապա՝ Նորվեգիայում՝ 44.3 %) (Tax Revenue Buoyancy in OECD Countries 2023): Ըստ

պաշտոնական տվյալների՝ ՀՀ-ում երկար տարիներ այդ ցուցանիշը տատանվել է 21-24 %-ի սահմաններում¹:

Չնայած այն հանգամանքին, որ պետությունը տնտեսության վրա ազդելու բազմաթիվ լծակներ ունի, այնուամենայնիվ հարկա-բյուջետային ճիշտ քաղաքականությունը ամենաարդյունավետ լծակն է, որը անուղղակիորեն ազդում է համախառն առաջարկի ու պահանջարկի վրա: Հարկերը ազդում են համախառն պահանջարկի երկու հիմնական բաղադրիչների՝ սպառման և ներդրումային ծախսերի վրա, և հետևաբար ունեն անուղղակի ազդեցություն համախառն պահանջարկի վրա:


Հարկերի նվազեցումը հանգեցնում է սպառման (միաժամանակ տնօրինվող եկամտի աճի) և ներդրումների (քանի որ հարկումից հետո ձեռնարկությունների շահույթի մեծությունն ավելանում է, որի մի մասը ծառայում է որպես զուտ ներդրումների աղբյուր) ծախսերի ավելացման և հետևաբար AD կորի տեղափոխմանը դեպի աջ (գծապատկեր 2-ում AD_1 -ից AD_2), ինչը հանգեցնում է իրական ՀՆԱ-ի աճին (Y_1 -ից Y^*): Հետևաբար, այս միջոցը կարող է օգտագործվել տնտեսությունը կայունացնելու և ռեցեսիայի ժամանակ ցիկլային գործազրկության դեմ պայքարելու համար՝ խթանելով բիզնեսի ակտիվությունը և զբաղվածության մակարդակը: Այնուամենայնիվ, ՀՆԱ-ի աճի հետ միաժամանակ հարկերի կրճատումն առաջացնում է գների մակարդակի բարձրացում (P_1 -ից P_2) և, հետևաբար, գնաճամետ միջոց է (հրահրում է գնաճ) (Feenberg 764-766):



Գծապատկեր 2. Հարկերի կրճատման ազդեցությունը համախառն պահանջարկի վրա


Հարկերի ավելացումը հանգեցնում է սպառողական և ներդրումային ծախսերի նվազմանը և, հետևաբար, համախառն պահանջարկի նվազմանը (գծապատկեր 3-ում համախառն պահանջարկի կորի AD_1 -ից դեպի AD_2 տեղաշարժ դեպի ձախ), որն առաջացնում է գների նվազում (P_1 -ից մինչև P_2) և արտադրանքի ծավալի նվազում (Y_1 -ից մինչև Y^*): Ուստի, գնաճի ժամանակաշրջանում, երբ տնտեսությունը «գերտաքացած» է, հարկերի ավելացումը կարող է օգտագործվել որպես հակազնաճային միջոց՝ գործարար ակտիվությունը նվազեցնելու և տնտեսությունը կայունացնելու գործիք:

1 2023 թ. ՀՀ կառավարության կողմից իրականացված որոշ վերլուծություններ ցույց են տվել, որ ՀՀ-ում իրական հարկային բեռը զգալիորեն բարձր է պաշտոնական արժեքներից:



Գծապատկեր 3. Հարկերի ավելացման ազդեցությունը համախառն պահանջարկի վրա

Ընկերությունները հարկերը դիտարկում են որպես ծախսեր, ուստի հարկերի ավելացումը հանգեցնում է համախառն առաջարկի նվազմանը, իսկ հարկերի նվազումը՝ բիզնեսի ակտիվության և արտադրանքի աճին (Feenberg 768-778):



Գծապատկեր 4. Հարկերի կրճատման ազդեցությունը համախառն առաջարկի վրա

Այսպիսով, հարկերը ոչ միայն պետական եկամուտների հիմնական աղբյուրն ու ազգային եկամուտների վերաբաշխման միջոցն են, այլև՝ մակրոտնտեսական կայունության ապահովման կարևոր գործիք: Բացի այդ, հարկերի կրճատումները, խթանելով համախառն առաջարկի աճը, ազդում են ներդրումային գործունեության վրա և նպաստում տնտեսական ներուժի աճին, այսինքն ազդում են տնտեսության վրա ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ հեռանկարում՝ ապահովելով տնտեսական աճ (Intelligent Economist 2022):

Ռեգրեսիոն վերլուծություն

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ հողվածում գնահատվել է հարկային եկամուտների և տնտեսական աճի միջև կապը: Վերլուծության համար հիմք են հանդիսացել 2012-2023 թթ. ՀՆԱ-ի աճի և ՀՀ հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտային հարկի և ընդհանուր հարկային եկամուտների աճի տարեկան պաշտոնական վիճակագրական տվյալները:

Հետազոտությունն իրականացվել է R վիճակագրական համակարգչային ծրագրով, որով էլ գնահատվել են կազմված ռեգրեսիոն մոդելի գործակիցները: Զանի որ ուսումնասիրվել է անկախ փոփոխականների (հարկատեսակներ) և մեկ կախյալ փոփոխականի (տնտեսական աճ) հարաբերությունները, կառուցվել է բազմագործոն գծային ռեգրեսիայի մոդել:

Օգտագործվել է այնպիսի չափումներ, ինչպիսին է R2-ը՝ գնահատելու համար, թե որքանով է մոդելը բացատրում կախյալ փոփոխականի փոփոխականությունը: Այս դեպքում գնահատվել են հարկերի գործակիցները (β), որոնք ցույց են տալիս հարկատեսակների և տնտեսական աճի միջև կապի ուժն ու ուղղությունը: Այս մոդելում կախյալ փոփոխականը տնտեսական աճն է, իսկ անկախ փոփոխականները՝ ԱԱՀ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ և ընդհանուր հարկային եկամուտների աճերն են:

Բազմագործոն գծային ռեգրեսիայի մոդելի հավասարումը ունի հետևյալ տեսքը.

$$Y = \beta_0 + \beta_1 X_1 + \beta_2 X_2 + \beta_3 X_3 + \beta_4 X_4 + \beta_5 X_5 + \epsilon$$

որտեղ Y-ը տնտեսական աճն է, β_0 -ն՝ հատումը, X_1 -ը՝ ԱԱՀ-ի աճը, β_1 -ը՝ ԱԱՀ գործակիցը, X_2 -ը՝ ակցիզային հարկի աճը, β_2 -ը՝ ակցիզային հարկի գործակիցը, X_3 -ը՝ շահութահարկի աճը, β_3 -ը՝ շահութահարկի գործակիցը, X_4 -ը՝ եկամտային հարկի աճը, β_4 -ը՝ եկամտային հարկի գործակիցը, X_5 -ը՝ ընդհանուր հարկային եկամուտների աճը, β_5 -ը՝ ընդհանուր հարկային եկամուտների գործակիցը, ϵ -ը՝ պատահական սխալը:


Աղյուսակ 1. Տվյալների ամփոփ տեղեկատվություն¹

Տվյալներ	ՀՆԱ-ի աճ	ԱԱՀ-ի աճ	Ակցիզային հարկի աճ	Շահութահարկի աճ	Եկամտային հարկի աճ	Ընդհանուր հարկային եկամուտների աճ
Min	-7.2	-7.7	-10.8	-36.3	-6.6	-5.0
1 st qu	3.2	0.1	-3.0	-6.7	3.9	3.7
Median	5.2	8.7	12.6	6.6	6.7	8.6
Mean	4.5	7.2	12.5	11.0	7.9	8.8
3 th qu	7.3	14.0	26.2	30.0	12.1	14.3
Max	12.6	22.2	37.8	54.8	23.5	21.4

Փոփոխականների միջև առկա կորելացիան հաշվարկելու նպատակով դիտարկենք ՀՆԱ-ի աճ ցուցանիշի կորելացիան փոփոխականներից յուրաքանչյուրի հետ²:

1 Կիրառվել է «summary» կոդը, որի միջոցով ստացվել են ամփոփ տվյալներ յուրաքանչյուր փոփոխականի վերաբերյալ:

2 Ըստ փոփոխականների հերթականության օգտագործվել են հետևյալ կոդերը՝ $cor(taxs\$GDP\ growth, taxs\$value\ added\ tax) \cdot 0.8$, $cor(taxs\$GDP\ growth, taxs\$excise\ tax) \cdot 0.47$, $cor(taxs\$GDP\ growth, taxs\$profit\ tax) \cdot 0.61$, $cor(taxs\$GDP\ growth, taxs\$income\ tax) \cdot 0.6$, $cor(taxs\$GDP\ growth, taxs\$tax\ revenues) \cdot 0.86$, որտեղ \$ նշանի միջոցով դիտարկվել է միայն նշված փոփոխականի տվյալները:



Գծապատկեր 5. ՀԱՀ-ի աճի և անկախ փոփոխականների կորելյացիոն կապը¹

Վարիացիան ցույց է տալիս, թե ինչքանով են տվյալները տարբերվում միջին արժեքից: Ահա հարկերի յուրաքանչյուր տեսակի համար վարիացիայի արժեքները.


Աղյուսակ 2. Փոփոխականների կորելյացիան, վարիացիան և ստանդարտ շեղումը

Տվյալներ	taxes\$`value added tax`	taxes\$`excise tax`	taxes\$`profit tax`	taxes\$`income tax`	taxes\$`tax revenues`
Cor	0.8	0.47	0.61	0.60	0.86
Var	99.028	301.364	751.774	60.712	60.892
sd	9.951318	17.35984	27.41851	7.791826	7.803379

Աղյուսակից պարզ է դառնում, որ ԱՀՀ-ի համեմատ՝ ակցիզային հարկի և շահութահարկի դիտարկումներն ավելի շատ են տարբերվում միջին արժեքից, իսկ եկամտային հարկի արժեքները ավելի քիչ են ցրված միջինի նկատմամբ: Եկամտային հարկի անհատական դիտարկումները ավելի մոտ են միջին արժեքին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ավելի քիչ շեղումներ կան միջին եկամտային հարկի գումարից: Ինչպես եկամտային հարկի դեպքում, ընդհանուր հարկային եկամուտների ցրվածության շեղումը ենթադրում է, որ ընդհանուր հարկային եկամուտների մեջ կա համեմատաբար ավելի քիչ փոփոխականություն՝ համեմատած առանձին հարկերի տեսակների հետ, ինչպիսիք են շահութահարկը կամ ակցիզային հարկը: Միջին հաշվով հարկային եկամուտների անհատական դիտարկումները մոտ 7.80 միավորով հեռու են հարկային եկամուտների միջին գումարից, իսկ ՀԱՀ-ի աճի առանձին դիտարկումների միջին շեղումը ՀԱՀ-ի աճի միջին արժեքից ցույց է տալիս, որ միջին հաշվով ՀԱՀ-ի աճի անհատական դիտարկումները մոտ 5.03 տոկոսային կետով հեռու են ՀԱՀ-ի միջին աճի տեմպերից:

¹ Գրաֆիկները կառուցվելու համար օգտագործվել է «scatter.smooth» կոդը:


Հետագա վերլուծությունն իրականացնելու համար ՀՆԱ-ի աճ փոփոխականը դիտարկենք կախյալ, իսկ մյուսները՝ անկախ: Ներկայացնենք կախյալ փոփոխականի՝ ՀՆԱ-ի հիստոգրամը՝




Գծապատկեր 6. ՀՆԱ-ի աճ փոփոխականի հիստոգրամ

Հորիզոնական առանցքը ներկայացնում է ՀՆԱ-ն, որի արժեքները տատանվում են -10-15-ը: Ուղղահայաց առանցքը ներկայացնում է բաշխումը, որի արժեքները տատանվում են 0.00-0.04-ը: Գրաֆիկից պարզ է դառնում, որ առկա է նորմալ բաշխում, միջին արժեքը մոտավորապես 4 է: Բոլոր անկախ փոփոխականների մոտ ևս առկա է նորմալ բաշխում, և բաշխումը սիմետրիկ է միջին արժեքի նկատմամբ, հետևաբար ֆունկցիան զանգակածն է:

Գրաֆիկի մեկ այլ տեսակ՝ boxplot-ը հնարավորություն է տալիս ստանալ միջին արժեքը՝ բացառելով ընտրանքում առկա շատ տարբերվող տվյալները:



1 Կիրառվել է `hist(taxs$`GDP growth`,freq =FALSE,breaks=5,main = "Distribution of GDP",xlab = "GDP")` կոդը, որը ընդգծվել է `lines(density(l), col="green")` կոդի միջոցով:



Գծապատկեր 7. Կախյալ փոփոխականի և անկախ փոփոխականների boxplot-եր¹

Գծապատկերից երևում է, որ ՀՆԱ-ի միջին արժեքը մոտավորապես 5 է, մինիմում արժեքը՝ 0, իսկ մաքսիմումը՝ 10-ից ավել միջակայքում է, և կա էքստրիմ կետ, որը փոքր է մինիմումի արժեքից: Սա 2020 թ.-ի ՀՆԱ-ի նվազման արդյունքն է՝ -7 կետը: Անկախ փոփոխականների boxplo-ներից պարզ է դառնում, որ այս դեպքում էքստրիմ կետեր առկա չեն:

Մոդելի պարամետրերը գնահատելու նպատակով գտնենք տնտեսական աճի ու հարկային եկամուտներ, ԱՎՀ-ի, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտային հարկի աճի պատճառահետ-տեվանքային կապը²:

Աղյուսակ 3. Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքները

Անկախ փոփոխականներ	Հարկային եկամուտների աճ	ԱՎՀի աճ	Ակցիզային հարկի աճ	Շահութահարկի աճ	Եկամտային հարկի աճ
Min	-4.0179	-5.9263	-8.4240	-6.3106	-6.0018
Max	3.9040	4.4098	8.1316	5.8272	6.8505
Median	0.2821	0.5601	0.9084	0.1708	0.5088
Estimate	0.5555	0.4078	0.1386	0.1129	0.3881
Std. error	0.1090	0.9952	0.0848	0.0482	0.1719
T-statistic	5.098	4.098	1.635	2.342	2.258
Prob (T-statistic)	0.0006***	0.0026**	0.136	0.0439*	0.0504
Residual std. error	2.689	3.132	4.655	4.179	4.236
Multiple R ²	0.7428	0.6511	0.229	0.3786	0.3615
Adjusted R ²	0.7142	0.6123	0.1433	0.3095	0.2906
F-statistic	25.99	16.79	2.673	5.483	5.097
P-value	0.0006	0.0026	0.1365	0.04391	0.05038

Իրականացված ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքները (աղյուսակ 3) հաստատում են, որ ՀՀ տնտեսական աճի և ՀՀ հարկատեսակների՝ ԱՎՀ-ի, ակցիզային հարկի, շահութահարկի, եկամտային հարկի և ընդհանուր հարկային եկամուտների աճի միջև գոյություն ունի նշանակալի դրական կախվածություն: Այս մոդելում հարկային եկամուտների ռեգրեսիայի հավասարման ճշգրտված դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.7142 է, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմանների առկայության դեպքում տնտեսական աճի մոտավորապես 71.42 %-ը բացատրվում է մոդելի անկախ փոփոխականներով (հարկերով), իսկ

¹ ՀՆԱ-ի աճի boxplot-ը ստանալու նպատակով օգտագործվել է կոդը՝ `boxplot(taxs$`GDP growth`, main="GDP", sub=paste("Outlier rows: ", boxplot.stats(taxs$`GDP growth`)$out))` կոդը:

² Ստեղծվել է նոր արժեք՝ `simplemodel5<-lm(GDP ~ Revenues, data= taxis)` կոդի միջոցով:

մնացածը՝ մոդելում չներառված գործոններով: Բազմակի R քառակուսին 0.7428 է, ինչը նշանակում է, որ կախյալ փոփոխականի մոտավորապես 74.28 %-ը բացատրվում է մոդելի անկախ փոփոխականով: F-վիճակագրությունը ստուգում է այն զրոյական վարկածը, որ անկախ փոփոխականները որևէ էական ազդեցություն չունեն կախյալ փոփոխականի վրա: Այն 25.99 է՝ 1 և 9 ազատության աստիճաններով, իսկ P-արժեքը շատ ցածր է, ինչը հերքում է զրոյական վարկածը և ցույց տալիս, որ ռեգրեսիայի մոդելը նշանակալի է: Մնացորդային ստանդարտ սխալի ավելի ցածր արժեքը ցույց է տալիս մոդելի ավելի լավ, իսկ ավելի բարձր արժեքը՝ ավելի վատ համապատասխանությունը տվյալներին: Ըստ մոդելի տվյալների՝ կարող ենք եզրահանգել, որ գծային ռեգրեսիոն մոդելի մնացորդը շեղված է իրական ռեգրեսիոն գծից 2.689 միավորով՝ 9 աստիճանի ազատության վրա:

Եզրահանգումներ

Չնայած այն հանգամանքին, որ հարկերի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա բարդ և բազմակողմանի գործընթաց է, որը պահանջում է մանրազնի վերլուծություն և տարբեր կողմերի շահերի հավասարակշռում, այնուամենայնիվ, ռեգրեսիոն վերլուծության և մոդելի համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ տնտեսական աճի և հարկերի միջև առկա է դրական կախվածություն: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ զարգացած և զարգացող երկրներում հարկերը տարբեր կերպ են ազդում տնտեսական աճի վրա, քանի որ հարկերի ազդեցությունը տնտեսության վրա ոչ թե ուղղակի կերպով է, այլ անուղղակի՝ նպաստելով ներդրումային միջավայրի զարգացմանը:

Ռեգրեսիոն մոդելի գնահատված պարամետրերը և տնտեսական աճի կառուցվածքի դինամիկան հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել նաև, որ հարկերի ազդեցությունը տնտեսական աճի վրա մեծապես կախված է տնտեսության կառուցվածքից, զարգացման մակարդակից և շատ այլ գործոններից: Այլ հավասար պայմանների առկայության դեպքում, ՀՀ տնտեսական աճը և ԱՄՆ-ի աճը ամենամեծ չափով են կորելացված միմյանց հետ, ինչպես նաև՝ տնտեսական աճը և ընդհանուր հարկային եկամուտների աճը ևս ամենամեծ չափով են կորելացված, իսկ ընդհանուր հարկային եկամուտների գրեթե 1/3-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, ուստի ՀՀ-ում 2012-2023 թթ. տնտեսական աճերը պայմանավորված են եղել ՀՆԱ-ի սպառման բաղադրիչի աճով (քանի որ ԱՄՆ-ն ՀՀ-ում համարվում է սպառման հարկ, որի վերջնական վճարողները սպառողներն են), այլ ոչ՝ ներդրումների, հետևաբար, այս համատեքստում, երկարաժամկետ ու կայուն տնտեսական աճի ապահովման համար կարևոր է ոչ թե հենց ինքը՝ տնտեսական աճը, այլ տնտեսական աճի որակը: Ուստի կարող ենք պնդել, որ ՀՀ-ում տնտեսությունը պետք է հիմնվի առավելապես գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի վրա, քանի որ ՀՀ-ում արտահանվող ապրանքների գերակշիռ մասը գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքներ են, իսկ արտահանվող ապրանքների մեծացումը կխթանի ֆինանսական մուտքերի ավելացմանը, որն էլ, իր հերթին, դրական ազդեցություն կունենա տնտեսական աճի որակի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սովարյան, Յուրի, *Տնտեսական զարգացման ֆենոմենը*, Երևան, 2014, էջ 6:
2. ՀՆԱ-ի իրական աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/>: Մուտք՝ 05 Ապրիլի 2024:
3. 2012-2023 թթ. ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքը ըստ ոլորտների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, <https://mineconomy.am/page/1711>: Մուտք՝ 10 Ապրիլի 2024:

4. Organization for Economic Co-operation and Development (OECD), *Revenue Statistics 2023, Tax Revenue Buoyancy in OECD Countries*, 2023, <https://www.oecd.org/content/dam/oecd/en/topics/policy-sub-issues/global-tax-revenues/revenue-statistics-highlights-brochure.pdf>. Accessed: 10 May 2024.
5. Intelligent Economist, *Laffer Curve - Intelligent Economist*, 2022, <https://www.intelligenteconomist.com/laffer-curve/>. Accessed: 10 May 2024.
6. Feenberg D. R., "The Macroeconomic Effects of Tax Changes: Estimates Based on a New Measure of Fiscal Shocks", 2010, pp. 764-766, pp. 768-778.

WORKS CITED

1. Suvaryan, Yuri, Tntsakan zargatsman fenomeny, [Economic Development Phenomenon], Erevan, 2014, E'j 6, (In Armenian).
2. HNA-i irakan aj-i temp'y nakhord tarva nkatumamb, %, [The Natural Growth Rate Compared to the Previous Year's Observation, %], HH vichakagrakan komite, [Official website of RA Statistical Committee]. (Available: 05.04.2024) (In Armenian).
3. 2012-2023 tt. HH intesut'yan chyughayin karuts'vatsk'e yst' vorlortneri, [Structure of the Armenian Economy by Sectors from 2012 to 2023, HH ekonomik'ayi nakhararut'yun, <https://mineconomy.am/page/1711> (Available: 10.04.2024) (In Armenian).
4. Intelligent Economist, *Laffer Curve - Intelligent Economist*, (Available: 10.05.2024). (In English).

THE IMPACT OF TAXES ON ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

MERI PANOSYAN

*Yerevan State University,
Chair of Finance and Accounting, Lecturer,
Yerevan, the Republic of Armenia*

Ensuring high and stable economic growth is one of the primary objectives of the state policy in the Republic of Armenia. This objective is indirectly associated with sound fiscal policy, as the implementation of appropriate tax policies tailored to the characteristics of the economic sector's structure, its developmental trends, and the exigencies of the state, fosters stability and long-term sustainability. Such measures serve as key determinants in fostering economic growth. The objective of this article is to examine the structure of economic growth in the Republic of Armenia (RA), to identify the factors facilitating and impeding economic growth in RA, to analyze the composition of tax revenues in RA from the perspective of economic growth, and to assess the impact of RA primary tax categories on economic growth within RA. To achieve this aim, the article delineates the task of scrutinizing the correlation between the economic growth of the Republic of Armenia and its principal tax categories.

The research employed empirical methods, including econometric analysis and comparative analysis. A combined methodological approach was adopted during the theoretical phase of the study. The findings of the research indicate a positive correlation between economic growth in the Republic of Armenia (RA) and the expansion of certain tax categories within RA, namely Value Added Tax (VAT), excise tax, profit tax, income tax, and overall tax revenue growth.

Keywords: *economic growth, tax revenues, aggregate supply, aggregate demand, industry structure, regression analysis, positive correlation.*

ВЛИЯНИЕ НАЛОГОВ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МЕРИ ПАНОСЯН

*преподаватель кафедры финансового учета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Обеспечение высокого и стабильного экономического роста является одной из основных целей государственной политики Республики Армения. Эта цель косвенно связана со здоровой фискальной политикой, так как внедрение соответствующих налоговых политик, адаптированных к особенностям структуры экономического сектора, его тенденциям развития и требованиям государства, способствует стабильности и долгосрочной устойчивости. Такие меры выступают в качестве ключевых факторов в содействии экономическому росту. Целью данной статьи является изучение структуры экономического роста в Республике Армения (РА), выявление факторов, содействующих и препятствующих экономическому росту в РА, анализ состава налоговых поступлений в РА с точки зрения экономического роста и оценка влияния основных налоговых категорий РА на экономический рост в РА. Для достижения этой цели в статье определяется задача изучить взаимосвязи между экономическим ростом РА и его основными налоговыми категориями.

В ходе исследования были применены эмпирические методы, включая эконометрический анализ и сравнительный анализ. В основе теоретической фазы исследования был положен комбинированный методологический подход. Результаты исследования указывают на положительную корреляцию между экономическим ростом в Республике Армения (РА) и расширением определенных налоговых категорий в РА, а именно – налога на добавленную стоимость (НДС), акцизного налога, налога на прибыль, налога на доходы и общего роста налоговых поступлений.

Ключевые слова: *экономический рост, налоговые поступления, общее предложение, общий спрос, структура отрасли, регрессионный анализ, положительная корреляция.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՍԲԻՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ



**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԳՈՐԾԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՈՆՓԱԿ ԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ
ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ ***

ՀՏԴ 342

DOI: 10.52063/25792652-2024.2.21-223

ՄԵԼԻՆԵ ՍԱՀՐԱԴՅԱՆ

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի
Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի
Իրավագիտության մագիստրոսական ծրագրի
Իրավագիտության մագիստրոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
melinesahradian@gmail.com
ORCID ID: 0009-0005-8913-1879

Հոդվածի նպատակն է ներկայացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դատական վարույթի հրապարակային քննության սկզբունքի հնարավոր և իրավաչափ սահմանափակման աստիճանը և դրա հնարավոր, բայց ոչ իրավաչափ սահմանափակման դրսևորումը: Մասնավորապես անդրադառնալ այն իրավիճակին, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում միաժամանակ գործը քննել գրավոր ընթացակարգի կիրառմամբ և գործի քննության նկատմամբ տարածել դռնփակության ռեժիմը:

Աշխատանքի խնդիրն է գործերի գրավոր ընթացակարգով և գործը դռնփակ ռեժիմով քննելու միաժամանակյա հնարավորության և կիրառության հարցը քննարկել ոչ միայն տեսական մակարդակում՝ որպես սահմանադրորեն ամրագրված հրապարակայնության սկզբունքի ամբողջական սահմանափակում, այլ նաև ներկայացնել դրա՝ գործնականում հնարավոր բացասական ազդեցությունը:

Աշխատանքը պատրաստվել է օգտագործելով տրամաբանական մեթոդը, վերլուծության, ինչպես նաև ձևական իրավագիտության մեթոդները, որոնցով հնարավոր է եղել նկարագրել իրավական հասկացությունները՝ դրանք դասակարգել, համակարգել և բացահայտել դրանց հատկանիշները:

Աշխատանքում եզրահանգել ենք, որ տեսականորեն հնարավոր է նման իրավիճակների առաջացումը, որը թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում խնդրահարույց է: Ներկայացվել է առաջարկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն նախատեսելու վերաբերյալ,

* Հոդվածը ներկայացվել է 03.03.2024թ., գրախոսվել՝ 17.04.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2024թ.:

մասնավորապես ներառելով նոր դրույթ գրավոր ընթացակարգով քննվող գործերի ենթաբաժնում:

Հիմնաբառեր՝ ՀՀ վարչական դատավարություն, հրապարակային դատաքննություն, վճռի հրապարակում, բանավոր դժնբաց դատական քննություն, գրավոր դժնբաց դատական քննություն, բանավոր դժնբակ դատական քննություն, գրավոր դժնբակ դատական քննություն:

Նախաբան

Հրապարակայնության սկզբունքը թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է, որը ենթադրում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգերի կիրառում՝ պայմանավորված կոնկրետ դատավարական առանձնահատկություններով: Այն դատավարական կարևոր սկզբունքներից մեկն է, որն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակներում: Սահմանադրական վերոնշյալ դրույթն իր մասնավորեցումն է ստացել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (հոդված 8, հոդված 11): Վերոնշյալ սկզբունքը տեղ է գտել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

Հարկ է նկատել, որ պայմանավորված գործի քննության առանձնահատկություններով՝ հրապարակայնության սկզբունքի սահմանափակումը կարող է դրսևորվել թե՛ գործի քննության բանավորությունը (որը հրապարակայնության սկզբունքի հատկանիշներից է, այս մասին տե՛ս 1.1) սահմանափակելով, թե՛ գործի քննությունը դժնբակ իրականացնելով: Հատկանշական է, որ հրապարակայնության սկզբունքի մասամբ սահմանափակումը՝ մասնավորապես գրավոր ընթացակարգով գործի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանի գնահատմամբ ինքնին չի կարող դիտարկվել որպես հրապարակայնության սկզբունքի խախտում, եթե իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքով հստակ նախանշված սկզբունքներին ու կարգին համապատասխան: Սակայն խնդիր է առաջանում այն իրավիճակներում, երբ անհրաժեշտ է լինում սահմանափակել հրապարակային քննությունը ոչ թե *մասնակի*, այլ *ամբողջությամբ* (ընդգծումը՝ Մ.Ս.):

Սույն աշխատանքում քննության առարկա է դառնալու հրապարակայնության սկզբունքի տարրերի՝ բանավոր դատաքննության և հանրության համար հասանելիության (դժնբաց քննություն և վճռի հրապարակում) միաժամանակյա ամբողջական սահմանափակման հնարավորությունն ու իրավաչափությունը: Նշենք, որ հրապարակայնության սկզբունքն իր դրսևորումն ունի նաև օրենսդրության մյուս ճյուղերում ևս (քրեաիրավական, քաղաքացիաիրավական), սակայն սույն դեպքում դրանք հոդվածի քննության առարկայից դուրս են:

1. Հրապարակային դատաքննության սկզբունքը

ՀՀ Սահմանադրության 63-րդ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածներով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Դատարանում գործերի քննության բանավորությունը կոչված է ապահովելու գործերի քննության հրապարակայնությունը, որը հանդիսանում է արդար դատաքննության բաղադրատարրերից մեկը:

ՄԻԵԿ-ով և ՀՀ Սահմանադրությամբ սահմանված արդար դատաքննության տարրերն են՝

- օրենքի հիման վրա ստեղծված դատարանը
- անկախ ու անաչառ դատարանը
- ողջամիտ ժամկետում գործի դատաքննությունը
- արդարացի դատաքննությունը
- հրապարակային դատաքննությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ դատարանում գործերի քննությունն իրականացվում է բանավոր: Իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում գործի քննությունը կարող է իրականացվել կամ իրականացվում է գրավոր ընթացակարգով (հոդված 7):

Գործերի հրապարակային քննության սկզբունքն ուղղված է ապահովելու արդարադատության թափանցիկությունը, հաշվետվողականությունը: Այն թույլ է տալիս արդարադատության իրականացման ավելի մեծ տեսանելիություն ցանկացած հասարակության համար, որն օգնում է հասնել ՄԻԵԿ 6(1) հոդվածի հիմնական նպատակներին, այսինքն՝ դատավարության արդարությանը: Նշվածի համատեքստում իրականացվում է նաև հանրային վերահսկողությունը դատարանների նկատմամբ, որը զսպող, կանխարգելիչ, ինչպես նաև դաստիարակող ազդեցություն է ունենում թե՛ դատական իշխանության, թե՛ հանրության նկատմամբ:

1.1 Հրապարակային քննության սկզբունքի տարրերը.

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սահմանադրորեն ամրագրված արդար դատաքննության սկզբունքին, նշել է, որ այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են **հրապարակային դատաքննությունը**, ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**: Անդրադառնալով հրապարակայնության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանը նույն որոշմամբ նշել է. «...դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ» (ՄԴՌ-1020 որոշում 11.04.2012):

Հարկ է նաև նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է արձանագրել, նշելով՝ երբ դռնբաց ընթերցվում է միայն վճռի եզրափակիչ մասը, պետք է պարզել, թե արդյոք հասարակության ներկայացուցիչները հնարավորություն ունեցե՞լ են այլ կերպ ծանոթանալ վճռի պատճառաբանական մասին, որը չի ընթերցվել դռնբաց: Եթե՝ այո, պետք է պարզվեն այդ միջոցները, որպեսզի ապահովվի վճռի նկատմամբ հասարակական հսկողություն (Ryakib Biryukov V. Russia, para. 38-40):

Այսպիսով, արդար դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն երաշխիքներ կան՝ դատական քննություն և վճռի հրապարակում: Դատական քննությունն իր հերթին ենթադրում է գործի քննություն՝ գրավոր կամ բանավոր ընթացակարգով և գործի քննություն՝ դռնբաց կամ դռնփակ ռեժիմների կիրառմամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ **հրապարակայնության սկզբունքը** թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է, որը ենթադրում է **ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառում**՝ պայմանավորված կոնկրետ դատավարական առանձնահատկություններով (ՄԴՌ-1020 որոշում 11.04.2012):

ՄԻԵԴ վաղ նախադեպային իրավունքն աստիճանաբար մշակեց մի ընդհանուր սկզբունք, համաձայն որի հրապարակային լսման իրավունքը պարտադիր ենթադրում էր բանավոր լսում: Հրապարակային լսումների կանոնը բանավոր լսումների վրա տարածելու հիմնավորումն այն էր, որ բանավոր լսումների բացակայության դեպքում, երբ կողմերը, վկաները և փորձագետները բաց դատական նիստում հրապարակային որևէ բանավոր ապացույց չեն ներկայացրել, նիստի հրապարակայնությունը հեշտությամբ խարխուլում է կողմերի և դատարանի միջև գոյություն ունեցող ընթացակարգային փաստաթղթերի փոխանակմամբ: (Zrvandyan 73)

ՄԻԵԴ-ը նշել է, որ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետը ենթադրում է «բանավոր լսումներ», այսինքն՝ կողմերի (կամ նրանց ներկայացուցիչների կամ երկուսի) անձամբ լսում դատարանի կողմից, անկախ նրանից, թե դատավարությունն անցկացվել է հրապարակային կամ դռնփակ: Կողմերը իրավունք ունեն բանավոր լսվելու ներպետական դատարանի կողմից, նույնիսկ այն դեպքերում, երբ մամուլը և հասարակությունը օրինականորեն բացառված են լսումներից (Schädler-Eberle V. Liechtenstein, para. 82):

ՄԻԵԴ-ը նշել է, որ նույնիսկ եթե գործը պետք է քննվեր դռնփակ, երբ դա հիմնավորվում է ՄԻԵԿ 6(1) հոդվածում թվարկված պատճառներով, լսումները պետք է անցկացվեն բանավոր՝ բոլոր կողմերի ներկայությամբ: Այսպիսով, թեև բանավոր լսումների իրավունքը բխում է և մասն է կազմում հրապարակային լսումների իրավունքի, բանավոր լսումը առանձին իրավունք է ՄԻԵԿ 6(1) հոդվածի համաձայն: ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասով հրապարակայնության սահմանափակման հիմքերը վերաբերվում են լսումներից հանրությանը և մամուլին բացառելուն, բայց ոչ դատավարության կողմերի բացառմանը (Axen V. Germany, para. 25):

Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք երկրների դատավարական կանոնադրությունները ամրագրված են «անմիջականության սկզբունքով»՝ որպես հիմնարար դատավարական չափորոշիչ, որտեղ դատավորը կարող է անհապաղ հետազոտել ապացույցները (այսինքն՝ կողմերի, վկաների, փորձագետների և այլնի բանավոր ցուցմունքները), այլ ոչ միայն կողմերից դատարանին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը: Ապացույցների հետազոտման անմիջականության սկզբունքի ընդլայնում է նաև բանավոր լսումը (Zrvandyan 74):


Այնուամենայնիվ, դատավարական օրենսդրության ներկայիս վիճակը առաջարկում է իրավական գործերի քննարկման ընթացակարգերի բավականին բազմազան ընտրություն: Ակնհայտ է, որ արդարադատության մատչելիության բարձրացման, օպտիմալացման, դատական գործընթացների արագացման և պարզեցման ուղղությամբ կատարվող աշխատանքի միտում է նկատվում, հետևաբար պարզեցված դատավարությունը զգալի տեղ է գրավում առկա իրավական ընթացակարգերի շարքում (Галковска 221): Տարբեր երկրներում վարչական դատավարությունում այս ընթացակարգերի լայն կիրառումը վկայում է այն մասին, որ ժամանակակից պայմաններում դատավարական օրենսդրության զարգացման հիմնական միտումներից է դատավարության արագացումը և գործերի քննարկման ժամանակի կրճատումը օրինական և հիմնավորված որոշման ընդունմամբ (Носова 12): Նշված պարզեցված քննության ընթացակարգերի տեսակ էլ հանդիսանում է բանավոր քննության սահմանափակումը՝ գրավոր ընթացակարգը:

Այսպես, բանավոր լսումների իրավունքը բացարձակ իրավունք չէ նաև վարչական դատավարությունում: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսվել են դեպքեր, որոնց ժամանակ գործի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով (ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 117): Բացի այդ, գրավոր ընթացակարգով են քննվում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք հատուկ վարույթի ընթացակարգով քննվող գործեր:

Անհրաժեշտ է տարբերակել գործերի քննության դռնբաց և դռնփակ քննությունը գործերի բանավոր և գրավոր ընթացակարգերից, այնուամենայնիվ դրանք պետք է նաև միասնության մեջ դիտարկել: Նշված տարբերակումը ընդգծելու համար հարկ է փաստել, որ դռնփակ քննության ժամանակ գործի քննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով, միևնույն ժամանակ գրավոր քննությունը չի ենթադրում, որ գործում առկա տեղեկատվությունը հանրամատչելի չէ: Այլ կերպ՝ գործի գրավոր քննությունը չի ենթադրում, որ գործում առկա տեղեկատվությունը որևէ կերպ հասանելի չէ դատավարության մասնակիցների, կամ հանրության համար: Գործի գրավոր քննության արդյունքում կայացվող դատական ակտը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքէջում, որը հասանելի է հանրությանը:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ նշել է, որ հիշյալ սահմանադրական դրույթի տրամաբանության համատեքստում հրապարակային դատաքննությունը ենթադրում է դռնբաց դատական նիստի առկայություն և (կամ) դատական ակտի հրապարակում, ինչը նշանակում է, որ դռնբաց դատական նիստը կարող է իրականացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառմամբ: Ավելին, դռնփակ դատական նիստը, որը հրապարակայնության սկզբունքի սահմանափակում է, կարող է անցկացվել նաև բանավոր ընթացակարգով: Ուստի՝ գործի քննության բանավոր կամ գրավոր ընթացակարգը չեն նույնանում գործը դռնբաց կամ դռնփակ քննելու հետ, և որ նույնն է՝ հրապարակայնության սկզբունքի հետ (ՍԴՈ-1452 որոշում 02.04.2019):

ՀՀ Սահմանադրական դատարանի նշված որոշումը կարելի է արտացոլել հետևյալ սխեմայով՝



Ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է բոլոր իրավիճակներին՝ դուրս թողնելով միայն դատական քննությունը միաժամանակ դռնփակ ռեժիմով և գրավոր ընթացակարգով իրականացնելու հարցը:

Ուստի, անհրաժեշտ է գնահատման առարկա դարձնել գրավոր ընթացակարգի և դռնփակ ռեժիմի միաժամանակյա կիրառության իրավաչափությունն ու հնարավորությունը վարչական դատավարությունում:

2. Գրավոր ընթացակարգի և դոնիակ ռեժիմի միաժամանակյա կիրառության հնարավորությունը և իրավաչափությունը վարչական դատավարությունում

2.1 Հարցի տեսական կողմը

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ վարչական դատարանում վիճարկման հայցերով գործերի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով (ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 117): Այսինքն՝ վարչական դատարանում քննվող գործերի մեծամասնությունը ներկայումս քննվում է գրավոր ընթացակարգով՝ վիճարկման հայցատեսակի շրջանակներում: Բացառված չէ իրավիճակը, երբ վիճարկման հայցով գործի քննության շրջանակներում օրենքով պահանջվող գաղտնի տեղեկություններ առկա լինեն: Դիցուք՝ ՀՀ պաշտպանության նախարարության դեմ ուղղված հայցերը կամ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության դեմ ուղղված հայցերը, որոնք կարող են տեղեկություններ ու ապացույցներ պարունակել ազգային անվտանգության կամ պաշտպանության ոլորտից, նախկին՝ բանավոր ընթացակարգով քննության ռեժիմի պարագայում քննվում էին դոնիակ ռեժիմով, այսինքն գործի դոնիակությունն ամբողջությամբ չէր սահմանափակում գործի հրապարակայնության սկզբունքը: Սակայն, գործի գրավոր ընթացակարգի պայմաններում, երբ վիճարկման հայցով պայմանավորված արդեն իսկ սահմանափակվել է գործի բանավորությունը, արդյոք ենթադրվում է, որ գրավոր ռեժիմի կիրառմամբ ապահովված է նաև դրա գաղտնիությունն ըստ անհրաժեշտության, թե՛ ոչ:

Նշված հարցադրման հետ կապված հարկ է նկատել, որ գործի գրավոր ընթացակարգով քննության ժամանակ թեև դատական նիստերի դահլիճում դատական լուսմներ տեղի չեն ունենում, սակայն գործում առկա ապացույցների վրա չի տարածվում գաղտնիության ռեժիմը: Գրավոր ընթացակարգով գործի ավարտին կայացված վճիռը հրապարակվում է դատական իշխանության կայքէջում, որը հասանելի է յուրաքանչյուրին, ուստի վճռում արտացոլված օրենքով պահանջվող գաղտնի տեղեկությունների նկատմամբ սահմանափակումը կարող է իմպլեմենտացվել միայն դոնիակ ռեժիմը (այդ թվում նաև՝ մասնակի)՝ նաև գրավոր ընթացակարգի վրա տարածելու պարագայում: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ «դոնիակ ռեժիմ» հասկացությունը չի ենթադրում միայն, որ դատարանը նիստն անցկացնում է հնարավոր մասնակից անձանց ներկայության արգելքով, այլ այն ենթադրում է ի թիվս վերոնշյալի՝ նաև գործում առկա տեղեկատվության և վերջնական դատական ակտի հասանելիության բացակայությունը:

Այսինքն, գրավոր ընթացակարգով (դիցուք՝ վիճարկման հայցով ՀՀ Պաշտպանության նախարարության դեմ) քննվող գործի նյութերում օրենքով պահանջվող գաղտնի տեղեկությունների առկայության դեպքում, անհրաժեշտ է գործում առկա օրենքով պահանջվող գաղտնի նյութերի հանգամանքով սահմանափակել նաև վճռի հրապարակումը, փաստացի սահմանափակելով գործի հրապարակային քննության երկու երաշխիքները՝ դոնեաց բանավոր դատական քննությունը և վճռի հրապարակումը:

Հրապարակայնության սկզբունքի բաղկացուցիչ մաս է ոչ միայն դոնեաց բանավոր լուսմների առկայությունը այլ նաև վճռի հրապարակումը, ուստի տեսական մակարդակում դրանց երկուսի միաժամանակյա սահմանափակումը ենթադրում է հրապարակայնության սկզբունքի ոչ թե մասնակի, այլ ամբողջական սահմանափակում, որն էլ իր հերթին նշանակում է փաստացի՝ սահմանադրորեն ամրագրված հրապարակային դատաքննության սկզբունքի կիրառման բացակայություն: Նշված իրավիճակը, որը փաստորեն առաջանում է օրենքի ոչ համապարփակ կամ սխալ ամրագրման հետևանքով կարելի է բնութագրել նաև

«անիրավ օրենք» եզրույթով, որն ասելով նկատի ունենք պաշտամետական այն օրենքը (ձևական օրենք), որում առկա կարգավորումները հակասում են իրավունքի սկզբունքներին (արդարությանը) կամ պարունակում են անտրամաբանական կարգավորումներ» (Ղամբարյան, 75):

2.1 Հարցի գործնական կողմը

Նշված հարցը խնդրահարույց է ոչ միայն տեսական առումով՝ սահմանադրորեն ամրագրված սկզբունքի ամբողջովին սահմանափակման տեսանկյունից, այլ նաև ունի գործնական բացասական ազդեցություն:

Այսպես, գրավոր ընթացակարգով քննության ժամանակ դատավարության մասնակիցների առարկությունները, միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են ներկայացվել գրավոր ընթացակարգ կիրառելու վերաբերյալ վարչական դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ կցելով դրանց պատճենները դատավարության մյուս մասնակիցներին ուղարկելը հավաստող ապացույցը, իսկ եթե այդ փաստաթղթերը ծավալուն են, կամ դրանք դժվար է պատճենահանել՝ դատավարության մյուս մասնակցին ուղարկելով ծանուցում, որ Նշված փաստաթղթերը դրանց ծանոթանալու նպատակով դեպոնացվելու են վարչական դատարանում (ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 74): Նշված նորմի կիրառումը գործնականում նույնությամբ չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ դատարան է ներկայացվում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկատվություն: Մասնավորապես, Նշված պարագայում պետական մարմնի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացվող առարկության հետ միաժամանակ կարող է ուղարկվել ծանուցում, որ նյութերը դեպոնացվելու են ՀՀ վարչական դատարանում¹:

Նշված հաջորդական գործողություններից հետո առաջ է գալիս կողմերի տվյալ նյութերին ծանոթանալու խնդիրը՝ առանց դատական նիստ հրավիրելու և առանց դատավորի ներկայության:

Հարկ է նաև հիշատակել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը քննարկման առարկա է դարձրել խնդրահարույց իրավիճակը, որն առկա է օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների առկայության դեպքում՝ նույնիսկ երբ գործը քննվում է բանավոր ընթացակարգով: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է.

«/.../ նախ՝ դռնփակ դատական նիստին իրավունք ունեն ներկա գտնվել դատական նիստերի քարտուղարը, վարչական դատավարության մասնակիցները (հայցվորը, պատասխանողը, երրորդ անձինք), նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը և թարգմանիչը, իսկ գործի նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն ստանալու, գործի նյութերից քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելու իրավունքից օգտվողներն են միայն դատավարության մասնակիցները (հայցվորը, պատասխանողը, երրորդ անձինք) և նրանց ներկայացուցիչները,

երկրորդ՝ եթե դռնփակ նիստի մասնակիցները ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները

¹ Նշվածը միևնույն է խնդրահարույց է, քանի որ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է, թե որ դեպքերում են նյութերը դեպոնացվում՝ եթե այդ փաստաթղթերը ծավալուն են, կամ դրանք դժվար է պատճենահանել, այլ իրավիճակներում փաստաթղթերը դեպոնացնելու հնարավորություն օրենսդրի կողմից չի տրամադրվել:

հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին, ապա գործի նյութերին ծանոթանալու համար օրենքով պահպանվող գաղտնիքի վերաբերյալ Օրենսգրքում որևէ կարգավորում չկա,

երրորդ՝ եթե դռնփակ դատական նիստն անցկացվում է դատարանի որոշմամբ, ապա գործի նյութերին ծանոթանալու համար դատարանի կողմից որոշում կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

1.../ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ գործնականում խնդիրներ կառաջանան առևտրային գաղտնիքի պաշտպանության առումով՝ պայմանավորված վարույթի մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններն ստանալու, գործի նյութերից քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելու իրավունքի իրացմամբ, անհրաժեշտ է հաշվի առնել առևտրային գաղտնիքի պաշտպանությանն ուղղված վերոնշյալ երաշխիքները և համապատասխան նյութերը տրամադրել բացառապես այն **անձանց, որոնք արդեն իսկ նախազգուշացվել են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:**» (ՍԴՌ-1486 որոշում, 29.10.2019):

Վերոգրյալ որոշումից բխում է, որ օրենքով պահպանվող տեղեկատվության առկայության պայմաններում իրավական խնդիրներ են առաջանում նույնիսկ բանավոր ընթացակարգով քննության ժամանակ՝ երբ գործը քննվում է դատավորի նախագահությամբ, ով նախազգուշացնում է օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին: Հետևաբար, գրավոր ընթացակարգի կիրառման ժամանակ, երբ նման հնարավորությունը բացակայում է, կարծում ենք, որ նշված անհամապատասխանությունների լուծման եղանակ կարող է լինել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված գրավոր ընթացակարգով չքննվող գործերի շարքում ավելացնել կետ առ այն, որ չի կարող գործ քննվել գրավոր ընթացակարգով, երբ անհրաժեշտ է գործի քննության դռնբացությունը սահմանափակել, այսինքն գործի քննությունն իրականացնել դռնփակ ռեժիմով՝ օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների առկայությամբ պայմանավորված: Ընդ որում նշվածը պետք է սահմանված լինի իմպերատիվ, և կախված չլինի մասնակիցների կամ դատարանի հայեցողությունից: Իսկ այն դեպքերում, երբ հայցի ընդունելության փուլում նման տեղեկություններն օբյեկտիվորեն չեն եղել դատարանի տրամադրության տակ, դատարանը գործի քննության փուլում նշված հանգամանքների առաջացման դեպքում պետք է պարտավորված լինի որոշում կայացնել գործի քննությունը բանավոր շարունակելու մասին:

Հատկանշական է, որ նման կարգավորում է նախատեսված նաև Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքով, մասնավորապես, դատարանը որոշում է կայացնում գործը վարչական վարույթի ընդհանուր կանոններով քննելու մասին, եթե պարզվում է, որ վարչական գործը պարզեցված (գրավոր) ընթացակարգով քննության ենթակա չէ. վարույթ ընդունվել է հակընդդեմ վարչական հայց, որը չի կարող քննվել սույն գլխով սահմանված կանոններով, կամ եթե դատարանը, այդ թվում՝ կողմերից մեկի պահանջով, եկել է այն եզրակացության, որ. 1) պարզեցված (գրավոր) վարույթի ընթացակարգը կարող է հանգեցնել պետական գաղտնիքի բացահայտմանը/.../» (Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 229-րդ, 7-րդ մասի 1-ին կետ):

Նշված կարգավորմամբ հստակ կբացառվի գրավոր ընթացակարգի և դռնփակ ռեժիմի միաժամանակյա կիրառման տեսական հնարավորությունը, որը

կերաշխավորի առնվազն դռնփակ ռեժիմի կիրառման անհրաժեշտության դեպքում գրավոր քննության բացառումը և հակառակը՝ գրավոր ընթացակարգի կիրառման ժամանակ բոլոր դեպքերում դատական ակտի հասանելի հրապարակումը:

Եզրակացություն

Դատաքննության հրապարակային սկզբունքն ուղղված է ապահովելու արդարադատության թափանցիկությունը, հաշվետվողականությունը, որի շրջանակներում ապահովվում է նաև հանրային վերահսկողությունը դատարանների նկատմամբ: Այնուամենայնիվ, նշված սկզբունքը սահմանափակելու պայմանները բացառված չեն: Դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն տարրեր կան՝ դատական քննություն և վճռի հրապարակում:

Հրապարակայնության սկզբունքի սահմանափակումը կարող է դրսևորվել թե՛ գործի քննության բանավորությունը սահմանափակելով, թե՛ գործի քննությունը դռնփակ իրականացնելով:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ անդրադառնալով հրապարակայնության սկզբունքին, դիտարկել է հետևյալ իրավիճակները՝ դռնբաց գրավոր քննություն, դռնբաց բանավոր քննություն, դռնփակ բանավոր քննություն (ՍԴՈ-1452 որոշում, 02.04.2019), դուրս թողնելով միայն դատական քննությունը՝ միաժամանակ դռնփակ և գրավոր ընթացակարգով իրականացնելու հարցը: Գործի գրավոր ընթացակարգով քննության ժամանակ թեև դատական նիստերի դահլիճում դատական լուսմներ տեղի չեն ունենում, սակայն գործում առկա ապացույցների վրա չի տարածվում գաղտնիության ռեժիմը: Գրավոր ընթացակարգով գործի ավարտին կայացված վճիռը հրապարակվում է դատական իշխանության կայքէջում, որը հասանելի է յուրաքանչյուրին: Այսինքն՝ հրապարակայնության սկզբունքի բաղկացուցիչ մասն է ոչ միայն դռնբաց բանավոր լուսմների առկայությունը, այլ նաև վճռի հրապարակումը:

Ի հեճուկս վերոնշյալի՝ գրավոր ընթացակարգով քննվող գործի նյութերում դիցուք օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների առկայության դեպքում, անհրաժեշտություն է առաջանում գործում առկա օրենքով պահպանվող գաղտնի նյութերի հանգամանքով սահմանափակել նաև վճռի հրապարակումը, փաստացի սահմանափակելով գործի հրապարակային քննության երկու երաշխիքները՝ **դատական քննությունը (դռնբաց և բանավոր) և վճռի հրապարակումը:**

Փաստորեն, տեսական մակարդակում վերոնշյալ երկու բաղադրիչների միաժամանակյա սահմանափակումը ենթադրում է հրապարակայնության սկզբունքի ոչ թե մասնակի, այլ ամբողջական սահմանափակում, որը հանգեցնում է սահմանադրորեն ամրագրված սկզբունքի չկիրառելիությանը:

Նշված իրավիճակն ունի նաև գործնական բացասական ազդեցություն՝ կապված օրենքով պահպանվող նյութերի հիմքով դռնփակ ռեժիմ կիրառելու արդյունքում այդ նյութերին ծանոթանալու ընթացակարգի հետ: Օրենքով պահպանվող տեղեկատվության առկայության պայմաններում իրավական խնդիրներ են առաջանում նույնիսկ բանավոր ընթացակարգով քննության ժամանակ, երբ գործը քննվում է դատավորի նախագահությամբ, որը նախազգուշացնում է օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին: Հետևաբար, գրավոր ընթացակարգի ժամանակ, երբ նման հնարավորությունը բացակայում է, կարծում ենք, որ նշված հարցի լուծման եղանակ կարող է լինել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված գրավոր ընթացակարգով չքննվող գործերի շարքում ավելացնել կետ առ այն, որ չի կարող գործը քննվել գրավոր ընթացակարգով, երբ անհրաժեշտ է գործի քննության դռնբացությունը սահմանափակել օրենքով պահպանվող տեղեկությունների առկայության դեպքերում,

այսինքն, երբ գործում առկա է օրենքով պահպանվող գաղտնի տեղեկատվություն: Իսկ երբ նշված հանգամանքը ի հայտ է գալիս գործի քննության հետագա փուլերում, դատարանը անհապաղ որոշում է կայացնում գործի գրավոր քննությունից բանավոր քննության անցնելու մասին: Ընդ որում նշվածը պետք է սահմանված լինի իմպերատիվ, և կախված չլինի մասնակիցների կամ դատարանի հայեցողությունից: Նշված առաջարկությունն ուղղված է բացառելու հրապարակայնության սկզբունքի ամբողջական սահմանափակումը և ապահովելու գործնականում առաջացող խնդիրները՝ դնելով ռեժիմի կիրառման անհրաժեշտության առաջացման դեպքերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն, 06 Դեկտ. 2015.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>:
2. Եվրոպայի խորհուրդ. *Կոնվենցիա Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին փոփոխված 11-րդ արձանագրությամբ* ՀՀ միջազգային պայմանագիր. 04 Նոյ. 1950.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>:
3. ՀՀ Ազգային ժողով. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք. 07 Մարտի 2018.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119531>:
4. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք. 05 Դեկտ. 2013, [<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87705>]:
5. Պետդոմա. Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրք. 03 Օգոստոս 2015.
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/:
6. ՀՀ Սահմանադրական դատարան. *թիվ ՍԴՈ-1020 որոշում*. 11 Ապրիլ 2012.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=75205>:
7. ՀՀ Սահմանադրական դատարան. *թիվ ՍԴՈ-1452 որոշում*. 02 Ապրիլ 2019.
<https://concourt.am/decision/decisions/sdv-1452.pdf>:
8. ՀՀ Սահմանադրական դատարան. *թիվ ՍԴՈ-1486 որոշում*. 29 Հոկտեմբեր 2019. <https://concourt.am/decision/decisions/sdv-1486.pdf>:
9. European Court of Human Rights. *Case of Schädler-Eberle V. Liechtenstein*, 18 July, 2013. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-122429%22%5D%7D>:
10. European Court of Human Rights. *Case of Axen V. Germany*, 8 December, 1983. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-73568%22%5D%7D>:
11. European Court of Human Rights. *Case of Ryakib Biryukov V. Russia*, 17 January, 2008. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-172549%22%5D%7D>:
12. Ղամբարյան, Արթուր. «Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փոխադրությունում». *Գիտական Արցախ*, հ.8, N1, Ապրիլ 2021, էջ 64-85, doi: 10.52063/25792652-2021.1-64:
13. Галковская, Наталья. «Анализ оснований для рассмотрения административных дел в порядке упрощенного (письменного) производства». *Вестник Томского государственного университета*, № 472, 2021, стр. 221–234. doi: 10.17223/15617793/472/27.
14. Носова, Юлия. «Особенности упрощенного производства по административным делам». *Журнал Административного Судопроизводства*, N 4, 2019, стр.12-15.
15. Zrvandyan, Arman. *Casebook on European fair trial standards in administrative justice*, Council of Europe, December 2016, 1-146.

WORKS CITED

1. HH Sahmanadrut'yun, 06 Dekt. 2015, [The Constitution of the Republic of Armenia, 06 December, 2015] <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>. (In Armenian).
2. Evropayi xorhurd. Konvencia Mardu iravunqneri ev himnaran azatut'yunneri pashtpanut'yan masin p'op'oxvac' 11-rd ard'anagrut'yamb HH mijazgayin paymanagir. 04 Noy. 1950 [Council of Europe. European Convention on Human Rights, amended by the 11th protocol, International treaty of RA, 04 November, 1950] <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>. (In Armenian).
3. HH Azgayin jhoghov. «Hayastani Hanrapetut'yan datakan o'rensgirq» HH sahmanadrakan o'renq. 07 Marti 2018 [National Assembly of RA. The Constitutional Law Of The Republic Of Armenia "Judicial Code of the Republic of Armenia". 07 March, 2018], <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119531>. (In Armenian).
4. HH Azgayin jhoghov. HH varchakan datavarut'yan o'rensgirq. 05 Dekt. 2013 [National Assembly of RA, Code of Administrative Procedure of Republic of Armenia, 05 December, 2013], <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87705>. (In Armenian).
5. Petduma. R'usastani Dashnut'yan varchakan datavarut'yan o'rensgirq. 03 O'gostos 2015, [State Duma, Administrative Procedure Code of the Russian Federation, 03 August, 2015] https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/. (In Russian).
6. HH Sahmanadrakan dataran. t'iv SDO-1020 voroshum. 11 April 2012 [Constitutional Court of RA, decision SDO-1020, 11 April, 2012], <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75205>. (In Armenian).
7. HH Sahmanadrakan dataran. t'iv SDO-1452 voroshum. 02 April 2019 [Constitutional Court of RA, decision SDO-1452, 02 April, 2019], <https://concourt.am/decision/decisions/sdv-1452.pdf>. (In Armenian).
8. HH Sahmanadrakan dataran. t'iv SDO-1486 voroshum. 29 Hoktember 2019 [Constitutional Court of RA, decision SDO-1486, 29, October 2019], <https://concourt.am/decision/decisions/sdv-1486.pdf>. (In Armenian).
9. Ghambaryan, Art'ur. «Iravunqi ev o'renqi kolizianery' iravunqi p'ilisop'ayut'yunum» [Collisions of Right and Law in the Philosophy of Law]. Gitakan Arcax, h.8, N1, April 2021, e'j 64-85, doi: 10.52063/25792652-2021.1-64. (In Armenian).
10. Galkovskaja, Natal'ja. "Analiz osnovanyj dlja rassmotreniya admynystratyvnyyh del v porjadke uproshhennogo (pys'mennogo) proyzvodstva". Vestnyk Tomskogo gosudarstvennogo unyversyteta, № 472, 2021, ss. 221–234. doi: 10.17223/15617793/472/27, ["Analysis of Grounds for Consideration of Administrative Cases in the Order of Simplified (written) Proceedings". Bulletin of Tomsk State University, № 472, 2021, pp. 221–234. doi: 10.17223/15617793/472/27]. (In Russian).
11. Nosova, Julyja. "Osobennosty uproshhennogo proyzvodstva po admynystratyvnyym delam". Zhurnal Admynystratyvnogo Sudoproyzvodstva, N 4, 2019, ss.12-15 ["Features of Simplified Proceedings in Administrative Matters." Journal of Administrative Proceedings, vol. 4, 2019, pp. 12-15]. (In Russian).

THE WRITTEN PROCEDURE AND IN CAMERA HEARING OF THE CASES PROVIDED BY THE CODE OF ADMINISTRATIVE PROCEDURE OF THE RA IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF PUBLICITY

MELINE SAHRADYAN

*American University of Armenia,
College of Humanities and Social Sciences
Master of Laws
Yerevan, the Republic of Armenia*

The aim of this article is to examine the extent to which the principle of public examination of cases can be legally limited, as well as to elucidate instances where such limitations are possible but not legally sanctioned. Specifically, it addresses situations within the framework of the Administrative Procedure Code of the Republic of Armenia where there arises a necessity to simultaneously conduct case examination through written procedures while extending the in camera hearing regime.

The objective of the study is to explore the feasibility and implementation of both written procedures and in camera hearings, not solely on a theoretical basis as a potential complete restriction of the constitutionally enshrined principle of publicity, but also to assess their practical implications, including possible negative effects.

Methodologically, the research employs logical analysis, formal jurisprudence, and analytical techniques to describe, classify, and identify the features of legal concepts.

The findings of the study indicate that while such scenarios are theoretically conceivable, they pose challenges both in theory and practice. Consequently, a recommendation is put forward for amendments to the Administrative Procedure Code of the Republic of Armenia to address these challenges effectively.

Keywords: *Administrative proceedings of RA, public trial, publication of judgment, oral open court hearing, written open court hearing, oral in camera court hearing, written in camera court hearing.*

ПИСЬМЕННОЕ ПРОЦЕССУАЛЬНОЕ РАССМОТРЕНИЕ И ЗАКРЫТОЕ СЛУШАНИЕ ДЕЛ, ПРЕДУСМОТРЕННЫЕ АДМИНИСТРАТИВНО-ПРОЦЕССУАЛЬНЫМ КОДЕКСОМ РА В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ГЛАСНОСТИ

МЕЛИНЕ САГРАДЯН

*магистр права программа магистра «Юриспруденция»
факультета гуманитарных и социальных наук
Американского университета Армении,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи заключается в оценке степени возможного и юридического ограничения принципа публичного рассмотрения дела, а также в исследовании возможных последствий его ограничения. Особое внимание уделяется ситуациям, когда в рамках Административно-процессуального кодекса Республики Армения возникает потребность в одновременном применении письменного процессуального рассмотрения дела и закрытого слушания.

В ходе работы рассматривается возможность и актуальность применения закрытого режима рассмотрения дела не только на теоретическом уровне, как полное ограничение принципа гласности, закрепленного в конституции, но и в контексте его возможных негативных последствий на практике.

Методологическая база исследования включает логический анализ, анализ юридических понятий, их классификацию, а также использование методов формального правоповедения. Этот подход позволил описать юридические концепции, выявить их особенности и проблемные аспекты.

В результате исследования сделан вывод о том, что такие ситуации теоретически возможны, но на практике проблематичны. В связи с этим предложено внести изменения в Административно-процессуальный кодекс Республики Армения с целью более эффективного регулирования процесса рассмотрения дел.

Ключевые слова: *административное производство РА, публичное судебное разбирательство, опубликование приговора, устное открытое судебное заседание, письменное открытое судебное заседание, устное закрытое судебное заседание, письменное закрытое судебное заседание.*

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՈԴԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 4 անգամ:

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականն ընդգրկված է նաև РИНЦ միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում և գտնվում www.elibrary.ru կայքում:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրապարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված (անայայնմանորեն պետք է նշված լինի, որ տպագրության է երաշխավորվում «Գիտական Արցախ» պարբերականում):

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.scientificartsakh.com կայքում ծանոթանալ «Գիտական Արցախ» պարբերականի գիտական հրապարակումների էթիկային և խստորեն հետևել դրան:

Խմբագրության կողմից հոդվածն ընդունվելու դեպքում հեղինակը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել հոդվածի տպագրության համար նախատեսված գումարը, իսկ վճարման անդորրագրի սկանավորված տարբերակն ուղարկել խմբագրության էլեկտրոնային փոստին: Նյութի հրապարակման և հեղինակին «Գիտական Արցախ» պարբերականի 1 անվճար օրինակի տրամադրման համար գանձվող գումարը կազմում է՝ 1 Էջը 2,000 ՀՀ դրամ:

Բոլոր հոդվածներն ունենալու են DOI միջազգային ստանդարտ համարներ:

1-ին համարը լույս է տեսնում ապրիլին (հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը), 2-րդ համարը՝ հուլիսին (հոդվածներն ընդունվում են մինչև մայիսի 15-ը), 3-րդը՝ հոկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հուլիսի 15-ը), իսկ 4-րդ համարը՝ դեկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 1-ը):

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՄ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhlib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել scientificartsakh@gmail.com կայքի միջոցով կամ scientificartsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 10-25 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ Arial:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Առաջին Էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի ձախ կողմում նշվում է հոդվածի ՀՏԴ-ն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է (են) հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) նշվում են աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն, որից հետո՝ անհատական համարանիշը (ID) հեղինակների նույնականացման միջազգային հարթակներում (առնվազն **ORCID** համակարգում, ցանկայի է նաև Scopus ID, WoS ID համակարգերում):

Մեկ տող բաց թողնելով՝ 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է լինի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Հիմնաբառեր**» և նշել 7-10 հիմնաբառ:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որը պետք է ունենա ենթավերնագրեր: Տեքստի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են:

MLA ձևաչափում կիրառվում է ներտեքստային հղումների հեղինակ-Էջ եղանակը: Համաձայն վերջինիս՝ հեղինակի ազգանունն ու համապատասխան աշխատանքի էջ(եր)ի համար(ներ)ը արտացոլվում են տեքստում, իսկ ամբողջական հղումը զետեղվում է գրականության (հղված աշխատանքների) ցանկի մեջ:

Հիմնական տեքստից հետո «WORKS CITED» բառակապակցության ներքո պարտադիր անհրաժեշտ է կցել օգտագործված ոչ լատինատառ գրականության լատինական տառադարձումով տարբերակը՝ դասավորելով այբբենական կարգով, [...] փակագծերում թարգմանել աշխատության վերնագիրը և հրատարակության վայրը, որից հետո (...) փակագծերում նշել բնագրի լեզուն, օրինակ.

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Տառադարձումը կարող եք կատարել՝ օգտվելով www.translit.ru կայքից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ **Ավետիք Հարությունյանի** հետ՝

գրելով avetiq.hh@gmail.com Էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770, (+374) 55277755 հեռախոսահամարներին:

THE REQUIREMENTS FOR THE JOURNAL «SCIENTIFIC ARTSAKH»

The journal «**Scientific Artsakh**» of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published 4 times a year.

The journal «**Scientific Artsakh**» is also included in the RSCI (Russian Scientific Citation Index) International Scientific Information Database and posted on www.elibrary.ru website.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal (it should be noted that the article is recommended for publication in the Journal «Scientific Artsakh»).

Before sending the article, the authors are obliged to familiarize themselves with the ethics of scientific publications of the journal «Scientific Artsakh» on the www.scientificartsakh.com website and strictly comply with it.

Once the article is accepted by the Editorial Board, the author is obliged to pay the amount provided for the publication of the article within 3 working days and send the scan of the payment order to the the Editorial Board e-mail. The cost of publishing and providing the author with one copy of the journal «Scientific Artsakh» is 2,000 AMD per 1 page.

All articles will have DOI International Standard Numbers.

The 1st issue is published in April (**articles are accepted until February 15**), the 2nd issue – in July (**articles are accepted until May 15**), the 3rd issue – in October (**articles are accepted until July 15**), and the 4th issue – in December (**articles are accepted until October 1**).

The articles published in the journal «Scientific Artsakh» are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent via the www.scientificartsakh.com website or to the scientific.artsakh@gmail.com e-mail, the mobile phone number and the address of the author's residence, indicating the index should also be stated.

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.

Page format: 170*240 mm, margins (left, right, top, bottom) 20 mm.

Volume: 10-25 pages (summary inclusive).

Text font: Armenian, English and Russian – Arial.

Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. The UDC of the article is indicated in the left-aligned line a line down. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree, title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided, after that: a personal identification number (ID) on international author identification platforms (at least in the **ORCID** system, preferably also in Scopus ID, WoS ID systems).

Over a line, font size 12, bold, italic an abstract (ամփոփում, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work containing subtitles with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB.

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References are required.

In the MLA format, the author-page method of intra-text links is used. According to the latter, the author's surname and the corresponding page(s) of the work are displayed in the text, and the full link is placed in the list of references (referenced works).

After the main text, under the phrase «WORKS CITED», it is mandatory to attach a Latin transliteration of the used literature presented in non-Latin letters, placing it in alphabetical order, in square brackets [...] indicate the name of the work and the place of publication, after which in round brackets (...) the original language, for example:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Transliteration can be done by using www.translit.ru. website.

For more information, please contact the Editor-in-chief of the journal «Scientific Artsakh», Ph.D in Law, Associate Professor **Avetik Harutyunyan**, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770, (+374) 55277755.

ТРЕБОВАНИЯ К ОФОРМЛЕНИЮ СТАТЕЙ ЖУРНАЛА «НАУЧНЫЙ АРЦАХ»

Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается 4 раза в год.

Журнал «Научный Арцах» также включен в международную научно-информационную базу данных РИНЦ и размещен на сайте www.elibrary.ru.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи, рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью (обязательно должно быть отмечено, что статья рекомендуется к печати в журнале «Научный Арцах»).

Перед подачей статьи авторам предлагается ознакомиться с этикой научных публикаций журнала «Научный Арцах» на сайте www.scientificartsakh.com и неукоснительно следовать ей.

После принятия статьи редколлегией, автор обязан в течение 3 рабочих дней уплатить сумму, предусмотренную для публикации статьи, и выслать на электронный адрес редакции скан платежного поручения. Стоимость публикации и предоставления автору одного экземпляра журнала «Научный Арцах» составляет 2,000 драммов за 1 страницу.

Все статьи получают международные стандартные номера DOI.

1-ый номер публикуется в апреле (статьи принимаются до 15-го февраля), 2-ой номер – в июле (статьи принимаются до 15-го мая), 3-ий номер – в октябре (статьи принимаются до 15-го июля), а 4-ый номер – в декабре (статьи принимаются до 1-го октября).

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhlb.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи следует присылать через сайт на адрес www.scientificartsakh.com или на электронную почту scientific.artsakh@gmail.com, при этом должен быть указан номер мобильного телефона автора и адрес проживания (с индексом).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 170*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее) 20 мм.

Объем: 10-25 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский, английский и русский – Arial.

Язык представления статей: армянский, английский, русский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку с выравниванием по левому краю указывается УДК статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-

исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора, после чего: персональный номерной знак (ID) на международных платформах идентификации авторов (как минимум в системе **ORCID**, желательно также в системах Scopus ID, WoS ID).

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (աղմկո՞ղմու՞մ, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, дающий представление о нем без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы с подзаголовками кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB.

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны.

В формате MLA используется способ внутритекстовых ссылок автор-страница. При этом фамилия автора и страница (страницы) соответствующей работы (страниц) отображаются в тексте, а полная ссылка помещается в список цитируемых работ в конце статьи.

После основного текста под наименованием «WORKS CITED» обязательно приложить латинскую версию использованной литературы в латинской транслитерации и в алфавитном порядке, в скобках [...] поместить переведенные на армянский язык название работы и место ее публикации, затем в скобках (...) обозначить язык оригинала, например:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. «Jetnitcheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, [«Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Транслитерацию можете осуществить, используя сайт www.translit.ru.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту **Аветику Арутюняну**, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770, (+374) 55277755.

[illegible]

[illegible]

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2 (21), 2024

«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 4 անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The journal «Scientific Artsakh» is published four times a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит четыре раза в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝

Editor-in-Chief:

Главный редактор:

Ավետիգ Զարուբյունյան

Avetik Harutyunyan

Аветик Арутюнян

Հայերենի պատասխանատու

Responsible for Armenian

Ответственный за армянский язык

Արսեն Վարդանյան

Arsen Vardanyan

Арсен Варданян

Անգլերենի պատասխանատու՝

Responsible for English

Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան

Alvina Nersesyan

Альвина Нерсесян

Ռուսերենի պատասխանատու՝

Responsible for Russian

Ответственный за русский язык

Րուզաննա Սարգսյան

Ruzanna Sargsyan

Рузанна Саркисян

Պատասխանատու քարտուղար՝

Executive Secretary

Ответственный секретарь

Դավիթ Աբելյան

Davit Akelyan

Давид Акелян

Համակարգչային շարվածքը, ոճը,

տառաձևերը և էջադրումը՝

Computer set, style, font and layout

Компьютерный набор, стиль, шрифт

и верстка

«Արցախ» հրատարակչության

«Artsakh» Publishing House

Издательство «Арцах»

Շապիկի ձևավորումը՝

Cover design

Дизайн обложки

Արմինե Քոչարյանի

Armine Kocharyan

Армине Кочарян

Website: www.scientificartsakh.com, www.aegmm.org.

E-mail: scientific.artsakh@gmail.com, avetiq.hh@gmail.com.

Tel. (+374) 97277770, (+374) 55277755.

Ստորագրված է տպագրության՝ 31.07.2024 թ.:

Չափսը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսեթ:

Ծավալը՝ 15,25 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 120 օրինակ:

Տպագրված է «ՄՅՄ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպագրատանը: